ՔՀԿ ՉԱՓԻՉ

Քաղաքացիական հասարակության միջավայրի գնահատում Արևելյան գործընկերության երկրներում

Արևելյան գործընկերության երկրներում փորձնական ներդրման համար

Փորձագետների խումբ՝ Մարիամ Լացաբիձե (ՔՀԻ), Վաժա Սալամաձե (ՔՀԻ), Տաթևիկ Մարգարյան (ԹԻՀԿ), Մոհամադ Գուլուզադե (MG Consulting LLC), Էմին Ռզաև (MG Consulting LLC), Ֆլորին Գիսկա (Promo-LEX), Ալեքսանդր Պոստիկա (Promo-LEX), Դարիա Սիդորենկո (UCIPR), Մաքսիմ Լացիբա (UCIPR), Օլգա Սմոլյանկո (Lawtrend), Յուրի Չավուսո (Assembly of Pro-Democratic NGOs), Լյուբեն Պանով (ECNL), Հաննա Ասիպովիչ (ECNL), Էսթեր Հարտայ (ECNL)

Այլ փորձագետներ՝ Անդրեա Տոթ Ջուդիթ (ECNL), Վանյա Սկորիչ (ECNL), Ֆրանչեսկա Ֆանուչի (ECNL), Պետրա Բուրայ (ECNL), Կատրինա Հադի-Միցեվա Էվանս (ECNL), Սիմոնա Օգնենովսկա, Կատյարինա Պադվալկավա

Խմբագիր՝ Ջեֆ Վիզե

2019թ. փետրվար

Փաստաթուղթը մշակվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Առաջընթացի դիտարկում, գործողության խրախուսում» ծրագրի շրջանակներում: Սույն փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը, և այն պարտադիր չէ, որ արտացոլի Եվրոպական Միության դիրքորոշումը: Ծրագիրը իրականացնում է «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոնը» (ECNL) և նրա գործընկերները՝ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը» (ԹԻՀԿ) Հայաստանում, «Էմ-Ջի Քընսալթինգ» ՍՊԸ-ն Ադրբեջանում, «Ժողովրդավարամետ ՀԿ-ների միավորումը»՝ «Իրավական բարեփոխումների կենտրոնի» (Lawtrend) հետ համատեղ՝ Բելառուսում, «Քաղաքացիական հասարակության ինստիտուտը» (ՔՀԻ) Վրաստանում, «Պրոմո-Լեքս» ասոցիացիան Մոլդովայում և «Անկախ քաղաքական հետազոտությունների ուկրաինական կենտրոնը» (UCIPR)՝ Ուկրաինայում:

Հեղինակային իրավունքները պատկանում են՝ ECNL, ԹԻՀԿ, Էմ-Ջի Քընսալթինգ» ՍՊԸ, «Ժողովրդավարամետ ՀԿ-ների միավորում», Lawtrend, ՔՀԻ, Պրոմո-Լեքս, UCIPR © 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4
ՆԱԽԱԲԱՆ 5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 11
ՔՅԿ ՉԱՓԻՉԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ 24
ՀԱՎԵԼՎԱԾ 163

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԼԳ	Արևելյան գործընկերություն
ԱՊԿ	Ամերիկյան պետությունների կազմակերպություն
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՀ	Եվրոպական հանձնաժողով
ԵՄ	Եվրոպական Միություն
ԺՀՄԻԳ	Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
ԼԳԲՏԻՔ	Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանս, ինտերսեքս, քուիր անձանց համայնք
ԽԱ	Խոսքի ազատություն
ՀԱԻԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԺԻԱԽ	Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիա
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների Եվրոպական կոնվենցիա
ՏՀՏ	Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ
ՓԼ/ԱՖ	Փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքարի ֆինանսավորում
ՓԼԿ	Փողերի լվացման կանխարգելում
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՔՔԻՄԴ	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների Միջազգային Դաշնագիր
ECNL	Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն
SMS	Կարճ հաղորդագրություն

ՆԱԽԱԲԱՆ

Հարգելի ընթերցողներ,

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ) կարևոր դեր են խաղում հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, լինեն դրանք նախասիրության հիման վրա ստեղծված կազմակերպություններ, ծառայություն մատուցողներ, հետազոտական հաստատություններ, բնապահպանության խմբեր, հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություններ, քաղաքական ինստիտուտներ թե ընդհանուր շահերի շուրջ ստեղծված այլ խմբեր: Նրանք կարող են շատ բազմազան լինել իրենց բնույթով, սակայն հիմնարար նպատակները նույնն են՝ հիմնված մարդու առաջնային կարիքների վրա. ՔՀԿ-ները ստեղծում են հարթակ, որտեղ մարդիկ կարող են զգալ իրենց պատկանելությունը համայնքին, օգտակար լինել միմյանց, ինքնարտահայտվել և ապրել իմաստալից կյանքով:

ՔՀԿ-ներն իրավունք ունեն ստանալու անհրաժեշտ աջակցություն իրենց կարևոր աշխատանքը կատարելու համար և գործել բարենպաստ միջավայրում: Քաղաքացիական հասարակության միջավայրի գնահատումը կարող է օգնել պետական կառույցներին և ՔՀԿ-ներին՝ բացահայտելու առկա բացերը և մարտահրավերները, որոնք լուծման կարիք ունեն: Այն կարող է նաև բացահայտել հաջողության պատմություններ, որոնց հիման վրա հետագա բարեփոխումների գաղափարներ ի հայտ կգան: Մի երկրում քաղած արժեքավոր դասերը կարող են օգտակար լինել մյուս երկրների համար և խթանել փորձի փոխանակումը, աջակցության տրամադրումը և նորարարական մոտեցման ձևավորումը: Այս գաղափախոսությամբ ենք մենք մշակել ՔՀԿ-ի չափիչը:

ՔՀԿ չափիչը բազմաթիվ շահագրգիռ կողմերի համատեղ ջանքերի արդյունք է: Այն մշակվել է Արևելյան գործընկերության բոլոր երկրները ներկայացնող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ջանքերով, որոնց աշխատանքի միջոցով հնարավոր եղավ տեղական կարիքներին համահունչ գործիք ստեղծել: Գործընթացը գլխավորել են մեր գործընկերները՝ գործին նվիրված փորձագետների խումբը, որոնք խորքային պատկերացումներ ունեն քաղաքացիական հասարակության խնդիրների վերաբերյալ՝. «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը» (Հայաստան), «Էմ-Ջի Քընսալթինգ» ՍՊԸ-ն (Ադրբեջան), «Ժողովրդավարամետ ՀԿ-ների միավորումը»՝ «Իրավական բարեփոխումների կենտրոնի» հետ համատեղ (Բելառուս), «Քաղաքացիական հասարակության ինստիտուտը» (Վրաստան), «Պրոմո-Լեքս» ասոցիացիան (Մոլդովա) և «Անկախ քաղաքական հետազոտությունների ուկրաինական կենտրոնը» (Ուկրաինա): Մենք նաև ցանկանում ենք շնորհակալություն հայտնել մեր խորհրդատվական խորհրդի անդամներին՝ Ջեֆ Լովիթին, Թինաթին Ծերծվաձեին, Սիմոնա Օգնենովսկային և Նատալյա Յերաշևիչին՝ իրենց արժեքավոր գաղափարների և ողջ գործընթացի ուղղորդման համար: Այս նախաձեռնությունը հնարավոր չէր լինի առանց Եվրոպական Միության, որը ֆինանսական աջակցություն է տրամադրել այս գործիքի ստեղծման համար:

Թեև ՔՀԿ չափիչը ծավալուն աշխատանքի արդյունք է, այնուամենայնիվ մենք դրա բովանդակությունը քարացած իրողություն չենք համարում: Ընդհակառակը, մենք այն դիտարկում ենք որպես կենդանի գործիք: Սույն փաստաթղթում ներկայացված ՔՀԿ չափիչը ավարտուն տեսք ստացած մի նախագիծ է, որը ենթակա է փորձնական կիրառման և փորձարկման: Յուրաքանչյուր երկրում ՔՀԿ չափիչի փորձնական կիրառման ընթացքում մենք մտադիր ենք գնահատել դրա գործնական իրականացման ընթացքը և կատարելագործել այն՝ ելնելով քաղած դասերից և ապահովելով, որ ոչ մի առանցքային հարց կամ մտահոգություն դիտարկումից դուրս չմնա:

Հուսով ենք, որ ՔՀԿ չափիչը կօգտագործվի ինչպես կառավարությունների և ՔՀԿ-ների, հետազոտողների և պրակտիկ մասնագետների, այնպես էլ դոնորների, որոշում կայացնողների և

քաղաքականություններն իրագործողների կողմից: Մեր ամենակարևոր ակնկալիքն այն է, որ ՔՀԿ չափիչը կնպաստի Արևելյան գործընկերության տարածաշրջանում քաղաքացիական հասարակության միջավայրի բարելավմանը և կայունության կայացմանը:

Հարգանքով,

Էսթեր Հարթայ և Լյուբեն Պանով

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է ՔՀԿ չափիչը

ՔՀԿ չափիչը Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության միջավայրի գնահատման համար մշակված գործիք է: Այն բաղկացած է 10 տարբեր ոլորտների չափորոշիչներից և ցուցանիշներից, որոնք պետք է օգտագործվեն ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական միջավայրի գնահատման նպատակով: Այդ ցուցանիշները մշակվել են՝ հիմք ընդունելով միջազգային չափանիշները և ոլորտի կարգավորման առաջատար փորձը՝ տարածաշրջանում ձևավորված կարիքների և ի հայտ եկող միտումների դիտարկման նպատակով:

ՔՀԿ չափիչի նպատակն է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-երի) գործունեության միջավայրի կանոնավոր և հետևողական մշտադիտարկման շրջանակ ապահովել: Այս գործընթացի արդյունքում ձեռք բերված տվյալները կօգտագործվեն ավելի նպաստավոր միջավայրի ձևավորմանն ուղղված առաջարկությունների մշակման և շահերի պաշտպանության փաստահենք քարոզարշավների ձեռնարկման համար: Սա նաև հնարավորություն կտա շահագրգիռ կողմերին ավելի լավ պատկերացում ունենալ ՔՀԿ-ների գործունեության միջավայրին առնչվող հարցերի վերաբերյալ և այդ միջավայրի բարելավման իրենց ջանքերում առաջնորդվել միջազգային չափորոշիչների վրա հիմնված չափանիշներով:

Գործիքի համատեքստում **«ՔՀԿ» եզրույթը նշանակում է** կամավոր հիմունքներով ձևավորված ինքնակառավարվող մարմիններ կամ կազմակերպություններ, որոնք ստեղծվել են իրենց հիմնադիրների կամ անդամների՝ շահույթ չհետապնդող նպատակների իրագործման նպատակով: ՔՀԿ-ները ներառում են ինչպես ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, այնպես էլ այդ անձանց խմբերի կողմից ձևավորված մարմիններ կամ կազմակերպություններ: Դրանք կարող են ձևավորվել անդամակցության հիմքով կամ առանց անդամակցության: ՔՀԿ-ները կարող են ոչ ֆորմալ բնույթ ունենալ կամ լինել իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպություններ: Որպես այդպիսին կարող են հանդես գալ, մասնավորապես, միավորումները, հիմնադրամները, շահույթ չհետապնդող ընկերությունները կամ վերը նշված չափանիշներին համապատասխանող կազմակերպությունների այլ տեսակները: ՔՀԿ չափիչը չի դիտարկում քաղաքական կուսակցությունների, կրոնական կազմակերպությունների և արհմիությունների գործունեության միջավայրը:

Ինչպե՞ս է մշակվել ՔՀԿ չափիչը

ՔՀԿ չափիչը մշակվել է **Արևելյան գործընկերության տարածաշրջանի մի խումբ փորձագետների համատեղ աշխատանքի արդյունքում,** «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոնի» (ECNL) աջակցությամբ, Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող *«Առաջընթացի մշտադիտարկում, գործողությունների հզորացում»* ծրագրի շրջանակներում: Գործընթացին աջակցություն են ցուցաբերել Արևելյան գործընկերության վեց երկրներից յուրաքանչյուրի տեղական գործընկերները.

- Հայաստան՝ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»,
- Բելառուս՝ «Ժողովրդավարամետ ՀԿ-ների միավորում», «Իրավական բարեփոխումների կենտրոնի» հետ համատեղ,
- Վրաստան՝ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» (ՔՀԻ),
- Մոլդովա՝ «Պրոմո-Լեքս» ասոցիացիա,

- Ուկրաինա՝ «Անկախ քաղաքական հետազոտությունների ուկրաինական կենտրոն» (UCIPR),
- Ադրբեջան՝ «Էմ-Ջի Քընսալթինգ» ՍՊԸ

ՔՀԿ չափիչի մշակման գործընթացը բավականաչափ մասնակցային եղանակով է իրականացվել: Գործիքի մշակման յուրաքանչյուր փուլում փորձագետների առանցքային խումբը հաշվի է առել ծրագրի խորհրդատուների և ՔՀԿ գործընկերների լայն շրջանակի ներկայացրած կարծիքները և առաջարկությունները: Յուրաքանչյուր երկրում խորհրդակցությունների երեք փուլ է իրականացվել:

Սույն փաստաթղթում ներկայացված ՔՀԿ չափիչը վերջնական տեսքով մի նախագիծ է, որը ենթակա է փորձնական կիրառման և փորձարկման: Մշտադիտարկման և երկրների զեկույցների մշակման առաջին փուլից հետո նախատեսում ենք գնահատել դրա գործնական կիրառման արդյունքները և ստացված հետադարձ կապի հիման վրա լրամշակել գործիքը՝ հաշվի առնելով փորձարկման ընթացքում քաղած դասերը:

Որոնք են ՔՀԿ-ների համար բարենպաստ միջավայրի ստեղծման հիմնական տարրերը

ՔՀԿ չափիչը լայնորեն է մեկնաբանում քաղաքացիական հասարակության «բարենպաստ» միջավայրի հասկացությունը: Փորձագետների կարծիքով, գործիքի համատեքստում բարենպաստ միջավայրի հիմնական տարրերը առկա են այն դեպքում, երբ ՔՀԿ-ները հնարավորություն ունեն՝

- Ազատորեն հիմնադրվել և գործել առանց կառավարության միջամտության,
- Կապ հաստատել իրենց շահառուների հետ, ցանցեր ձևավորել երկրի ներսում և երկրից դուրս՝ առանց կառավարության հաստատման կամ ծանուցման,
- Մասնակցել քաղաքական և օրինաստեղծ գործընթացներին, ջատագովական գործունեություն ծավալել, մշտադիտարկել պետական մարմինների գործողությունները և քաղաքականությունը և վերահսկողական (watchdog) դեր ստանձնել,
- Հրապարակայնորեն արտահայտել իրենց կարծիքը, հավաքներ կազմակերպել և բարձրաձայնել իրենց բողոքները՝ առանց նախնական թույլտվության և առանց անհարկի վարչարարական պահանջների կամ գործնական խոչընդոտների,
- Տնտեսավարող սուբյեկտների հետ համահավասար վերաբերմունքի արժանանալ և օգտվել մասնավոր կյանքի իրավունքից,
- Իրենց գործունեության համար միջոցներ հայթայթել (տնտեսական գործունեության, տեղական և օտարերկրյա նվիրատուների, պետական ֆինանսավորման աղբյուրներից և օգտագործելով տարբեր մեթոդներ, օրինակ՝ հանրային դրամահավաք) և ներգրավել կամավորների,
- Օգտվել հարկային արտոնություններից, որոնք թույլ են տալիս նրանց օգտագործել միջոցները և խթանում են անհատների և ընկերություններին նվիրատվությունները,
- Իմաստալից համագործակցություն հաստատել պետության հետ, որը նպաստում է քաղաքացիական հասարակության զարգացմանը:

Ինչպես է կառուցված գործիքը և ինչ ոլորտների է այն անդրադառնում

ՔՀԿ չափիչը բաղկացած է երկու հիմնական մասից.

- **Հիմնարար իրավունքներ և ազատություններ**. այս մասը պարունակում է հիմնական չափորոշիչները, որոնք էական նշանակություն ունեն քաղաքացիական հասարակության բարենպաստ միջավայրի համար: Դրանք հիմնված են մարդու հիմնարար իրավունքների վրա, որոնք պետք է հասանելի լինեն ինչպես անհատներին, այնպես էլ ՔՀԿ-ներին:
- **Անհրաժեշտ պայմաններ**. այս մասը ներառում է հավելյալ աջակցություն ապահովող չափորոշիչները, որոնք թեև նույնպես կարևոր են քաղաքացիական հասարակության

զարգացման համար, սակայն առանց հիմնարար իրավունքների և ազատությունների երաշխավորման՝ բավարար չեն բարենպաստ միջավայրի ապահովման համար:

Գործիքը ընդգրկում է 10-ը տարբեր, բայց խիստ փոխկապակցված ոլորտներ: Յուրաքանչյուր ոլորտ կազմված է չափորոշիչներից, որոնք սահմանում են հիմնական պահանջները, և ցուցանիշներից, որոնց միջոցով հնարավոր է լինում չափվել չափորոշիչների իրականացումը: Այդ ցուցանիշները անդրադառնում են ինչպես իրավական կարգավորումներին, այնպես էլ դրանց գործնական կիրառմանը: Երկու մասից բաղկացած՝ ՔՀԿ չափիչում ներառված ոլորտները հետևյալն են՝

Հիմնարար իրավունքներ ու ազատություններ

- Միավորումների ազատություն
- Հավասար վերաբերմունք
- Ֆինանսավորման մատչելիություն
- Խաղաղ հավաքների ազատություն
- Որոշումների ընդունման գործընթացում մասնակցելու իրավունք
- Խոսքի ազատություն
- Մասնավոր կյանքի իրավունք
- Պետության կողմից պաշտպանության պարտականություն

Անհրաժեշտ պայմաններ

- Պետական աջակցություն (ներառյալ՝ հարկային ոլորտում և կամավորության ասպարեզներում)
- Պետություն-ՔՀԿ համագործակցություն

Ինչպես կարող եք օգտագործել սա

Փորձարկման փուլում Արևելյան գործընկերության վեց երկրներից յուրաքանչյուրի համար ծրագրի գործընկերները ՔՀԿ չափիչի հիման վրա կմշակեն այդ երկրի զեկույցը: Երկրների զեկույցների արդյունքները կամփոփվեն տարածաշրջանային զեկույցում, որը կմշակվի ECNL-ի կողմից և որտեղ կներկայացվեն տարածաշրջանային զարգացումները և երկրների առանձնահատկությունները: ՔՀԿ չափիչը, ինչպես նաև երկրների և տարածաշրջանային զեկույցները, կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝

- **Համեմատել յուրաքանչյուր ոլորտի եզրակացությունները ըստ տարիների** և արձանագրել առաջընթացը կամ հետընթացը,
- **Համեմատել** մի երկրում արձանագրված **ձեռքբերումները կամ խոչընդոտները** Արևելյան գործընկերության այլ երկրներում տեղի ունեցող զարգացումների հետ: Սա կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ միջավայրի հետագա բարելավման համար կամ գաղափարներ տալ հետագա քաղաքականության կամ գործնական միջոցառումների վերաբերյալ,
- **Փաստահենք լուծումներ առաջարկել ջատագովության և քաղաքականության մշակման** ուղղությամբ: ՔՀԿ չափիչի առաջարկությունները կարող են որպես ուղեցույց ծառայել ձեռնարկվելիք բարեփոխումների համար և օգտագործվել կառավարության և զարգացման գործընկերների կողմից քաղաքականության մշակման ընթացքում: ՔՀԿ-ները կարող են առաջարկությունները օգտագործել նաև իրենց ջատագովության առաջնահերթությունները սահմանելու նպատակով,
- **Կազմակերպել բանավեճեր** հայտնաբերված մարտահրավերների և առաջարկությունների վերաբերյալ,

- **Պատրաստել ինֆոգրաֆիկաներ կամ այլ տեղեկատվական նյութեր՝** ներկայացնելով երկրների զեկույցների եզրահանգումները,
- **Գնահատել առաջարկվող օրենսդրական նախաձեռնությունները** ՔՀԿ միջավայրին առնչվող ոլորտներում,
- **Արդիական տեղեկատվություն տրամադրել** երկրներում քաղաքացիական հասարակության իրավիճակի վերաբերյալ հետագա հետազոտությունների և վերլուծությունների համար,
- **Ավելի մանրամասն թեմատիկ զեկույցներ մշակել** ՔՀԿ չափիչի 10 ոլորտներից յուրաքանչյուրի չափորոշիչների և ցուցանիշների մասին հավաքագրված տեղեկատվության հիման վրա (օրինակ, առանձին զեկույցներ պատրաստել ֆինանսական ռեսուրսների մատչելիության կամ ՔՀԿ-ների մասնավոր կյանքի վերաբերյալ):

ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
ՈՒՂՈՐՏ 1՝ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ		
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ	**ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**	
	Իրավական դաշտում	**Գործնականում**
I. Յուրաքանչյուր ոք ազատորեն կարող է ՔՀԿ ստեղծել, մասնակցել և անդամակցել ՔՀԿ-ին:	1. Յուրաքանչյուր ոք՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, տեղացի թե արտասահմանցի, ինչպես նաև անձանց խումբ ՔՀԿ հիմնելու իրավունք ունի: 2. ՔՀԿ-ները կարող են գործել առանց գրանցվելու և իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք բերելու: 3. ՔՀԿ-ները կարող են գործել առանց աշխարհագրական տարածքի սահմանափակման, այդ թվում՝ առցանց հարթակներում: 4. Անհատներն ու իրավաբանական անձինք ազատ են միավորվելու և մասնակցելու ՔՀԿ-ների գործունեությանը՝ լինելով ՔՀԿ անդամ, կամավոր, կամ աջակցելով ՔՀԿ նախաձեռնություններին:	1. Պետությունը գործնականում խոչընդոտներ չի հարուցում ՔՀԿ ստեղծելու, անդամակցելու կամ գործունեությանը մասնակցելու համար: 2. Անհատներն ազատ են ՔՀԿ-ներին միանալու կամ ՔՀԿ գործունեությանը մասնակցելու վերաբերյալ իրենց որոշումներում:
II. ՔՀԿ-ն որպես իրավաբանական անձ գրանցելու ընթացակարգը հստակ է, պարզ, արագ և ոչ թանկ:	1. Գրանցումը արագ է, մատչելի և ոչ թանկ: 2. Իրավաբանական անձի կարգավիճակ ստանալու համար գրանցման ընթացակարգի պահանջները հստակ նկարագրված են, պարզ են և գրանցող մարմնի հայեցողության հնարավորություն չեն թողնում: 3. Գրանցման մերժման հիմքերը փոքրաթիվ են, հստակ և հիմնավորված:	1. Իրավաբանական անձի կարգավիճակ տվող մարմինը որոշում կայացնելիս գործում է անկախ և անկողմնակալ կերպով, լրացուցիչ տեղեկատվություն չի պահանջում և գրանցման համար լրացուցիչ պահանջներ չի առաջադրում: 2. Գրանցման փաստաթղթերում առկա թերացումների մասին դիմողին հաղորդվում է հստակ կերպով և խելամիտ ժամկետներում, և գրանցումը չի մերժվում ոչ

		Էական թերացումների պատճառով: 3. ՔՀԿ գրանցման դիմումը մերժելու դեպքում խելամիտ ժամկետներում անկախ և անկողմնակալ դատաքննության հնարավորություն է տրվում:
III. ՔՀԿ-ներն ազատ են սահմանելու իրենց նպատակներն ու գործունեության տեսակները և կարող են գործել ինչպես իրենց գրանցման երկրի սահմաններում, այնպես էլ այդ սահմաններից դուրս:	1. Օրենսդրությունը թույլ է տալիս ՔՀԿ-ներին ազատորեն սահմանելու իրենց նպատակները և իրականացնելու ցանկացած օրինական գործունեություն: 2. ՔՀԿ-ները կարող են նպատակներ հետապնդել տեղական, ազգային և միջազգային մակարդակում, ներառյալ՝ ազգային կամ միջազգային միավորումներին կամ դաշինքներին անդամակցելու միջոցով: 3. Օրենքով չի պարտադրվում ՔՀԿ-ների գործունեությունը համապատասխանեցնել պետական քաղաքականությանը կամ համաձայնեցնել պետական կառավարման մարմինների հետ:	1. Գրանցման համար պատասխանատու մարմինը ՔՀԿ նպատակները դիտարկելիս մեկնաբանող կամ հայեցողական մոտեցում չի ցուցաբերում: 2. Պետական մարմինների կողմից գործնականում որևէ խոչընդոտ չի կիրառվում, որը կխանգարի ՔՀԿ-ների ներգրավմանը օրենքով թույլատրելի գործունեության ոլորտներում:
IV. Կիրառվող ցանկացած պատժամիջոց հստակ է, համապատասխանում է համաչափության սկզբունքին և ցանկալի նպատակին հասնելու համար նվազագույն միջամտություն է նախատեսում:	1. ՔՀԿ-ների համար նախատեսված պատժամիջոցները հստակ սահմանված են և նվազագույն չափով են միջամտում միավորման ազատության իրավունքի իրացմանը: 2. Պարտադրված կասեցման և լուծարման հիմքերը հստակ թվարկված են և օգտագործվում են միայն այն դեպքում, երբ ավելի մեղմ միջոցները բավարար չեն լինում:	1. ՔՀԿ-ները համապատասխան նախազգուշացում են ստանում ենթադրյալ խախտման վերաբերյալ, և խախտումներն ուղղելու հնարավորություն է տրվում՝ մինչ պատժամիջոցների կիրառումը: 2. Հարկադիր կասեցումը ծայրահեղ միջոց է և կիրառվում է միայն օրենքի կոպիտ խախտումների դեպքում:
V. Պետությունը չի միջամտում ՔՀԿ-ների ներքին գործերին և գործունեությանը:	1. ՔՀԿ-ներն ազատ են որոշում կայացնելու իրենց ներքին կառավարման և գործունեության վերաբերյալ: 2. Պետության կողմից ՔՀԿ-ների մոնիտորինգի և վերահսկողության շրջանակները, չափանիշները և սահմանափակումները հստակ կանոնակարգված են:	1. ՔՀԿ-ների ստուգումները հիմնավորված են, համաչափ, և օբյեկտիվ: 2. ՔՀԿ-ները հեշտությամբ կարող են կատարել հաշվետվողականության պահանջները առցանց կամ ոչ առցանց եղանակով:

	3. Հաշվետվության ընթացակարգը և պահանջները հստակ նկարագրված են և համահունչ են ՔՀԿ-ի չափին և/կամ գործունեության ծավալին:	

ՈԼՈՐՏ 2՝ ՀԱՎԱՍԱՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ		
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ	**ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**	
	Իրավական դաշտում	**Գործնականում**
I. Պետությունը համահավասար կերպով է վերաբերում ՔՀԿ-ներին և առևտրային ընկերություններին:	1. ՔՀԿ-ների գրանցման և գործունեության կամավոր դադարեցման ընթացակարգերը տնտեսվարող սուբյեկտների գրանցման ընթացակարգերի համեմատ ավելի թանկ, ժամանակատար կամ ծանրաբեռնող չեն: 2. ՔՀԿ-ները ենթակա չեն ավելի խիստ վարչական և գործառնական պահանջների, քան տնտեսվարող սուբյեկտները: 3. ՔՀԿ-ները կարող են արտոնություններ ստանալ և մրցակցել պետական գնումների գործընթացում՝ առևտրային ընկերությունների հետ հավասար հիմունքներով, առանց լրացուցիչ ծանրաբեռնող պահանջների: 4. Ֆինանսավորումից, այդ թվում օտարերկրյա ֆինանսավորումից օգտվելու վերաբերյալ իրավական նորմերը ՔՀԿ-ների համար ոչ պակաս բարենպաստ են, քան տնտեսվարող սուբյեկտների համար:	1. Գրանցման մարմինները լրացուցիչ պահանջներ կամ այլ խոչընդոտներ չեն ստեղծում ՔՀԿ-ների գրանցման համար՝ տնտեսվարող սուբյեկտների համեմատ: 2. Գնումների ընթացակարգերից կամ ֆինանսավորման այլ աղբյուրներից օգտվելու դեպքում ՔՀԿ-ները իրենց իրավական կարգավիճակի պատճառով մերժման կամ խոչընդոտների չեն հանդիպում պետության կողմից: 3. ՔՀԿ-ների շրջանում ստուգումներն ու պատժամիջոցները ավելի հաճախակի չեն, քան տնտեսվարող սուբյեկտների շրջանակում:
II. Պետությունը հավասարապես է վերաբերվում բոլոր ՔՀԿ-ներին նրանց հիմնադրման, գրանցման և գործունեության	1. ՔՀԿ-ներին հավասար մոտեցում է սահմանված, իսկ ցանկացած արտոնություն հիմնված է հստակ և օբյեկտիվ չափանիշների վրա: 2. Օտարերկրյա ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից հիմնված ՔՀԿ-ների հանդեպ կիրառվում է նույն մոտեցումը, ինչ տեղական ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից	1. Պետական մարմինները խուսափում են առանձին կազմակերպությունների նկատմամբ արտոնյալ վերաբերմունքից: 2. Պետական պաշտոնյաներին ոչ ձեռնտու տեսակետեր և դիրքորոշումներ արտահայտող ՔՀԿ-ները նպատակաուղղված սահմանափակումների չեն հանդիպում իրենց գործունեության ընթացքում:

հարցերում:	ստեղծված կազմակերպությունների հանդեպ:	

ՈԼՈՐՏ 3՝ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ		
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ	**ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**	
	Իրավական դաշտում	**Գործնականում**
I. ՔՀԿ-ներն ազատ են ֆինանսական և նյութական միջոցներ փնտրել, ստանալ և օգտագործել իրենց նպատակների իրականացման համար:	1. ՔՀԿ-ներին թույլատրվում է տարբեր մեխանիզմների օգնությամբ դիմել և ֆինանսավորում կամ նյութական աջակցություն ստանալ հանրային կամ մասնավոր դոնորներից: 2. Որևէ դոնորից ֆինանսական կամ նյութական աջակցություն ստանալու, օգտագործելու և հաշվետվություն ներկայացնելու վերաբերյալ ՔՀԿ-ների հանդեպ պահանջները ծանրաբեռնող չեն:	1. ՔՀԿ-ների համար խնդիրներ չեն ծագում որևէ օրինական աղբյուրից ֆինանսավորում կամ նյութական աջակցություն ստանալու դեպքում: 2. ՔՀԿ-ները կարող են օգտվել դրամահավաքի տարբեր եղանակներից:
II. Ֆինանսական կամ նյութական միջոցների տեղական, օտարերկրյա և միջազգային աղբյուրների միջև տարբերություն չի դրվում:	1. ՔՀԿ-ների համար հատուկ սահմանափակումներ կամ ընթացակարգեր չկան արտերկրյա ֆինանսավորում կամ նյութական աջակցություն ստանալու և օգտագործելու, իսկ դոնորների համար՝ ֆինանսավորում տրամադրելու կամ արտերկիր ուղարկելու համար: 2. Միջազգային դրամաշնորհները, նվիրատվությունները և անդամավճարները հարկվում են նույն եղանակով, ինչպես տեղականները:	1. ՔՀԿ-ները գործնականում կարող են ազատորեն օտարերկրյա ֆինանսավորում ստանալ և օգտագործել արտասահմանյան ֆինանսական աղբյուրներ: 2. Օտարերկրյա ֆինանսավորում ստացող ՔՀԿ-ները չեն թիրախավորվում և հարձակման չեն ենթարկվում հանրային լրատվամիջոցների և կառավարության կողմից;

ՈԼՈՐՏ 4՝ ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ		
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ	**ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**	
	Իրավական դաշտում	**Գործնականում**
I. Յուրաքանչյուր ոք կարող է ազատորեն օգտվել խաղաղ	1. Յուրաքանչյուր ոք՝ տեղացի թե արտասահմանցի, ինչպես նաև անձանց խումբ, այդ թվում՝ ՔՀԿ-ները, հավաքներ կազմակերպելու և (կամ) մասնակցելու	1. Կամայական հիմքով խաղաղ հավաքների մերժման կամ ցրման օրինակներ չկան: 2. Մարդկանց, խմբերի կամ ՔՀԿ-ներին չի պարտադրվում

հավաքների կազմակերպման և մասնակցության իրավունքից:	իրավունքը ունեն: 2. Օրենքով թույլատրվում են ինքնաբուխ, միաժամանակյա և հակընդդեմ հավաքները:	կամ համակարգված կերպով արգելվում մասնակցել խաղաղ հավաքների: 3. Անհատներին չեն կալանավորում կամ ահաբեկում՝ խաղաղ հավաքներ կազմակերպելու, դրանց մասնակցելու կամ չմասնակցելու մտադրության համար: 4. Անհատները և իրավաբանական անձինք չեն հետապնդվում կամ պատժվում խաղաղ հավաքներ կազմակերպելու կամ դրանց մասնակցելու համար:
II. Պետությունը աջակցում է խաղաղ հավաքների ընթացքին և պաշտպանում է խաղաղ հավաքները:	1. Խաղաղ հավաքի անցկացման իրավունքի համար նախնական թույլտվություն չի պահանջվում, կա առավելագույնը ծանուցման ընթացակարգ, որը պարզ է, հեշտ, անվճար և նախատեսում է ողջամիտ ժամկետներում նախնական ծանուցում: 2. Խաղաղ հավաքների սահմանափակման վերաբերյալ որոշման բողոքարկման դեպքում վերջնական վճիռը հրապարակվում է մինչև հավաքի նախատեսված օրը: 3. Օրենսդրությունը պաշտպանում է խաղաղ հավաքի կազմակերպման նպատակով հաղորդակցության էլեկտրոնային միջոցների օգտագործման իրավունքը:	1. Ծանուցման ընթացակարգը չի օգտագործվում որպես դե ֆակտո թույլտվություն: 2. Առկա սահմանափակումները համաչափ են և բխում են օբյեկտիվ հիմնավորված անհրաժեշտությունից: 3. Սոցիալական կայքերի հասանելիությունը չի սահմանափակվում խաղաղ հավաքներին խոչընդոտելու նպատակով:
III. Պետությունը անհարկի պահանջներ չի առաջադրում խաղաղ հավաքների կազմակերպիչների և մասնակիցների նկատմամբ:	1. Հավաքի կազմակերպիչները պատասխանատվություն չեն կրում հավաքի ընթացքում հասարակական կարգի պահպանման կամ այլոց գործողությունների համար: 2. Իշխանությունների միջամտությունը հնարավոր է միայն խաղաղ հավաքին ընթացքին աջակցելու նպատակով կամ բռնություն գործադրելու դեպքում:	1. Պետական մարմինները անհիմն վճարումներ չեն պահանջում այն ծառայությունների համար, որոնք նրանք պարտավոր են տրամադրել: 2. Խաղաղ հավաքների վերաբերյալ տեղեկության տարածման համար խոչընդոտներ չեն ստեղծվում: 3. Պետությունը անհամաչափ սահմանափակումներ չի դնում խաղաղ հավաքների ընթացքում տեխնիկական միջոցների օգտագործման նկատմամբ:
IV. Իրավապահ մարմինները աջակցում են խաղաղ հավաքներին և պատասխանատու են	1. Իրավապահ մարմինները հստակ կարգավորումներ ունեն խաղաղ հավաքների մասնակիցների հանդեպ ուժի կիրառման վերաբերյալ, որոնք բխում են մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումներից: 2. Ուժի անհամաչափ օգտագործման կամ	1. Մինչ ուժի կիրառումը նախազգուշացում է տրվում, միաժամանակ հավաքների ոստիկանական վերահսկման բոլոր բաղադրիչների հանդեպ կանխատեսելի և համաչափ մոտեցում է կիրառվում: 2. Իրավապահ մարմինները պաշտպանում են հավաքի

իրենց ներկայացուցիչների գործողությունների համար:	ցուցարարներին պաշտպանելու պարտավորության չկատարման համար կան պատասխանատվության մեխանիզմներ:	մասնակիցներին այն անձանցից կամ խմբերից (այդ թվում՝ սադրիչներից), որոնք փորձում են խոչընդոտել հավաքի ընթացքին: 3. Հավաքների ազատության իրավունքը խախտելու դեպքում իրավապահ մարմինների ներկայացուցիչները պատասխանատվություն են կրում:

ՈԼՈՐՏ 5՝ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ		
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ	**ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**	
	Իրավական դաշտում	**Գործնականում**
I. Յուրաքանչյուր ոք կարող է մասնակցել որոշումների ընդունման գործընթացներին:	1. Հանրային քննարկումները պարտադիր են իրավական ակտերի և քաղաքականությունների այն բոլոր նախագծերի համար, որոնք ազդում են հանրության կամ կոնկրետ ոլորտների և խմբերի վրա: 2. Օրենքը երաշխավորում է ներառական և իմաստալից մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին, իսկ առկա սահմանափակումները հստակ նկարագրված են և նեղ շրջանակ են ընդգրկում: 3. Օրենսդրությունը հստակ մեխանիզմներ է սահմանում՝ քաղաքացիական մասնակցության և որոշումների կայացման թափանցիկության կանոնների խախտման դեպքում պատասխանատվության կանչելու վերաբերյալ: 4. Որոշումների ընդունման գործընթացում սահմանված են հստակ չափորոշիչներ և բոլոր ՔՀԿ-ների համար մասնակցության հավասար հնարավորություններ:	1. Իշխանությունները տարբեր մեխանիզմներ են կիրառում՝ իմաստալից հանրային մասնակցություն ապահովելու նպատակով: 2. Որոշումների կայացման գործընթացներում մասնակցություն ցուցաբերած ՔՀԿ-ները հետագայում ճնշումների չեն ենթարկվում: 3. Ցանկացած ՔՀԿ կարող է մասնակցել քննարկումներին՝ առանց խտրականության, անկախ ՔՀԿ տեսակից կամ կառավարության հանդեպ դիրքորոշումներից:
II. Առկա են հստակ, հեշտ և թափանցիկ մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք նպաստում են ՔՀԿ-ների	1. Հանրային քննարկումների ընթացակարգերը, եղանակները պարզ են և հստակ սահմանված են օրենքով: 2. Օրենքը նախատեսում է խորհրդակցական մարմինների ստեղծում՝ այդ մարմինների անդամների	1. Օրինագծերի և ժամանակացույցի մասին տեղեկությունները հասանելի են և անվճար, նախընտրելի է՝ մեկ միասնական առցանց հարթակում, որը հեշտ է օգտագործել: 2. Քննարկման ձևաչափը արդյունավետ մասնակցություն

կանոնավոր, բաց և արդյունավետ մասնակցությանը պետական քաղաքականության մշակման, իրականացման և մոնիտորինգի գործում:	ընտրության և դրանցում որոշումների կայացման հստակ չափանիշներով և թափանցիկ մեխանիզմներով: 3. Օրենքը հնարավորություն է տալիս քաղաքականության իրականացման, մոնիտորինգի և գնահատման գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության համար:	է երաշխավորում, ՔՀԿ-ները հրավիրվում են մասնակցելու որոշումների կայացման գործընթացին սկսած սկզբնական փուլից, մասնակցության համար բավարար ժամանակ է հատկացվում: 3. Խորհրդակցական մարմինների առկայությունը չի սահմանափակում մյուս ՔՀԿ-ների տվյալ թեմայով հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորությունը: 4. Պետական մարմինները հրապարակում են ՔՀԿ-ների առաջարկները և հետադարձ կապ տրամադրում:
III. ՔՀԿ-ներին հասանելի է արդյունավետ մասնակցության համար անհրաժեշտ տեղեկատվությունը:	1. Օրենսդրությունը ներառում է պետական մարմինների կողմից որոշումների ընդունման գործընթացին վերաբերող ողջ տեղեկատվության հրապարակման եղանակներն ու ժամկետները: 2. Օրենքը սահմանում է տեղեկատվության մատչելիության պարզ և հստակ ընթացակարգ:	1. Օրինագծերը և քաղաքականության նախագծերը հրապարակվում են և հասանելի են, իսկ ՔՀԿ-ները պատշաճ կերպով տեղեկացվում են նախագծերի վերաբերյալ հանրային լսումների ու քննարկումների մասին: 2. Պետական մարմինները տեղեկատվության հարցումների պատասխանները տրամադրում են ժամանակին և անվճար հիմքերով:
IV. Մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին տարբերվում է քաղաքական և լոբբիստական գործունեությունից:	1. Քաղաքական գործունեությանը ՔՀԿ-ների մասնակցության վերաբերյալ սահմանափակումները հստակ են ու նեղ շրջանակներով սահմանափակված և չեն խոչընդոտում պետական քաղաքականության գործընթացում ՔՀԿ-ների մասնակցությանը: 2. Լոբբիստական գործունեության կանոնակարգումը չի սահմանափակում ՔՀԿ-ների՝ պետական քաղաքականության գործընթացներում մասնակցության և շահերի պաշտպանության գործունեությունը:	1. ՔՀԿ-ները հետապնդումների կամ ճնշումների չեն ենթարկվում քաղաքական կուսակցությունների շահերն արտահայտող կամ դրանց հակադրվող տեսակետների համար: 2. ՔՀԿ-ներն ազատ են զբաղվելու շահերի պաշտպանության գործունեությամբ, որի համար որպես լոբբիստ կամ պրոֆեսիոնալ փաստաբան գրանցվելու պահանջ կամ լրացուցիչ վարչական կամ ֆինանսական բեռ չի սահմանված:

ՈԼՈՐՏ 6՝ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ	
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ	**ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

	Իրավական դաշտում	Գործնականում
I. Յուրաքանչյուր ոք կարծիք արտահայտելու և խոսքի ազատության իրավունք ունի:	1. Խոսքի և կարծիքի ազատության իրավունքը երաշխավորվում է ցանկացած անձի համար՝ տեղացի թե օտարերկրացի, ինչպես նաև անձանց խմբերի, այդ թվում՝ՔՀԿ-ների համար, առանց խտրականության: 2. ՔՀԿ-ները և նրանց հետ առնչվող մարդիկ ազատ են փնտրել, ստանալ և փոխանցել ցանկացած տեսակի տեղեկատվություն և գաղափարներ՝ անկախ սահմաններից և միջոցներից: 3. Ատելության ցանկացած քարոզչություն, որը խտրականության, թշնամանքի կամ բռնության դրսևորում է պարունակում, արգելված է:	1. Մտքերի կամ կարծիքի արտահայտման համար ճնշումներ կամ անհամաչափ պատժամիջոցներ չեն կիրառվում: 2. Պետությունը խոչընդոտների չի ստեղծում պաշտոնական քաղաքականությանը չհամապատասխանող գաղափարների, կարծիքների և մտքերի արտահայտման համար: 3. Ատելության խոսքի համար առկա պատժամիջոցները խիստ հիմնավորված են և համաչափ, օգտագործվում են որպես կանխարգելիչ միջոց, և չէին կարողանա նույն արդյունքի հասնել, եթե փոխարինվեին ավելի մեղմ միջոցներով:
II. Պետությունն աջակցում է խոսքի և կարծիքի արտահայտման ազատությանը և պաշտպանում այն:	1. Կարծիք արտահայտելու համար ինտերնետի կամ հաղորդակցության այլ միջոցների ազատ օգտագործման հետ կապված որևէ սահմանափակում չկա: 2. Գրաքննության դեմ հստակ կարգավորումներ և երաշխիքներ կան: 3. Օրենքը պաշտպանում է ազդարարներին և լրագրողների տեղեկատվության աղբյուրների գաղտնիությունը: 4. Վիրավորանքի և զրպարտության համար հստակ և համաչափ պատժամիջոցներ կան, որոնք քրեականացված չեն:	1. Եթե ավանդական կամ առցանց լրատվամիջոցների արգելափակման դեպքեր են լինում, ապա դրանք միշտ բխում են հստակ իրավական հիմքերից և համաչափ են օրինական նպատակներին հասնելու համար: 2. Ինտերնետում հրապարակումների համար որևէ հատուկ թույլտվություն ստանալու կամ ավանդական լրատվամիջոցների համար կիրառվող որոշակի վարչական կանոնակարգերի պահանջներին համապատասխանելու կարիք չկա: 3. Լրագրողների դատապարտման կամ տեղեկատվության աղբյուրները բացահայտելու նպատակով ոստիկանության կողմից լրատվամիջոցների հետախուզման դեպքերը չկան:

ՈԼՈՐՏ 7՝ ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ		
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ	**ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**	
	Իրավական դաշտում	**Գործնականում**
I. Յուրաքանչյուր ոք ունի	1. Մասնավոր կյանքի իրավունք ունեն բոլորը՝ առանց	1. Պետական մարմինների կողմից մասնավոր կյանքի

մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանության իրավունք:	խտրականության: 2. Մասնավոր կյանքի միջամտությունից կամ հարձակումներից պաշտպանությունը երաշխավորված է օրենքով՝ անկախ այն բանից, թե արդյոք դա պետական մարմինների, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից է իրականացվում, առցանց թե ոչ առցանց եղանակով: 3. Օրենքը սահմանում է պետական մարմինների կողմից մասնավոր անձանց անձնական տվյալների հավաքագրման, մշակման և պահպանման կարգը:	իրավունքի խախտումները ուսումնասիրվում են և համապատասխան գործ է հարուցվում: 2. ՔՀԿ-ները և նրանց հետ առնչվող անձինք պաշտպանված են պետական մարմինների կողմից առցանց և ոչ առցանց եղանակով անհատական տեղեկատվության անօրինական կամ անհամաչափ հավաքագրման, մշակման և պահպանման փորձերից:
II. Պետությունը պաշտպանում է ՔՀԿ-ների և առնչվող անձանց մասնավոր կյանքի իրավունքը:	1. ՔՀԿ-ների հաշվետվողականությանը վերաբերող պահանջները պահպանում են անդամների, դոնորների, խորհրդի անդամների և աշխատողների մասնավոր կյանքի գաղտնիության սկզբունքը և անձնական իրերի գաղտնիությունը: 2. ՔՀԿ գրասենյակի խուզարկումը հնարավոր է միայն օբյեկտիվ հիմքերի և համապատասխան դատական թույլտվության հիման վրա: 3. ՔՀԿ-ներին կամ նրանց հետ առնչվող անձանց հետևելը համաչափ է, օրենքով հիմնավորված և պահանջում է անկախ դատական մարմնի կողմից տրված նախնական թույլտվություն:	1. ՔՀԿ-ների կամ նրանց հետ առնչվող անձանց մասնավոր կյանքի կամ հաղորդակցության չարտոնված միջամտության պրակտիկա չկա: 2. Առանց համապատասխան իրավասության ՔՀԿ-ների գրասենյակ ներխուժելու կամ ՔՀԿ-ների փաստաթղթերը զննելու դեպքեր չկան:

ՈԼՈՐՏ 8՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ	**ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**	
	Իրավական դաշտում	**Գործնականում**
I. Պետությունը պաշտպանում է ՔՀԿ-ներին և նրանց հետ կապված մարդկանց միջամտությունից և հարձակումներից:	1. Պետությունն ըստ օրենքի պարտավոր է պաշտպանել ՔՀԿ-ների և նրանց հետ առնչվող անձանց իրավունքները: 2. ՔՀԿ-ները և նրանց հետ առնչվող անձինք կարող են օգտվել բողոքարկման արդյունավետ մեխանիզմից, որպեսզի կարողանան վիճարկել իրենց իրավունքների իրացման վրա ազդող որոշումները ուսումնասիրվեն անկախ և	1. Պետությունը արդյունավետ կերպով պաշտպանում է ՔՀԿ-ներին, երբ նրանք հարձակման են ենթարկվում երրորդ անձանց կողմից: 2. Թերի պաշտպանության վերաբերյալ բողոքները անաչառ կերպով և ողջամիտ ժամկետներում քննվում են իրավասու մարմինների և

	անկողմնակալ մարմնի կողմից: 3. Օրենքը երաշխավորում է ՔՀԿ-ների արդյունավետ իրավական պաշտպանության ապահովումը ողջամիտ ժամկետում:	դատարանների կողմից: 3. Պետական պաշտոնյաները ատելության խոսք չեն օգտագործում և չեն խարանում ՔՀԿ-ներին, և պետական լրատվամիջոցներում ՔՀԿ-ների կամ նրանց հետ առնչվող մարդկանց «սևացնող» քարոզարշավներ չկան:
II. Ծայրահեղականության, ահաբեկչության, փողերի լվացման և կոռուպցիայի դեմ պայքարի միջոցները նպատակաուղղված են, համաչափ, ռիսկի վրա հիմնված մոտեցմանը համապատասխան, և հարգում են միավորումների, հավաքների ու արտահայտման վերաբերյալ մարդու իրավունքների ստանդարտները:	1. Ծայրահեղականության, ահաբեկչության, փողերի լվացման և կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ օրենսդրությունը չի պարունակում այնպիսի դրույթներ, որոնք կարող են սահմանափակել կամ անհնարին դարձնել ՔՀԿ-ի օրինական գործունեությունը կամ հիմնարար ազատությունների իրացումը: 2. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հիմնավորմամբ իրավական միջոցառումները կիրառվում են միայն առանձին ՔՀԿ-ների հանդեպ, որոնք ռիսկային են գնահատվել; 3. Կոռուպցիայի դեմ պայքարի օրենքները, միջոցառումներն ու ռազմավարությունները չեն սահմանափակում կամ խախտում ՔՀԿ-ների, նրանց աշխատակիցների և դոնորների իրավունքները:	1. Ծայրահեղականության, ահաբեկչության, փողերի լվացման և կոռուպցիայի հետ կապերի վերաբերյալ չհիմնավորված մեղադրանքների հիման վրա ՔՀԿ-ների գործունեության սահմանափակումներ չկան: 2. Պետական մարմինների և բանկերի գործելակերպը չի խանգարում կամ խոչընդոտում ՔՀԿ-ների՝ գումար փոխանցելու կամ ստանալու հնարավորությանը: 3. Հակակոռուպցիոն կանոնակարգերի իրագործումը զգալի անդրադարձ չի ունենում ՔՀԿ-ների, աշխատակիցների և դոնորների իրավունքների և գործողությունների վրա:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՈԼՈՐՏ 9՝ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ	ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	
	Իրավական դաշտում	**Գործնականում**
I. ՔՀԿ-ների ֆինանսական և նյութական պետական աջակցության բազմազան ու	1. Օրենքը նախատեսում է ազգային և տեղական մակարդակում պետական տարբեր մարմինների կողմից ֆինանսավորման զանազան մեխանիզմների ստեղծում: 2. Օրենքը հնարավորություն է տալիս պետության կողմից բնաիրային աջակցություն ցուցաբերել ՔՀԿ-ներին:	1. Պետությունը կանոնավոր ֆինանսավորում է տրամադրում տարբեր ոլորտներում գործող մեծ թվաքանակով ՔՀԿ-ների: 2. Առկա է ՔՀԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ֆինանսավորում և

արդյունավետ մեխանիզմներ կան:		ծառայությունների մատուցումը ՔՀԿ-ներից գնելու աճող պրակտիկա:
II. ՔՀԿ-ների պետական աջակցությունը կարգավորվում է հստակ և օբյեկտիվ չափանիշներով և հատկացվում է թափանցիկ և մրցակցային ընթացակարգով:	1. Պետական ֆինանսական և նյութական աջակցությունը տրամադրվում է թափանցիկության, հաշվետվողականության և ռեսուրսների հավասար հասանելիության հստակ ձևակերպված սկզբունքների հիման վրա: 2. Ֆինանսավորման առաջնահերթությունների սահմանման և դրամաշնորհ ստացողների ընտրության գործընթացում օրենքով պահանջվում է ապահովել ՔՀԿ ներկայացուցիչների մասնակցությունը: 3. ՔՀԿ-ներին տրամադրվող պետական ֆինանսավորման մոնիտորինգի և գնահատման հստակ և անաչառ մեխանիզմ կա:	1. Պետական ֆինանսավորման համար դիմելու ընթացակարգը պարզ և թափանցիկ է, համապատասխան տեղեկատվությունը լայնորեն տարածվում է, իսկ ընտրության չափանիշները նախապես հրապարակվում են: 2. Պետական աջակցության տրամադրումը չի օգտագործվում ՔՀԿ-ների անկախությունը խաթարելու կամ նրանց գործունեությանը միջամտելու միջոց: 3. Ընտրության արդյունքների և ծրագրերի արդյունքների մասին տեղեկատվությունը ժամանակին հրապարակվում է:
III. ՔՀԿ-ներն օգտվում են բարենպաստ հարկային միջավայրից:	1. Օրենքը նպաստավոր հարկային արտոնություններ է սահմանում դրամաշնորհների, նվիրատվությունների, տնտեսական գործունեության, դրամագլուխների և անդամավճարների համար այն դեպքերում, երբ այդ միջոցները նպաստում են շահույթ չհետապնդող գործունեությանը: 2. ՔՀԿ-ները կարող են բարեգործական/ հանրօգուտ կարգավիճակ ստանալ հստակ, պարզ և ոչ թանկ ընթացակարգով: 3. Այդ կարգավիճակը տրամադրվում է անորոշ կամ բավականաչափ երկարատև ժամկետով, և կարող է հեշտությամբ թարմացվել:	1. ՔՀԿ-ների հարկային արտոնությունները գործնականում կիրառելի են: 2. Բարեգործական/ հանրօգուտ կարգավիճակի պահանջների համապատասխանության վերահսկումը չի խոչընդոտում ՔՀԿ գործունեությանը: 3. ՔՀԿ-ները չեն ենթարկվում անհիմն հարկային տույժերի կամ պետական մարմինների կողմից բարեգործական/ հանրօգուտ կարգավիճակի դադարեցման:
IV. ՔՀԿ-ներին նվիրատվությունների հատկացման դեպքում ընկերությունները և անհատները օգտվում են հարկային	1. ՔՀԿ-ներին դրամական միջոցներ, ապրանքներ և ծառայություններ նվիրաբերելու համար խթաններ են սահմանված, որոնք ձեռք են բերվում հեշտ և հստակ ընթացակարգերով: 2. Նվիրատվությունների համար հարկվող եկամտի նվազեցման շեմը խթանում է կանոնավոր և խոշոր նվիրատվությունները,	1. Անհատները կարող են օգտագործել առկա հարկային արտոնությունները առանց ավելորդ վարչական բեռի: 2. Բիզնես ընկերությունները կարող են օգտագործել առկա հարկային արտոնությունները առանց ավելորդ վարչական բեռի:

արտոնություններից:	ներառյալ դրամագլուխների նվիրաբերումը:	
V. Օրենսդրությունն ու քաղաքականությունը խթանում են կամավորությունը և խթաններ տրամադրում դրա զարգացման համար:	1. Առկա է կամավորության/ կամավորական աշխատանքի և ընդունող կազմակերպությունների հստակ սահմանում, և կամավորները չեն կարող դիտարկվել որպես անօրինական աշխատուժ: 2. Կամավորներ ներգրավելու համար լրացուցիչ պարտավորություններ և սահմանափակումներ օրենսդրությամբ չեն սահմանվում: 3. Պետությունը խթանում է կամավորության զարգացումը համապատասխան քաղաքականությունների, ծրագրերի և ֆինանսական աջակցության միջոցով:	1. ՔՀԿ-ները խոչընդոտների չեն հանդիպում կամավորներ ներգրավելիս, և առանց սահմանափակումների կարող են կամավորներ ներգրավել արտերկրից և ուղարկել արտասահման: 2. Կամավորության ընթացքում ձեռք բերված փորձը ճանաչվում է տարբեր հաստատությունների կողմից՝ գործատուների, համալսարանների և այլն:

ՈԼՈՐՏ 10՝ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՔՀԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ		
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ	**ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**	
	Իրավական դաշտում	**Գործնականում**
I. Պետական քաղաքականությունը նպաստում է ՔՀԿ-ների զարգացմանը և նրանց հետ համագործակցությանը:	1. Պետության և ՔՀԿ-ների համագործակցության վերաբերյալ քաղաքականություններ են ընդունվում և ներառվում օրենսդրության մեջ: 2. Քաղաքականությունների փաստաթղթերը ներառում են գործողությունների պլաններ և ծրագրեր, որտեղ հստակ նկարագրված են նպատակները, գործողությունները, պատասխանատու պետական մարմինները, իրականացման ժամկետները, գնահատման ընթացակարգերը և ֆինանսավորման աղբյուրները:	1. Պետությունը համագործակցության քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերը մշակում է ՔՀԿ-ների ակտիվ մասնակցությամբ: 2. Քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերը գործնականում իրականացվում են և ազդեցություն ունեն պետական քաղաքականության վրա: 3. Պետությունը բավարար միջոցներ է հատկացնում քաղաքականության փաստաթղթերի իրականացման համար: 4. Քաղաքականության փաստաթղթերի իրականացման ընթացքում կանոնավոր մոնիտորինգ և գնահատում է իրականացվում, և այդ գնահատումների արդյունքները հաշվի են առնվում վերանայման գործընթացում:
II. Պետությունը ՔՀԿ-ների հետ համագործակցությանն աջակցող հատուկ	1. Հանրային խորհուրդների և երկխոսության ու համագործակցության նպատակով ստեղծված այլ խորհրդակցական մարմինների գործունեության և թափանցիկության	1. Խորհրդակցական մարմինների ստեղծման գործընթացը թափանցիկ է և տեղի է ունենում ինչպես պետական մարմինների, այնպես էլ ՔՀԿ-ների նախաձեռնությամբ: 2. Տարբեր խորհրդակցական մարմինների որոշումները հաշվի են

մեխանիզմներ ունի:	առանցքային սկզբունքները կարգավորվում են օրենքով: 2. Խորհրդակցական մարմիններում ՔՀԿ-ների մասնակցության և ընտրության սկզբունքները հստակ են և օբյեկտիվ, իսկ ընտրության ընթացակարգը՝ թափանցիկ:	առնվում պետական քաղաքականության մշակման ընթացքում: 3. Բոլոր առնչվող ՔՀԿ-ները հնարավորություն ունեն մասնակցելու խորհրդակցական մարմինների աշխատանքին:

ՔՀԿ ՉԱՓԻՉԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Բովանդակություն

ՈԼՈՐՏ 1՝ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ 27

Ստանդարտ 1՝ Յուրաքանչյուր ոք ազատորեն կարող է ՔՀԿ ստեղծել, մասնակցել և անդամակցել ՔՀԿ-ին: 27

Ստանդարտ 2՝ ՔՀԿ-ն որպես իրավաբանական անձ գրանցելու ընթացակարգը հստակ է, պարզ, արագ և ոչ թանկ: 31

Ստանդարտ 3՝ ՔՀԿ-ներն ազատ են սահմանելու իրենց նպատակներն ու գործունեության տեսակները և կարող են գործել ինչպես իրենց գրանցման երկրի սահմաններում, այնպես էլ այդ սահմաններից դուրս: 34

Ստանդարտ 4՝ Կիրառվող ցանկացած պատժամիջոց հստակ է, համապատասխանում է համաչափության սկզբունքին և ցանկալի նպատակին հասնելու համար նվազագույն միջամտություն է նախատեսում: 38

Ստանդարտ 5՝ Պետությունը չի միջամտում ՔՀԿ-ների ներքին գործերին և գործունեությանը: 40

Համապատասխան ռեսուրսներ 43

ՈԼՈՐՏ 2՝ Հավասար վերաբերմունք 45

Ստանդարտ 1՝ Պետությունը համահավասար կերպով է վերաբերում ՔՀԿ-ներին և առևտրային ընկերություններին: 45

Ստանդարտ 2՝ Պետությունը հավասարապես է վերաբերվում բոլոր ՔՀԿ-ներին նրանց հիմնադրման, գրանցման և գործունեության հարցերում: 50

Համապատասխան ռեսուրսներ 52

ՈԼՈՐՏ 3՝ Ֆինանսավորման մատչելիություն 53

Ստանդարտ 1՝ ՔՀԿ-ներն ազատ են ֆինանսական և նյութական միջոցներ փնտրել, ստանալ և օգտագործել իրենց նպատակների իրականացման համար: 53

Ստանդարտ 2՝ Ֆինանսական կամ նյութական միջոցների տեղական, օտարերկրյա և միջազգային աղբյուրների միջև տարբերություն չի դրվում: 57

Համապատասխան ռեսուրսներ 60

ՈԼՈՐՏ 4՝ Խաղաղ հավաքների ազատություն 62

Ստանդարտ 1՝ Յուրաքանչյուր ոք կարող է ազատորեն օգտվել խաղաղ հավաքների կազմակերպման և մասնակցության իրավունքից: 62

Ստանդարտ 2՝ Պետությունը աջակցում է խաղաղ հավաքների ընթացքին և պաշտպանում է խաղաղ հավաքները: 68

Ստանդարտ 3՝ Պետությունը անհարկի պահանջներ չի առաջադրում խաղաղ հավաքների կազմակերպիչների և մասնակիցների նկատմամբ: 72

Ստանդարտ 4՝ Իրավապահ մարմինները աջակցում են խաղաղ հավաքներին և պատասխանատու են իրենց ներկայացուցիչների գործողությունների համար: 75

Համապատասխան ռեսուրսներ 79

ՈԼՈՐՏ 5՝ Որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունք 81

Ստանդարտ 1՝ Յուրաքանչյուր ոք կարող է մասնակցել որոշումների ընդունման գործընթացներին: 81

Ստանդարտ 2՝ Առկա են հստակ, հեշտ և թափանցիկ մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք նպաստում են ՔՀԿ-ների կանոնավոր, բաց և արդյունավետ մասնակցությանը պետական քաղաքականության մշակման, իրականացման և մոնիտորինգի գործում: 86

Ստանդարտ 3՝ ՔՀԿ-ներին հասանելի է արդյունավետ մասնակցության համար անհրաժեշտ տեղեկատվությունը: 90

Ստանդարտ 4՝ Մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում տարբերվում է քաղաքական և լոբիստական գործունեությունից: 93

Համապատասխան ռեսուրսներ 96

ՈԼՈՐՏ 6՝ Խոսքի ազատություն 98

Ստանդարտ 1՝ Յուրաքանչյուր ոք կարծիք արտահայտելու և խոսքի ազատության իրավունք ունի: 98

Ստանդարտ 2՝ Պետությունը աջակցում է խոսքի և կարծիքի արտահայտման ազատությանը և պաշտպանում այն: 104

Համապատասխան ռեսուրսներ 110

ՈԼՈՐՏ 7՝ Մասնավոր կյանքի իրավունք 113

Ստանդարտ 1՝ Յուրաքանչյուր ոք ունի մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանության իրավունք: 113

Ստանդարտ 2՝ Պետությունը պաշտպանում է ՔՀԿ-ների և առնչվող անձանց մասնավոր կյանքի իրավունքը: 117

Համապատասխան ռեսուրսներ 123

ՈԼՈՐՏ 8՝ Պետության կողմից պաշտպանության պարտականություն 125

Ստանդարտ 1՝ Պետությունը պաշտպանում է ՔՀԿ-ներին և նրանց հետ կապված մարդկանց միջամտությունից և հարձակումներից: 125

Ստանդարտ 2՝ Ծայրահեղականության, ահաբեկչության, փողերի լվացման և կոռուպցիայի դեմ պայքարի միջոցները նպատակաուղղված են, համաչափ, ռիսկի վրա հիմնված մոտեցմանը համապատասխան, և հարգում են միավորումների, հավաքների ու արտահայտման վերաբերյալ մարդու իրավունքների ստանդարտները: 130

Համապատասխան ռեսուրսներ 135

ՈԼՈՐՏ 9՝ Պետական աջակցություն 138

Ստանդարտ 1՝ ՔՀԿ-ների ֆինանսական և նյութական պետական աջակցության բազմազան ու արդյունավետ մեխանիզմներ կան: 138

Ստանդարտ 2՝ ՔՀԿ-ների պետական աջակցությունը կարգավորվում է հստակ և օբյեկտիվ չափանիշներով և հատկացվում է թափանցիկ և մրցակցային ընթացակարգով: 140

Ստանդարտ 3՝ ՔՀԿ-ներն օգտվում են բարենպաստ հարկային միջավայրից: 144

Ստանդարտ 4՝ ՔՀԿ-ներին նվիրատվությունների հատկացման դեպքում ընկերությունները և անհատները օգտվում են հարկային արտոնություններից: 148

Ստանդարտ 5՝ Օրենսդրությունն ու քաղաքականությունը խթանում են կամավորությունը և խթաններ տրամադրում դրա զարգացման համար: 151

Համապատասխան ռեսուրսներ 154

ՈԼՈՐՏ 10՝ Պետություն-ՔՀԿ համագործակցություն 155

Ստանդարտ 1՝ Պետական քաղաքականությունը նպաստում է ՔՀԿ-ների զարգացմանը և նրանց հետ համագործակցությանը: 155

Ստանդարտ 2՝ Պետությունը ՔՀԿ-ների հետ համագործակցությանն աջակցող հատուկ մեխանիզմներ ունի: 158

Համապատասխան ռեսուրսներ 161

ՈԼՈՐՏ 1՝ Միավորումների ազատություն

Չափորոշիչ 1՝ Յուրաքանչյուր ոք ազատորեն կարող է ՔՀԿ ստեղծել, մասնակցել և անդամակցել ՔՀԿ-ին:

Միավորումների ազատությունը երաշխավորվում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով: Այն ներառում է յուրաքանչյուր մարդու իրավունքը՝ անկախ ազգությունից, միավորվելու այլ անձանց հետ և ստեղծելու քաղաքացիական հասարակության կազմակերպություն (ՔՀԿ): Բացի անհատներից, միավորումների ազատությունը վերաբերում է նաև իրավաբանական անձանց: ՔՀԿ-ները կարող են գրանցվել որպես իրավաբանական անձ կամ գործել որպես չգրանցված կազմակերպություն: Բացի այդ, միավորումների ազատությունը ներառում է ՔՀԿ-ների գործունեությանը որպես անդամ կամ աջակից մասնակցելու՝ յուրաքանչյուր անձի իրավունքը: Միավորումները կարող են ձևավորվել առանց աշխարհագրական սահմանափակման՝ ինչպես առցանց, այնպես էլ ոչ առցանց եղանակով:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Յուրաքանչյուր ոք՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, տեղացի թե արտասահմանցի, ինչպես նաև անձանց խումբ, ՔՀԿ հիմնելու իրավունք ունի: 2. ՔՀԿ-ները կարող են գործել առանց գրանցվելու և իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք բերելու: 3. ՔՀԿ-ները կարող են գործել առանց աշխարհագրական տարածքի սահմանափակման, այդ թվում՝ առցանց հարթակներում: 4. Անհատներն ու իրավաբանական անձինք ազատ են միավորվելու և մասնակցելու ՔՀԿ-ների գործունեությանը՝ լինելով ՔՀԿ անդամ, կամավոր, կամ աջակցելով ՔՀԿ նախաձեռնություններին:

1. **<u>Յուրաքանչյուր ոք՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, տեղացի թե արտասահմանցի, ինչպես նաև անձանց խումբ, ՔՀԿ հիմնելու իրավունք ունի</u>**

Միավորումների ազատությունը համընդհանուր իրավունք է, որը պատկանում է բոլորին: Այն չի սահմանափակվում քաղաքացիների, ընտրողների կամ որոշակի ազգության կամ բնակության վայրի մարդկանց շրջանակով: Օրինակ, փախստականները, միգրանտները, քաղաքացիություն չունեցող անձինք, կանայք, փոքրամասնությունների ներկայացուցիչներ հավասարապես օգտվում են միավորումների ազատությունից: ՔՀԿ հիմնելու իրավունքը տարածվում է նաև երեխաների վրա: Թեև միավորումներ կազմելու և դրանց անդամագրվելու առումով երեխաների իրավունակության որոշակի սահմանափակումները կարող են հիմնավորված լինել, այնուամենայնիվ ցանկացած այդպիսի սահմանափակում պետք է համահունչ լինի միջազգային իրավունքի նորմերին և հաշվի առնի երեխաների զարգացող կարողությունները: Որպես կանոն, 14 տարեկանից բարձր երեխաները պետք է հնարավորություն ունենան անդամակցել միավորումներին:

ՔՀԿ հիմնելու իրավունք պետք է ունենան հաշմանդամություն ունեցող անձինք, այդ թվում սահմանափակ իրավունակություն ունեցող անձինք, մյուսների հետ հավասար հիմունքներով: Անհրաժեշտ է խրախուսել նրանց մասնակցությունը և անդամակցությունը տարբեր կազմակերպություններում և իրենց իրավունքների իրացմանը աջակցող միջոցներ նախատեսել: Հնարավոր է, որ ֆինանսական և կառավարման առանձին որոշումների մասով որոշ սահմանափակումներ կիրառվեն՝ որպես անվտանգության երաշխիք: Այդ երաշխիքների նպատակը պետք է լինի ապահովել, որ տվյալ անձը աջակցություն ստանա որոշումներ կայացնելիս՝ իր կամքը արտահայտելու և իր որոշումների համար պատասխանատվություն ստանձնելու համար:

ՔՀԿ հիմնելու իրավունք ունեն ոչ միայն անհատները, այլև իրավաբանական անձինք: Դրանք կարող են լինել շահույթ չհետապնդող կազմակերպություններ կամ ընկերություններ: Նման օրինակներից են ՔՀԿ հովանոցային կազմակերպությունները (օրինակ, ՔՀԿ-ների ցանցը կամ հիմնադրամների/միավորումների միությունները), կորպորատիվ միավորումները (օրինակ՝ հանքարդյունաբերության միությունը) կամ այն կազմակերպությունները, որոնց անդամակցում են ինչպես ընկերություններ, այնպես էլ շահույթ չհետապնդող կազմակերպություններ (օրինակ՝ Դոնորների ֆորում):

ՔՀԿ հիմնելու իրավունքը ներառում է անդամակցության վրա հիմնված (օրինակ՝ միավորում) կամ առանց անդամակցության կազմակերպություններ (օրինակ՝ հիմնադրամ) հիմնելու հնարավորությունը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ հիմնադիրները չեն կարող դատվածություն ունենալ,
- ՔՀԿ հիմնադիրները պարտավոր են կացության իրավունք կամ քաղաքացիություն ունենալ:

2. **<u>ՔՀԿ-ները կարող են գործել առանց գրանցվելու և իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք բերելու</u>**

ՔՀԿ-ները կարող են լինել չգրանցված կազմակերպություններ՝ ունենալով որոշակի ինստիտուցիոնալ ձև կամ կառուցվածք, կամ հանդիսանալ իրավաբանական անձ: Որևէ գործունեություն ծավալելու համար ՔՀԿ-ն չպետք է պարտադրված լինի գրանցված լինել որևէ պետական մարմնի կողմից: Իրավասուբյեկտություն կամ իրավաբանական անձի կարգավիճակ ստանալու մասին որոշումը պետք է ՔՀԿ-ների կողմից կայացվի ինքնուրույն՝ հաշվի առնելով նման կարգավիճակի հետ առնչվող որոշակի առավելությունները, ինչպես օրինակ, իր անդամների պատասխանատվության սահմանափակման կամ իր անունով բանկային հաշիվների բացման հնարավորությունը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Նախքան որևէ գործունեություն իրականացնելը ՔՀԿ-ները պարտավոր են տեղեկացնել իշխանություններին:
- Բոլոր ՔՀԿ-ների համար կա պարտադիր պահանջ՝ գրանցվելու որպես իրավաբանական անձ,
- Չգրանցված խմբերի գործունեությունն արգելված է և/կամ սահմանված են համապատասխան պատժամիջոցներ:

3. **<u>ՔՀԿ-ները կարող են գործել առանց աշխարհագրական տարածքի սահմանափակման, այդ թվում՝ միավորվելով առցանց հարթակներում</u>**

Միավորումների ազատությունը ներառում է ինչպես անձամբ, այնպես էլ առցանց միավորվելու իրավունք (օրինակ՝ համանման նպատակներ ունեցող անդամների սոցիալական/օնլայն ցանց): Առցանց միավորումների ցանկացած սահմանափակում պետք է համապատասխանի իրավաչափ նպատակի և համաչափության չափանիշներին՝ ճիշտ այնպես, ինչպես ավանդական ՔՀԿ-ների դեպքում: Ազգային մակարդակով գործելու համար ՔՀԿ-ից չպետք է հատուկ գրանցում կամ թույլտվություն պահանջվի: Նույն կերպ, տարածաշրջանում մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ ունենալու պարտադիր պահանջ չպետք է լինի՝ տարածաշրջանում գործունեություն ծավալելու համար:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ները պարտավոր են ֆիզիկական ներկայություն ունենալ ավելի քան մեկ վայրում, որպեսզի կարողանան հանդես գալ ազգային մակարդակով,
- Տեղական, ազգային կամ միջազգային մակարդակով գործող կազմակերպությունների համար գրանցման պահանջները տարբեր են:

4. **<u>Անհատներն ու իրավաբանական անձինք ազատ են միավորվելու և մասնակցելու ՔՀԿ-ների գործունեությանը՝ լինելով ՔՀԿ անդամ, կամավոր, կամ աջակցելով ՔՀԿ նախաձեռնություններին</u>**

Օրենքը չպետք է սահմանափակի ՔՀԿ-ին անդամակցելու կամ ՔՀԿ գործունեությանն այլ կերպ մասնակցելու հնարավորությունը: Այս կանոնը պետք է կիրառվի ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց դեպքում՝ անկախ ազգությունից կամ որևէ այլ բնութագրից (տես չափանիշ 1-ի նկարագրությունը, որը կիրառելի է նաև ՔՀԿ անդամակցության նկատմամբ): Համապատասխան ՔՀԿ-ն, որպես անկախ սուբյեկտ, ազատ է որոշում կայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձին որպես անդամ ընդունելու վերաբերյալ՝ խտրականության բացառման ընդհանուր սկզբունքը պահպանելու պայմանով:

Մյուս կողմից էլ, ֆիզիկական անձից չպետք է պահանջվի անդամակցել որևէ ՔՀԿ-ին՝ որևէ մասնագիտությամբ կամ որոշակի գործունեության տեսակով զբաղվելու համար: Թեև մասնագիտություններ կան, որոնց դեպքում պահանջվում է անդամակցել մասնագիտական ընկերակցություններին՝ օրինակ, փաստաբանները պետք է լինեն փաստաբանների միության անդամ, տվյալ դեպքում այդ կազմակերպությունները չեն համապատասխանում ՔՀԿ-ի մեր սահմանմանը: ՔՀԿ-ների համար էլ չեն կարող սահմանափակումներ լինել կամավորներ ներգրավելու, անհատներից նվիրատվություններ ստանալու կամ համանման եղանակներով անհատներին ներգրավելու դեպքում:

Օրենքը կարող է սահմանափակել որոշ պետական պաշտոնյաների, այդ թվում՝ ոստիկանության և զինված ուժերի ներկայացուցիչների համար ՔՀԿ անդամ դառնալու հնարավորությունը: Նման սահմանափակումները պետք է օգտագործվեն սահմանափակ դեպքերում և անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում (օրինակ, շահերի բախումից խուսափելու համար):

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Իրավաբանական անձինք չեն կարող միավորումներ հիմնադրել կամ անդամակցել միավորումների:
- Դատվածություն ունեցող անձինք չեն կարող լինել ՔՀԿ անդամներ:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Պետությունը գործնականում խոչընդոտներ չի հարուցում ՔՀԿ ստեղծելու, անդամակցելու կամ գործունեությանը մասնակցելու համար: 2. Անհատներն ազատ են ՔՀԿ-ներին միանալու կամ ՔՀԿ գործունեությանը մասնակցելու վերաբերյալ իրենց որոշումներում:

1. **<u>Պետությունը գործնականում խոչընդոտներ չի հարուցում ՔՀԿ ստեղծելու, անդամակցելու կամ գործունեությանը մասնակցելու համար</u>**

Միավորումների ազատությունից օգտվելու գործնական խոչընդոտները բացակայում են, օրինակ՝ չգրանցված խմբերի հետապնդումները/ոտնձգությունները կամ կարծիք արտահայտելու, խոսքի կամ հավաքների ազատության իրավունքը իրացնելու նպատակով պաշտոնական գրանցման

պահանջը և այլն: Իրավական պահանջները գործնականում պահպանվում են և անհատները և իրավաբանական անձինք կարող են ազատորեն միավորվել՝ առանց իրավաբանական անձի կարգավիճակ ստանալու անհրաժեշտության: Նրանք կարող են նաև միավորվել կամ մասնակցել որևէ չգրանցված խմբի գործունեությանը:

Գրանցող մարմինը գնահատական չի տալիս ՔՀԿ նպատակների ողջամտությանը կամ նպատակահարմարությանը, այլ ուսումնասիրում է գրանցման իրավական պահանջներին համապատասխանությունը և օրենքով պահանջվող փաստաթղթերի ամբողջականությունը: Նույն նպատակը հետապնդող այլ կազմակերպությունների առկայությունը գրանցումը մերժելու պատճառ չի հանդիսանում: Գրանցման վերաբերյալ որոշումը կախված չէ պետական մարմինների կարծիքից առ այն, թե արդյոք ՔՀԿ-ն տիրապետում է իր նպատակների իրագործման համար անհրաժեշտ միջոցներին:

Գրանցող մարմինը չպետք է պահանջի լրացուցիչ փաստաթղթեր՝ օրենքով նախատեսվածից զատ:

Այն փաստը, որ ՔՀԿ-ն ֆիզիկական ներկայություն չունի կոնկրետ վայրում, չպետք է սահմանափակի տվյալ վայրում գործունեություն իրականացնելու հնարավորությունը: Քաղաքականությունների մշակման կամ ազգային մակարդակով այլ գործունեությամբ զբաղվելու համար չպետք է երկրի՝ որոշակի տոկոսով տարածքում գործելու պահանջներ սահմանվեն:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Մարդիկ կամավորական գործունեություն կարող են իրականացնել միայն գրանցված ՔՀԿ-ների միջոցով:
- ՔՀԿ-ները չեն կարող արդյունավետ գործունեություն ծավալել՝ գրանցման մասին որոշման ձգձգման պատճառով:

2. **<u>Անհատներն ազատ են ՔՀԿ-ներին միանալու կամ ՔՀԿ գործունեությանը մասնակցելու վերաբերյալ իրենց որոշումներում</u>**

Միավորումներին անդամակցելու առումով պետական մարմինների կողմից հատուկ սահմանված պահանջներ չկան ՝ օրինակ, կապված կրթական մակարդակի կամ որոշակի փոքրամասնության պատկանելության հետ կամ այլ: Նման պահանջներ, այնուամենայնիվ, կարող են սահմանվել հենց ՔՀԿ-ի կողմից: ՔՀԿ-ներին անդամակցությունը կամավոր է. ոչ ոքի չի կարելի ստիպել անդամակցել ՔՀԿ-ի կամ որևէ կարգավիճակով մասնակցել նրա գործունեությանը:

Որևէ կազմակերպությանը անդամակցելու (կամ նրա օրինական գործունեությանը որպես կամավոր, դոնոր կամ աջակից մասնակցելու) փաստը չպետք է պատժամիջոցների կամ ճնշումների պատճառ լինի: Սա հատկապես արդիական է այն կազմակերպությունների դեպքում, որոնք պետական պաշտոնական քաղաքականությունից տարբերվող կարծիք են արտահայտում:

Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ՔՀԿ-ին անդամակցող անձինք անդամները կամ ՔՀԿ մարմինների անդամները չպետք է պատասխանատվություն կրեն տվյալ կազմակերպության գործունեության կամ խախտումների համար: Այս կանոնի դեպքում բացառություն կարող է լինել պաշտոնական ներկայացուցիչների անփույթ վարքագիծը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ անդամների ձերբակալություններն առանց հստակ իրավական հիմքերի:
- ՔՀԿ-ների ակտիվ անդամների հետապնդումը իրենց անդամակցությանը չառնչվող հիմքերով (օրինակ, հարկային ստուգումներ):

Չափորոշիչ 2՝ ՔՀԿ-ն որպես իրավաբանական անձ գրանցելու ընթացակարգը հստակ է, պարզ, արագ և ոչ թանկ:

ՔՀԿ-ները կարող են ձեռք բերել իրավաբանական անձի կարգավիճակ արդյունավետ գրանցման ընթացակարգի միջոցով: Գրանցման կարգը պետք է լինի հեշտ, առանց իրավական կամ գործնական խոչընդոտների, ինչպիսիք են գրանցման մեծ վճարները, փաստաթղթերի բարդ և բազմաթիվ պահանջները կամ դիմելու երկարատև գործընթացը: Բացի այդ, գրանցող մարմինը պարտավոր է գործել անկախ և անաչառ և ուսումնասիրել դիմումի օրինականությունը՝ առանց հայեցողական դատողության, թե արդյոք ՔՀԿ-ների նպատակները հեշտությամբ իրագործելի են կամ անհրաժեշտ: Գրանցման մերժումը հնարավոր է միայն սահմանափակ թվով հիմքերի դեպքում, որոնք համապատասխանում են միջազգային չափանիշներին: Ցանկացած մերժում կարող է բողոքարկվել անկախ մարմնում:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Գրանցումը արագ է, մատչելի և ոչ թանկ: 2. Իրավաբանական անձի կարգավիճակ ստանալու համար գրանցման ընթացակարգի պահանջները հստակ նկարագրված են, պարզ են և գրանցող մարմնի հայեցողության հնարավորություն չեն թողնում: 3. Գրանցման մերժման հիմքերը փոքրաթիվ են, հստակ և հիմնավորված:

1. Գրանցումը արագ է, մատչելի և ոչ թանկ

Գրանցման կարգը պետք է հստակ նկարագրված լինի օրենքով: Նոր ՔՀԿ գրանցելու կամ արդեն գրանցված կազմակերպության տվյալները փոփոխելու ժամկետների առումով տարբեր գործելակերպ կա: Գործընթացը արագ է (ինչպես, օրինակ, Վրաստանում, որտեղ այն տևում է ընդամենը մեկ օր) և չի գերազանցում 30 օրը, որը չափից ավելի մեծ ժամկետ է և հակասում է միջազգային չափանիշներին:

Գրանցման մատչելիության առումով մի քանի բաղադրիչի է պետք ուշադրություն դարձնել: Նախ, անձինք պետք է տեղեկատվություն ունենան գրանցման ընթացակարգի քայլերի հաջորդականության մասին և հստակ ցուցումներ՝ պահանջվող փաստաթղթերի վերաբերյալ: Երկրորդ, գրանցող մարմինը պետք է ապահովի, որ մարդիկ ստիպված չլինեն երկար ճանապարհ անցնել գրանցման փաստաթղթեր ներկայացնելու համար, օրինակ՝ հնարավորություն ստեղծելով դրանց առցանց ներկայացման համար: Եթե օգտագործվում է առցանց ներկայացման հնարավորությունը, պետությունը պետք է ապահովի համացանցի հասանելիություն հանրապետության ողջ տարածքում, իսկ առցանց գրանցման ընթացակարգը չպետք է հատուկ գիտելիքներ կամ իրավաբանի միջնորդություն պահանջի:

ՔՀԿ գրանցումը վարչարարական ծառայություն չէ, այլ մարդու հիմնարար իրավունք: Այդ իսկ պատճառով ՔՀԿ գրանցման վճարը պետք է լինի նվազագույնը՝ ապահովելով, որ յուրաքանչյուր ոք կարողանա օգտվել միավորումների իրավունքից և ՔՀԿ-ն որպես իրավաբանական անձ գրանցելու հնարավորությունից: Կատարյալ տարբերակում գրանցումը պետք է լինի անվճար:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ները կարող են գրանցվել միայն մայրաքաղաքում:

- Գրանցվելու համար կազմակերպությունները պետք է ներկայացված լինեն իրավաբանի կողմից:

2. **<u>Իրավաբանական անձի կարգավիճակ ստանալու համար գրանցման ընթացակարգի պահանջները հստակ նկարագրված են, պարզ են և գրանցող մարմնի հայեցողության հնարավորություն չեն թողնում</u>**

Օրենքով պահանջվող փաստաթղթերի հստակ ցանկ է սահմանված, որոնք պետք է ներկայացվեն իրավաբանական անձի կարգավիճակի համար դիմող ՔՀԿ հիմնադիրների կողմից: Պահանջվող փաստաթղթերը պետք է լինեն փոքրաթիվ, և այդ փաստաթղթերի ներկայացման նպատակը բացառապես պետք է լինի՝ համոզվածություն ձեռք բերել առ այն, որ հիմնադիրները պահպանել են կազմակերպության հիմնադրման համար օրենքով սահմանված կարգը: Որպես կանոն, գրանցող մարմինը պահանջում է կազմակերպություն ստեղծելու վերաբերյալ հիմնադիրների որոշումը արտահայտող փաստաթուղթ, կազմակերպության կանոնադրությունը, կազմակերպության անունը և նրա ներկայացուցիչ(ներ)ի կոնտակտային տվյալները, կառավարման մարմնի անդամների անունները, գրանցման վճարի (եթե այդպիսին կա) կատարման ապացույցը և այլն:

Ըստ միջազգային չափանիշների, ՔՀԿ հիմնելու համար անհրաժեշտ է ոչ ավելի, քան երկու ֆիզիկական կամ իրավաբանական անձ: Հիմնադրամը կարող է ստեղծվել միայն մեկ հիմնադրի կողմից, թեև որոշ երկրներ կարող են պահանջել ավելի մեծ թվով հիմնադիրներ: Սակայն ավելի քան 10 հիմնադիր ունենալու պահանջը ծանրաբեռնող կարելի է համարել:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենքը թույլ է տալիս գրանցող մարմնին պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, որոնք սահմանված չեն օրենքով:
- Օրենքը պահանջում է, որ ոլորտային նախարարությունները կարծիք ներկայացնեն ՔՀԿ գրանցման վերաբերյալ:

3. **<u>Գրանցման մերժման հիմքերը փոքրաթիվ են, հստակ և հիմնավորված</u>**

Գրանցումը մերժվում է միայն հատուկ և շատ սահմանափակ դեպքերում, և նման դեպքում պետք է մերժման պատճառները հիմնավորող մանրամասն գրավոր տեղեկանք տրամադրվի: Մերժման հիմքերը կարող են առնչվել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված՝ միավորումների ազատությունը սահմանափակելու հետևյալ հիմքերին.

- հանուն պետական անվտանգության կամ հասարակական անվտանգության,
- անկարգությունների կամ հանցագործությունների կանխարգելման նպատակով,
- առողջության կամ բարոյականության նորմերի պաշտպանության նպատակով կամ
- այլոց համար իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Գրանցումը կարող է նաև մերժվել վարչարարական հիմքերով, օրինակ՝ առկա չէ հիմնադիրների՝ օրենքով սահմանված թվով անձանց թվաքանակը, չեն ներկայացվել պահանջվող փաստաթղթերը կամ նվազագույն կապիտալի պահանջը բավարարված չէ (հիմնադրամների դեպքում): Գրանցումը մերժելու վերաբերյալ ցանկացած որոշում պետք է հիմնված լինի օրենքի վրա և համապատասխանի միջազգային չափանիշներին:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենքը թույլ է տալիս գրանցումը մերժել, եթե տվյալ ոլորտի համար պատասխանատու նախարարությունը չի տրամադրել իր նախնական համաձայնությունը:

- Գրանցումը մերժվում է՝ ելնելով հիմնադիրներից մեկի վերաբերյալ լրատվամիջոցներում առկա բացասական հոդվածներից:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Իրավաբանական անձի կարգավիճակ տվող մարմինը որոշում կայացնելիս գործում է անկախ և անկողմնակալ կերպով, լրացուցիչ տեղեկատվություն չի պահանջում և գրանցման համար լրացուցիչ պահանջներ չի առաջադրում: 2. Գրանցման փաստաթղթերում առկա թերացումների մասին դիմողին հաղորդվում է հստակ կերպով և խելամիտ ժամկետներում, և գրանցումը չի մերժվում ոչ էական թերացումների պատճառով: 3. ՔՀԿ գրանցման դիմումը մերժելու դեպքում խելամիտ ժամկետներում անկախ և անկողմնակալ դատաքննության հնարավորություն է տրվում:

1. **<u>Իրավաբանական անձի կարգավիճակ տվող մարմինը որոշում կայացնելիս գործում է անկախ և անկողմնակալ կերպով, լրացուցիչ տեղեկատվություն չի պահանջում և գրանցման համար լրացուցիչ պահանջներ չի առաջադրում</u>**

Գրանցում իրականացնող մարմինները գործում են օրենքով սահմանված հիմքերով: Նրանք հիմնադիրներից չպետք է լրացուցիչ փաստաթղթեր պահանջեն, օրինակ՝ կացության իրավունք կամ դատվածության բացակայության մասին տեղեկանք: Իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք բերելու վերաբերյալ պահանջները հիմնված են բացառապես օրենքի վրա, իսկ գրանցման մարմինը գործում է ինքնուրույն (այսինքն՝ որոշումները չեն ուղղորդվում այլ պետական մարմնի կողմից) և սահմանափակված չէ քաղաքական նկատառումներով, ինչպիսիք են՝

- հիմնադիրների քննադատական մոտեցումը կառավարության նկատմամբ,
- ՔՀԿ-ների հնարավոր հակակառավարական օրակարգը,
- ՔՀԿ-ների ոչ ամբոխահաճ նպատակները (օրինակ՝ փոքրամասնությունների պաշտպանությունը):

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Առկա է պահանջ, որ ՔՀԿ գրասենյակը գտնվի վարչական շենքում:
- ՔՀԿ-ներից խնդրել են տրամադրել փաստաթղթեր, որոնք նշված չեն օրենքում:

2. **<u>Գրանցման փաստաթղթերում առկա թերացումների մասին դիմողին հաղորդվում է հստակ կերպով և խելամիտ ժամկետներում, և գրանցումը չի մերժվում ոչ էական թերացումների պատճառով</u>**

Որպես կանոն, եթե ՔՀԿ-ն չի տրամադրել օրենքով պահանջված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ապա պետք է ողջամիտ ժամանակ տրամադրվի դրանք ներկայացնելու համար: Դիմողը պետք է անհապաղ ծանուցվի լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման անհրաժեշտության մասին: Գրանցումը կարող է մերժվել միայն այն դեպքում, երբ ՔՀԿ-ն պահանջվող փաստաթղթերը չի տրամադրել սահմանված ժամկետում: Եթե դիմողը տրամադրում է պահանջվող բոլոր փաստաթղթերը, ապա գրանցող մարմինը պարտավոր է գրանցել ՔՀԿ-ին: Ոչ էական ձևական սխալների, օրինակ՝ տառասխալների, բաց թողնված բառերի, բաց թողնված էջադրումների և այլնի դեպքում, ՔՀԿ-ին հնարավորություն է տրամադրվում անմիջապես ճշգրտել դրանք, և դիմումը ընդունվում է ուսումնասիրման:

Լրացուցիչ փաստաթղթեր պահանջելու գործընթացը չպետք է օգտագործվի գրանցման ընթացակարգը չափից ավելի երկարաձգելու համար:

ՔՀԿ-ին ծանուցելու առումով առաջատար փորձ է SMS-ով կամ էլեկտրոնային փոստով ծանուցման մեխանիզմի օգտագործումը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Գրանցող մարմինը չի ծանուցում դիմումատուին լրացուցիչ փաստաթղթերի տրամադրման անհրաժեշտության վերաբերյալ և մերժում է դիմումը:
- Գրանցող մարմինը պահանջում է փոփոխություններ կատարել ներկայացված փաստաթղթերում՝ ոչ էական խնդիրների պատճառով (օրինակ՝ որպես ՔՀԿ կառավարման մարմին նշվել է տնօրեն՝ գործադիր տնօրենի փոխարեն):

3. **<u>ՔՀԿ գրանցման դիմումը մերժելու դեպքում խելամիտ ժամկետներում տրվում է անկախ և անկողմնակալ դատաքննության հնարավորություն</u>**

Գործնականում ՔՀԿ գրանցումը մերժելու դեպքերը շատ քիչ պետք է լինեն: ՔՀԿ գրանցումը մերժելու ցանկացած որոշում պետք է հնարավոր լինի բողոքարկել գրանցումը մերժող գերատեսչությունից տարբեր մեկ այլ կառույցում: Շատ երկրներում այդպիսի կառույց է հանդիսանում դատարանը: Եթե գրանցում կատարող գերատեսչությունը դատարանն է, պետք է հնարավոր լինի բողոքը ներկայացնել ավելի բարձր ատյանի դատարան:

Բողոքարկման ընթացակարգը պետք է նաև մատչելի և հասանելի լինի, և բողոքարկման որոշման համար պահանջվող վճարները պետք է լինեն փոքր և տվյալ երկրի բնակչության կենսամակարդակի հետ համատեղելի: Բողոքարկման վերաբերյալ որոշումը պետք է կայացվի արագ և առանց անհարկի ձգձգումների: Կատարյալ տարբերակում բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու ժամկետը չպետք է շատ ավելի երկար լինի, քան գրանցման որոշում կայացնելու համար պահանջվող ժամկետը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Բողոքարկումը հնարավոր չէ կամ ենթակա է ներկայացման նույն այն մարմնին, որը պատասխանատու է գրանցման համար:
- Գրանցող մարմինը գրանցումը մերժելու վերաբերյալ գրավոր որոշում չի տրամադրում, մինչդեռ բողոքարկումը հնարավոր է միայն գրավոր որոշման առկայության դեպքում:

<u>Չափորոշիչ 3՝ ՔՀԿ-ներն ազատ են սահմանելու իրենց նպատակներն ու գործունեության տեսակները և կարող են գործել ինչպես իրենց գրանցման երկրի սահմաններում, այնպես էլ այդ սահմաններից դուրս:</u>

Ժողովրդավարական և բազմակարծիք հասարակությունում ՔՀԿ-ները պետք է ունենան հանրային մարտահրավերների առնչությամբ տարբեր տեսակետներ և լուծումներ առաջադրելու ազատություն: Դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ նրանք ազատ են ընտրելու իրենց նպատակները՝ առանց պետական մարմինների որևէ առաջարկության, առաջնահերթության կամ քաղաքականության հետ համապատասխանություն ապահովելու անհրաժեշտության: Բացի այդ, ՔՀԿ-ները պետք է կարողանան ազատորեն ընտրել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են համարում իրենց նպատակների իրագործման համար: Կառավարությունը չպետք է պարտադրի նրանց գործողությունների շրջանակի (օրինակ, առցանց, տեղական կամ միջազգային) որևէ սահմանափակում:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Օրենսդրությունը թույլ է տալիս ՔՀԿ-ներին ազատորեն սահմանելու իրենց նպատակները և իրականացնելու ցանկացած օրինական գործունեություն: 2. ՔՀԿ-ները կարող են նպատակներ հետապնդել տեղական, ազգային և միջազգային մակարդակում, ներառյալ՝ ազգային կամ միջազգային միավորումներին կամ դաշինքներին անդամակցելու միջոցով: 3. Օրենքով չի պարտադրվում ՔՀԿ-ների գործունեությունը համապատասխանեցնել պետական քաղաքականությանը կամ համաձայնեցնել պետական կառավարման մարմինների հետ:

1. **<u>Օրենսդրությունը թույլ է տալիս ՔՀԿ-ներին ազատորեն սահմանելու իրենց նպատակները և իրականացնելու ցանկացած օրինական գործունեություն</u>**

ՔՀԿ-ները կարող են ազատորեն ընտրել իրենց նպատակները, նույնիսկ եթե դրանք միշտ չէ, որ համահունչ են մեծամասնության կարծիքներին և համոզմունքներին: Միակ սահմանափակումները կարող են լինել ՄԻԵԿ 11-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները: Չի թույլատրվում բռնի կամ ոչ ժողովրդավարական միջոցների օգտագործումը կազմակերպության նպատակների իրագործման համար: Օրինակ, Բուլղարիայի սահմանադրության 44-րդ հոդվածում նշվում է, որ «*արգելվում են այնպիսի կազմակերպությունները, որոնք գաղտնի կամ ռազմականացված կառույցներ են հիմնում կամ իրենց նպատակները փորձում իրականացնել բռնության միջոցով*»:

Բացի այդ, օրենքը չի պաշտպանում այնպիսի ՔՀԿ-ների, որոնք հակաժողովրդավարական նպատակներ են հետապնդում[1]: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը հայտարարել է, որ ՔՀԿ-ներին թույլատրվում է հետամուտ լինել նույնիսկ սահմանադրական կարգի փոփոխության նպատակի, այն պայմանով, որ՝

ա) դա արվում է իրավաչափ կարգով և ժողովրդավարական միջոցներով և

բ) որպես նպատակ ընտրված փոփոխությունը ինքնին համատեղելի է հիմնական ժողովրդավարական սկզբունքների հետ:

ՔՀԿ-ներից չպետք է պահանջվի ստանալ պետական մարմինների հավանությունը՝ որոշակի ոլորտում գործունեություն ծավալելու համար, եթե դա չի պահանջվում տվյալ ոլորտում գործող բոլոր իրավաբանական անձանցից (օրինակ՝ լիցենզիա բանկային գործունեության իրականացման համար):

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Գրանցող մարմինը հրաժարվում է գրանցել մի ՔՀԿ, որը ցանկանում է վերականգնել սահմանադրական միապետությունը խորհրդարանական հանրապետությունում:
- Օրենքը պահանջում է, որ ՔՀԿ նպատակները համապատասխանեն կառավարության առաջնահերթություններին:

2. **<u>ՔՀԿ-ները կարող են նպատակներ հետապնդել տեղական, ազգային և միջազգային մակարդակում, ներառյալ՝ ազգային կամ միջազգային միավորումներին կամ դաշինքներին անդամակցելու միջոցով</u>**

ՔՀԿ-ների գործունեության շրջանակի որևէ սահմանափակում չպետք է լինի: Ցանկացած կազմակերպություն, անկախ նրա գտնվելու վայրից, պետք է կարողանա գործել ցանկացած

[1] *Ռեֆահ Պարտիսի (Բարեկեցության կուսակցություն) և այլոք ընդդեմ Թուրքիայի, ՄԻԵԴ*

տարածաշրջանում, համայնքում կամ ամբողջ երկրի տարածքում: ՔՀԿ-ների համար չպետք է որևէ սահմանափակում կամ հատուկ թույլտվության պահանջ լինի արտերկրում գործելու կամ որևէ միջազգային կամ տեղական ցանցի միանալու համար:

Օտարերկրյա ՔՀԿ-ները ևս պետք է կարողանան գործել երկրում՝ առանց նոր իրավական անձ ստեղծելու անհրաժեշտության: Այնուամենայնիվ, ցանկության դեպքում նրանք պետք է հնարավորություն ունենան տեղական մասնաճյուղ կամ դուստր կազմակերպություն հիմնադրել: Օտարերկրյա կազմակերպությունները պետք է կարողանան գործել ցանկացած այն տարածքում, որտեղ կարող են գործել տեղական ՔՀԿ-ները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ տարածքում գործող կարգավորումներով պահանջվում է, որ տվյալ գործունեությունը կարող են իրականացնել տեղական կազմակերպությունները:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենքն արգելում է օտարերկրյա կազմակերպությանը գործունեություն իրականացնել տվյալ երկրում, եթե այն չի գրանցվել կամ թույլտվություն ստացել որպես տեղական կազմակերպություն գործելու նպատակով:

3. <u>Օրենքով չի պարտադրվում ՔՀԿ-ների գործունեությունը համապատասխանեցնել պետական քաղաքականությանը կամ համաձայնեցնել պետական կառավարման մարմինների հետ</u>

ՔՀԿ-ներն իրենց գործունեության տարածքի ընտրության ազատություն ունեն: ՔՀԿ-ների՝ այլ ոլորտներում գործելու հնարավորությունը չի սահմանափակվում կառավարության գերակայություններով: Իհարկե, կառավարությունը կարող է խրախուսել ՔՀԿ-ներին առաջնահերթ ուշադրություն դարձնել գերակա ոլորտներին՝ ֆինանսական աջակցություն տրամադրելով այդ ոլորտներում գործունեություն ծավալելու համար, սակայն չպետք է սահմանափակի այլ (ոչ պետական) ֆինանսավորումը այնպիսի ոլորտներում, որոնք կառավարությունը գերակա չի համարում:

Լիցենզավորման պահանջի միջոցով պետությունը ՔՀԿ-ներից կարող է պահանջել ապացուցել բավարար կարողությունների առկայությունը՝ որոշակի ոլորտներում աշխատելու համար (օրինակ՝ առողջապահության կամ որոշ սոցիալական ծառայությունների ոլորտներում): Սակայն այդպիսի պահանջ կիրառելու դեպքում այն պետք է գործի ոչ միայն ՔՀԿ-ների, այլ նման ծառայություն մատուցող բոլոր ընկերությունների նկատմամբ:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենքը պահանջում է, որ դոնորը համաձայնագիր ունենա կառավարության հետ՝ տվյալ երկրում ֆինանսավորում տրամադրելու համար:
- Որևէ նախարարության իրավասության ոլորտում գործունեություն իրականացնելու համար պահանջվում է տվյալ նախարարության թույլտվությունը:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Գրանցման համար պատասխանատու մարմինը ՔՀԿ նպատակները դիտարկելիս մեկնաբանող կամ հայեցողական մոտեցում չի ցուցաբերում: 2. Պետական մարմինների կողմից գործնականում որևէ խոչընդոտ չի կիրառվում, որը կխանգարի ՔՀԿ-ների ներգրավմանը օրենքով թույլատրելի գործունեության ոլորտներում:

1. **<u>Գրանցման համար պատասխանատու մարմինը ՔՀԿ նպատակները դիտարկելիս մեկնաբանող կամ հայեցողական մոտեցում չի ցուցաբերում</u>**

Գրանցող մարմինը գնահատական չի տալիս ՔՀԿ նպատակների ողջամտությանը կամ նպատակահարմարությանը, այլ ուսումնասիրում է գրանցման իրավական պահանջներին համապատասխանությունը և օրենքով պահանջվող փաստաթղթերի ամբողջականությունը: Նույն նպատակը հետապնդող այլ կազմակերպությունների առկայությունը գրանցումը մերժելու պատճառ չի հանդիսանում: Գրանցման վերաբերյալ որոշումը կախված չէ պետական մարմինների կարծիքից առ այն, թե արդյոք ՔՀԿ-ն տիրապետում է իր նպատակների իրագործման համար անհրաժեշտ միջոցներին, եթե կազմակերպությունը բավարարում է օրենքով սահմանված հիմնական նվազագույն չափանիշները (օրինակ, որոշ երկրներում հիմնադրամների համար գործում է որոշակի նվազագույն կապիտալի պահանջ):

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Գրանցում իրականացնող մարմինը ՔՀԿ-ից բացատրություն է պահանջում առ այն, թե ինչու են իրենք որոշել աջակցել տվյալ խմբին:
- Գրանցող մարմինը պահանջում է ապացույցներ առ այն, որ ՔՀԿ-ն տիրապետում է իր նպատակների իրագործման համար բավարար միջոցների:

2. **<u>Պետական մարմինների կողմից գործնականում որևէ խոչընդոտ չի կիրառվում, որը կխանգարի ՔՀԿ-ների ներգրավմանը օրենքով թույլատրելի գործունեության ոլորտներում</u>**

ՔՀԿ-ները կարող են ազատ գործունեություն ծավալել ցանկացած ոլորտում՝ առանց որևէ նախնական թույլտվության, բացառությամբ այնպիսի ոլորտների, որտեղ կարող են հատուկ թույլտվության կամ հատուկ պայմանների պահանջներ լինել (օրինակ բանկային ծառայությունների, վարկավորման և այլ ոլորտներում):

Արտերկրում գրանցված ՔՀԿ-ներից չպետք է պահանջվի հատուկ թույլտվություն ձեռք բերել կամ գրանցել տեղական կազմակերպություն՝ տվյալ երկրում գործունեություն ծավալելու համար: Նրանց նկատմամբ մոտեցումը պետք է լինի նույնը, ինչ տեղական ՔՀԿ-ների նկատմամբ, և նրանք պետք է կարողանան գործել բոլոր այն ոլորտներում, որտեղ կարող են գործել տեղական ՔՀԿ-ները:

ՔՀԿ-ների գործունեությունը պետք է օրինական համարվի, եթե օբյեկտիվ ապացույց չկա հակառակի վերաբերյալ: Փաստաթղթերի ցանկացած պահանջ պետք է հիմնված լինի մշտադիտարկման կամ ստուգման իրավական պահանջների վրա: Եթե ՔՀԿ-ները ստուգումից առաջ կամ դրա ընթացքում պետք է փաստաթղթեր ներկայացնեն, ապա անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը պետք է հստակ սահմանված ու ողջամիտ լինի և ծառայի օրենքի էական խախտման կասկածը հաստատելու կամ մերժելու նպատակին:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Որևէ գործունեություն իրականացնելու համար ՔՀԿ-ները պարտավոր են պետական գերատեսչությունից լրացուցիչ թույլտվություն ձեռք բերել:
- ՔՀԿ-ները պարտավոր են տրամադրել փաստաթղթեր, որոնք նրանք չեն կարող ապահովել (օրինակ ՝ «սեփականատիրոջ» կողմից ստորագրված փաստաթղթեր, որը ՔՀԿ չունի):
- Օտարերկրյա կազմակերպությունները պարտավոր են տեղական ներկայացուցչության/տնօրենի պաշտոնում նշանակել տեղական քաղաքացու:
- Պետական իշխանությունների կողմից փորձեր են արվում սպառնալ ՔՀԿ-ներին կամ միջամտել նրանց գործունեությանը:

Չափորոշիչ 4՝ Կիրառվող ցանկացած պատժամիջոց հստակ է, համապատասխանում է համաչափության սկզբունքին և ցանկալի նպատակին հասնելու համար նվազագույն միջամտություն է նախատեսում:

Ցանկացած պատժամիջոց պետք է նպատակ ունենա շտկելու օրենքի խախտումը, այլ ոչ թե խոչընդոտել ՔՀԿ-ների գործունեությանը: Նախքան որևէ պատժամիջոցի կիրառումը՝ ՔՀԿ-ներին պետք է ողջամիտ հնարավորություն ընձեռվի շտկելու ցանկացած խախտում: Պատժամիջոցներ կիրառելու դեպքում պետական մարմինները պետք է պահպանեն համաչափության սկզբունքը: Օրենքը պետք է պատժամիջոցների հստակ ցանկ սահմանի, ընդ որում գործունեության դադարեցումը պետք է համարվի ծայրահեղ միջոց, որը կարող է կիրառվել հազվադեպ հանգամանքներում: Բացի այդ, պատժամիջոցները պետք է կանխատեսելի լինեն, իսկ ՔՀԿ-ները պետք է իրազեկված լինեն, թե դրանք որ խախտումների դեպքում կարող են կիրառվել:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. ՔՀԿ-ների համար նախատեսված պատժամիջոցները հստակ սահմանված են և նվազագույն չափով են միջամտում միավորման ազատության իրավունքի իրացմանը: 2. Հարկադիր կասեցման և լուծարման հիմքերը հստակ թվարկված են և օգտագործվում են միայն այն դեպքում, երբ ավելի մեղմ միջոցները բավարար չեն լինում:

1. ՔՀԿ-ների համար նախատեսված պատժամիջոցները հստակ սահմանված են և նվազագույն չափով են միջամտում միավորման ազատության իրավունքի իրացմանը

ՔՀԿ-ների նկատմամբ պատժամիջոցներ պետք է գործադրվեն միայն օրենքի լուրջ խախտումների դեպքում: Օրենքով պետք է հստակ նախատեսվի, թե որ խախտումների համար ինչ տեսակի պատժամիջոցներ կարող են կիրառվել ՔՀԿ-ների նկատմամբ: Պատժամիջոցները պետք է լինեն խախտումներին համաչափ: Անհրաժեշտ է սահմանել պատժամիջոցների աստիճանակարգ և ոչ էական խախտումների դեպքում կիրառել ավելի մեղմ պատժամիջոցներ:

Պատժամիջոցները պետք է նաև կանխատեսելի լինեն՝ օրենքը պետք է հստակ սահմանի, թե ինչպիսի պատժամիջոցներ են գործում կոնկրետ իրավական խախտումների դեպքում: Չափազանց մեծ տուգանքների կիրառումը կարող է անհամաչափ համարվել:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Հաշվետվություններն ուշացմամբ ներկայացնելու դեպքում նախատեսված տուգանքները չափազանց մեծ են (օրինակ, մի քանի հարյուր եվրո):
- Օրենքը նախատեսում է, որ օրենքի խախտումների դեպքերում ՔՀԿ-ների գործունեությունը ենթակա է դադարեցման՝ սակայն հստակ սահմանելու այդ խախտումների տեսակները:

2. Հարկադիր կասեցման և լուծարման հիմքերը հստակ թվարկված են և օգտագործվում են միայն այն դեպքում, երբ ավելի մեղմ միջոցները բավարար չեն լինում

Հարկադիր լուծարումը ծայրահեղ միջոց է, որը կարող է կիրառվել միայն անկախ և անկողմնակալ դատարանի որոշմամբ: Այն կիրառվում է միայն օրենքի առավել լուրջ խախտումների դեպքում և միայն այն ժամանակ, երբ խախտումը կամ խախտումները հնարավոր չէ վերացնել այլ պատժամիջոցների կիրառմամբ: Նախքան հարկադիր լուծարման գործընթաց սկսելը՝ ՔՀԿ-ներին պետք է իրավիճակը շտկելու հնարավորություն տրվի: Լուծարումը կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, եթե այն նախատեսված է ՄԻԵԿ 11-րդ հոդվածով սահմանված հիմքերով.

- ի շահ պետական անվտանգության կամ հասարակական անվտանգության,
- անկարգությունների կամ հանցագործությունների կանխարգելման համար,
- առողջության կամ բարոյականության նորմերի պաշտպանության համար, կամ
- այլոց համար իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

Գործունեության կասեցումը պետք է իրականացվի միայն անմիջական սպառնալիքի կանխման նպատակով և միայն ժողովրդավարության նկատմամբ լուրջ սպառնալիքների առկայության դեպքում: ՔՀԿ գործունեության կասեցման վերաբերյալ որոշում կարող է ընդունել միայն անկախ դատարանը: Կասեցումը ժամանակավոր միջոց է, և կասեցման համար օրենքը պետք է սահմանափակ ժամանակահատված նախատեսի:

Թե՛ կասեցումը և թե՛ դադարեցումը պետք է ենթակա լինեն բողոքարկման:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենքով հստակ չի սահմանված, թե որ իրավախախտումները կարող են հանգեցնել կասեցման կամ հարկադիր դադարեցման:
- Օրենքը կասեցման ժամանակահատվածի որևէ սահմանափակում չի նախատեսում:
- Կազմակերպությունը լուծարվում է, եթե մեկ տարվա ընթացքում տեղի է ունեցել երկու իրավախախտում՝ անկախ դրանց ծանրության աստիճանից:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. ՔՀԿ-ները համապատասխան նախազգուշացում են ստանում ենթադրյալ խախտման վերաբերյալ, և խախտումներն ուղղելու հնարավորություն է տրվում՝ մինչ պատժամիջոցների կիրառումը: 2. Հարկադիր կասեցումը ծայրահեղ միջոց է և կիրառվում է միայն օրենքի կոպիտ խախտումների դեպքում:

1. **<u>ՔՀԿ-ները համապատասխան նախազգուշացում են ստանում ենթադրյալ խախտման վերաբերյալ, և խախտումներն ուղղելու հնարավորություն է տրվում՝ մինչ պատժամիջոցների կիրառումը</u>**

ՔՀԿ նկատմամբ գործադրվող ցանկացած պատժամիջոցի նպատակը պետք է լինի ՔՀԿ-ի վարքագծի շտկումը և օրենքի ենթադրյալ խախտման վերացումը: Այդ իսկ պատճառով, նախքան որևէ պատժամիջոցի կիրառումը, առաջին քայլը պետք է լինի նախազգուշացումը, որով բավականաչափ ժամանակ է հատկացվում անօրինական վարքը շտկելու համար: Օրինակ, տարեկան հաշվետվություններ չներկայացրած ՔՀԿ-ները նախ պետք է ծանուցում ստանան և ողջամիտ ժամկետ ունենան հաշվետվությունը ներկայացնելու համար՝ նախքան որևէ պատժամիջոցի կիրառումը: Այս նախազգուշացումը պետք է լինի գրավոր ձևաչափով, և ՔՀԿ-ի կողմից դրա ստացման վերաբերյալ հաստատման մեխանիզմներ նախատեսվեն:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Խախտումն ուղղելու համար նախատեսված ժամկետն այնքան կարճ է, որ գործնականում անհնար է դրա իրագործումը:

2. **<u>Հարկադիր կասեցումը ծայրահեղ միջոց է և կիրառվում է միայն օրենքի կոպիտ խախտումների դեպքում</u>**

Հարկադիր կասեցումը որպես պատժամիջոց պետք է կիրառվի միայն այն ժամանակ, երբ որևէ այլ միջոց չի կարող ծառայել համապատասխան նպատակին (այլ կերպ ասած, այն պետք է համաչափ լինի օրենքի խախտմանը): Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, դա նշանակում է, որ համոզվածություն պետք է լինի առ այն, որ տվյալ պատժամիջոցը «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»:

Պատշաճ գործելակերպը պահանջում է բավականաչափ ժամկետ ապահովել խախտումը վերացնելու համար: Բուլղարիայի օրենսդրությամբ նախատեսվում է, որ ՔՀԿ-ին պետք է 6-ամսյա ժամկետ տրվի խախտումն ուղղելու համար՝ նախքան տվյալ ՔՀԿ-ի հարկադիր դադարեցումը:

Ավելին, դադարեցումը կիրառվում է որպես ծայրահեղ միջոց, և պետք է կիրառվի միայն առավել լուրջ խախտումների դեպքում: Օրինակ, եթե միավորումը ընդհանուր ժողով է հրավիրում՝ ճշգրիտ չհետևելով օրենքով սահմանված կարգին, դա փոքր խախտում է համարվում, որը չպետք է հանգեցնի լուծարման:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Դադարեցումը կամ կասեցումը օգտագործվում են որպես կառավարությանը քննադատող կազմակերպություններին լռեցնելու միջոց:
- Կազմակերպությունները նախազգուշացում չեն ստանում նախքան գործունեության դադարեցումը:

Չափորոշիչ 5՝ Պետությունը չի միջամտում ՔՀԿ-ների ներքին գործերին և գործունեությանը:

ՔՀԿ-ները ինքնակառավարվող կազմակերպություններ են՝ պետությունից անկախ: Նրանք ազատ են որոշել իրենց ներքին կառուցվածքը (պահպանելով հիմնական իրավական պահանջները), իրենց մարմինների անդամներին և նրանց լիազորությունները: ՔՀԿ-ների համար կարող է սահմանված լինել հաշվետվողականության պահանջ, որը պետք է լինի հստակ սահմանված և համաչափ: Ավելին, օրենքը պետք է հստակ կանոններ սահմանի պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող վերահսկողության և ստուգումների ծավալի, չափանիշների և սահմանափակումների վերաբերյալ: Ցանկացած վերահսկողություն կամ ստուգում պետք է իրականացվի հիմնավորված, համաչափ և օբյեկտիվ ձևով:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. ՔՀԿ-ներն ազատ են որոշում կայացնելու իրենց ներքին կառավարման և գործունեության վերաբերյալ: 2. Պետության կողմից ՔՀԿ-ների մոնիտորինգի և վերահսկողության շրջանակները, չափանիշները և սահմանափակումները հստակ կանոնակարգված են: 3. Հաշվետվության ընթացակարգը և պահանջները հստակ նկարագրված են և համահունչ են ՔՀԿ-ի չափին և/կամ գործունեության ծավալին:

1. **<u>ՔՀԿ-ներն ազատ են որոշում կայացնելու իրենց ներքին կառավարման և գործունեության վերաբերյալ</u>**

Պետությունը ՔՀԿ-ների ներքին գործերին չմիջամտելու բացասական պարտավորություն ունի (որպես միավորումների ազատության պայման): ՔՀԿ-ները պետք է ազատություն ունենան սահմանել իրենց կառավարման կառուցվածքը ըստ սեփական նախասիրությունների, եթե դա համապատասխանում է օրենքի նվազագույն պահանջներին (օրինակ՝ միավորումների դեպքում

բարձրագույն մարմին է հանդիսանում անդամների ժողովը): ՔՀԿ-ները կարող են ինքնուրույն որոշել իրենց կազմակերպության անդամության պայմանները, ինչպես նաև կազմակերպության անդամների և մարմինների ընտրության գործընթացը՝ անդամների նկատմամբ հավասար վերաբերմունքի պայմանով:

Պետությունը ՔՀԿ որոշումների նկատմամբ վերահսկողություն կարող է սահմանել միայն դրանց օրինականության (օրենքին համապատասխանելու) կամ կազմակերպության կանոնադրության և ներքին իրավական ակտերի հետ համապատասխանության մասով (անդամի կողմից դատարան ներկայացված դիմումի հիման վրա):

Պետության մեկ այլ հնարավոր դերը կարող է լինել որոշման կայացումը փակուղու առաջ հայտնվելու դեպքում (այնպիսի իրավիճակում, որը չի կարող լուծում ստանալ կազմակերպության ներքին կանոնակարգերով): Սա կարող է լինել այն դեպքում, օրինակ, երբ կազմակերպության հիմնադիրը իրեն իրավունք է վերապահել որոշակի որոշումներ կայացնել և իր մահից հետո այդ իրավունքը չի փոխանցվել կազմակերպությանը կամ երրորդ կողմը արգելանք է դրել այդ որոշումների վրա:

Որոշ երկրներում պետությունը կարող է հանդիսանալ ՔՀԿ հիմնադիր կամ անդամ: Նման դեպքերում այն իրավունք ունի մասնակցելու ՔՀԿ-ի ներքին գործերին նույն կերպ, ինչպես մյուս բոլոր անդամները: Սակայն պետական ներկայացուցչի պարտադիր մասնակցությունը ՔՀԿ ներքին հանդիպումներին այս ցուցանիշի խախտում կհանդիսանա:

Միավորումների ազատության անբաժանելի մաս է կազմում չմիավորվելու մասին որոշման ազատությունը կամ կազմակերպությունը լուծարելու որոշումը: ՔՀԿ-ները որևէ պետական մարմնից չպետք է թույլտվություն ստանան կազմակերպությունը լուծարելու համար, թեև կարող է պահանջվել, որ նրանք հատուկ ընթացակարգի հետևեն, որի արդյունքում պետական մարմինը հայտարարում է լուծարման մասին: Նման ընթացակարգը, որպես կանոն, նպատակ ունի ապահովել հնարավոր պարտատերերի և անդամների իրավունքների պաշտպանությունը: Այս որոշման կայացման ժամանակահատվածը պետք է ողջամիտ լինի, օրինակ՝ 6 ամիս:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ն պարտավոր է իր ընդհանուր ժողովին հրավիրել կառավարության ներկայացուցչին:
- Պետությունը պետք է տեղեկացված լինի ՔՀԿ բոլոր մարմինների կազմի ցանկացած փոփոխության մասին:
- ՔՀԿ-ն կարող է ունենալ միայն օրենքով սահմանված մարմիններ:

2. **<u>Պետության կողմից ՔՀԿ-ների մոնիտորինգի և վերահսկողության շրջանակները, չափանիշները և սահմանափակումները հստակ կանոնակարգված են</u>**

Օրենքը պետք է հստակ սահմանի պետության կողմից ՔՀԿ-ների նկատմամբ վերահսկողության շրջանակը: Ցանկացած ստուգում պետք է հիմնված լինի օրենքի վրա, ինչպես նաև օրենքի խախտման վերաբերյալ ողջամիտ կասկածի վրա:

Օրենքը պետք է սահմանի ՔՀԿ-ների կողմից պարտադիր ներկայացման ենթակա փաստաթղթերի տեսակները՝ ներառելով միայն այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են տվյալ ՔՀԿ-ի օրինականությունը ստուգելու նպատակով: Անդամների ամբողջական ցանկի և նրանց կոնտակտային տվյալների ներկայացման պահանջը, որպես կանոն, անհրաժեշտ չէ, քանի որ այս տեղեկատվությունը կարող է զգայուն լինել և չի հանդիսանում կազմակերպության՝ օրենքին համապատասխան գործելու անհրաժեշտ ապացույց: Օրինակ, եթե պետական մարմիններին

անհրաժեշտ է ստուգել, թե արդյոք կազմակերպությունն ունի անհրաժեշտ թվով անդամներ, կամ քվորում՝ որոշակի որոշումներ կայացնելու համար, ապա բավարար կլինի անդամների թվաքանակի վերաբերյալ թարմացված տվյալներ պահանջել:

ՔՀԿ գրասենյակ մտնելը կամ փաստաթղթեր առգրավելը պետք է հնարավոր լինի միայն այն դեպքերում, երբ նման գործողությունների համար առկա են օբյեկտիվ հիմքեր (օրինակ՝ հանցագործություն կանխելու նպատակով), և միայն դատարանի թույլտվության պայմանով:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ները պարտավոր են տրամադրել ցանկացած փաստաթուղթ, որը կպահանջվի պետական մարմինների կողմից:
- Ստուգող մարմիններն ազատ մուտքի իրավունք ունեն ՔՀԿ գրասենյակներ՝ առանց օբյեկտիվ հիմքերի կամ դատական թույլտվության անհրաժեշտության:

3. <u>Հաշվետվության ընթացակարգը և պահանջները հստակ նկարագրված են և համահունչ են ՔՀԿ չափին և/կամ գործունեության ծավալին</u>

Օրենսդրությունը պետք է հստակ նշի, թե որ դեպքերում են ՔՀԿ-ների նկատմամբ գործում հաշվետվողականության պահանջները: Որպես կանոն, պետական աջակցություն ստացող կազմակերպությունները կարող են ենթարկվել հաշվետվողականության ավելի խիստ պահանջների: Ցանկացած դեպքում, հաշվետվությունները չպետք է լինեն շատ ծանրաբեռնող, և ցանկալի է, որ դրանք համաչափ լինեն կազմակերպության ծավալին՝ օրինակ, փոքր ֆինանսական շրջանառություն ունեցող կազմակերպությունը պետք է հնարավորություն ունենա պարզեցված հաշվետվություն ներկայացնել: Բացի այդ, հաշվետվությունների պահանջները և ձևերը պետք է հաշվի առնեն ՔՀԿ-ների առանձնահատկությունները: Պատշաճ գործելակերպը ենթադրում է հաշվետվությունների՝ ՔՀԿ-ների համար հատուկ մշակված ձևաչափ:

Հաշվետվողականության պահանջները պետք է հաշվի առնեն դոնորների, շահառուների, անդամների և աշխատակիցների իրավունքները, դրանք պետք է նաև օրինականության սահմաններում պահպանեն գործարար գաղտնիությունը: Որպես խորհրդի անդամ կամ ՔՀԿ աշխատակից ներգրավված անձը չպետք է դիտվի որպես հանրային գործառույթներ իրականացնող պետական պաշտոնյա և չպետք է պարտավորվի հրապարակայնորեն հայտարարագրել իր գույքը կամ եկամուտը:

Միավորումների ազատության խախտում կհամարվի ՔՀԿ-ների համար հաշվետվողականության ավելի ծանրաբեռնող պահանջների սահմանումը, քան առևտրային ընկերությունների համար (օրինակ՝ ՔՀԿ-ները պարտավոր են հաշվետվություն ներկայացնել տարեկան երկու անգամ, իսկ ընկերությունները՝ միայն մեկ անգամ):

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ները պարտավոր են պատասխանատու պետական մարմնին տրամադրել նվիրատու հանդիսացող բոլոր անհատների և կազմակերպությունների ցանկը:
- Բոլոր ՔՀԿ-ները պարտավոր են մանրամասն հաշվետվություն տրամադրել՝ անկախ նրանից, թե տարվա ընթացքում որևէ գործունեություն իրականացրել են, թե ոչ:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. ՔՀԿ-ների ստուգումները հիմնավորված են, համաչափ և օբյեկտիվ: 2. ՔՀԿ-ները հեշտությամբ կարող են կատարել հաշվետվողականության պահանջները

առցանց կամ ոչ առցանց եղանակով:

1. **<u>ՔՀԿ-ների ստուգումները հիմնավորված են, համաչափ և օբյեկտիվ</u>**

ՔՀԿ-ների ցանկացած ստուգում պետք է նպատակ ունենա հնարավորինս քիչ միջամտել ՔՀԿ-ների օրինական գործունեությանը: Այն պետք է հիմնավորված լինի՝

- իրավական կարգավորումներով (պետք է համապատասխանի այն դեպքերի շրջանակին, երբ ստուգումը նախատեսված է օրենքով), և
- օրենքով թույլատրվող շրջանակներում (իշխանությունների կողմից ձեռնարկվող միջոցառումները թույլատրված են օրենքով):

Ցանկացած ստուգում պետք է լինի համաչափ՝ այն պետք է կիրառվի միայն այն ժամանակ, երբ ողջամիտ կասկած կա առ այն, որ տեղի է ունեցել օրենքի խախտում, և որ ստուգումը տվյալ խախտումը ապացուցելու լավագույն միջոցն է: Այդ ստուգումը պետք է նաև օբյեկտիվ լինի և չօգտագործվի որպես քաղաքական ճնշման գործիք կամ կազմակերպությանը լռեցնելու միջոց, հատկապես կառավարությանը քննադատող ՔՀԿ-ների դեպքում:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Ստուգումներն իրականացվում են հիմնականում կառավարությանը քննադատող ՔՀԿ-ներում:

2. **<u>ՔՀԿ-ները հեշտությամբ կարող են կատարել հաշվետվողականության պահանջները առցանց կամ ոչ առցանց եղանակով</u>**

Իշխանությունները պետք է հաշվի առնեն, որ ՔՀԿ-ները կամավոր կազմակերպություններ են և կարող են մասնագետ ներգրավելու հնարավորություն չունենալ: Հետևապես, ՔՀԿ-ների պարտավորությունների վերաբերյալ հստակ և հասկանալի բացատրություններ պետք է լինեն: Մյուս կողմից, պետք է լինեն պաշտոնյաներ, որոնք հասկանում են ՔՀԿ-ների հաշվետվողականության պահանջները և ի վիճակի են պարզաբանումներ տալ աջակցության կարիք ունեցողներին:

Թեև առցանց հաշվետվողականության համակարգը կարող է առավելություն համարվել, այնուամենայնիվ, ՔՀԿ-ները պետք է հնարավորություն ունենան նաև ներկայացնել թղթային հաշվետվություններ անցանց միջոցներով:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Հաշվետվության ձևերը չափից ավելի բարդ են և հարմարեցված չեն ՔՀԿ-ների կարիքներին:

Համապատասխան ռեսուրսներ

- ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույց միավորումների ազատության մասին, պարբ. 7, 74, 139-146, 150, 231
- Եվրոպայի խորհրդի CM/Rec(2007)14 հանձնարարականը Եվրոպայում ՀԿ-ների իրավական կարգավիճակի վերաբերյալ, պարբ. 2, 3, 6 (10 հոկտեմբերի, 2007թ.)
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա (ՀԻԿ), A/RES / 61/106, հոդ. 12
- ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ, «Մարդու իրավունքների խթանումը և պաշտպանությունը համացանցում» A/HRC/20/L.13, (29 հունիսի 2012թ.), հոդ. 1, 5

- ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի բանաձև քաղաքացիական հասարակության տարածքի մասին՝ մասնակցություն միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունում, A/HRC/38/L.17 (4 հուլիսի 2018թ.)
- ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի Թեմատիկ զեկույց խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների վերաբերյալ, A/HRC/20/27 (21 մայիսի 2012թ.), 56-րդ պարբերություն
- ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի Թեմատիկ զեկույց խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների վերաբերյալ, A/HRC/38/34 (13 հունիսի 2018թ.)

ՈԼՈՐՏ 2՝ Հավասար վերաբերմունք

Չափորոշիչ 1՝ Պետությունը համահավասար կերպով է վերաբերում ՔՀԿ-ներին և առևտրային ընկերություններին:

Պետությունը կարգավորում է ինչպես տնտեսվարող սուբյեկտների, այնպես էլ քաղաքացիական հասարակության հատվածի աշխատանքը, և նրանց հանդեպ համահավասար մոտեցում պետք է կիրառվի, քանի որ երկու հատվածներն էլ սոցիալ-տնտեսական զարգացման նպատակ են հետապնդում: Խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը նշել է, որ պետությունը պետք է այս երկու հատվածները կարգավորի արդար, թափանցիկ և անկողմնակալ կերպով՝ առաջնորդվելով ներպետական և միջազգային իրավունքի նորմերով: Թեև անհրաժեշտություն չկա միատեսակ մոտեցում կիրառել տնտեսվարող սուբյեկտների և ՔՀԿ-ների հանդեպ, կարգավորումների ցանկացած տարբերություն պետք է հստակ սահմանված լինի օրենքով և համապատասխանի արդարության սկզբունքին՝ պետական պաշտոնյաների կողմից հայեցողական մոտեցման նվազագույն կիրառմամբ: Տնտեսվարող սուբյեկտների և ՔՀԿ-ների նկատմամբ պետք է համահավասար իրավակարգավորումներ կիրառվեն գրանցման ընթացակարգերի, վարչական և գործառնական պահանջների և ֆինանսավորման մատչելիության հարցերում:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. ՔՀԿ-ների գրանցման և գործունեության կամավոր դադարեցման ընթացակարգերը տնտեսվարող սուբյեկտների գրանցման ընթացակարգերի համեմատ ավելի թանկ, ժամանակատար կամ ծանրաբեռնող չեն: 2. ՔՀԿ-ները ենթակա չեն ավելի խիստ վարչական և գործառնական պահանջների, քան տնտեսվարող սուբյեկտները: 3. ՔՀԿ-ները կարող են արտոնություններ ստանալ և մրցակցել պետական գնումների գործընթացում՝ առևտրային ընկերությունների հետ հավասար հիմունքներով, առանց լրացուցիչ ծանրաբեռնող պահանջների: 4. Ֆինանսավորումից, այդ թվում օտարերկրյա ֆինանսավորումից օգտվելու վերաբերյալ իրավական նորմերը ՔՀԿ-ների համար ոչ պակաս բարենպաստ են, քան տնտեսվարող սուբյեկտների համար:

1. **ՔՀԿ-ների գրանցման և գործունեության կամավոր դադարեցման ընթացակարգերը տնտեսվարող սուբյեկտների գրանցման ընթացակարգերի համեմատ ավելի թանկ, ժամանակատար կամ ծանրաբեռնող չեն**

ՔՀԿ-ների գրանցման վճարները չպետք է ավելի մեծ լինեն, քան տնտեսվարող սուբյեկտների համար նախատեսված վճարները: ՔՀԿ-ների գրանցման համար օրենքով սահմանված առավելագույն ժամանակահատվածը չպետք է գերազանցի տնտեսվարող սուբյեկտների համար նախատեսված ժամանակահատվածը: Օրինակ, եթե տնտեսվարող սուբյեկտների գրանցման համար նախատեսված ժամանակահատվածը երկու օր է, ապա միավորումների գրանցումը պետք է իրականացվի նույն ժամանակահատվածում:

ՔՀԿ-ների գրանցման գործընթացը չպետք է ավելի բարդ լինի, ինչը նշանակում է, որ պահանջվող փաստաթղթերի շրջանակը և գրանցման հաստատման ընթացակարգերը պետք է համանման լինեն տնտեսվարող սուբյեկտների համար նախատեսվածին: Օրինակ, շատ երկրներում տնտեսվարող սուբյեկտները գրանցում են ստանում, եթե նրանց փաստաթղթերը համապատասխանում են իրավական պահանջներին, և որևէ պետական մարմնի կողմից գրանցման հաստատման կարիք չի

լինում: Բելառուսում տնտեսվարող սուբյեկտի գրանցումը կատարվում է գրանցման դիմումը գրանցելուց անմիջապես հետո: Նմանապես, միավորումների գրանցման համար ևս որևէ այլ պետական մարմնի որոշում կամ իրավական ակտ չպետք է պահանջվի, եթե բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը պատշաճ կերպով ներկայացված են: ՔՀԿ-ի գրանցման համար պահանջվող փաստաթղթերի ցանկը պետք է նույնը կամ համանման լինի տնտեսվարող սուբյեկտի գրանցման համար նախատեսված ցանկին: Տնտեսվարող սուբյեկտների և միավորումների գրանցումն իրականացնող մարմինները պետք է հավասարապես բաշխված լինեն ողջ երկրի տարածում: Այսինքն, եթե կան տեղական գրասենյակներ, որոնք գրանցում են տնտեսվարող սուբյեկտներին, ապա տեղական ՔՀԿ-ները ևս պետք է գրանցման հնարավորություն ունենան՝ առանց լրացուցիչ ճանապարհորդելու անհրաժեշտության: Եթե պետությունը հատուկ մեխանիզմներ է ստեղծել տնտեսվարող սուբյեկտների գրանցումը հեշտացնելու համար, ապա նման մեխանիզմներ պետք է կիրառվեն նաև ՔՀԿ-ների համար, օրինակ՝ առցանց գրանցման հնարավորությունը կամ մեկ պատուհանի ծառայությունը, որը խորհրդատվություն և աջակցություն է տրամադրում գրանցման գործընթացում:

Նմանապես, ՔՀԿ-ների լուծարման գործընթացը ևս չպետք է ավելի սահմանափակող պայմաններ ունենա, այսինքն՝ այս դեպքում ևս փաստաթղթերի նույն ցանկը, ինչպես նաև հավասար կամ ավելի փոքր վճարներ պահանջվեն: ՔՀԿ-ների հարկադիր լուծարման հիմքերը չպետք է ավելի շատ լինեն, քան տնտեսվարող սուբյեկտների դեպքում, իսկ լուծարումը պետք է իրականացվի համաչափության և անհրաժեշտության սկզբունքներով:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ների գրանցման համար ավելի երկար ժամանակ և բարդ ընթացակարգեր են նախատեսված, քան տնտեսվարող սուբյեկտների գրանցման համար:
- ՔՀԿ-ների գրանցման վճարները կամ այլ հարկերն ու տուրքերը ավելի մեծ են, քան առևտրային կազմակերպությունների դեպքում:
- Առցանց գրանցումը հնարավոր չէ ՔՀԿ-ների համար, մինչդեռ տնտեսվարող սուբյեկտները կարող են դիմել և գրանցվել առցանց:
- ՔՀԿ-ների հարկադիր լուծարման համար ավելի շատ հիմքեր են նախատեսված, քան տնտեսվարող սուբյեկտների համար, օրինակ, տարեկան հաշվետվություններ չներկայացնելու կամ ՔՀԿ-ի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին չհամապատասխանելու համար:

2. **<u>ՔՀԿ-ները ենթակա չեն ավելի խիստ վարչական և գործառնական պահանջների, քան տնտեսվարող սուբյեկտները</u>**

Վարչարարության և գործունեության տեսանկյունից ՔՀԿ-ները չպետք է ենթակա լինեն ավելի ծանրաբեռնող պահանջների, քան տնտեսվարող սուբյեկտները: Բանկային հաշիվների բացման դեպքում պետք է պահանջվի փաստաթղթերի նույն ցանկը, իսկ բանկային վճարները չպետք է ավելի մեծ լինեն ՔՀԿ-ների համար՝ տնտեսվարող սուբյեկտների համեմատությամբ: ՔՀԿ-ների ֆինանսական հաշվետվությունների պետական աուդիտի համար օրենքով պետք է համանման կամ ավելի քիչ հիմքեր լինեն նախատեսված: Համաձայն ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույցի, «եթե միավորումը որպես շահույթ չհետապնդող կազմակերպություն գրանցվելու դիմաց ստացել է հարկային արտոնություն, պետությունը օրինավոր հիմքեր ունի՝ հավաստիանալու, որ միավորումը

շահույթ չի ստանում կամ հասույթ չի բաշխում»[2], սակայն դրանից զատ այլ տարբերություններ չպետք է լինեն ՔՀԿ-ների և տնտեսվարող սուբյեկտների աուդիտի դեպքում:

ՔՀԿ-ների համար օրենքով սահմանված հաշվետվողականության պահանջները չպետք է ավելի բարդ կամ թանկ լինեն, քան տնտեսվարող սուբյեկտների դեպքում, իսկ հաշվետվությունների ներկայացման պահանջվող հաճախականությունը ՔՀԿ-ների համար պետք է համանման կամ ավելի փոքր լինի, քանի որ տնտեսվարող սուբյեկտների եկամտաբերության գործառույթը և հարկային պարտավորությունները կարող են ավելի հաճախակի հաշվետվությունների պահանջ առաջացնել: ՔՀԿ-ներից պահանջվող տեղեկությունները չպետք է միջամտության ավելի լայն շրջանակ նախատեսեն, օրինակ՝ ներառեն խորհրդի ժողովների արձանագրությունները կամ ֆինանսավորման աղբյուրների տվյալները, որոնք չեն պահանջվում ընկերությունների դեպքում: Հատուկ հաշվետվությունները թույլատրելի են միայն այն դեպքում, եթե դա պահանջվում է որոշակի արտոնությունների դիմաց, և պայմանով, որ միավորումն ազատ է իր հայեցողության շրջանակում որոշել՝ արդյոք հետևել հաշվետվողականության այդ պահանջներին, թե հրաժարվել դրանցից և դրանց հարակից արտոնություններից:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենքով ՔՀԿ-ներից լրացուցիչ փաստաթղթեր են պահանջվում բանկային հաշիվներ բացելու համար:
- Ըստ օրենքի, ՔՀԿ-ները պետք է հաշվետվություններում ներկայացնեն ժողովի արձանագրությունները, ֆինանսավորման աղբյուրների մանրամասն տվյալները կամ այլ ներքին փաստաթղթեր կամ ընթացակարգեր, որոնք չեն պահանջվում ընկերություններից:
- ՔՀԿ-ների ստուգումները և հաշվետվությունները ավելի հաճախակի բնույթ են կրում, քան տնտեսվարողների դեպքում, թեև լրացուցիչ արտոնություններ չեն տրամադրվում:

3. <u>ՔՀԿ-ները կարող են արտոնություններ ստանալ և մրցակցել պետական գնումների գործընթացում՝ առևտրային ընկերությունների հետ հավասար հիմունքներով, առանց լրացուցիչ ծանրաբեռնող պահանջների</u>

ՔՀԿ-ները ազատ են զբաղվելու որևէ տնտեսական, գործարար կամ առևտրային օրինական գործունեությամբ, այդ թվում մասնակցելու պետական գնումներին՝ իրենց շահույթ չհետապնդող գործունեությանը օժանդակելու նպատակով: Նրանք կարող են ենթակա լինել որոշակի լիցենզավորման կամ կանոնակարգային պահանջների, որոնք կիրառելի են նաև գործունեության համապատասխան տեսակներով զբաղվող տնտեսվարող սուբյեկտների համար: Հավասար հիմունքներով մրցակցությունը նշանակում է, որ ՔՀԿ-ներից և տնտեսվարող սուբյեկտներից պահանջվում է փաստաթղթերի նույն ցանկը, իսկ ընտրության գործընթացում նույն չափորոշիչներն են կիրառվում: Պետական գնումների մրցույթներին մասնակցելու համար ՔՀԿ-ներից լրացուցիչ տեղեկատվություն չի պահանջվում իրենց հիմնադիրների կամ ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ, եթե նման տեղեկատվություն չի պահանջվում տնտեսվարող սուբյեկտներից:

Պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել՝ հեշտացնելու կամ խթանելու համար երկրի գերակայություն սահմանված ոլորտներում (օրինակ, նոր տեխնոլոգիաների զարգացում, սոցիալական ձեռնարկատիրություն) աշխատող ընկերություններում ներդրումների կատարումը: Այս միջոցները պետք է հավասարապես կիրառվեն այն ՔՀԿ-ների համար, որոնք գործում են նույն

[2] ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի թեմատիկ զեկույցը խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների վերաբերյալ (Տարբեր պետություններում տնտեսվարող սուբյեկտների և միավորումների հանդեպ կիրառվող մոտեցումների համեմատական վերլուծություն), A / 70/266, պարբ. 52

ոլորտներում՝ օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավելու կամ խոցելի տարածքներում աշխատելու համար նախատեսված արտոնություններ:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ների բոլոր կամ որոշ տեսակների դեպքում կիրառվում է պետական գնումներին մասնակցելու սահմանափակում կամ արգելք:
- Գնումների գործընթացի ընթացքում ՔՀԿ-ները պարտավոր են լրացուցիչ տեղեկություններ ներկայացնել, օրինակ՝ տվյալներ հիմնադիրների վերաբերյալ, ֆինանսական հաշվետվություններ, իրականացրած ծրագրերի նկարագիր, մինչդեռ տնտեսվարող սուբյեկտներից այդ տեղեկությունները չեն պահանջվում:
- Փոքր ձեռնարկությունները հարկային արտոնություններ են ստանում, եթե նրանց տարեկան եկամուտը չի գերազանցում կոնկրետ շեմը, մինչդեռ տնտեսական գործունեությամբ զբաղվող ՔՀԿ-ները չեն օգտվում նման արտոնությունից:
- Սոցիալապես անապահով խմբերին աշխատանքի ընդունող ընկերությունների համար հարկային արտոնություններ են սահմանված, որոնք չեն գործում ՔՀԿ-ների դեպքում:

4. **<u>Ֆինանսավորումից, այդ թվում օտարերկրյա ֆինանսավորումից օգտվելու վերաբերյալ իրավական նորմերը ՔՀԿ-ների համար ոչ պակաս բարենպաստ են, քան տնտեսվարող սուբյեկտների համար</u>**

Ներդրումներ ստացող տնտեսվարող սուբյեկտների նման, ՔՀԿ-ները ևս պետք է կարողանան օգտվել որևէ ներդրողի կողմից տրամադրված ֆինանսավորումից: Ինչպես նշված է ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույցում, օտարերկրյա ֆինանսավորումը կամ ներդրումները միջոցների այն տեսակներն են, որոնք պետության կողմից առավել հաճախ են սահմանափակվում: Սակայն տնտեսվարող սուբյեկտների և ՔՀԿ-ների համար կարգավորման միտումները տարբեր են. օտարերկրյա ֆինանսավորման առումով քաղաքացիական հասարակության անհարկի սահմանափակումները վերջին տասնամյակում ավելացել են, մինչդեռ տնտեսվարող սուբյեկտների համար արտասահմանյան ներդրումների սահմանափակումները աստիճանաբար վերանում են: Օրինակ, Ռուսաստանում և Հունգարիայում այն ՔՀԿ-ները, որոնք արտասահմանից ֆինանսավորում են ստանում, պարտավոր են գրանցվել որպես օտարերկրյա գործակալներ, մինչդեռ օտարերկրյա բիզնես ներդրումները մեծապես խրախուսվում են պետության կողմից: Ցանկացած տեսակի՝ ներքին թե արտաքին ֆինանսավորման հնարավորությունը պետք է հավասարապես հասանելի լինի երկու հատվածների համար և կապված չլինի ծանրաբեռնող ընթացակարգերի հետ:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ները հաստատագրված հարկեր են վճարում իրենց ձեռնարկատիրական գործունեության համար, իսկ տնտեսվարող սուբյեկտները կարող են ընտրել տարբեր տեսակի հարկման մեխանիզմներ՝ կախված իրենց գործունեության ոլորտից:
- ՔՀԿ-ների օտարերկրյա ֆինանսավորումը պետք է հաստատվի և/կամ գրանցվի պետության կողմից, մինչդեռ տնտեսվարող սուբյեկտների ստացած օտարերկրյա ներդրումների դեպքում նման պահանջ չկա:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Գրանցման մարմինները լրացուցիչ պահանջներ կամ այլ խոչընդոտներ չեն ստեղծում ՔՀԿ-ների գրանցման համար՝ տնտեսվարող սուբյեկտների համեմատ: 2. Գնումների ընթացակարգերից կամ ֆինանսավորման այլ աղբյուրներից օգտվելու դեպքում ՔՀԿ-ները իրենց իրավական կարգավիճակի պատճառով մերժման կամ խոչընդոտների չեն

հանդիպում պետության կողմից
3. ՔՀԿ-ների շրջանում ստուգումներն ու պատժամիջոցները ավելի հաճախակի չեն, քան տնտեսվարող սուբյեկտների շրջանակում:

1. **Գրանցման մարմինները լրացուցիչ պահանջներ կամ այլ խոչընդոտներ չեն ստեղծում ՔՀԿ-ների գրանցման համար՝ տնտեսվարող սուբյեկտների համեմատ**

Գրանցում իրականացնող մարմինները չպետք է լրացուցիչ խոչընդոտներ հարուցեն ՔՀԿ-ների գրանցման դեպքում՝ ի տարբերություն տնտեսվարող սուբյեկտների: Օրինակ, նրանք չպետք է ՔՀԿ-ների կանոնադրության առավել խորը փորձաքննություն իրականացնեն կամ կանոնադրության նկատմամբ լրացուցիչ պահանջներ պարտադրեն, որոնք սահմանված չեն օրենքով, ինչպես նաև լրացուցիչ փաստաթղթեր պահանջեն:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ների գրանցումը գործնականում սովորաբար ավելի դժվար և դանդաղ է տեղի ունենում, քան տնտեսվարող սուբյեկտների գրանցման գործընթացը:
- Ընկերությունների գրանցման գործընթացում կիրառվում է «մեկ պատուհանի» սկզբունքը (որը թույլ է տալիս գրանցումը իրականացնել մեկ մարմնի միջոցով՝ առանց բազմաթիվ գերատեսչություններ այցելելու անհրաժեշտության), որը սակայն չի կիրառվում ՔՀԿ-ների գրանցման համար:

2. **Գնումների ընթացակարգերից կամ ֆինանսավորման այլ աղբյուրներից օգտվելու դեպքում ՔՀԿ-ները իրենց իրավական կարգավիճակի պատճառով մերժման կամ խոչընդոտների չեն հանդիպում պետության կողմից**

Շահույթ չհետապնդող կազմակերպության կարգավիճակը չպետք է հիմք լինի գնումների գործընթացին ՔՀԿ-ների մասնակցությունը մերժելու համար կամ նվազեցնի գնումների գործընթացում հաղթելու՝ ՔՀԿ-ների հնարավորությունները: ՔՀԿ-ները չպետք է լրացուցիչ ընթացակարգերով անցնեն, որպեսզի իրավունք ստանան մասնակցելու գնումներին: ՔՀԿ-ներն ազատ են նաև օգտվելու ֆինանսավորման այլ աղբյուրներից, ինչպիսիք են տեղական և օտարերկրյա դրամաշնորհները կամ նվիրատվությունները՝ առանց իրավական պահանջներից դուրս արհեստական խոչընդոտների հանդիպելու:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Գործնականում գնումների գործընթացին մասնակցելու համար ՔՀԿ-ներից պահանջվում է տեղեկատվություն տրամադրել իրենց հիմնադիրների վերաբերյալ կամ այլ լրացուցիչ տեղեկություններ՝ կապված իրենց շահույթ չհետապնդող կարգավիճակի հետ:
- Պետական գնումներին մասնակցելու համար ՔՀԿ-ները պետք է նախնական հավանություն ստանան համապատասխան պետական մարմնի կողմից:
- Տեղական կամ օտարերկրյա աղբյուրներից ֆինանսավորում ստանալու դեպքում ՔՀԿ-ները պարտավոր են հիմնավորում կամ հաշվետվություն ներկայացնել կամ անցնել օրենքով չպահանջվող լրացուցիչ պետական ստուգումներ՝ ելնելով իրենց շահույթ չհետապնդող կարգավիճակից:

3. **ՔՀԿ-ների շրջանում ստուգումներն ու պատժամիջոցները ավելի հաճախակի չեն, քան տնտեսվարող սուբյեկտների շրջանակում**

Նույնիսկ եթե օրենքը պետության կողմից նույն հաճախականությամբ աուդիտ և ստուգումներ է նախատեսում, անհրաժեշտ է ապահովել, որ գործնականում պետական մարմինների կողմից ՔՀԿ-ների ստուգումներն ավելի հաճախակի չլինեն: ՔՀԿ-ները ենթակա են լրացուցիչ ստուգման միայն այն դեպքում, երբ նրանք արտոնություններ են ստանում՝ ելնելով իրենց շահույթ չհետապնդող կարգավիճակից, և միայն համապատասխան իրավական պահանջների հիման վրա:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ներում հարկային մարմինների կամ այլ պետական մարմինների կողմից ավելի հաճախ են ստուգումներ անցկացվում, քան տնտեսվարող սուբյեկտներում՝ առանց համապատասխան իրավական հիմնավորման:

Չափորոշիչ 2՝ Պետությունը հավասարապես է վերաբերվում բոլոր ՔՀԿ-ներին նրանց հիմնադրման, գրանցման և գործունեության հարցերում:

Հավասար վերաբերմունքի սկզբունքը նշանակում է, որ օրենսդրությունը և պետական մարմինները պետք է հավասարապես վերաբերվեն բոլոր ՔՀԿ-ներին նրանց հիմնադրման, գրանցման և գործունեության հարցերում: Ցանկացած տարբերակված մոտեցում կհամարվի խտրական, եթե առկա չէ դրա օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորումը, որը հստակ սահմանված կլինի օրենքով: Նման հիմնավորումները կիրառվում են իրավաչափ նպատակների համար՝ պահպանելով համաչափության սկզբունքը, օրինակ՝ կարող է աջակցություն տրամադրվել առանձնապես խոցելի տարածքներում կամ որոշակի խմբերի հետ աշխատող ՔՀԿ-ներին:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. ՔՀԿ-ների նկատմամբ հավասար մոտեցում է սահմանված, իսկ ցանկացած արտոնություն հիմնված է հստակ և օբյեկտիվ չափանիշների վրա: 2. Օտարերկրյա ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից հիմնված ՔՀԿ-ների հանդեպ կիրառվում է նույն մոտեցումը, ինչ տեղական ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից ստեղծված կազմակերպությունների հանդեպ:

1. ՔՀԿ-ների նկատմամբ հավասար մոտեցում է սահմանված, իսկ ցանկացած արտոնություն հիմնված է հստակ և օբյեկտիվ չափանիշների վրա

Օրենսդրությունը պետք է հավասարապես վերաբերվի բոլոր ՔՀԿ-ներին՝ հիմնադրման, գրանցման (երբ կիրառելի է) և գործունեության կարգավորումների առումով: Եթե կազմակերպությունը հատուկ կարգավիճակ կամ վերաբերմունք է ստանում, ապա դա պետք է հիմնված լինի հստակ և օբյեկտիվ չափանիշների վրա, որոնք սահմանված են օրենքով: Այդ գործընթացը պետք է նաև հասանելի լինի՝ ցանկացած կազմակերպություն կարող է փորձել բավարարել համապատասխան պայմաններին և ստանալ սահմանված արտոնությունները: Օրինակ, որոշ երկրներում հաշմանդամություն ունեցող անձանց կամ այլ ոլորտներ ներկայացնող կազմակերպությունները առանձնահատուկ իրավունքներ են ստանում և ավելի հեշտությամբ են ընդգրկվում խորհրդակցական մարմիններում: Սա կարող է տեղի ունենալ այն պայմանով, եթե ներկայացուցչականության պահանջներին համապատասխանող ցանկացած կազմակերպություն կարող է նույն արտոնությունները ստանալ:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Պետությունը արտոնություններ է տրամադրում որոշ կազմակերպությունների՝ առանց հստակ սահմանված չափանիշների:

- Արտոնություններ ստանալու ընթացակարգը անորոշ է, պարզ չէ, կամ դե ֆակտո գոյություն չունի:

2. **<u>Օտարերկրյա ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից հիմնված ՔՀԿ-ների հանդեպ կիրառվում է նույն մոտեցումը, ինչ տեղական ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից ստեղծված կազմակերպությունների հանդեպ</u>**

Ըստ միջազգային իրավունքի, օտարերկրյա քաղաքացիություն ունեցող ֆիզիկական անձանց թույլատրվում է ՔՀԿ-ներ հիմնել նույն պայմաններով, որոնք գործում են տեղացիների և իրավաբանական անձանց դեպքում: Օտարերկրյա ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից հիմնադրված ՔՀԿ-ների գործունեության համար սահմանափակումներ չպետք է լինեն, բացառությամբ այն սահմանափակումների, որոնք ողջամտորեն թույլատրված են օրենքով քաղաքացիների կողմից հիմնված ՔՀԿ-ների նկատմամբ: Միավորումների ազատությանը վերաբերող չափորոշիչները պետք է հավասարապես կիրառվեն օտարերկրյա և տեղական ՔՀԿ-ների, այդ թվում՝ միջազգային մակարդակով գործող ՔՀԿ-ների ստեղծման և գործունեության նկատմամբ:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օտարերկրյա ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից հիմնված ՔՀԿ-ների համար գործում են հատուկ սահմանափակումներ, վերահսկողության և հաշվետվության պահանջներ:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Պետական մարմինները խուսափում են առանձին կազմակերպությունների նկատմամբ արտոնյալ վերաբերմունքից: 2. Պետական պաշտոնյաներին ոչ ձեռնտու տեսակետեր և դիրքորոշումներ արտահայտող ՔՀԿ-ները նպատակաուղղված սահմանափակումների չեն հանդիպում իրենց գործունեության ընթացքում:

1. **<u>Պետական մարմինները խուսափում են առանձին կազմակերպությունների նկատմամբ արտոնյալ վերաբերմունքից</u>**

Պետական մարմինները չպետք է արտոնյալ վերաբերմունք ցուցաբերեն որոշակի կազմակերպությունների նկատմամբ, եթե այդպիսի վերաբերմունք չի նախատեսված օրենքով սահմանված չափորոշիչներով: Այս սկզբունքը վերաբերում է նաև որոշումների կայացման գործընթացներում ՔՀԿ-ների մասնակցության, պետական աջակցության և հատուկ կարգավիճակի կամ արտոնությունների տրամադրման հարցերին: Մասնավորապես, պետական աջակցության և նպաստների տրամադրումը չպետք է կախված լինի նրանից, թե արդյոք կազմակերպությունը աջակցում է, թե քննադատում կառավարությանը, այլ հիմնված լինեն թափանցիկ ընթացակարգերի և օբյեկտիվ չափանիշների վրա**:**

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Հատուկ շնորհների/արտոնյալ կարգավիճակի կարող են հավակնել միայն այն ՔՀԿ-ները, որոնք պետական մարմինների հետ համագործակցության փորձ ունեն:
- Խորհրդակցական մարմնի համար դիմում ներկայացրած ՔՀԿ-ներին ընտրելիս պաշտոնյաները նախապատվությունը տալիս են իրենց ծանոթների կողմից հիմնադրված ՔՀԿ-ներին:

- Պետությունը նախապատվություն և արտոնություններ է տրամադրում այն ՔՀԿ-ներին, որոնք քարոզում են պետական գաղափարախոսությունը կամ իրենց որոշումների կայացման կամ կառավարման գործընթացներում կախված են պետական մարմիններից:
- Հանրությանը հասանելի չէ հատկացված պետական աջակցության և դրա ծավալների մասին տեղեկատվությունը:

2. **<u>Պետական պաշտոնյաներին ոչ ձեռնտու տեսակետեր և դիրքորոշումներ արտահայտող ՔՀԿ-ները նպատակաուղղված սահմանափակումների չեն հանդիպում իրենց գործունեության ընթացքում</u>**

Խոսքի ազատությունը կարևոր է միավորումների ազատության իրագործման համար: Այն փաստը, որ ՔՀԿ-ները քննադատում են պետական մարմինների գործողությունները, նրանց դիրքորոշումները կամ որոշումները, չի կարող հիմք հանդիսանալ նրանց գործունեությունը սահմանափակելու համար: Ազգային անվտանգության միջոցառումները պետք է ժամանակավոր բնույթ կրեն և նեղ շրջանակ ունենան՝ հստակ սահմանված օրինական նպատակներին հասնելու համար, օրենքով նախատեսված կարգով: Նման միջոցառումները չպետք է օգտագործվեն կառավարությանը քննադատող կամ հակասող հայացքներ ունեցող անձանց հետապնդելու համար:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Պետական մարմինները խուզարկություններ կամ լրացուցիչ ստուգումներ են իրականացնում այն ՔՀԿ-ների գրասենյակներում, որոնց արտահայտած տեսակետները և կարծիքները տարբերվում են պետական մարմինների տեսակետներից և կարծիքներից:
- ՔՀԿ-ների հիմնադիրներին, ղեկավարներին և անդամներին մեղադրում և/կամ հետապնդում են իրենց կազմակերպության օրինական գործունեության համար:
- ՔՀԿ-ներին լուծարում են իրենց ծրագրերի կամ կազմակերպության անունից իրենց առաջնորդների և անդամների հայտնած կարծիքների համար:

Համապատասխան ռեսուրսներ

- ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույց միավորումների ազատության մասին, պարբ. 64, 94, 96, 126, 166, 205, 208, 225-226, 233
- Եվրոպայի խորհրդի CM/Rec(2007)14 հանձնարարականը Եվրոպայում ՀԿ-ների իրավական կարգավիճակի վերաբերյալ, պարբ.14 (10 հոկտեմբերի, 2007թ.)
- ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի թեմատիկ զեկույց խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների վերաբերյալ, A/70/266 (16 սեպտեմբերի, 2015 թ.), պարբ. 22-75, 83-85, 109
- ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի թեմատիկ զեկույց խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների վերաբերյալ, A/HRC / 20/27 (21 մայիսի 2012թ.), պարբ. 5, 68

ՈԼՈՐՏ 3՝ Ֆինանսավորման մատչելիություն

Չափորոշիչ 1՝ ՔՀԿ-ներն ազատ են ֆինանսական և նյութական միջոցներ փնտրել, ստանալ և օգտագործել իրենց նպատակների իրականացման համար:

Ֆինանսավորման մատչելիությունը անհրաժեշտ է ՔՀԿ-ներին իրենց առաքելությունը իրականացնելու համար: Միջոցների բազմազանությունը նպաստում է նրանց անկախությանը և կայունությանը: ՔՀԿ-ները պետք է ազատ լինեն ֆինանսական կամ նյութական աջակցություն որոնել և ստանալ ցանկացած օրինական հանրային կամ մասնավոր աղբյուրներից (ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանցից), ինչպես նաև օգտագործել այդ աջակցությունը: Նրանք պետք է հնարավորություն ունենան օգտվել դրամահավաքի հասանելի մեխանիզմներից, որոնց օգտագործման ընթացակարգերը պետք է պարզ և հստակ լինեն: Ավելին, ֆիզիկական և իրավաբանական անձանց համար պետք է տարատեսակ խթաններ լինեն ՔՀԿ-ներին աջակցելու համար: Ֆինանսավորողների և ստացողների համար սահմանված հաշվետվողականության պահանջները չպետք է ծանրաբեռնող լինեն: ՔՀԿ-ները պետք է կանխիկ և/կամ բանկային գործարքների հնարավորություն ունենան:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. ՔՀԿ-ներին թույլատրվում է տարբեր մեխանիզմների օգնությամբ դիմել և ֆինանսավորում կամ նյութական աջակցություն ստանալ հանրային կամ մասնավոր դոնորներից: 2. Որևէ դոնորից ֆինանսական կամ նյութական աջակցություն ստանալու, օգտագործելու և հաշվետվություն ներկայացնելու վերաբերյալ ՔՀԿ-ների հանդեպ պահանջները ծանրաբեռնող չեն:

1. <u>ՔՀԿ-ներին թույլատրվում է տարբեր մեխանիզմների օգնությամբ դիմել և ֆինանսավորում կամ նյութական աջակցություն ստանալ հանրային կամ մասնավոր դոնորներից</u>

Ֆինանսական միջոցների հասանելիությունը կարևոր է ՔՀԿ-ների գործունեության համար և սերտորեն կապված է միավորումների ազատության իրացման հետ: Ֆինանսավորման տարատեսակ օրինական աղբյուրները ապահովում են ՔՀԿ-ների կայունությունը և նպաստում քաղաքացիական հասարակության ոլորտի ներդաշնակ զարգացմանը:

Բոլոր տեսակի ՔՀԿ-ները պետք է օրենքով հնարավորություն ունենան հայթայթել տարբեր, այդ թվում՝ ֆինանսական, բնաիրային, նյութական և մարդկային ռեսուրսներ, տարատեսակ՝ այդ թվում՝ պետական և մասնավոր, տեղական, արտասահմանյան և միջազգային աղբյուրներից: Ռեսուրսներ հայթայթելու, ստանալու և օգտագործելու հնարավորությունը շատ կարևոր է ցանկացած ՔՀԿ-ի գոյության և գործունեության համար:

ՔՀԿ-ներն են իրենց բնույթով շահույթ չհետապնդող իրավաբանական անձինք են: Սակայն դա ամենևին չի նշանակում, որ նրանք չեն կարող տնտեսական գործունեություն ծավալել՝ պայմանով, որ նրանք պահպանեն շահույթ չհետապնդող նպատակներով գործունեության ընդհանուր սկզբունքները: Տնտեսական գործունեությունը կարող է եկամտի առանցքային աղբյուր լինել: ՔՀԿ-ները պետք է իրավունք ունենան ազատորեն զբաղվելու ցանկացած իրավական, տնտեսական, գործարար կամ առևտրային գործունեությամբ՝ իրենց ոչ առևտրային գործունեությանը օժանդակելու նպատակով:

Միևնույն ժամանակ, նրանք պետք է պահպանեն բոլոր այն նորմատիվ իրավական պահանջները և լիցենզավորման պայմանները, որոնք կիրառվում են տվյալ գործունեության նկատմամբ: Ավելին, շահույթ չհետապնդող կարգավիճակի պահպանման համար ՔՀԿ-ն չպետք է ստացած շահույթը բաշխի իր անդամների և հիմնադիրների միջև, այլ օգտագործի այդ գումարը ՔՀԿ նպատակների համար:

Ռեսուրսների մատչելիության սահմանափակումները և դրա արդյունքում՝ ՔՀԿ-ի կողմից իր նպատակներին հետամուտ լինելու և իր գործունեությամբ զբաղվելու դժվարությունը կարող է միավորումների ազատության իրավունքի անհարկի սահմանափակում և խախտում համարվել:

Թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձինք պետք է կարողանան ֆինանսավորում տրամադրել ՔՀԿ-ներին: ՔՀԿ-ներին պետք է թույլ տրվի ֆինանսավորում ստանալ իրենց ցանկացած օրինական գործունեության նպատակով. օրենսդրությունը չպետք է սահմանափակի գործունեության այն շրջանակը, որին կարող են աջակցել մասնավոր դոնորները:

Պետությունը չպետք է նվիրատուների համար որևէ նախնական հաստատման ընթացակարգ սահմանի: ՔՀԿ-ները պետք է հնարավորություն ունենան տարբեր մեթոդներ օգտագործել միջոցների հավաքագրման համար, օրինակ՝ առցանց դրամահավաք արշավներ, քրաուդֆանդինգ, դրամահավաքի արկղեր, դեմ առ դեմ դրամահավաք և այլն: Եթե հանրային դրամահավաքի գործընթացի վերաբերյալ իրավակարգավորումներ կան, ապա դրանք պետք է բոլոր ՔՀԿ-ներին հնարավորություն տան օգտագործելու դրամահավաքի այդ մեթոդը: Հանրային դրամահավաքի գործընթացը կարգավորող ցանկացած ընթացակարգ չպետք է ծանրաբեռնող լինի ՔՀԿ-ների համար:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ների միայն որոշ տեսակների է թույլատրվում նվիրատվություններ ստանալ մասնավոր դոնորներից,
- ՔՀԿ-ները կամ ՔՀԿ-ների որոշ տեսակներ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու (շահույթ ստանալու նպատակով տնտեսական գործունեություն ծավալելու) իրավունք չունեն:
- Օրենսդրությունը թույլ չի տալիս ՔՀԿ-ներին բարեգործական վիճակախաղ կամ բարեգործական աճուրդ (այդ թվում՝ առցանց) կազմակերպել,
- Օրենսդրությունը սահմանում է ՔՀԿ գործունեության այն տեսակներն ու նպատակները, որոնց համար կարելի է մասնավոր ֆինանսավորում ստանալ:

2. <u>Որևէ դոնորից ֆինանսական կամ նյութական աջակցություն ստանալու, օգտագործելու և հաշվետվություն ներկայացնելու վերաբերյալ ՔՀԿ-ների հանդեպ պահանջները ծանրաբեռնող չեն</u>

Որպես կանոն, ՔՀԿ-ների համար չպետք է ֆինանսավորում կամ բնաիրային աջակցություն ստանալու նախապայմաններ լինեն՝ անկախ ստացման աղբյուրից: Թեև պետությունը կարող է կարգավորումներ սահմանել դրամահավաքի որոշ մեթոդների համար (օրինակ, փողոցային դրամահավաք/հանրային դրամահավաք), նման կարգավորումները չպետք է արգելեն այդ մեթոդների օգտագործումը ՔՀԿ-ների կողմից:

ՔՀԿ-ները պետք է կարողանան օգտագործել օրինական աղբյուրներից ստացված ֆինանսավորումը ցանկացած օրինաչափ գործունեության համար:

ՔՀԿ-ների կողմից ստացված միջոցների նկատմամբ կարող են գործել հաշվետվողականության և թափանցիկության պահանջներ: Սակայն այդ պահանջները չպետք է ավելորդ ծանրաբեռնվածություն ստեղծեն: Դրանք պետք է համաչափ լինեն ՔՀԿ-ի չափին և գործունեության շրջանակին և հաշվի առնեն ՔՀԿ-ի գույքի արժեքը և եկամուտները: Ավելի խիստ պահանջներ կարող են սահմանվել միայն խոշոր նվիրատվությունների կամ հանրային միջոցներից կատարված նվիրատվությունների դեպքում (օրինակ, նվիրատվության մասին տեղեկությունը պետք է հանրային լինի կամ հաշվետվություններ պետք է հրապարակվեն):

Հաշվետվողականության և վարչական պահանջները չպետք է լինեն այնքան ծանրաբեռնող, որ ստիպեն ՔՀԿ-ներին ձեռնպահ մնալ որոշակի աղբյուրից ֆինանսավորվող գործունեությունից:

ՔՀԿ-ները և նրանց աշխատակիցները (կամ անդամները) պետք է հնարավորություն ունենան բանկային հաշիվներ բացել և օգտագործել արտերկրում՝ առանց պետության հատուկ թույլտվության կամ պետությանը իրազեկելու պարտավորության:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Որոշ տեսակների ՔՀԿ-ների համար գործում է հանրային դրամահավաքի սահմանափակում:
- Որևէ օտարերկրյա նվիրատվություն ստանալու դեպքում ՔՀԿ-ները որոշակի ժամանակահատվածում պարտավոր են տեղեկացնել պետական մարմիններին:
- ՔՀԿ-ներին արգելվում է հաշիվներ ունենալ արտերկրում:
- ՔՀԿ-ները պետական լիազոր մարմնից պետք է նախնական համաձայնություն ձեռք բերեն՝ արտերկրում հաշիվ բացելու համար,
- ՔՀԿ-ների ղեկավարներին/ ներկայացուցիչներին և աշխատակազմին արգելվում է հաշիվներ ունենալ արտերկրում:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. ՔՀԿ-ների համար խնդիրներ չեն ծագում որևէ օրինական աղբյուրից ֆինանսավորում կամ նյութական աջակցություն ստանալու դեպքում: 2. ՔՀԿ-ները կարող են օգտվել դրամահավաքի տարբեր եղանակներից:

1. **<u>ՔՀԿ-ների համար խնդիրներ չեն ծագում որևէ օրինական աղբյուրից ֆինանսավորում կամ նյութական աջակցություն ստանալու դեպքում</u>**

Գործնականում բոլոր ՔՀԿ-ները պետք է ֆինանսավորման ցանկացած օրինական աղբյուրից օգտվելու հավասար հնարավորություն ունենան: ՔՀԿ-ների քաղաքական համոզմունքները չպետք է պետական կամ այլ աղբյուրներից ռեսուրսների հասանելիության չափանիշ հանդիսանան: ՔՀԿ-ները պետք է կարողանան ֆինանսավորում ստանալ հետևյալ աղբյուրներից՝ ուղղակի պետական ֆինանսավորում (դրամաշնորհներ, պետական պատվերներ և սուբսիդիաներ), պետական աջակցության անուղղակի մեխանիզմներ (հարկային մեխանիզմի տոկոսային համակարգ, վիճակախաղեր) և մասնավոր աղբյուրներ (նվիրատվություններ և ֆիզիկական անձանց, ընկերությունների կամ ոչ պետական մարմինների կողմից ֆինանսավորման այլ ձևեր):

Հաշվետվողականությունը, տեղեկությունների հրապարակումը և մնացած պահանջները չեն օգտագործվում ՔՀԿ-ների համար միջոցների հասանելիությունը սահմանափակելու նպատակով: Նվիրատվությունների հաշվառման և հաշվետվությունների ներկայացման կանոնակարգերի գործնական կիրառումը բացասաբար չի անդրադառնում մասնավոր կամ պետական ֆինանսավորման ծավալների վրա: ՔՀԿ-ները ձեռնպահ չեն մնում ծրագրերի իրականացումից՝

բարդ հաշվետվողականության պահանջների պատճառով: Նվիրատվությունների հաշվառման և հաշվետվողականության պահանջները նախապես հայտնի են:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Կառավարությանը քննադատող ՔՀԿ-ները պետական ֆինանսավորման մեխանիզմների միջոցով երբեք ֆինանսավորում չեն ստանում:
- Պետական աղբյուրներից կամ ընկերություններից նվիրատվություններ ստանալու ընթացակարգերը և հաշվետվողականության պահանջները այնքան շատ վարչարարություն և բարդություն են ենթադրում, որ կարող են իրականացվել միայն մի քանի խոշոր ՔՀԿ-ների կողմից:
- Գործնականում փոքր նվիրատվությունների դեպքում հաշվառման և հաշվետվողականության պահանջները հանգեցնում են այնպիսի վարչական ծախսերի, որոնք գերազանցում են ստացած գումարի չափը:

2. **<u>ՔՀԿ-ները կարող են օգտվել դրամահավաքի տարբեր եղանակներից</u>**

ՔՀԿ-ների ֆինանսավորման ավանդական ձևերից են դրամաշնորհները, տնտեսական գործունեությունը, անդամավճարները և նվիրատվությունները: Ձեռնարկություններից կամ ֆիզիկական անձանցից նվիրատվություններ ստանալու նպատակով ՔՀԿ-ները կարող են դրամահավաքի տարբեր մեթոդներ օգտագործել՝ օրինակ, հանրային դրամահավաք փողոցում, բարեգործական վիճակախաղ, բարեգործական համերգ և այլն: Դրամահավաքի այդ մեթոդները գործածելիս՝ ՔՀԿ-ները չպետք է գործնական սահմանափակումների հանդիպեն: ՔՀԿ-ները պետք է նաև ազատ լինեն օգտագործելու ֆինանսական միջոցների հավաքագրման նոր մեխանիզմները, ինչպիսիք են էլեկտրոնային վճարային համակարգերը, համացանցային քրաուդֆանդինգի հարթակները, SMS նվիրատվությունները և էլեկտրոնային եղանակով այլ նվիրատվություններ:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Համացանցի միջոցով իրականացող դրամահավաքները սահմանափակված կամ արգելված են այն դեպքերում, երբ կայքի հոսթինգը և դոմեյնը տեղական չեն:
- Բանկերը և պետական մարմինները միջամտում են քրաուդֆանդինգի հարթակների օգտագործմանը՝ օրինակ, գրաքննության ենթարկում դրանք, ազդում ծրագրերի բնույթի վրա կամ արգելափակում հավաքագրված գումարները:
- Կանխիկ եղանակով անանուն նվիրատվությունները գործնականում հնարավոր չեն՝ հասարակական վայրերում դրամահավաքի արկղերի տեղակայման գործնական խոչընդոտների կամ կանխիկի շրջանառությունը սահմանափակող բանկային և հաշվապահական հաշվառման կանոնակարգերի պատճառով:

3. **<u>Կանխիկ կամ բանկային գործառնությունների սահմանափակումները չեն խոչընդոտում ՔՀԿ-ների գործունեությանը:</u>**

Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ՔՀԿ-ները պետք է հնարավորություն ունենան կառավարել իրենց եկամուտները և գույքը և օգտվել բանկային հաշիվներից: Բանկային ծառայությունների մատչելիությունը էական նշանակություն ունի նվիրատվություններ ստանալու, ինչպես նաև ՔՀԿ-ների գույքը կառավարելու և ապահով պահելու առումով: Սա չի նշանակում, որ բանկերը պարտավոր են այս ծառայությունները տրամադրել ցանկացած դիմող ՔՀԿ-ի: Սակայն բանկերի՝ իրենց հաճախորդներին ազատորեն ընտրելու իրավունքը պետք է իրականացվի խտրականության բացառման սկզբունքի պահպանմամբ:

Իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ՔՀԿ-ները և ոչ ֆորմալ նախաձեռնությունները պետք է կանխիկ նվիրատվություններ հավաքագրելու հնարավորություն ունենան: Կանխիկ դրամային նվիրատվությունների հավաքագրման սահմանափակումները պետք է ողջամտորեն հիմնավորված լինեն և ցանկացած դեպքում չխոչընդոտեն նվիրատվությունների հավաքագրմանը գործնականում:

ՔՀԿ-ների համար չպետք է որևէ սահմանափակում լինի գումարի կանխիկացման առումով, այդ թվում՝ չափազանց մեծ բանկային վճարներ կամ անկանխիկ ֆինանսական գործիքները կանխիկ միջոցների փոխակերպելու այլ խոչընդոտներ:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Բանկերը հաճախ հրաժարվում են ՔՀԿ-ների համար հաշիվ բացել կամ իրականացնել ՔՀԿ-ներին նվիրատվություններ փոխանցելու գործարքները:
- Իրավաբանական անձանց արգելվում է կանխիկ նվիրատվություններ կատարել:
- Օրենքը բանկերին իրավունք է վերապահում վերահսկել, թե արդյոք ՔՀԿ-ների ֆինանսական գործառնությունները համապատասխանում են իրենց նպատակներին և/կամ օրենքներին:

Չափորոշիչ 2՝ Ֆինանսական կամ նյութական միջոցների տեղական, օտարերկրյա և միջազգային աղբյուրների միջև տարբերություն չի դրվում:

Պետությունները չպետք է խոչընդոտեն ՔՀԿ-ներին օտարերկրյա և միջազգային աղբյուրներից ֆինանսավորում ստանալու հարցում, քանի որ այդ ֆինանսավորումը օգնում է զարգացնել ՔՀԿ կարողությունները և նպաստում է երկրում սոցիալական, տնտեսական և մարդկային զարգացման գործընթացներին: Պետությունները չպետք է որևէ հատուկ սահմանափակում կամ հատուկ հարկեր կիրառեն ՔՀԿ-ների նվիրատուների նկատմամբ՝ օտարերկրյա և միջազգային ֆինանսավորում տրամադրելիս, ստանալիս կամ օգտագործելիս: Նմանապես, ՔՀԿ-ները և նրանց հետ առնչվող անձինք պետք է կարողանան օգտվել ինչպես տեղական, այնպես և օտարերկրյա բանկերի ծառայություններից՝ առանց հատուկ թույլտվություն ստանալու: Բացի այդ, օտարերկրյա միջոցներ օգտագործող ՔՀԿ-ները չպետք է խարանման, ճնշման կամ հանրային հարձակումների ենթարկվեն լրատվամիջոցներում, մասնավորապես պետական պաշտոնյաների կողմից:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. ՔՀԿ-ների համար հատուկ սահմանափակումներ կամ ընթացակարգեր չկան արտերկրյա ֆինանսավորում կամ նյութական աջակցություն ստանալու և օգտագործելու, իսկ դոնորների համար՝ ֆինանսավորում տրամադրելու կամ արտերկիր ուղարկելու համար: 2. Միջազգային դրամաշնորհները, նվիրատվությունները և անդամավճարները հարկվում են նույն եղանակով, ինչպես տեղականները:

1. **ՔՀԿ-ների համար հատուկ սահմանափակումներ կամ ընթացակարգեր չկան արտերկրյա ֆինանսավորում կամ նյութական աջակցություն ստանալու և օգտագործելու, իսկ դոնորների համար՝ ֆինանսավորում տրամադրելու կամ արտերկիր ուղարկելու համար**

ՔՀԿ-ները պետք է հնարավորություն ունենան միջոցներ ստանալ արտերկրից նույնքան հեշտությամբ, որքան ներքին աղբյուրներից: Պետությունը չպետք է ՔՀԿ-ների գործունեության որոշակի տեսակների համար արգելի ֆինանսավորումն արտաքին աղբյուրներից:

ՔՀԿ-ների՝ արտերկրից ստացվող նվիրատվությունների վերաբերյալ սահմանափակող դրույթները առավել հաճախ հանդիպում են մաքսատուրքերի, արտարժույթի շրջանառության, փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և ընտրությունների ու քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման ոլորտը կարգավորող օրենսդրության մեջ: Օրենսդրությունը չպետք է հատուկ գրանցում կամ պետության նախնական համաձայնություն պահանջի օտարերկրյա ֆինանսավորում ստանալու համար:

Ըստ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի միավորումների ազատության համատեղ ուղեցույցի (էջ 220), «արտերկրից (կամ օտարերկրյա կամ միջազգային աղբյուրներից) միջոցների ստացման ցանկացած սահմանափակում պետք է սահմանված լինի օրենքով, ունենա իրավաչափ նպատակ, որը համապատասխանում է միջազգային չափանիշներով նախատեսված՝ սահմանափակումների թույլատրելի հիմքերին, ինչպես նաև անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և համաչափ սահմանված նպատակին: Կոռուպցիայի, ահաբեկչության ֆինանսավորման, փողերի լվացման կամ թրաֆիքինգի այլ դրսևորումների դեմ պայքարը, ընդհանուր առմամբ, համարվում են իրավաչափ նպատակներ, և կարող են որակվել որպես ի շահ պետական անվտանգության, հասարակական անվտանգության կամ հասարակական կարգի: Սակայն այդ միջոցների մատչելիության ցանկացած սահմանափակում պետք է համաչափ լինի պետության կողմից նշված շահերի պաշտպանության նպատակին և նվազագույն միջամտություն նախատեսի՝ ցանկալի նպատակին հասնելու համար»:

Եթե արտերկրից միջոցներ ստանալու դեպքում ՔՀԿ-ների համար հաշվետվողականության պահանջներ են սահմանված, ապա դրանք պետք է սահմանափակվեն միջոցների ստացման մասին ծանուցմամբ և դրանց օգտագործման հաշվետվությունների ներկայացմամբ: ՔՀԿ-ների կողմից օտարերկրյա միջոցներ ստանալու ցանկացած սահմանափակում պետք է ողջամիտ սահմաններում լինի և չհանգեցնի չափից շատ միջամտության կամ ՔՀԿ-ների օրինական գործունեության իրականացման խոչընդոտների:

Արտերկրից միջոցներ ստացող ՔՀԿ-ների համար չպետք է առանձին գրանցման ընթացակարգ կամ օտարերկրյա ֆինանսավորման մասին նշում պարունակող անվան պահանջ սահմանվի, ինչպես օրինակ՝ «օտարերկրյա գործակալ» կամ «արտերկրից աջակցություն ստացող կազմակերպություն»:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենսդրությամբ թվարկված են ՔՀԿ գործունեության այն տեսակները, որոնք կարող են ֆինանսավորվել արտաքին աղբյուրներից, կամ նախատեսված է ՔՀԿ այնպիսի տեսակների և նպատակների ցանկ, որոնք չեն կարող ֆինանսավորվել արտաքին աղբյուրներից (մարդու իրավունքներ, հրատարակչական գործունեություն, և այլն):
- Օտարերկրյա ֆինանսավորումը պետք է հաշվառել պետական մարմնում: Ընդ որում, հաշվառումը կարող է մերժվել, իսկ առանց հաշվառման արտաքին ֆինանսավորում օգտագործելու դեպքում պատժամիջոցներ են կիրառվում:
- Օտարերկրյա քաղաքացիների (անկախ նրանց բնակության վայրից), քաղաքացիություն չունեցող անձանց և տվյալ երկրի քաղաքացի հանդիսացող, սակայն արտասահմանում բնակվող անձանց նվիրատվությունները համարվում են օտարերկրյա նվիրատվություններ և ենթակա են սահմանափակումների:
- Օտարերկրյա ներդրումներ ունեցող ընկերությունների նվիրատվությունները համարվում են օտարերկրյա նվիրատվություններ և ենթակա են սահմանափակումների:
- Օտարերկրյա դոնորների կողմից հովանավորվող հրապարակումներում ՔՀԿ-ները պարտավոր են նշել, որ օտարերկրյա ֆինանսավորում են ստացել կամ այլ կերպ տեղեկացնել, որ նրանք արտաքին օգնության շահառու են:

2. **<u>Միջազգային դրամաշնորհները, նվիրատվությունները և անդամավճարները հարկվում են նույն եղանակով, ինչպես տեղականները</u>**

Օտարերկրյա աղբյուրներից ստացած նվիրատվությունները պետք է ենթարկվեն հարկման նույն կարգավորումներին, որոնք գործում են տեղական նվիրատվությունների դեպքում, և չպետք է հարկվեն շահութահարկով կամ այլ հարկերով: Պետությունները կարող են խրախուսել ՔՀԿ-ների արտաքին աջակցությունը՝ նախատեսելով հարկային և այլ արտոնություններ: Որպես խթան կարող են ծառայել նաև բանկային փոխանցումների ծախսերի նվազեցումը և օտարերկրյա կազմակերպություններից ստացած նվիրատվությունների համար հարկային արտոնությունների սահմանումը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օտարերկրյա նվիրատվությունները դիտարկվում են որպես շահույթ և ենթակա են շահութահարկով հարկման:
- Միավորումների՝ արտերկրում բնակվող անդամների մուտքի վճարը և անդամավճարները դիտարկվում են որպես արտաքին ֆինանսավորում և ենթակա են սահմանափակումների, այդ թվում՝ հարկման:
- Օտարերկրյա նվիրատվությունների համար սահմանված հաշվետվողականության պահանջները չափազանց խիստ են, ընդ որում՝ զգալիորեն ավելի խիստ, քան ներքին աղբյուրներից ստացած նվիրատվությունների համար հաշվետվողականության պահանջները:
- ՔՀԿ-ի հիմնադրման ժամանակ նախնական կապիտալի կամ կանոնադրական ֆոնդի հատկացումների համար գործող կանոնները և պայմանները տարբեր են օտարերկրյա հիմնադիրների և տեղացի հիմնադիրների համար:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. ՔՀԿ-ները գործնականում կարող են ազատորեն օտարերկրյա ֆինանսավորում ստանալ և օգտագործել արտասահմանյան ֆինանսական աղբյուրներ: 2. Օտարերկրյա ֆինանսավորում ստացող ՔՀԿ-ները չեն թիրախավորվում և հարձակման չեն ենթարկվում հանրային լրատվամիջոցների և կառավարության կողմից

1. **<u>ՔՀԿ-ները գործնականում կարող են ազատորեն օտարերկրյա ֆինանսավորում ստանալ և օգտագործել արտասահմանյան ֆինանսական աղբյուրներ</u>**

Օտարերկրյա նվիրատվությունների ստացման պայմանները պետք է խթանող լինեն արտերկրից ՔՀԿ-ների ֆինանսավորման համար: Արտաքին ֆինանսավորման ստացումը չպետք է որևէ մեկի համար բացասական հետևանքներ ունենա: Բոլոր այն ՔՀԿ-ները, որոնք ցանկանում են օտարերկրյա ֆինանսավորում ունենալ, պետք է իրավունք ունենան հայթայթել, իսկ եթե կան օտարերկրյա դոնորներ, որոնք պատրաստ են աջակցել նրանց գործունեությանը, ապա նաև ստանալ և գործնականում օգտագործել այդ ֆինանսավորումը: Օտարերկրյա նվիրատվությունների իրավակարգավորումները չպետք է հակասական ու անհետևողական ձևով գործադրվեն. այն, ինչ օրինական է մեկ կազմակերպության համար, չպետք է պատժամիջոցների հանգեցնի մեկ այլ կազմակերպության դեպքում:

Դոնորները պետք է հնարավորություն ունենան ազատ գործել իրենց երկրներում և աջակցել ՔՀԿ-ներին արտերկրից՝ առանց պետության կողմից նախնական թույլտվություն ստանալու անհրաժեշտության: Նույնիսկ եթե կա օտարերկրյա դրամաշնորհների վերաբերյալ ծանուցելու կամ հաշվետվություններ ներկայացնելու պահանջ, դա չպետք է խոչընդոտի ՔՀԿ-ների կամ դոնորների գործունեությանը, և որևէ վարչական մարմին չպետք է օժտված լինի ՔՀԿ-ների՝ նման միջոցներ ստանալու վերաբերյալ վերջնական որոշումների կայացման լիազորությամբ:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Միայն մի քանի ՔՀԿ-ներ կարող են օրինական հիմքով արտաքին ֆինանսավորում ստանալ, իսկ այդ գործընթացը տևում է մի քանի ամիս:
- Օտարերկրյա ֆինանսավորմամբ գործող ՔՀԿ-ները փաստացիորեն խոչընդոտների են հանդիպում իրավապաշտպան, շահերի պաշտպանության կամ այլ գործունեության մասնակցելիս:
- ՔՀԿ-ները չեն կարող արտաքին աջակցություն ստանալ առանց քաղաքական որոշման կամ պետության թույլատրության,
- Դոնոր կազմակերպությանը թույլատրվում է նվիրատվություններ կատարել միայն որպես դոնոր կամ օտարերկրյա կազմակերպության ներկայացուցչություն գրանցվելուց հետո:
- Օտարերկրյա դոնորները պետք է հատուկ համաձայնագիր ստորագրեն կառավարության հետ:

2. **<u>Օտարերկրյա ֆինանսավորում ստացող ՔՀԿ-ները չեն թիրախավորվում և հարձակման չեն ենթարկվում հանրային լրատվամիջոցների և կառավարության կողմից</u>**

Օտարերկրյա ֆինանսավորում ստացող ՔՀԿ-ները չպետք է խտրականության ենթարկվեն կամ զրպարտող տեղեկատվական արշավների թիրախ դառնան պետական մարմինների կամ պետական աջակցությամբ գործող լրատվամիջոցների կողմից: Խարանումը կարող է դրսևորվել լրատվամիջոցների բացասական հրապարակումների, մամուլում վիրավորական հոդվածների կամ ՔՀԿ-ների վերաբերյալ բացասական վարկանիշի ձևավորման այլ եղանակներով: Օտարերկրյա ֆինանսավորում ստացող ՔՀԿ-ները չպետք է սահմանափակված լինեն այն գործողություններում, որոնք իրականացվում են այլ, արտաքին օգնություն չստացող ՔՀԿ-ների կողմից (օրինակ, խորհրդարան մտնելու իրավունք, դատարաններ դիմելու իրավունք կամ պետական բանտերում կամ համալսարաններում գործելու հնարավորություն):

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օտարերկրյա ֆինանսավորում ստացող ՔՀԿ-ի ղեկավարը ենթարկվում է քրեական հետապնդման:
- Օտարերկրյա ֆինանսավորում ստացող ՔՀԿ-ներում ավելի հաճախ են տեսչական ստուգումներ կամ պետական աուդիտ իրականացվում, քան նման ֆինանսավորում չստացող ՔՀԿ-ներում:
- Օտարերկրյա ֆինանսավորում ստացող միավորումներից պահանջվում է նվաստացուցիչ անվանումներ գործածել՝ պիտակավորելով նրանց կամ վարկաբեկելով նրանց աշխատանքը:

<u>Համապատասխան ռեսուրսներ</u>

- ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույց միավորումների ազատության մասին, պարբ. 22, 102-04, 166, 195, 200-22

- ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի թեմատիկ զեկույց խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների վերաբերյալ, A/HRC/23/39 (24 ապրիլի 2013 թ.), պարբ. 8, 20
- ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի թեմատիկ զեկույց խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների վերաբերյալ, A /HRC/20/27 (21 մայիսի 2012 թ.), պարբ. 94
- ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի թեմատիկ զեկույց մարդու իրավունքների պաշտպանների վիճակի վերաբերյալ, A/64/226 (4 օգոստոսի 2009 թ.), պարբ. 94
- Մարդու իրավունքների կոմիտե: *Բելյացկի և այլոք ընդդեմ Բելառուսի* (24 հուլիսի 2007 թ.). *Կորնեենկո և այլոք ընդդեմ Բելառուսի* (31 հոկտեմբերի 2006 թ.)
- Եվրոպայի խորհրդի CM/Rec(2007)14 հանձնարարականը Եվրոպայում ՀԿ-ների իրավական կարգավիճակի վերաբերյալ (10 հոկտեմբերի 2007 թ.), պարբ. 6, 8, 50, 51, 57-61
- Եվրոպայի խորհուրդ, ՔՀԿ օրենսդրության փորձագետների խորհուրդ, երկրորդ ամենամյա զեկույց հասարակական կազմակերպությունների ներքին կառավարման հարցերով, պարբ. 388-89, 397-98 (2010թ. հունվար)
- Եվրոպայում հասարակական կազմակերպությունների կարգավիճակի հիմնարար սկզբունքները, սկզբունքներ 6, 57, 58 և 59; պարբ. 62-65 Բացատրական հուշագիր
- Հռչակագիր կրոնի կամ համոզմունքի հիման վրա անհանդուրժողականության և խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, հոդ. 6 (զ)
- Ռասայական խտրականության վերացման կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ, Իռլանդիա, CERD/C/Իռլանդիա /CO/2 (14 ապրիլի 2005 թ.), պարբ. 12
- Երեխայի իրավունքների կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, CRC/C/COD/CO/2 (10 փետր, 2009թ.), պարբ. 25; Մալավի, CRC/C/MWI/CO/2, (27 մարտ, 2009թ.), պարբ. 25
- Խոշտանգումների դեմ կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ, Բելառուս, CAT / C / BLR / CO / 4 (7 Դեկտեմբեր, 2011), պարբ. 25
- Միավորումների ազատություն. ԱՄԿ կառավարման մարմնի կոմիտեի միավորումների ազատության վերաբերյալ որոշումների և սկզբունքների ամփոփագիր: Հինգերորդ (վերանայված) հրատարակություն, 2006 թ., պարբ, 485, 494
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Սիգուրդուր Ա Սիգուրյոնսոն ընդդեմ Իսլանդիայի* (1993)

ՈԼՈՐՏ 4՝ Խաղաղ հավաքների ազատություն

Չափորոշիչ 1՝ Յուրաքանչյուր ոք կարող է ազատորեն օգտվել խաղաղ հավաքների կազմակերպման և մասնակցության իրավունքից:

Կենսունակ ժողովրդավարական հասարակությունը ենթադրում է հավաքվելու և տարբեր հարցերի շուրջ իրենց կարծիքը բարձրաձայնելու հավասար հնարավորություն բոլորի համար: Խաղաղ հավաքների ազատությունը երաշխավորված է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով: Այն ներառում է խաղաղ հավաքներ կազմակերպելու և/կամ դրանց մասնակցելու ցանկացած տեղացի կամ օտարերկրյա անձի և այդ անձանց խմբերի, այդ թվում՝ ՔՀԿ-ների իրավունքը՝ առանց խտրականության: Հավաքներին մասնակցելու որոշումը պատկանում է յուրաքանչյուր անհատի, և ոչ ոք չի կարող ստիպել կամ համակարգային կերպով արգելել մասնակցել հավաքներին: Խաղաղ հավաքների կամայական մերժումներ կամ արգելքներ, ինչպես նաև խաղաղ հավաքների կազմակերպիչների և մասնակիցների ձերբակալման կամ ահաբեկման դեպքեր չպետք է լինեն:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Յուրաքանչյուր ոք՝ տեղացի թե արտասահմանցի, ինչպես նաև անձանց խումբ, այդ թվում՝ ՔՀԿ-ները, հավաքներ կազմակերպելու և (կամ) մասնակցելու իրավունքը ունեն: 2. Օրենքով թույլատրվում են ինքնաբուխ, միաժամանակյա և հակընդդեմ հավաքները:

1. **Յուրաքանչյուր ոք՝ տեղացի թե արտասահմանցի, ինչպես նաև անձանց խումբ, այդ թվում՝ ՔՀԿ-ները, իրավունք ունեն կազմակերպելու հավաքներ և (կամ) մասնակցելու դրանց**

Հավաքը մարդկանց ժամանակավոր խմբավորումն է հանրային տարածքում՝ ընդհանուր նպատակ կամ ասելիք հաղորդելու համար: Խաղաղ հավաքի անցկացման իրավունքը երաշխավորված չէ մասնավոր սեփականություն հանդիսացող հանրային տարածքում՝ սեփականատիրոջ կամքին հակառակ:

Հավաքների ազատության իրավունքով պաշտպանված են միայն խաղաղ հավաքները:

Հանրային հավաքների կազմակերպման և/կամ դրանց մասնակցության ազատությունը մարդու հիմնարար իրավունք է, որը պետք է հավասարապես հասանելի լինի բոլորին: Այն պետք է երաշխավորված լինի անհատների, խմբերի, չգրանցված միավորումների, իրավաբանական անձանց և կազմակերպությունների առանձին մարմինների, էթնիկ, ազգային, սեռական և կրոնական փոքրամասնություն կազմող խմբերի անդամների, քաղաքացիների և ոչ քաղաքացիների. երեխաների, կանանց և տղամարդկանց, իրավապահ մարմինների ներկայացուցիչների և լիարժեք իրավունակություն չունեցող անձանց, այդ թվում ունեցող հոգեկան հիվանդություններ ունեցող անձանց համար: Ազգային օրենսդրությամբ խաղաղ հավաքների իրավունքը պետք է տարածվի ոչ միայն քաղաքացիների, այլև քաղաքացիություն չունեցող անձանց, փախստականների, օտարերկրյա քաղաքացիների, ապաստան հայցողների, միգրանտների և զբոսաշրջիկների նկատմամբ÷

Երեխաները պետք է կարողանան օգտվել հավաք կազմակերպելու և/կամ դրան մասնակցելու իրավունքից: Խաղաղ հավաքների ազատությունը երեխաներին հնարավորություն է տալիս արտահայտելու իրենց տեսակետը և մասնակցել հասարակական կյանքին: Երեխաների կողմից հավաքների կազմակերպման իրավունակության որոշ սահմանափակումներ կարող են

հիմնավորված լինել: Ցանկացած նման սահմանափակում պետք է համահունչ լինի միջազգային իրավունքի նորմերին և հաշվի առնել երեխայի զարգացման առանձնահատկությունները: 14 տարեկանից մեծ երեխաները պետք է հնարավորություն ունենան հավաքներ կազմակերպել: Որոշ երկրներում երեխաներին հավաքներ կազմակերպելու հնարավորություն է տրվում անգամ ավելի վաղ տարիքում:

Հավաքի կազմակերպիչը իրավունք ունի ընտրելու հավաքի անցկացման ժամանակը, տեղը և եղանակը:

Հավաքի կազմակերպման կամ մասնակցության իրավունքը կարող է ենթակա լինել սահմանափակումների: Հավաքների ազատության իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է բավարարի ստուգման եռակի չափանիշներին, այն է՝ (1) լինի սահմանված օրենքով, (2) անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և (3) բխի պետական անվտանգության կամ հասարակական անվտանգության շահերից, գործադրվի անկարգությունների և հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության նորմերի պաշտպանության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հավաքների իրավունքի ազատ իրացման օրինական սահմանափակումներ կարող են պարտադրվել որոշակի հիմքերով: Մասնավորապես, սահմանափակումներ կարող են լինել զինված ուժերի, ոստիկանության, պետական կառավարման համակարգի ներկայացուցիչների համար՝ իրենց ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում չեզոքության պահպանման բացարձակ անհրաժեշտության հետ անմիջականորեն կապված հիմքերով: Սահմանափակումներ կարող են կիրառվել նաև հանրային առողջության պաշտպանության համար (օրինակ, հիվանդության կամ համաճարակի տարածումը կանխելու նպատակով): Սակայն այս սահմանափակումները պետք է հավասարաչափ կիրառվեն նաև այլ հավաքների նկատմամբ, ինչպիսիք են մարզական միջոցառումները, համերգները, դպրոց հաճախելը և այլն:

Իրավական սահմանափակումների համընդհանուր կիրառումն արգելվում է: Համընդհանուր սահմանափակումները հաշվի չեն առնում յուրաքանչյուր հավաքի կոնկրետ հանգամանքները և դրանով իսկ խախտում են համաչափության սկզբունքը: Յուրաքանչյուր հավաքի հանգամանքները պետք է առանձին գնահատվեն և տրվի անհատական արձագանք:

Օրենքը պետք է սահմանի, որ մասնակցությունը հանրային հավաքներին լիովին կամավոր հիմունքներով է և չի կարող պարտադրվել:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Հավաքների կազմակերպիչները պարտավոր են կացության իրավունք կամ քաղաքացիություն ունենալ:
- Անչափահաս անձանց չի թույլատրվում հավաքներ կազմակերպել կամ մասնակցել դրանց:
- Հավաքները չեն թույլատրվում քաղաքի կենտրոնում, փոխարենը պետական մարմինները հավաքներն ուղղորդում են դեպի քաղաքի կենտրոնից դուրս տեղակայված պուրակներ:

2 Օրենքով թույլատրվում են ինքնաբուխ, միաժամանակյա և հակընդդեմ հավաքները

Ինքնաբուխ հավաքներն այն հավաքներն են, որոնք նախաձեռնվում և իրականացվում են որպես որևէ դեպքի ուղղակի և անմիջական արձագանք, ընդ որում այդ արձագանքը, մասնակիցների կարծիքով, չի կարող հետաձգվել:

Ինքնաբուխ հավաքների դեպքում չպետք է գործի նախնական ծանուցման պահանջը, եթե այդ ծանուցումը հնարավոր չէ իրագործել: Քանի դեռ ինքնաբուխ հավաքը կրում է խաղաղ բնույթ, պետական մարմինները պետք է պաշտպանեն և նպաստեն դրա իրականացմանը: Պարտադիր չէ, որ ինքնաբուխ հավաքները որոշակի կազմակերպիչ ունենան: Սպորտային թիմի երկրպագուների կողմից խաղից անմիջապես հետո իրենց թիմի հաղթանակը տոնելու համար կազմակերպված հավաքը առանց կոնկրետ կազմակերպչի ինքնաբուխ հավաքի օրինակ է. նման հավաքի նկատմամբ չպետք է գործի իրազեկման ընդունված ընթացակարգը, և այդպիսի հավաքի իրականացմանը պետք է օժանդակել, քանի դեռ այն կրում է խաղաղ բնույթ:

Եթե պետական մարմիններին ծանուցում են միևնույն վայրում և ժամին երկու կամ ավելի անկախ հավաքների մասին (միաժամանակյա հավաքներ), դրանցից յուրաքանչյուրի անցկացմանը հարկավոր է հնարավորինս օժանդակություն ցուցաբերել: Եթե հավաքի անցկացման վայրը բավականաչափ տարածք ունի երկու (կամ ավելի) հավաք տեղավորելու համար, դրանցից որևէ մեկը չի կարող արգելվել այն հիմունքով, որ տվյալ տեղում և ժամին մեկ այլ հավաք է նախատեսված: Խտրականության բացառման սկզբունքը պահանջում է, որ նմանատիպ հանգամանքներում տեղի ունեցող հավաքները ենթակա չլինեն տարբերակված մոտեցման:

Միաժամանակյա հավաքների տեսակներից մեկը հակընդդեմ հավաքներն են: Հակընդդեմ հավաքի առանձնահատկությունը նրանում է, որ այն նպատակ ունի սկզբնական հավաքին հակառակ կարծիք արտահայտել: Պետությունը պարտավոր է օժանդակել ինչպես սկզբնական հավաքին, այնպես էլ հակընդդեմ հավաքին՝ երկու հավաքների միջև տեսողական և ձայնային շփում ապահովող ողջամիտ հեռավորություն պահպանելով: Պետական մարմինները պետք է պաշտպանեն այդ երկու հավաքներն էլ և ոստիկանական ուժերի պատշաճ միջոցներ ապահովեն դրանց աջակցելու համար, քանի դեռ այդ հավաքները կրում են խաղաղ բնույթ:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Ինքնաբուխ հավաքների նկատմամբ գործում է սովորական ծանուցման կարգը,
- Միաժամանակյա հավաքներ չեն թույլատրվում, անգամ եթե դրանց իրականացման վայրը բավարար է նախատեսված բոլոր հավաքներն անցկացնելու համար:
- Հակընդդեմ հավաքները արգելվում են, քանի որ դրանք կարող են խանգարել կամ խոչընդոտել սկզբնական հավաքների տեսողական և լսողական բովանդակության հասանելիությունը:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Կամայական հիմքով խաղաղ հավաքների մերժման կամ ցրման օրինակներ չկան: 2. Մարդկանց, խմբերի կամ ՔՀԿ-ներին չի պարտադրվում կամ համակարգված կերպով արգելվում մասնակցել խաղաղ հավաքների: 3. Անհատներին չեն կալանավորում կամ ահաբեկում՝ խաղաղ հավաքներ կազմակերպելու, դրանց մասնակցելու կամ չմասնակցելու մտադրության համար: 4. Անհատները և իրավաբանական անձինք չեն հետապնդվում կամ պատժվում խաղաղ հավաքներ կազմակերպելու կամ դրանց մասնակցելու համար:

1. Կամայական հիմքով խաղաղ հավաքների մերժման կամ ցրման օրինակներ չկան

Որոշակի հանգամանքներում պետական մարմինները կարող են օրինական սահմանափակումներ սահմանել այն հավաքների դեպքում, որոնք նախատեսված են որպես խաղաղ հավաքներ: Խաղաղ հավաքի անցկացման ցանկացած մերժումը կամ հավաքի ցրումը պետական մարմնի կողմից պետք է նախատեսված լինի օրենքով (հավաքների ազատության մասին առանձին օրենքով,

Սահմանադրությամբ կամ մարդու իրավունքների միջազգային կոնվենցիաներով), լինի համաչափ, կանխատեսելի և օրինական նպատակի ապահովման համար նվազագույն անհրաժեշտ միջոց հանդիսանա: Հավաքների անցկացման ցանկացած մերժում կամ ցրում, որ չի համապատասխանում այդ պահանջներին, կամայականություն է համարվում:

Սահմանափակում կամ մերժում կարող է կիրառվել այն դեպքում, երբ համոզիչ ապացույցներ կան, որ կազմակերպիչները կամ մասնակիցները բռնություն կօգտագործեն կամ անօրինություններ կիրահրեն, և եթե առկա է նման գործողությունների առաջացման հավանականություն: Եթե հնարավոր բռնության վկայություն կա, ապա կազմակերպիչ(ներ)ը պետք է հնարավորություն ունենա(ն) ապացույցներ տրամադրել առ այն, որ հավաքն անցնելու է խաղաղ: Խաղաղ հավաքի նկատմամբ թշնամական արձագանքի հնարավորությունը չի կարող հիմք ծառայել խաղաղ հավաքի մերժման համար:

Հավաքի կազմակերպման մասին որոշումը գտնվում է կազմակերպչի բացառիկ իրավասության ներքո:

Հավաքների ցրումը կարող է տեղ գտնել միայն որպես վերջին միջոց և չպետք է կիրառվի, քանի դեռ իրավապահ մարմինները բոլոր հնարավոր միջոցները չեն ձեռնարկել հավաքին օժանդակելու և վտանգից պաշտպանելու ուղղությամբ (օրինակ, կալանավորելով կողմնակի անձանց, որոնք սկսում են բռնություն դրսևորել), և եթե առկա չէ բռնության անմիջական վտանգ: Քանի դեռ հավաքը խաղաղ բնույթ է կրում, այն չպետք է ցրվի իրավապահ մարմինների կողմից, անգամ եթե պետական մարմինները հավաքի մասին նախնական ծանուցում չեն ստացել:

Հավաքը ցրելու դեպքում պետք է հետևել հատուկ ընթացակարգերին, որոնք նախատեսված են միջազգային չափանիշների վրա հիմնված՝ իրավապահ մարմինների ուղեցույցներով: Ահաբեկչության կամ ծայրահեղականության կանխարգելման նկատառումները չեն կարող արդարացնել այնպիսի կամայական գործողությունները, որոնք սահմանափակում են մարդու հիմնարար իրավունքները և ազատությունները:

Միաժամանակյա և հակընդդեմ խաղաղ հավաքները տեղի են ունենում կազմակերպիչների կամքով: Իրավապահ մարմինները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ միաժամանակ և նույն տեղում անցկացվող խաղաղ հավաքներին օժանդակելու համար: Պետությունը պետք է համարժեք ոստիկանական և այլ ռեսուրսներ ապահովի միաժամանակյա և հակընդդեմ հավաքներին օժանդակելու համար՝ հնարավորության սահմաններում ապահովելով դրանց միջև տեսողական և լսողական հաղորդակցությունը: Բացի այդ, ըստ խտրականության բացառման սկզբունքի, նմանատիպ հանգամանքներում անցկացվող խաղաղ հավաքները, չպետք է ենթակա լինեն տարբերակված մոտեցման:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Խաղաղ հավաքի անցկացման մերժումը՝ հիմնված այն ենթադրության վրա, որ դա կառաջացնի թշնամական արձագանք կամ կխանգարի երթևեկությանը:
- Խաղաղ հավաքի ցրումը՝ թշնամաբար տրամադրված կամ բռնություն քարոզող երրորդ կողմերի միջամտության պատճառով:
- Խաղաղ հավաքի ցրումը առանց օրենքով սահմանված՝ հավաքների ցրման կարգի հետ համապատասխանության ապահովման:
- Իշխանությունները թույլ չեն տալիս միաժամանակյա կամ հակընդդեմ հավաքներ անցկացնել՝ վկայակոչելով դրանց անցկացման առաջարկվող վայրում երկու կամ ավելի հավաքների անցկացման անհնարինությունը:

- Բոլոր հակընդդեմ խաղաղ հավաքներն արգելվում են, քանի որ իշխանությունների կարծիքով դրանք բռնության ռիսկ են պարունակում:

2. **Մարդկանց, խմբերի կամ ՔՀԿ-ներին չի պարտադրվում կամ համակարգված կերպով արգելվում մասնակցել խաղաղ հավաքների**

Խաղաղ հավաքների մասնակցությունը պետք է յուրաքանչյուր անհատի անկախ, անձնական որոշումը լինի՝ լիովին կամավոր և առանց պարտադրանքի: Սա վերաբերում է նաև փոքրամասնությունների խմբերին (օրինակ ԼԳԲՏԻՔ) կամ այն խմբերին, որոնց տեսակետները չեն համընկնում հանրության մեծամասնության կարծիքին:

Խաղաղ հավաքին մասնակցելու վերաբերյալ անհատի որոշման վրա ազդող բացասական գործոնները խաղաղ հավաքների ազատության իրավունքի խախտում են հանդիսանում: Բացասական գործոնների օրինակներից է աշխատանքից ազատումը կամ նկատողությունը: Նման գործողությունները, որոնք նպատակ ունեն սահմանափակել կամ արգելել անձի մասնակցությունը հավաքին, պետք է անօրինական համարվեն և արգելվեն:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Քաղաքացիական ծառայողներին կամ այլ աշխատակիցներին ստիպում են մասնակցել որևէ հավաքի՝ աշխատանքից ազատելու կամ այլ վարչական միջոցներ գործադրելու անմիջական սպառնալիքի գործադրմամբ:
- Հայտնի քաղաքացիական ակտիվիստների մուտքը հավաքի անցկացման վայրեր շարունակաբար խոչընդոտվում է:
- Խաղաղ հավաքներին, շքերթներին կամ երթերին մասնակցելու ԼԳԲՏԻՔ խմբերի փորձերը խոչընդոտվում են:

3. **Անհատներին չեն կալանավորում կամ ահաբեկում՝ խաղաղ հավաքներ կազմակերպելու, դրանց մասնակցելու կամ չմասնակցելու մտադրության համար**

Խաղաղ հավաքների անցկացման վայրում անձանց ֆիզիկական ներկայության կանխմանն ուղղված ցանկացած միջոց հավաքների իրավունքի խախտում է հանդիսանում: Իրավապահ մարմինները չպետք է միջամտեն՝ ցուցարարներին հավաքի ճանապարհին կանգնեցնելու, խուզարկելու կամ կալանավորելու միջոցով: Կանխարգելիչ միջամտող միջոցներ չպետք է ձեռնարկվեն, եթե անմիջական բռնության հստակ և իրական վտանգ չկա:

Նախնական սահմանափակումների կիրառումը, որը հիմնավորվում է փոքր միջադեպերի հավանականությամբ, կարող է դիտվել որպես անհամաչափ միջոց: Բռնության դրսևորման առանձին դեպքերին պետք է արձագանքել կալանավորման և քրեական պատասխանատվության միջոցներով, սակայն ոչ նախապես կալանավորելով կամ ահաբեկելով:

Իրավապահ մարմինները մասնակիցներին կալանավորելու միջոցներ պետք է գործադրեն միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է ծանր հանցագործությունների կանխման համար: Կազմակերպիչների կամ մասնակիցների կալանավորումը հավաքից մեկ կամ ավելի օր առաջ կարող է դիտարկվել որպես ահաբեկման միջոց կամ հավաքին նրանց ֆիզիկական ներկայությունը կանխելու եղանակ:

Հավաքի ժամանակ մասնակիցների կամ կազմակերպիչների կալանավորման որոշումը՝ այն հիմնավորմամբ, որ նրանք վարչական, քրեական կամ այլ իրավախախտում են կատարել, պետք է

համապատասխանի բարձր շեմի պահանջին և հաշվի առնի անձի ազատության և անվտանգության իրավունքը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Խաղաղ հավաքի կազմակերպիչը ձերբակալվում է նախքան հավաքը:
- Խաղաղ հավաքի կազմակերպում պլանավորող ՔՀԿ-ն պետական տեսչական մարմինների կողմից սովորականից խիստ ստուգումների է ենթարկվում:

4. Անհատները և իրավաբանական անձինք չեն հետապնդվում կամ պատժվում խաղաղ հավաքներ կազմակերպելու կամ դրանց մասնակցելու համար

Ցանկացած բան, որը հստակ արգելված չէ օրենքով, պետք է թույլատրելի համարել, և հավաք կազմակերպելու մտադրություն ունեցողներից չպետք է այդ նպատակով թույլտվություն պահանջվի:

Հավաքների կազմակերպիչները չպետք է պատասխանատվություն կրեն մասնակիցների կամ երրորդ անձանց գործողությունների, իրենց պարտականությունները ոչ միտումնավոր կերպով չկատարելու կամ հավաքում տեղ գտած անօրինական վարքագծի համար, որը նրանք չէին նախատեսել և որին ուղղակի մասնակցություն չեն ունեցել:

Խաղաղ հավաքների մասնակցությունը հավաքների օրինական իրավունքի իրականացում է, որի համար անձը չպետք է հետապնդման կամ որևէ սահմանափակման հանդիպի: Հետևապես, հավաքների կազմակերպիչները և մասնակիցները կարող են օգտվել «ողջամիտ արդարացման» պաշտպանության միջոցից: Օրինակ, մասնակիցները չպետք է պատասխանատվություն կրեն անօրինական հավաքին մասնակցելու համար, եթե նրանք տեղյակ չեն եղել հավաքի անօրինական լինելու մասին: Նմանապես, մասնակիցները չպետք է նաև պատասխանատվություն կրեն իրավապահ կամ այլ պետական մարմինների ուղղորդմամբ կատարված արարքների համար:

Եթե խաղաղ հավաքների կազմակերպիչները ծանուցման պահանջը չեն ապահովել՝ պայմանավորված ողջամիտ հիմքերով, ապա պատասխանատվության միջոցներ կամ պատժամիջոցներ չպետք է կիրառվեն:

Հավաքի հետ կապված իրավախախտման մեջ մեղադրվող ցանկացած անձ պետք է հնարավորություն ունենա օգտվել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներից և անկախ դատարանի արդար դատաքննությունից: Բոլոր այն դրույթները, որոնք քրեական կամ վարչական պատասխանատվություն են ենթադրում, պետք է համապատասխանեն իրավաչափության և համաչափության սկզբունքին:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Հավաքի կազմակերպչի նկատմամբ գործ է հարուցվում հավաքի ակնկալվող մասնակիցների թիվը թերագնահատելու կամ գերագնահատելու համար:
- Անհատները պատասխանատվություն են կրում անօրինական հավաքին մասնակցելու համար, թեև իրենք տեղյակ չեն եղել հավաքի անօրինական լինելու մասին և որևէ անօրինական գործողություն չեն կատարել:

Չափորոշիչ 2՝ Պետությունը աջակցում է խաղաղ հավաքների ընթացքին և պաշտպանում է խաղաղ հավաքները:

Պետությունը պետք է ստեղծի հանրային հավաքների կազմակերպման և մասնակցության համար նպաստավոր միջավայր: Պատշաճ կերպով սահմանված ընթացակարգային կանոնները հնարավորություն են տալիս իրացնել խաղաղ հավաքների իրավունքը: Ընթացակարգերը պետք է լինեն անվճար, պարզ և հստակ ձևակերպված, և չպետք է նախատեսեն հավաքները նախապես թույլ տալու կարգ, այլ առավելագույնը՝ ծանուցման պահանջ: Ընթացակարգերը պետք է նաև հնարավորություն տան հավաքների տարբեր ձևերի, օրինակ՝ ինքնաբուխ և միաժամանակյա հավաքների համար: Հավաքների կազմակերպման ցանկացած սահմանափակում պետք է լինի անհրաժեշտ և համաչափ: Անհրաժեշտ է բողոքարկման արդյունավետ հնարավորություն տալ, ընդ որում, վերջնական վճիռը պետք է կայացվի մինչև հավաքի նախատեսված օրը: Իշխանությունները չպետք է արգելեն կամ սահմանափակեն էլեկտրոնային միջոցների օգտագործումը խաղաղ հավաքների մասին իրազեկելու նպատակով:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Խաղաղ հավաքի անցկացման իրավունքի համար նախնական թույլտվություն չի պահանջվում, կա առավելագույնը ծանուցման ընթացակարգ, որը պարզ է, հեշտ, անվճար և նախատեսում է ողջամիտ ժամկետներում նախնական ծանուցում: 2. Խաղաղ հավաքների սահմանափակման վերաբերյալ որոշման բողոքարկման դեպքում վերջնական վճիռը հրապարակվում է մինչև հավաքի նախատեսված օրը: 3. Օրենսդրությունը պաշտպանում է խաղաղ հավաքի կազմակերպման նպատակով հաղորդակցության էլեկտրոնային միջոցների օգտագործման իրավունքը:

1. **Խաղաղ հավաքի անցկացման իրավունքի համար նախնական թույլտվություն չի պահանջվում, կա առավելագույնը ծանուցման ընթացակարգ, որը պարզ է, հեշտ, անվճար և նախատեսում է ողջամիտ ժամկետներում նախնական ծանուցում**

Համաձայն, մարդու իրավունքների միջազգային իրավունքի՝ անհրաժեշտություն չկա ազգային օրենսդրությունում նախատեսելու հավաքների վերաբերյալ նախնական ծանուցման պահանջ: Նախնական ծանուցման նպատակն է՝ հնարավորություն տալ պետական մարմիններին ստեղծել անհրաժեշտ պայմաններ հավաքների ազատությունը, հասարակական կարգի պաշտպանությունը, հասարակական անվտանգությունն ու մարդկանց իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը ապահովելու համար:

Առավելագույնը, որ ազգային օրենսդրությունը կարող է պահանջել հավաքի կազմակերպիչներից, հավաքի անցկացման իրենց մտադրության վերաբերյալ ծանուցելն է. հավաքի անցկացման համար թույլտվություն չպետք է պահանջվի: Օրենքը պետք է հստակ սահմանի, թե որ պետական մարմինն է պատասխանատու ծանուցումներ ստանալու և դրանց արձագանքելու համար:

Ծանուցման ընթացակարգը պետք է հստակ սահմանի միջոցառման կազմակերպիչների և կարգավորող մարմինների միջև փոխգործակցության կարգը. այն պետք է սպառիչ կերպով ապահովի տեղեկատվության ներկայացման տեսակը, ներկայացնող անձանց, պետական մարմինը, որին այն պետք է ներկայացվի, ինչպես նաև ներկայացման եղանակը և ժամկետները:

Ծանուցման ընթացակարգը պետք է լինի պարզ, չպահանջի չափազանց ծավալուն փաստաթղթեր (օրինակ, գրանցման փաստաթղթեր), հատուկ գիտելիքներ կամ հատուկ տեխնիկական հմտություններ:

Նախնական ծանուցման ժամկետը չպետք է չափազանց երկար լինի: Այն պետք է բավարար լինի կարգավորման գործընթացի բոլոր փուլերի ապահովման համար (հավաքի մերժումը բողոքարկելու դեպքում), ինչպես նաև պետական մարմինների համար, որպեսզի վերջիններս պլանավորեն և ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ հասարակական կարգի և հավաքի մասնակիցների անվտանգություն ապահովելու նպատակով (ոչ ավելի, քան հավաքից մի քանի օր առաջ):

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Հանրահավաք կազմակերպելու համար նախնական թույլտվություն է պահանջվում:
- Ծանուցման ընթացակարգով պահանջում է բազմաթիվ փաստաթղթեր ներկայացնել կամ ծանուցումը ներկայացնել մի քանի շաբաթ կամ ամիս առաջ:

2. Խաղաղ հավաքների սահմանափակման վերաբերյալ որոշման բողոքարկման դեպքում վերջնական վճիռը հրապարակվում է մինչև հավաքի նախատեսված օրը

Հավաքների սահմանափակման մասին որոշումները կազմակերպիչներին պետք է հաղորդվեն հնարավորինս արագ և գրավոր կերպով՝ ներկայացնելով յուրաքանչյուր սահմանափակման պատճառը: Նման որոշումները պետք է կայացվեն հնարավորինս վաղ, որպեսզի նախքան ծանուցման մեջ նշված հավաքի անցկացմանը օրը հնարավոր լինի բողոքարկել այդ որոշումը:

Կազմակերպիչները պետք է իրավունք ունենան բողոքարկել կարգավորող մարմնի կողմից ներկայացված ցանկացած սահմանափակում կամ արգելք: Բողոքը պետք է դիտարկվի անկախ դատարանի կողմից հնարավորինս արագ, որպեսզի հնարավոր լինի վերանայել պետական մարմինների որոշումներն առանց դիմողի իրավունքների խաթարման:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Խաղաղ հավաքները սահմանափակող որոշումների բողոքարկման դեպքում օրենքը ողջամիտ վերջնաժամկետ չի սահմանում վճիռը հրապարակելու համար:

3. Օրենսդրությունը պաշտպանում է խաղաղ հավաքի կազմակերպման նպատակով հաղորդակցության էլեկտրոնային միջոցների օգտագործման իրավունքը

Հավաքի կազմակերպման գործընթացի և մասնակիցների հավաքագրման համար առանցքային նշանակություն ունի հավաքի մասին իրազեկումը և հաղորդակցությունը: Օրենքը չպետք է արգելի կապի որևէ միջոցի օգտագործումը խաղաղ հավաքների կազմակերպման համար: Բացի ավանդական ոչ առցանց հաղորդակցությունից, մասնակիցների հավաքագրումը կարելի է ապահովել հաղորդակցության տարբեր եղանակներով, այդ թվում՝ էլեկտրոնային միջոցներով, ինչպիսիք են հեռախոսը, տեքստային հաղորդագրությունները, համացանցը և այլն:

Հաղորդակցության կազմակերպման գործընթացում կազմակերպիչները կամ մասնակիցները պետք է ազատ լինեն օգտվելու թե՛ անցանց և թե՛ էլեկտրոնային միջոցներից: Կազմակերպիչներին պետք է հնարավորություն տրվի հայտարարել և գովազդել հավաքը, նույնիսկ եթե կազմակերպման գործընթացը դեռևս չի սկսվել: Հանրային հաղորդակցման միջոցներով հավաքի մասին հայտարարությունը չի համարվում ծանուցման իրավական ընթացակարգի կատարում:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Արգելվում է օգտագործել սոցիալական ցանցերը հավաքների կազմակերպման մասին հաղորդելու նպատակով:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Ծանուցման ընթացակարգը չի օգտագործվում որպես դե ֆակտո թույլտվություն: 2. Առկա սահմանափակումները համաչափ են և բխում են օբյեկտիվ հիմնավորված անհրաժեշտությունից: 3. Սոցիալական կայքերի հասանելիությունը չի սահմանափակվում խաղաղ հավաքներին խոչընդոտելու նպատակով:

1. Ծանուցման ընթացակարգը չի օգտագործվում որպես դե ֆակտո թույլտվություն

Եթե հանրահավաքի կազմակերպման համար գործում է ծանուցման ընթացակարգ, ապա այն պետք է համապատասխան ձևով կիրառվի և չօգտագործվի որպես թույլտվության ընթացակարգ պետական մարմինների կողմից (օրինակ, չպետք է պահանջվի, որ պետական մարմինները համաձայնություն տան ծանուցմանը, և պետք է գործի հոգուտ հավաքների կանխավարկածը): Լիազոր մարմինը ծանուցումը ստանալուց անմիջապես հետո բոլոր դեպքերում պետք է ծանուցման ստացական տրամադրի:

Ծանուցման գործընթացը չպետք է լինի ծանրաբեռնող: Ծանուցման ներկայացման ձևերը պետք է հիմնվեն օրենքի պահանջների վրա, լինեն հակիրճ և հասանելի: Եթե պետական մարմինները ծանուցման վերաբերյալ որևէ առարկություն չեն ներկայացրել, ապա հանրահավաքների կազմակերպիչները պետք է ազատ լինեն գործելու ըստ ծանուցմամբ ներկայացված պայմանների՝ առանց սահմանափակման:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Նախնական ծանուցումը ներառում է գրանցման ընթացակարգ, որը պահանջում է դե ֆակտո հաստատում գրանցող մարմնի կողմից:

2. Առկա սահմանափակումները համաչափ են և բխում են օբյեկտիվ հիմնավորված անհրաժեշտությունից

Հանրահավաքների հիմնական նպատակն է՝ որևէ ուղերձով դիմել կոնկրետ թիրախային անձի, խմբի կամ կազմակերպության: Հետևաբար, պետք է հնարավոր լինի խաղաղ հավաքները կազմակերպել թիրախային լսարանի սերտ հարևանությամբ: Հավաքը հանրային տարածքի օգտագործման նույնքան իրավաչափ տարբերակ է, որքան տարածքի օգտագործումը առևտրային նպատակներով կամ երթևեկության համար:

Պետական մարմինները պետք է հիմնավորեն որևէ սահմանափակման կիրառումը՝ ելնելով իրավաչափ նպատակներից, ինչպիսիք են հասարակական կարգի, հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության պաշտպանության, այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության, ազգային անվտանգության նկատառումները:

Հավաքի անցկացման ժամանակի, վայրի կամ կարգի սահմանափակման դեպքում իշխանությունները պետք է ողջամիտ այլընտրանք առաջարկեն: Սահմանափակումները պետք է լինեն համաչափ, այսինքն՝ որևէ սահմանափակում կիրառելիս, պետական մարմինները պետք է հավասարակշռություն պահպանեն ժողովրդավարական հասարակությունում նման սահմանափակման անհրաժեշտության և հավաքների իրավունքի իրացման միջև:

Սահմանափակման անհրաժեշտությունը պետք է հիմնավորված լինի փաստահենք վկայություններով, որոնք կարելի է ուսումնասիրել, գնահատել և ապացուցել վերլուծության, չափման և դիտարկման միջոցով:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Հավաքը տեղափոխվում է քաղաքի կենտրոնական տարածքից դուրս՝ թիրախային լսարանից հեռու տարածք:
- Չի թույլատրվում, որ հավաքին 50 հոգուց ավել մասնակցի՝ վարակիչ հիվանդության տարածումը կանխելու հիմնավորմամբ, մինչդեռ այլ կուտակումները, օրինակ՝ շուկաները, չեն արգելվում:

3. **Սոցիալական կայքերի հասանելիությունը չի սահմանափակվում խաղաղ հավաքներին խոչընդոտելու նպատակով**

Սոցիալական լրատվամիջոցների օգտագործման խոչընդոտներ չպետք է լինեն: Խաղաղ հավաքներին վերաբերող առցանց բովանդակությունը պետք է հասանելի լինի ցանկացած ինտերնետային պրովայդերի միջոցով, ցանկացած պահի, ցանկացած աշխարհագրական դիրքից, եթե բովանդակության հեղինակը այլ բան չի որոշել: Առցանց բովանդակության որևէ գործնական սահմանափակում չպետք է լինի, օրինակ՝ հետապնդումներ/ոտնձգություններ խմբագիրների կամ պրովայդերների նկատմամբ: Սոցիալական լրատվամիջոցները/համացանցը չպետք է արգելափակված լինեն հավաքի տեղակայման վայրի շրջակայքում՝ կազմակերպչական գործառույթները խոչընդոտելու նպատակով:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Սոցիալական ցանցերի բովանդակությունը առաջիկա բողոքի ակցիային առնչվող տեղեկատվության մասով արգելափակված է:
- Որոշ պրովայդերներ մուտք չեն ապահովում այն առցանց տեղեկությանը, որը վերաբերում է խաղաղ հավաքներին:

Չափորոշիչ 3՝ Պետությունը անհարկի պահանջներ չի առաջադրում խաղաղ հավաքների կազմակերպիչների և մասնակիցների նկատմամբ:

Ըստ հնարավորության՝ պետք է թույլատրվի խաղաղ հավաքներ անցկացնել կազմակերպչի կողմից նախատեսված պայմաններով: Պետական մարմինները պետք է նպաստեն խաղաղ հավաքների անցկացմանը և միջամտեն միայն այն ժամանակ, երբ հավաքը դառնում է բռնի: Պետության դրական պարտավորությունն է պահպանել հասարակական կարգը և իրականացնել մնացած հատուկ պարտականությունները անվճար հիմքերով: Հանրային տարածքի օգտագործման համար հարկեր չպետք է կիրառվեն, իսկ կազմակերպիչները պետք է հնարավորություն ունենան օգտագործելու անհրաժեշտ տեխնիկական միջոցները՝ առանց անհամաչափ սահմանափակումների:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Հավաքի կազմակերպիչները պատասխանատվություն չեն կրում հավաքի ընթացքում հասարակական կարգի պահպանման կամ այլոց գործողությունների համար: 2. Իշխանությունների միջամտությունը հնարավոր է միայն խաղաղ հավաքին ընթացքին աջակցելու նպատակով կամ բռնություն գործադրելու դեպքում:

1. Հավաքի կազմակերպիչները պատասխանատվություն չեն կրում հավաքի ընթացքում հասարակական կարգի պահպանման կամ այլոց գործողությունների համար

Պետական մարմինները պետք է ապահովեն այն բոլոր ծախսերը և կազմակերպչական ընթացակարգերը, որոնք կապված են հանրահավաքների ընթացքում անվտանգության, ապահովության, հասարակական կարգի պահպանման հետ: Պետությունը չպետք է որևէ լրացուցիչ վճար պահանջի ոստիկանության ուժերի պատշաճ մասնակցությունն ապահովելու համար:

Հավաքի կազմակերպիչներին թույլատրվում է ունենալ տեսանելի տարբերանշաններով կարգադրիչներ՝ հավաքի ընթացքին օժանդակելու նպատակով, սակայն վերջիններս իրավապահ մարմինների լիազորություններ չունեն: Կարգադրիչները չպետք է ուժ գործադրեն, այլ երկխոսելու և համոզելու միջոցով ապահովեն հավաքի մասնակիցների համագործակցությունը:

Կազմակերպիչները չպետք է պատասխանատվություն կրեն հավաքի ընթացքում մյուսների գործողությունների համար: Այն անձը, ով հանցագործություն է կատարում կամ չի ենթարկվում իրավապահ մարմինների օրինական պահանջներին, պետք է պատասխանատվության ենթարկվի անհատապես:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Պետական մարմինները հավաքի կազմակերպիչներից պահանջում են պայմանագրային հիմունքներով անվտանգության մասնավոր ծառայություններ վարձել՝ հավաքի ընթացքում հասարակական կարգը պահպանելու նպատակով:
- Հավաքների կազմակերպիչները պատասխանատվություն են կրում առանձին մասնակիցների անօրինական գործողությունների համար:

2. Իշխանությունների միջամտությունը հնարավոր է միայն խաղաղ հավաքին ընթացքին աջակցելու նպատակով կամ բռնություն գործադրելու դեպքում

Պետական մարմինները դրական պարտավորություն ունեն՝ պաշտպանելու հավաքների ազատության իրավունքը:

Օրենքը պետք է համապարփակ ընթացակարգեր ապահովի, որոնք կարգավորում են պետական մարմինների իրավունքներն ու պարտականությունները հանրահավաքների ընթացքում: Միջամտությունը հավաքներին կարող է տեղի ունենալ միայն օրինական նպատակների իրագործման համար: Օրենքը պետք է իշխանություններին գործիքների և մեթոդների լայն տեսականի տրամադրի՝ հնարավորություն տալով ընտրել առավել հարմար միջոցը: Ընտրությունը չպետք է լինի չմիջամտելու և ցրելու միջև: Օրենքով պետք է նախատեսվեն առավել նպատակահարմար և նվազագույն միջամտության գործիքներ: Միջամտության վաղ փուլերում նախապատվություն պետք է տրվի ոչ բռնի մեթոդներին, ինչպիսիք են երկխոսությունը, բանակցությունները, միջնորդությունը և հաղորդակցության այլ ձևերը:

Իրավապահ մարմինների կողմից ուժի և հատուկ միջոցների կիրառումը պետք է կարգավորվի հատուկ օրենքներով կամ կանոնակարգերով, որոնք պետք է հրապարակայնորեն հասանելի լինեն: Ոստիկանության կողմից ուժի ցանկացած կիրառում պետք է միշտ դիտարկվի որպես բացառություն: Ցանկացած միջամտություն պետք է լինի կանխատեսելի և հիմնված լինի կարգը վերականգնելու համար անհրաժեշտ միջոցների նվազագույն օգտագործման սկզբունքի վրա:

Հավաքի ընթացքում բռնի գործողությունների առանձին միջադեպերը կամ առանձին անհատների կողմից բռնության կիրառումը բավարար հիմքեր չեն՝ խաղաղ մասնակիցների նկատմամբ սահմանափակումներ կիրառելու համար: Իրավապահ մարմինների համար սահմանված հատուկ գործառնական ընթացակարգերը պետք է միջամտությունների դեպքում անհատական մոտեցման հնարավորություն նախատեսեն՝ հավաքների ընթացքում տարբեր խմբերի տարբերակման նպատակով: Իրավապահ մարմինները չպետք է բազմությունը դիտարկեն որպես միատարր զանգված, երբ ստիպված են մասնակիցներին բերման ենթարկել կամ հավաքն ուժով ցրելու միջոցներ կիրառել:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Իրավապահ մարմինները միջամտում են խաղաղ հավաքի ընթացքին՝ երթուղու չհայտարարված ենթադրյալ փոփոխության պատճառով:
- Իրավապահ մարմինները միջամտում են հավաքին կամ ցրում են այն՝ մի քանի մասնակիցների կողմից բռնության դրսևորումների հիմքով:
- Պետական մարմինները դադարեցնում են հավաքը, քանի որ դրա տևողությունը գերազանցում է ի սկզբանե նախատեսված ժամանակը:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Պետական մարմինները անհիմն վճարումներ չեն պահանջում այն ծառայությունների համար, որոնք նրանք պարտավոր են տրամադրել: 2. Խաղաղ հավաքների վերաբերյալ տեղեկության տարածման համար խոչընդոտներ չեն ստեղծվում: 3. Պետությունը անհամաչափ սահմանափակումներ չի դնում խաղաղ հավաքների ընթացքում տեխնիկական միջոցների օգտագործման նկատմամբ:

1. **Պետական մարմինները անհիմն վճարումներ չեն պահանջում այն ծառայությունների համար, որոնք նրանք պարտավոր են տրամադրել**

Խաղաղ հավաքների կազմակերպումը հանրային տարածքի օգտագործման իրավաչափ ձև է և չպետք է հանգեցնի հանրային ծառայությունների դիմաց որևէ վճարի կիրառման: Խաղաղ հավաքները պետք է տարանջատել հանրային տարածքի օգտագործման առևտրային

նպատակներից: Տարածքի վարձակալության, ոստիկանության ՝ միջոցառմանը ներկա լինելու համար վճարները, միջոցառումից հետո տարածքի մաքրման վճարները չեն համապատասխանում ցանկալի չափանիշներին: Պետական մարմինները պետք է ապահովեն կազմակերպչի կողմից պահանջվող և պատկան մարմինների կողմից նման դեպքերում նախատեսված ծառայությունները: Պետական մարմինները չպետք է անհիմն վճարներ գանձեն այդ ծառայությունների համար:

Կազմակերպիչներից նման վճարներ պահանջելը կարող է արգելակող գործոն հանդիսանալ և լուրջ խոչընդոտ կհանդիսանա հավաքների ազատության իրավունքի իրացման առումով: Ծանրաբեռնող ֆինանսական պահանջները կարող են կանխարգելիչ դեր ունենալ:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Պետական մարմինները հավաքների կազմակերպիչներից պահանջում են պայմանագրային հիմունքներով մաքրման ծառայություններ վարձել:
- Կազմակերպիչները պարտավոր են վճարել հանրային տարածքի օգտագործման համար:

2. Խաղաղ հավաքների վերաբերյալ տեղեկության տարածման համար խոչընդոտներ չեն ստեղծվում

Կազմակերպիչները և մյուսները պետք է կարողանան խաղաղ հավաքների վերաբերյալ ազատորեն տեղեկություններ տարածել հավաքից առաջ, դրա ընթացքում և հետո: Կազմակերպիչներից չպետք է պահանջվի վարչական ընթացակարգ անցնել նախքան հավաքի վերաբերյալ տեղեկությունների տարածումը: Կազմակերպիչները և մասնակիցները պետք է հավասարապես հնարավորություն ունենան տեղեկատվություն տարածել առցանց և ոչ առցանց միջոցներով:

Ցանկացած հետաքրքրված անձի պետք է թույլ տրվի աջակցել հանրահավաքներին կամ կատարել միջոցառման ձայնա- և տեսագրություններ: ՁԼՄ-ներին պետք է լիարժեք հասանելիություն տրամադրվի կազմակերպիչների, իրավապահ մարմինների և այլ մարմինների կողմից, առանց որևէ հատուկ հավատարմագրման: ՁԼՄ-ների ներկայացուցիչները պետք է պաշտպանություն ստանան իրավապահ մարմինների կողմից՝ հավաքը բռնի դառնալու դեպքում: Նրանց պետք է նաև հնարավորություն տրվի լուսաբանելու բոլոր, այդ թվում՝ անօրինական կամ բռնության դրսևորումներ ունեցող հանրահավաքները:

Եթե հավաքի ժամանակ անվտանգության նպատակով ձեռնարկվել են սահմանափակող միջոցառումներ, ՁԼՄ-ների ներկայացուցիչներից կարող է պահանջվել կրել տեսանելի տարբերակիչ նշաններ, օրինակ վզկապներ, բաճկոններ կամ թևնոցներ՝ նրանց մուտքը հեշտացնելու համար:

Տեխնիկական սարքավորումների, ինչպես նաև հավաքների տեսա- և ձայնագրությունների առգրավումը պետք է տեղի են ունենա միայն օրենքին համապատասխան կարգով:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Կազմակերպիչներին արգելվում է տարածել տեղեկատվություն նախատեսվող հավաքի վերաբերյալ, քանի որ պաշտոնական ծանուցման գործընթացը չի իրականացվել:
- ՁԼՄ-ներին արգելվում է լուսաբանել ընդդիմադիր կուսակցության կողմից անցկացվող հավաքը:

3. Պետությունը անհամաչափ սահմանափակումներ չի դնում խաղաղ հավաքների ընթացքում տեխնիկական միջոցների օգտագործման նկատմամբ

Հանրահավաքների ընթացքում հաղորդակցության համար տեսողական կամ լսողական բովանդակության հաղորդման միջոցների լայն շրջանակ կարող է օգտագործվել: Դրանք ներառում են ցուցապաստառներ, տարբերանշաններ, բարձրախոսներ, էկրաններ, ձայնային սարքավորումներ կամ լուսավորման և տեսողական էֆեկտների օգտագործում: Կարող են նաև կառուցվել ժամանակավոր շինություններ:

Տեսողական և ձայնային բովանդակության օգտագործման կարգավորումը կարող է տեղին լինել որոշակի հանգամանքներում՝ ելնելով հավաքի համար առաջարկվող տեղանքից կամ օրվա ժամից: Սակայն տեսողական կամ ձայնային բովանդակության սահմանափակումները պետք է լինեն համաչափ, նպատակ ունենան աջակցել հավաքի «տեսողական և լսողական հասանելիության» ապահովմանը իր օբյեկտի կամ նպատակային լսարանի համար, և ձգտեն հավասարակշռություն ապահովել հավաքների ազատության իրավունքի և այլոց (հավաքին չմասնակցողների) իրավունքների միջև: ՁԼՄ-ները պետք է հնարավորություն ունենան օգտագործել բոլոր տեսակի սարքավորումները, որոնք անհրաժեշտ են համարում հավաքի ժամանակ լուսանկարահանման, տեսա- և ձայնագրությունների իրականացման համար:

Լրատվամիջոցների ձայնագրող և հեռարձակող սարքավորումների, ձայնա-կամ տեսագրությունների առգրավումը պետք է տեղի ունենա օրենքին և միջազգային չափանիշներին համապատասխան կարգով: Հակառակ դեպքում նման առգրավումը պետք է դիտվի որպես քրեական իրավախախտում: Ձայնա- կամ տեսագրման և հեռարձակման սարքավորումները կանխամտածված կոտրելը կամ վնասելը նույնպես պետք է դիտվի որպես քրեական իրավախախտում, իսկ այդ հանցանքը կատարողները պետք է պատասխանատվության ենթարկվեն:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Կազմակերպիչներին ցերեկվա ժամերին քաղաքի կենտրոնում անցկացվող հավաքի ընթացքում թույլ չի տրվում օգտագործել բարձրախոսներ:
- Հավաքին արգելվում է օգտագործել ցուցապաստառներ, քանի որ դրանց վրա գրառումները կամ գույները կարող են խառնաշփոթ առաջացնել երթևեկության համար:

Չափորոշիչ 4՝ Իրավապահ մարմինները աջակցում են խաղաղ հավաքներին և պատասխանատու են իրենց ներկայացուցիչների գործողությունների համար:

Իրավապահ մարմինների պարտականությունն է՝ օժանդակել և պաշտպանել խաղաղ հավաքները: Իրավապահ մարմինների գործողությունները հանրահավաքների ընթացքում պետք է նպատակ ունենան ապահովել խաղաղ հավաքների պաշտպանությունը, ինչպես նաև հասարակական կարգի և անվտանգության պահպանությունը: Ուժի և հատուկ միջոցների կիրառումը պետք է լինի համաչափ և հստակ կարգավորված՝ հիմնվելով մարդու իրավունքների սկզբունքների վրա: Իրավապահ մարմինների այն ներկայացուցիչները, որոնք խախտում են խաղաղ հավաքների իրավունքը, կիրառում են ապօրինի ուժ կամ չեն ապահովում խաղաղ հավաքների պաշտպանությունը, պետք է ենթարկվեն պատասխանատվության:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Իրավապահ մարմինները հստակ կարգավորումներ ունեն խաղաղ հավաքների մասնակիցների հանդեպ ուժի կիրառման վերաբերյալ, որոնք բխում են մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումներից:

2. Ուժի անհամաչափ օգտագործման կամ ցուցարարներին պաշտպանելու պարտավորության չկատարման համար կան պատասխանատվության մեխանիզմներ:

1. Իրավապահ մարմինները հստակ կարգավորումներ ունեն խաղաղ հավաքների մասնակիցների հանդեպ ուժի կիրառման վերաբերյալ, որոնք բխում են մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումներից

Հավաքների ընթացքում ոստիկանության դերի վերաբերյալ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը նախատեսում է, որ ոստիկանության գործառույթները հավաքների ընթացքում պետք է իրականացվեն ըստ օրինականության, անհրաժեշտության, համաչափության և խտրականության բացառման իրավական սկզբունքների՝ պահպանելով մարդու իրավունքների համապատասխան չափորոշիչները:

Պետությունը դրական պարտականություն ունի ապահովելու ողջամիտ և համապատասխան միջոցներ, որպեսզի խաղաղ հավաքները տեղի ունենան առանց մասնակիցների նկատմամբ ֆիզիկական բռնության միջադեպերի: Իրավապահ մարմինները խաղաղ հավաքի մասնակիցներին պետք է պաշտպանեն այն անձանցից և խմբերից, այդ թվում սադրիչներից և հակընդդեմ ցուցարարներից, որոնք որևէ կերպ փորձում են խանգարել կամ ընդհատել հավաքը:

Ուժի կիրառումը պետք է կարգավորվի ազգային օրենսդրությամբ, որտեղ պետք է սահմանվեն այն հանգամանքները, որոնց դեպքում հիմնավորված է ուժի օգտագործումը և դրա ուժգնությունը: Օրենքը պետք է նախատեսի հակազդեցության մի շարք եղանակներ, որոնք կապահովեն ուժի և հատուկ մարտավարության տարբերակված և համամասնական կիրառումը: Հակազդեցության այդ եղանակները պետք է ներառեն ոչ վնասաբեր ֆիզիկական սահմանափակման միջոցների կիրառումը այն իրավիճակներում, որտեղ այլ՝ ավելի խաղաղ միջամտությունները ձախողվել են:

Իրավապահ մարմինների արձագանքը պետք է կանխատեսելի լինի և ուղեկցվի համարժեք նախազգուշացումներով: Հետևաբար՝ խորհուրդ է տրվում, որ ոստիկանական ընթացակարգերը լինեն հանրամատչելի:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Խաղաղ հավաքների ընթացքում ուժի կիրառման վերաբերյալ կանոնակարգերով նախազգուշացման պարտականություն չի նախատեսվում:
- Հավաքների ընթացքում ուժի կիրառումը չի ենթարկվում օրինականության, անհրաժեշտության, համաչափության կամ խտրականության բացառման սկզբունքներին:
- Խաղաղ հավաքների ընթացքում ուժի մարտավարությունը և կիրառումը կանոնակարգող իրավական դրույթներ չկան:

2. Ուժի անհամաչափ օգտագործման կամ ցուցարարներին պաշտպանելու պարտավորության չկատարման համար կան պատասխանատվության մեխանիզմներ

Իրավապահ մարմինների կողմից անհամապատասխան, անհամաչափ կամ անօրինական ուժի կիրառումը կարող է խախտել հիմնարար ազատություններն ու իրավունքները, վատթարացնել պետական մարմինների և հասարակության փոխհարաբերությունները, և առաջացնել համատարած լարվածություն:

Օրենքը պետք է ապահովի, որ ուժի անօրինական, չթույլատրված կամ անհամաչափ կիրառումը կամ պետական իշխանության մարմինների ներկայացուցիչների կողմից հավաքի մասնակիցների պաշտպանության չապահովումը ենթարկվի քաղաքացիական, քրեական կամ կարգապահական պատասխանատվության: Այն մարմինը, որը միջամտություն չի իրականացրել այնպիսի դեպքում, երբ նման միջամտությունը կարող էր կանխել իրավիճակի սրումը կամ այլ ուժի կիրառումը, ևս պետք է ենթարկվի պատասխանատվության:

Իրավապահների միջամտության արդյունքում տեղի ունեցած մահվան կամ վնասվածքների դեպքերի հետաքննությունը պետք է իրականացվի անկախ մարմնի կողմից: Կախված դեպքից՝ այդպիսի մարմին կարող է լինել խորհրդարանական հատուկ հանձնաժողովը, մարդու իրավունքների պաշտպանը, ոստիկանության քաղաքացիական վերահսկողության խորհուրդը, դատախազությունը, դատարանը կամ այլ նմանատիպ մարմիններ:

Ուժի կիրառման վերաբերյալ տվյալները չպետք է գաղտնի լինեն, այլ հասանելի լինեն հանրությանը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Խաղաղ հավաքների մասնակիցների դեմ բիրտ ուժի կիրառման համար իրավապահ մարմինների ներկայացուցիչներին պատասխանատվության ենթարկելու իրավական մեխանիզմներ չկան:
- Խաղաղ հավաքների մասնակիցների պաշտպանությունը չիրականացնելու համար իրավապահ մարմինների ներկայացուցիչներին պատասխանատվության ենթարկելու իրավական մեխանիզմներ չկան:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Մինչ ուժի կիրառումը նախազգուշացում է տրվում, միաժամանակ հավաքների ոստիկանական վերահսկման բոլոր բաղադրիչների հանդեպ կանխատեսելի և համաչափ մոտեցում է կիրառվում: 2. Իրավապահ մարմինները պաշտպանում են հավաքի մասնակիցներին այն անձանցից կամ խմբերից (այդ թվում՝ սադրիչներից), որոնք փորձում են խոչընդոտել հավաքի ընթացքին: 3. Հավաքների ազատության իրավունքը խախտելու դեպքում իրավապահ մարմինների ներկայացուցիչները պատասխանատվություն են կրում:

1. **Մինչ ուժի կիրառումը նախազգուշացում է տրվում, միաժամանակ հավաքների ոստիկանական վերահսկման բոլոր բաղադրիչների հանդեպ կանխատեսելի և համաչափ մոտեցում է կիրառվում**

Այն հավաքները, որոնք դադարում են խաղաղ բնույթ կրել և վերածվում են բռնության, կարող են ընդհատվել է համաչափ կերպով: Հավաքի սակավաթիվ մասնակիցների կողմից բռնության կիրառումը խաղաղ հավաքը ինքնաբերաբար չի վերածում ոչ խաղաղ հավաքի: Այս դեպքում միջամտություն պետք է կիրառվի բռնություն դրսևորած կոնկրետ անհատների նկատմամբ, այլ ոչ թե ամբողջ հավաքը ցրվի:

Հանրահավաքների ընթացքում ոստիկանական գործողությունները պետք է կանխատեսելի լինեն հավաքին մասնակցող բոլոր կողմերի համար: Կազմակերպիչները, մասնակիցները և երրորդ կողմը պետք է տեղյակ լինեն իրենց գործողությունների հետևանքների մասին և բավարար ժամանակ ունենան արձագանքելու իրավապահ մարմինների գործողություններին:

Ուժի ցանկացած կիրառում, որն անհատի կյանքի կամ ֆիզիկական անվտանգության անմիջական սպառնալիքի արձագանք չէ, պետք է կանխատեսելի լինի և նախապես հայտարարվի՝ ըստ գործող իրավական ընթացակարգերի:

Իրավապահ մարմինների վարքագիծը պետք է կանխատեսելի լինի ոստիկանական գործողությունների կանոնակարգերի հրապարակային հասանելիության շնորհիվ: Հավաքների ընթացքում իրավապահ մարմինների միջամտության մասին պետք է նախազգուշացում հայտարարվի: Նախազգուշացումը պետք է լինի բացահայտ, բարձրաձայն, հստակ և կրկնվի ողջամիտ պարբերականությամբ:

Հանրահավաքների ընթացքում ոստիկանական ցանկացած գործողություն պետք է հետևի համաչափության սկզբունքին և պահպանի հավասարակշռությունը ժողովրդավարական հասարակությունում նման սահմանափակման անհրաժեշտության և հավաքի իրավունքի իրացման միջև: Իշխանություններն իրենց օրինական նպատակի իրագործման ուղղությամբ միշտ պետք է նախապատվություն տան նվազ միջամտող գործողություններին: Հետևաբար՝ համընդհանուր սահմանափակումները չափազանց մեծ միջամտություն կլինեն և չեն կարող ապահովել համաչափության սկզբունքը, քանի որ հաշվի չեն առնում կոնկրետ հանգամանքները:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Ոստիկանությունը ցրում է 500 հոգանոց հավաքը՝ օգտագործելով ջրցան մեքենաներ, քանի որ մի քանի մասնակից ցուցաբերել են բռնության դրսևորումներ:
- Ոստիկանությունը արցունքաբեր գազ և մահակներ է կիրառում հակակառավարական կարգախոսներ վանկարկող՝ բողոքի ակցիայի մասնակիցների նկատմամբ:
- Իրավապահ մարմինները հավաքի մասնակիցների նկատմամբ ուժ են կիրառում առանց նախազգուշացման:
- Իրավապահ մարմինները ուժ են կիրառում հավաքի բոլոր մասնակիցների նկատմամբ, մինչդեռ բռնություն դրսևորողները մի քանի անհատներ են:
- Ոստիկանությունը անհամաչափ սահմանափակող միջոցառումներ է կիրառում հավաքի ընթացքում՝ արգելափակելով քաղաքի երթևեկությունը հավաքի անցկացման վայրից 10 թաղամաս հեռավորությամբ:

2. Իրավապահ մարմինները պաշտպանում են հավաքի մասնակիցներին այն անձանցից կամ խմբերից (այդ թվում՝ սադրիչներից), որոնք փորձում են խոչընդոտել հավաքի ընթացքին

Պետությունն ունի դրական պարտականություն՝ ակտիվորեն պաշտպանել խաղաղ հավաքները և օժանդակել դրանց անցկացմանը: Այս դրական պարտավորությունը նշանակում է, որ պետությունը խաղաղ հավաքի մասնակիցներին պետք է պաշտպանի այն անձանցից կամ խմբերից (այդ թվում՝ սադրիչներից և հակընդդեմ ցուցարարներից), որոնք փորձում են այս կամ այն կերպ խանգարել հավաքի անցկացմանը կամ խափանել այն:

Դիտորդները, պատահական ականատեսները կամ այլ անձինք, որոնք գտնվում են հավաքի մոտակայքում, սակայն որպես կազմակերպիչ կամ մասնակից չեն մասնակցում հավաքի ընթացքին, պետք է դիտարկվեն որպես հավաքին չմասնակցողներ: Հավաքին չմասնակցող այն անձինք, որոնք հավաքին խոչընդոտող կանխամտածված կամ ոչ դիտավորյալ գործողություններ են իրականացնում, կարող են դիտարկվել որպես սադրիչներ:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Իրավապահ մարմինները չեն միջամտում, որպեսզի կանխեն հավաքին չմասնակցողների կողմից խաղաղ հավաքի մասնակիցների ցուցապաստառները պատռելու գործողությունները կամ հակազդեն նրանց:

3. **Հավաքների ազատության իրավունքը խախտելու դեպքում իրավապահ մարմինների ներկայացուցիչները պատասխանատվություն են կրում**

Իրավապահ մարմինների ներկայացուցիչները պետք է պատասխանատվության ենթարկվեն խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրացման պաշտպանության և օժանդակության ուղղությամբ ստանձնած դրական պարտավորությունները չկատարելու համար: Իրավապահ մարմինները պետք է նաև պատասխանատվություն կրեն խաղաղ հավաքներին չմիջամտելու՝ իրենց բացասական պարտավորությունը չկատարելու համար: Այս պատասխանատվությունը պետք է կիրառվի նաև պետության անունից հանդես եկող մասնավոր գործակալությունների կամ անհատների հանդեպ:

Հանրային մարմինների գործողությունների բողոքարկումը պետք է ուսումնասիրվի անկախ մարմնի (հանձնաժողովի, մարդու իրավունքների պաշտպանի, դատարանի, և այլն) կողմից: Իրավապահ մարմինների գործողությունների բողոքարկումը պետք է ենթարկվի արդյունավետ և արագ քննության: Քննությունը պետք է նպատակ ունենա ապահովել օրենքի արդյունավետ կիրառումը և պատասխանատվության ենթարկել հավաքների ազատության իրավունքի խախտման, ինչպես նաև մահվան կամ ֆիզիկական վնասվածքների դեպքերի համար:

Որպեսզի հնարավոր լինի իրավապահներին պատասխանատվության ենթարկել, անհրաժեշտ է ապահովել իրավապահ մարմինների ներկայացուցիչները նույնականացումը՝ համազգեստի վրա (օրինակ՝ մեջքին կամ սաղավարտին) դաջելով (կամ այլ ձևով ամրացնելով) անհատական նույնականացման համարները, որոնք պետք է տեսանելի և հեշտությամբ ընթեռնելի լինեն:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Ոստիկանը, որն արգելել է ձայնային ուժեղացուցիչների օգտագործումը խաղաղ հավաքների ժամանակ, պատասխանատվության չի ենթարկվում:
- Ոստիկանը, որը ցրել է խաղաղ հավաքները՝ պաշտոնական գրանցման գործընթացի չպահպանման հիմունքներով, պատասխանատվության չի ենթարկվում:
- Իրավապահ մարմինների որոշ ներկայացուցիչներ հանրահավաքներին ներկա են առանց հստակ ճանաչելի տարբերանշանների:

Համապատասխան ռեսուրսներ

- ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույց հավաքների ազատության վերաբերյալ
- Բողոքելու իրավունք. Բողոքի ակցիաների ընթացքում մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներ, 19-րդ հոդված (2016 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Հոդված 11՝ Դատական նախադեպային իրավունքը հավաքների անցկացման վերաբերյալ (2013 թ.)
- ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի մարդու իրավունքների ձեռնարկ հավաքներին ոստիկանության մասնակցության վերաբերյալ (2016 թ.)
- ՄԱԿ-ի հատուկ զեկուցող Մաինա Կիայի, Հավաքների պատշաճ կառավարման 10 սկզբունքները. Քաղաքացիական հասարակության ուղեցույց, հունվար 2017 թ.
- Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ, Հատուկ զեկույց. Լրատվամիջոցների մասնակցությունը քաղաքական ցույցերին (21 հունիսի 2007 թ.)

- Խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների հարցով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի և արտադատական, ամփոփ կամ կամայական պատիժների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի համատեղ զեկույց՝ հավաքների պատշաճ կառավարման վերաբերյալ, A/HRC/31/66 (4 մարտի, 2016 թ.)

ՈԼՈՐՏ 5՝ Որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունք

Չափորոշիչ 1՝ Յուրաքանչյուր ոք կարող է մասնակցել որոշումների ընդունման գործընթացներին:

Մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին երաշխավորվում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով: Օրենսդրությունը պետք է ապահովի, որ քաղաքացիները օգտվեն ներառական, լայն ու բովանդակալից մասնակցության իրավունքից: Այս իրավունքի իրականացումը չի կարող կասեցվել կամ սահմանափակվել՝ բացառությամբ օրենքով նախատեսված օբյեկտիվ և ողջամիտ հիմքերի դեպքում: ՔՀԿ-ները կարևոր դեր ունեն այս գործընթացում, քանի որ նրանք օժանդակում են հանրության մասնակցությունը և ներկայացնում տարբեր խմբերի շահերը, մասնավորապես կարիքավոր և մարգինալ անձանց ձայները: Նրանք պետք է օգտվեն մասնակցության հավասար հնարավորություններից և նրանց մասնակցությունը օրենսդրության կամ քաղաքականության մշակման գործընթացներին չպետք է սահմանափակվի տեղական, ազգային, տարածաշրջանային կամ միջազգային որևէ մակարդակում:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Հանրային քննարկումները պարտադիր են իրավական ակտերի և քաղաքականությունների այն բոլոր նախագծերի համար, որոնք ազդում են հանրության կամ կոնկրետ ոլորտների և խմբերի վրա: 2. Օրենքը երաշխավորում է ներառական և իմաստալից մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին, իսկ առկա սահմանափակումները հստակ նկարագրված են և նեղ շրջանակ են ընդգրկում: 3. Օրենսդրությունը հստակ մեխանիզմներ է սահմանում՝ քաղաքացիական մասնակցության և որոշումների կայացման թափանցիկության կանոնների խախտման դեպքում պատասխանատվության կանչելու վերաբերյալ: 4. Որոշումների ընդունման գործընթացում սահմանված են հստակ չափորոշիչներ և բոլոր ՔՀԿ-ների համար մասնակցության հավասար հնարավորություններ:

1. **<u>Հանրային քննարկումները պարտադիր են իրավական ակտերի և քաղաքականությունների այն բոլոր նախագծերի համար, որոնք ազդում են հանրության կամ կոնկրետ ոլորտների և խմբերի վրա</u>**

Օրենսդրությունը պետք է նախատեսի դրույթներ, որոնք հանրային քննարկումներ կազմակերպելու պահանջ են սահմանում հանրության կամ որևէ կոնկրետ խմբի վրա ազդող ցանկացած օրենսդրական նախագծի, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի, այդ թվում՝ ենթաօրենսդրական ակտերի, քաղաքականությունների, ազգային կամ տեղական ինքնակառավարման մարմնի որոշումների, ազգային ռազմավարությունների և այլնի վերաբերյալ: Հանրային խորհրդակցությունները կարող են կազմակերպվել անմիջականորեն՝ շահագրգիռ կողմերի հետ բաց հանդիպումների միջոցով, որոնց մասին հրապարակային հայտարարություն պետք է տարածվի (օրինակ, տվյալ գերատեսչության կայքում կամ ԶԼՄ-ներով), կամ գրավոր ձևով (այդ թվում առցանց)՝ հնարավորություն տալով քաղաքացիներին և ՔՀԿ-ներին ներկայացնելու իրենց դիտողություններն ու առաջարկությունները: Համապատասխան իրավական ակտի նախագիծը պետք է նախապես հրապարակվի ուսումնասիրության և մեկնաբանությունների համար՝ ողջամիտ ժամկետ ապահովելով դրա քննարկման համար (սովորաբար՝ առնվազն 30 օր մեկ նախագծի համար): Քննարկումների արդյունքները պետք է հրապարակվեն գրավոր ձևաչափով, իսկ չընդունված առաջարկների համար մերժման հստակ փաստարկներ ներկայացվեն:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենսդրությունը չի պահանջում կառավարության կողմից նորմատիվ իրավական նախագծի նախնական հրապարակումը և քննարկումը՝ նախքան խորհրդարան ուղարկվելը:

2. **<u>Օրենքը երաշխավորում է ներառական և իմաստալից մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին, իսկ առկա սահմանափակումները հստակ նկարագրված են և նեղ շրջանակ են ընդգրկում</u>**

Ներառական մասնակցությունը նշանակում է, որ հասարակության բոլոր խմբերն ունեն որոշումների կայացման գործընթացներին մասնակցելու հավասար հնարավորություն: Որևէ խտրություն չի կարող կիրառվել ռասայական պատկանելության, մաշկի գույնի, սեռի, կրոնի, ծննդի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային ծագման, գույքային կամ այլ դրության նկատառումներով: ՔՀԿ-ների համար որևէ տարբերակում չպետք գործի ըստ գործունեության ծավալման տարածքի (տեղական, ազգային կամ միջազգային), ֆինանսավորման աղբյուրների, գործունեության բնագավառների կամ այն խմբերի, որոնց ներկայացնում է տվյալ կազմակերպությունը: Պետությունը պետք է հասցեագրի և վերացնի այն մարտահրավերները, որոնց հանդիպում են փոքրամասնությունները, անապահով, խոցելի կամ մեկուսացված անձինք ու խմբերը՝ ցանկանալով մասնակցել հանրային որոշումների կայացման գործընթացներում: Ավելին, պետությունը պետք է ներդնի իրավական երաշխիքներ և կազմակերպչական մեխանիզմներ, որոնք կապահովեն ներառականությունը հանրային որոշումների կայացման գործընթացներում՝ նախատեսելով հանրային մասնակցության տարատեսակ կառույցներ, մեթոդներ, մեխանիզմներ, գործիքներ և տեսակներ: Սա կարող է ենթադրել դյուրամատչելի գործիքների ներդնում, նոր տեխնոլոգիաների օգտագործում (այդ թվում, բայց ոչ միայն, առցանց գործիքներ), հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովում և այլ մոտեցումների կիրառում:

Առցանց կամ անցանց խորհրդակցական մեխանիզմների կիրառումը պետք է սահմանված լինի օրենքով՝ ապահովելով հանրության լայն շրջանակների մասնակցությունը: Խորհրդակցությունների մասին ծանուցումը պետք է լայնորեն տարածվի հաղորդակցության տարբեր միջոցներով, այդ թվում՝ ԶԼՄ-ների, կայքերի, սոցիալական ցանցերի և այլն: Համայնքում տեղական խորհրդակցությունների մասին տեղեկությունը տարածելու համար պետք է օգտագործվեն հայտարարությունների տախտակները: Օրենքը պետք է հստակ սահմանի, որ խորհրդակցությունների գործընթացում պետք է ներգրավված լինեն բազմազան ՔՀԿ-ներ, այդ թվում առաջարկվող նախագիծը քննադատող ՔՀԿ-ները:

Իմաստալից մասնակցությունը ենթադրում է, որ մասնակցության մեխանիզմների կիզակետում ոչ թե գործընթացն է, այլ ազդեցությունը, և ներկայացված բոլոր դիտողություններն ու առաջարկությունները ենթարկվում են պատշաճ դիտարկման և հաշվի են առնվում որոշում կայացնող համապատասխան մարմնի կողմից: Մասնակցության սահմանափակումները պետք է հստակ սահմանվեն օրենքով և հիմնված լինեն օբյեկտիվ և ռացիոնալ նկատառումների վրա:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենքը որոշակի չափանիշներ է սահմանում հանրային քննարկումներին ՔՀԿ-ների մասնակցության համար, օրինակ, ՔՀԿ-ները պետք է նշված քանակի տարիների փորձ ունենան համապատասխան ոլորտում կամ ներգրավված լինեն հասարակական խորհրդում:
- Օրենքը չի սահմանում հաղորդակցության այն ուղիները, որոնց միջոցով պետք է հրապարակվեն տեղեկությունները օրենսդրական ակտերի նախագծերի մասին, օրինակ՝

որևէ քննարկման մասին հայտարարությունը կարող է ուղարկվել սահմանափակ թվով ՔՀԿ-ների՝ չապահովելով լայն հանրության մասնակցությունը:

- Օրենքը թույլատրում է օրենսդրության ընդունման «արտակարգ» կամ «արագացված» ընթացակարգեր՝ առանց նշելու այն հանգամանքները, երբ այդ ընթացակարգերը կարող են կիրառվել:

3. Օրենսդրությունը հստակ մեխանիզմներ է սահմանում քաղաքացիական մասնակցության և որոշումների կայացման թափանցիկության կանոնների խախտման դեպքում պատասխանատվության կանչելու վերաբերյալ

Այն դեպքերում, երբ իրավական ակտերն ընդունվել են առանց հանրային մասնակցության պարտադիր չափորոշիչների ապահովման, օրենքը պետք է ընթացակարգեր սահմանի տվյալ գործը դատական մարմիններում կամ այլ անկախ մարմիններում քննելու վերաբերյալ: Որպես այլընտրանք՝ օրենքը կարող է նախատեսել վերադարձնել իրավական ակտի նախագիծը համապատասխան մշակող պետական մարմին՝ լրամշակման համար: Օրինակ, Բոսնիայում և Հերցեգովինայում, ըստ օրենսդրական նախագծերի վերաբերյալ խորհրդակցությունների իրականացման կանոնագրքի[3], արդարադատության նախարարությունը կամ նախարարների խորհուրդը կարող է օրենքի նախագիծը վերադարձնել տվյալ նախարարությանը՝ խորհրդակցության կանոնակարգերի հետ համապատասխանություն ապահովելու նպատակով: Բացառիկ հանգամանքներում նախարարը կարող է հրաժարվել խորհրդակցության պարտավորությունից, սակայն խորհրդակցության նվազագույն ապահովման պարտավորության դեպքում որևէ բացառություն չկա: Մեկ այլ օրինակ է Մոլդովայի Հանրապետության 2008 թ. օրենքը որոշումների կայացման գործընթացի թափանցիկության վերաբերյալ (կառավարության 2016 թ. որոշմամբ կատարված փոփոխություններով և լրացումներով[4]), որը սահմանում է, որ թափանցիկության կանոնների չպահպանումը հանգեցնում է կարգապահական և վարչական պատասխանատվություն: Բացի այդ, օրենքը սահմանում է և սահմանափակում այն դեպքերը, երբ կարող են կիրառվել օրենսդրության, որոշումների կամ այլ հանրային ակտերի ընդունման «արտակարգ» կամ «արագացված» ընթացակարգեր:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենքը վարչական պատժամիջոցներ չի նախատեսում պարտադիր հանրային խորհրդակցության պահանջը խախտելու համար:

4. Որոշումների ընդունման գործընթացում սահմանված են հստակ չափորոշիչներ և բոլոր ՔՀԿ-ների մասնակցության համար հավասար հնարավորություններ

Օրենքը պետք է ապահովի ՔՀԿ-ների հավասար մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում: Պետական մարմինները իրավունք չունեն չներառել ՔՀԿ-ներին՝ նրանց ֆինանսավորման աղբյուրների, պետության հետ հարաբերությունների կամ օրենքների և այլ պետական որոշումների վերաբերյալ նրանց ունեցած դիրքորոշման համար: ՔՀԿ-ների ընտրության չափանիշները, որոնք կարող են սահմանվել ըստ գործունեության աշխարհագրական ծածկույթի (միջազգային, ազգային կամ տեղական մակարդակ), նպատակների և ոլորտների, իրավական կարգավիճակի (գրանցված կամ չգրանցված կազմակերպություններ) և ներկայացված

[3] http://www.mpr.gov.ba/web_dokumenti/EJ%20Pravilnik%20za%20konsultacije.pdf

[4] Կառավարության 2016թ. օգոստոսի 9-ի թիվ 967 որոշում Որոշումների կայացման գործընթացում , քաղաքացիական հասարակության խորհրդակցության մեխանիզմների վերաբերյալ: Հասանելի է՝ http://lex.justice.md/md/366274/ հասցեով

սոցիալական խմբերի, պետք է հստակ հիմնավորված լինեն խորհրդակցությունը կազմակերպող մարմնի կողմից:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Առկա չեն խտրականությունը բացառող նորմեր, որոնք կապահովեն ՔՀԿ-ների հավասար մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին:
- Որոշումների կայացման գործընթացին կամ խորհրդակցական մարմիններին ՔՀԿ մասնակցության վերաբերյալ հստակ և հրապարակայնորեն հասանելի չափանիշներ չկան:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Իշխանությունները տարբեր մեխանիզմներ են կիրառում իմաստալից հանրային մասնակցություն ապահովելու նպատակով: 2. Որոշումների կայացման գործընթացներում մասնակցություն ցուցաբերած ՔՀԿ-ները հետագայում ճնշումների չեն ենթարկվում: 3. Ցանկացած ՔՀԿ կարող է մասնակցել քննարկումներին՝ առանց խտրականության, անկախ ՔՀԿ տեսակից կամ կառավարության հանդեպ դիրքորոշումներից:

1. **<u>Իշխանությունները տարբեր մեխանիզմներ են կիրառում իմաստալից հանրային մասնակցություն ապահովելու նպատակով</u>**

Պետական մարմինները պետք է օգտագործեն առցանց և անցանց բազմազան գործիքներ, որոնք առավել նպատակահարմար են տվյալ ոլորտի համար՝ հնարավորինս շատ քաղաքացիների և ՔՀԿ-ների համար մասնակցության հնարավորություն ընձեռելու նկատառումով: Նրանք պետք է նաև ՔՀԿ տվյալների բազաներ և ցուցակներ օգտագործեն, որպեսզի հնարավորինս տարածեն իրավական ակտերի, ռազմավարությունների, ծրագրերի նախագծերի վերաբերյալ տեղեկությունները և հանրային լսումների և հանրային քննարկման այլ միջոցառումների հայտարարությունները: Օգտակար գործիքներից և մեխանիզմներից են առցանց քննարկումները (օրինակ՝ համացանցային հարթակներում) և/կամ դեմառդեմ հանդիպումները (օրինակ ֆոկուս խմբային քննարկումներ, սեմինարներ, հանրային բանավեճեր, ֆորումներ, փորձագիտական խմբեր)՝ քաղաքականության ձևակերպման, իրականացման և գնահատման հարցերը հանրության հետ քննարկելու համար: Առաջընթացը մշտադիտարկելու համար կարելի է օգտագործել հարցախույզները, առցանց հարցումները կամ հարցաթերթիկները՝ շահագրգիռ կողմերի հետաքրքրությունների և առաջարկությունների վերաբերյալ տեղեկություն հավաքագրելու նպատակով, ինչպես նաև բաց ժողովները կամ հանձնաժողովի նիստերը՝ որոշումների կայացման գործընթացում բանավեճ ապահովելու համար:

Իշխանությունները պետք է մասնակցությունը դիտարկեն որպես իրավական նախագծերի և քաղաքականության նախնական մշակման գործընթացի բաղադրիչ: Եթե նախագիծը չի անցել հանրային խորհրդակցությունների գործընթացով, ապա որոշում կայացնողները պետք է վերադարձնեն այն համապատասխան պետական մարմնին՝ հանրային քննարկում կազմակերպելու համար, կամ փորձեն քննարկում կազմակերպել մինչ նախագիծն ընդունելը: Օրինակ, պետությունը կարող է մոնիտորինգի և հաշվետվողականության համակարգ ստեղծել, որը կհետևի հանրային մասնակցության՝ պարտադիր կատարման ենթակա չափորոշիչների կատարմանը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Պետական մարմինը հաղորդակցության միայն մեկ ուղի է օգտագործում հանրային քննարկման մասին տեղեկատվությունը տարածելու համար, օրինակ՝ առցանց կայք կամ էլեկտրոնային նամակ, որոնք մատչելի չեն հանրության լայն խմբերի համար:

- Պետական մարմինը հանդիպում է կազմակերպում՝ զարգացման ռազմավարությունը քննարկելու համար, սակայն հանդիպման մասնակցությունը միայն հրավերով է: Սակավաթիվ ՔՀԿ-ներ են մասնակցում, իսկ առցանց որևէ տեղեկություն չի հրապարակվում:
- Պետական մարմինները ձևական բնույթի խորհրդակցություն են կազմակերպում ՔՀԿ-ների հետ և որոշում կայացնելիս հաշվի չեն առնում նրանց կարծիքներն ու առաջարկությունները:
- Դեպքեր են արձանագրվել, երբ իրավական ակտերի նախագծերն ընդունվել են առանց պատշաճ հանրային քննարկման:

2. **<u>Որոշումների կայացման գործընթացներում մասնակցություն ցուցաբերած ՔՀԿ-ները հետագայում ճնշումների չեն ենթարկվում</u>**

Շատ դեպքերում օրենքները կամայականորեն են մեկնաբանվում և կիրարկվում՝ անտեսելով մասնակցության իրավունքը, իսկ ընդդիմադիր կարծիքներ հնչեցնող անձանց ճնշելու նպատակով ահաբեկման և հալածանքի միջոցներ են գործադրվում: Ըստ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի զեկույցի (23 հուլիսի 2015 թ.)՝ «շատ երկրներում մարդու իրավունքների ջատագովության և պաշտպանության հարցերով զբաղվող անձինք և կազմակերպությունները սպառնալիքների, հետապնդումների և անպաշտպան իրավիճակների են բախվում, այդ թվում՝ քաղաքական և հասարակական հարցերին մասնակցելու իրավունքը ջատագովելիս» (պարբ. 16): ՔՀԿ-ները պետք է զերծ լինեն նման սպառնալիքներից և կարողանան ազատորեն մասնակցել որոշումների կայացման գործընթացներին տեղական, ազգային և միջազգային մակարդակով, ինչպես նաև ջատագովություն իրականացնել՝ ի նպաստ իրենց շահառուների: Նրանք չպետք է պատասխանատվության ենթարկվեն կամ ճնշումների հանդիպեն պետության կողմից՝ իրենց մասնակցության պատճառով: Որևէ ՔՀԿ-ի իրավունքները չեն կարող սահմանափակվել որոշումների կայացման գործընթացներում մասնակցելու հետևանքով:

Միևնույն ժամանակ, կարող են կիրառվել օբյեկտիվորեն հիմնավորված սահմանափակումներ՝ այն դեպքերում, երբ իրապես առկա է շահերի բախում: Օրինակ, եթե ՔՀԿ-ն պետական դրամաշնորհների մրցույթի ընտրական հանձնաժողովի անդամ է, նա չպետք է դիմի այդ դրամաշնորհների ստացման համար: Սակայն նման սահմանափակումները պետք է գրավոր և հստակ պարզաբանված լինեն:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ին պետական ֆինանսավորում չի տրամադրվում, քանի որ այն քննադատական կարծիք է արտահայտել որևէ օրենքի վերաբերյալ:
- ՔՀԿ աշխատակիցները ենթարկվում են հետապնդումների՝ որևէ օրինագծի շուրջ իրենց արտահայտած կարծիքների պատճառով:
- ՔՀԿ-ների ներկայացուցիչների նկատմամբ հսկողություն են իրականացնում են և/կամ հավաքագրում նրանց անհատական տվյալները՝ որոշումների կայացման գործընթացներին մասնակցելիս քննադատական դիրքորոշում հայտնելու արդյունքում:

3. **Ցանկացած ՔՀԿ կարող է մասնակցել քննարկումներին՝ առանց խտրականության, անկախ ՔՀԿ տեսակից կամ կառավարության հանդեպ դիրքորոշումներից**

ՔՀԿ-ները պետք է կարողանան արդյունավետորեն մասնակցել և կարծիք ներկայացնել պետական քաղաքականության մշակման և որոշումների կայացման բոլոր պետական և արտապետական գործընթացներում: ՔՀԿ-ները չպետք է խտրականության ենթարկվեն, մասնավորապես իրենց

ֆինանսավորման աղբյուրների, գործունեության նպատակների կամ ոլորտների (անկախ նրանից, թե ներգրավված են արդյոք մարդու իրավունքների թե փոքրամասնությունների կամ անապահով, խոցելի ու մարգինալ անձանց/խմբերի իրավունքների ջատագովության կամ պաշտպանության և խթանման գործընթացներում), իրավական կարգավիճակի (չգրանցված կամ գրանցված) պատճառով, կամ ելնելով իրենց կամ իրենց հիմնադիրների կողմից կառավարության և/կամ նախագծերի քաղաքականության, օրենսդրության, կամ այլ հանրային որոշումների առնչությամբ ունեցած քննադատական դիրքորոշումներից:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Հանրային քաղաքականության և որոշումների քննարկման գործընթացում պետական մարմինները ներգրավում են միայն պետության կողմից ֆինանսավորվող ՔՀԿ-ներին:
- Սոցիալական ծառայություններ տրամադրող ՔՀԿ-ները մասնակցում են համապատասխան օրենքների և քաղաքականության քննարկումներում, իսկ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները՝ ոչ:
- Միայն իշխանամետ ՔՀԿ-ներն են հրավիրվում հանրային քննարկումների:

Չափորոշիչ 2՝ Առկա են հստակ, հեշտ և թափանցիկ մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք նպաստում են ՔՀԿ-ների կանոնավոր, բաց և արդյունավետ մասնակցությանը պետական քաղաքականության մշակման, իրականացման և մոնիտորինգի գործում:

ՔՀԿ-ների մասնակցությունը հանրային քննարկումներին, այդ թվում քննադատական կարծիքների և հակասող հայացքների արտահայտումը, կարևոր գործոն են բազմակարծ ժողովրդավարական հասարակությունում: ՔՀԿ-ները պետք է հնարավորություն ունենան արդյունավետ կերպով մասնակցելու որոշումների կայացման գործընթացի բոլոր, այդ թվում պլանավորման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման փուլերում: Այդպիսի մասնակցությունը հիմնված է ներգրավվածության պարզ և հստակ ընթացակարգերի վրա՝ բոլոր նախագծային փաստաթղթերի անվճար առկայությունը և հասանելիությունը, ներգրավումը վաղ փուլերում ապահովելով պատրաստվելու համար բավարար ժամանակ, և թափանցիկ արձագանքները ստացված առաջարկների վերաբերյալ: Ավելին, ՔՀԿ-ները պետք է ներգրավված լինեն որոշումների կայացման գործընթացներում խորհրդակցական մարմինների միջոցով, ինչը նպաստում է պետության և քաղաքացիական հասարակության միջև փոխադարձ վստահության և համագործակցության զարգացմանը: Այդ մարմինները պետք է գործեն սահմանված և հստակ չափորոշիչների հիման վրա և ունենան անդամների ընտրության թափանցիկ մեխանիզմներ:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Հանրային քննարկումների ընթացակարգերը, եղանակները պարզ են և հստակ սահմանված են օրենքով: 2. Օրենքը նախատեսում է խորհրդակցական մարմինների ստեղծում՝ այդ մարմինների անդամների ընտրության և դրանցում որոշումների կայացման հստակ չափանիշներով և թափանցիկ մեխանիզմներով: 3. Օրենքը հնարավորություն է տալիս քաղաքականության իրականացման, մոնիտորինգի և գնահատման գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության համար:

1. **Հանրային քննարկումների ընթացակարգերը, եղանակները պարզ են և հստակ սահմանված են օրենքով**

Օրենքը սահմանում է հանրային քննարկումների կազմակերպման եղանակները, այդ թվում՝ առցանց և անցանց խորհրդակցությունների մեխանիզմներ և հաղորդակցության առանձին ձևեր, որոնց միջոցով քաղաքացիները կարող են ներկայացնել իրենց առաջարկները: Օրենքը սահմանում է նաև խորհրդակցությունների վերաբերյալ տեղեկության հրապարակման այն ժամանակացույցը, որը կապահովի ՔՀԿ-ների ներգրավվածությունը հնարավորինս վաղ փուլերում՝ բավարար ժամանակ տրամադրելով քաղաքականության և իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկություններ պատրաստելու, քննարկելու և ներկայացնելու համար: Հանրային խորհրդակցություններին մասնակցելու համար չպետք է պահանջվեն անտեղի փաստաթղթեր, օրինակ՝ լիցենզիաներ կամ տեղեկատվություն կազմակերպության վերաբերյալ, կամ դիմումների ներկայացման բարդ ընթացակարգեր: Կառավարությունը պետք է համապատասխան միջոցառումներ ձեռնարկի ՔՀԿ-ների մասնակցությունը հեշտացնելու և մասնակցային գործընթացն անհարկի չծանրաբեռնելու համար:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենքը հանրային խորհրդակցությունների հստակ կարգավորում չի նախատեսում՝ հանրային խորհրդատվության կազմակերպումը և ընթացակարգերը թողնելով պետական մարմինների հայեցողությանը:
- Կարծիքների հավաքագրման կամ հանրային քննարկման վերաբերյալ ՔՀԿ-ներին ուղարկված ծանուցումը չափազանց կարճ ժամանակ է նախատեսում:
- Խորհրդակցությանը մասնակցելու ընթացակարգերը անհարկի փաստաթղթային պահանջներ են պարունակում ՔՀԿ-ների համար, օրինակ, հավաստագրման կամ հիմնադիրների վերաբերյալ տեղեկատվության պահանջներ:

2. **<u>Օրենքը նախատեսում է խորհրդակցական մարմինների ստեղծում՝ այդ մարմինների անդամների ընտրության և դրանցում որոշումների կայացման հստակ չափանիշներով և թափանցիկ մեխանիզմներով</u>**

Օրենքը պետք է պետական մարմիններից պահանջի ստեղծել խորհրդակցական մարմիններ, օրինակ՝ հանրային խորհուրդներ, աշխատանքային խմբեր, կամ այլ մարմիններ՝ ՔՀԿ-ների մասնակցությամբ: Նման խորհրդակցական մարմիններ կարող են ստեղծվել նախարարությունների և կառավարության, ինչպես նաև այլ պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքապետարանների) կազմում և կարգավորվեն օրենքով կամ ենթաօրենսդրական ակտերով: Այդ խորհրդակցական մարմիններում մասնակցության մեխանիզմները պետք է թափանցիկ լինեն, այսինքն՝ հրապարակվեն համապատասխան մարմնի կողմից, և ՔՀԿ-ների ներգրավման հստակ չափանիշներ պետք է նախատեսվեն՝ հիմնված օբյեկտիվ և ողջամիտ չափանիշների վրա: Այդ մարմիններում որոշումների կայացման գործընթացը ևս պետք է թափանցիկ լինի, օրինակ՝ հանդիպումների արձանագրությունները և որոշումները, ինչպես նաև հանդիպումներին մասնակցած ՔՀԿ-ների ցուցակը տեղադրված լինեն առցանց:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Պետական մարմինները ստեղծել են խորհրդակցական մարմիններ, սակայն այդ մարմինների կազմի և գործունեության վերաբերյալ իրավակարգավորումներ չկան:
- Խորհրդակցական մարմինը ներառում է տվյալ մարմինը հիմնող գերատեսչության կողմից նախապես ընտրված կազմակերպությունների:
- Խորհրդակցական մարմինների գործունեության թափանցիկության պահանջ չկա:

3. **<u>Օրենքը հնարավորություն է տալիս քաղաքականության իրականացման, մոնիտորինգի և գնահատման գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության համար</u>**

Օրենքը պետք է հնարավորություն ընձեռի ՔՀԿ-ներին՝ մասնակցելու պետական տարբեր մարմինների կողմից ընդունված քաղաքականությունների իրականացման, մոնիտորինգի և գնահատման գործընթացներին: ՔՀԿ-ները պետք է հնարավորություն ունենան մասնակցություն ունենալ իրականացման փուլում, օրինակ՝ ծառայության մատուցման և ծրագրի կատարման գործընթացում: ՔՀԿ-ները պետք է կարևոր դեր ունենան նաև քաղաքականության մշտադիտարկման և գնահատման գործընթացներում՝ որպես այդ քաղաքականության ազդակիր խմբերի ներկայացուցիչներ: Այդ փուլերում ՔՀԿ ներգրավվածության արդյունավետ և թափանցիկ համակարգը անաչառ մոտեցում և արդյունքների արժանահավատություն կապահովի: Իտալիայում Մոնիթոն հարթակը խթանում է ակտիվ ներգրավվածությունը ներդաշնակ քաղաքականության մշտադիտարկման գործում, առաջարկում է հնարավորությունների լայն տեսականի, ինչպիսիք են ընտրված նախագծի նախապատմության ուսումնասիրումը և առաջընթացի դիտարկումը, առկա տվյալների հիման վրա հաշվետվությունների մշակումը և որևէ տարածքում ԵՄ միջոցների ծախսը մշտադիտարկելու նպատակով խմբերի կազմակերպումը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենքը որևէ դրույթ չի պարունակում քաղաքականության իրականացման և մոնիտորինգի գործառույթներում ՔՀԿ-ների ներգրավման վերաբերյալ:
- Քաղաքականության մոնիտորինգի գործընթացում ՔՀԿ-ների ընտրության ընթացակարգեր սահմանված չեն:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Օրինագծերի և ժամանակացույցի մասին տեղեկությունները հասանելի են և անվճար, նախընտրելի է՝ մեկ միասնական առցանց հարթակում, որը հեշտ է օգտագործել: 2. Քննարկման ձևաչափը արդյունավետ մասնակցություն է երաշխավորում, ՔՀԿ-ները հրավիրվում են մասնակցելու որոշումների կայացման գործընթացին սկսած սկզբնական փուլից, մասնակցության համար բավարար ժամանակ է հատկացվում: 3. Խորհրդակցական մարմինների առկայությունը չի սահմանափակում մյուս ՔՀԿ-ների տվյալ թեմայով հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորությունը: 4. Պետական մարմինները հրապարակում են ՔՀԿ-ների առաջարկները և հետադարձ կապ տրամադրում:

1. **<u>Օրինագծերի և ժամանակացույցի մասին տեղեկությունները հասանելի են և անվճար, նախընտրելի է՝ մեկ միասնական առցանց հարթակում, որը հեշտ է օգտագործել</u>**

Օրենսդրական նախագծերի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հրապարակվի և հասանելի լինի մատչելի ձևաչափով՝ օրենքով պահանջվող ժամկետներում: Հրապարակվող տեղեկատվությունը պետք է ներառի հիմնավորող փաստաթղթերը և խորհրդակցության համար նախատեսված ժամանակացույցը: Բոլոր օրինագծերի վերաբերյալ տեղեկատվությունը կարող է համախմբվել ՏՀՏ գործիքների միջոցով, օրինակ՝ օգտագործման համար մատչելի մեկ միասնական հարթակում: Այդ հարթակը չպետք է բաժանորդագրություն կամ վճարներ նախատեսի: Օրինակ, Հայաստանում կա հատուկ հարթակ՝ www.e-draft.am, որտեղ տեղադրվում են իրավական ակտերի նախագծերը և դրանք հիմնավորող փաստաթղթերը: Հարթակը թույլ է տալիս օգտվողներին նախագծեր որոնել ու գրավոր կարծիք հայտնել դրանց մասին, ինչպես նաև տրամադրում է առաջարկությունների և դրանց պատասխանների ամփոփագիր: Փոքր համայնքներում տեղական իշխանությունների կողմից պետք է միջոցներ ձեռնարկվեն, որպեսզի քաղաքականությունների նախագծերը հասանելի լինեն բոլորի համար, այդ թվում՝ ոչ առցանց ձևաչափերով, օրինակ՝ օգտագործելով հայտարարությունների ցուցատախտակներ կամ համայնքային հանդիպումներ:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենքների նախագծերի վերաբերյալ տեղեկատվությունը զետեղվում է հատուկ հարթակում, որը պահանջում է բաժանորդագրություն և վճարովի է:

2. **<u>Քննարկման ձևաչափը արդյունավետ մասնակցություն է երաշխավորում, ՔՀԿ-ները հրավիրվում են մասնակցելու որոշումների կայացման գործընթացին սկսած սկզբնական փուլից, մասնակցության համար բավարար ժամանակ է հատկացվում</u>**

Հանրային խորհրդակցությունների վերաբերյալ պետք է նախօրոք ծանուցում տրվի, ինչպես պահանջվում է օրենքով, որպեսզի ՔՀԿ-ները հնարավորություն ունենան նախապատրաստվելու խորհրդակցությանը և կարողանան իմաստալից մասնակցություն ապահովել: Խորհրդակցությունների տարբեր մեխանիզմներ պետք է կիրառվեն ՔՀԿ-ների լայն շրջանակի արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով: Օրինագծերը և քաղաքականությունները պետք է քննարկման դրվեն վաղ փուլերում, որպեզի հնարավորություն լինի դրանք վերանայել՝ նախքան նախագծի մշակման հաջորդ փուլը: ՔՀԿ-ները պետք է մասնակցեն նաև նախագծերի հետագա տարբերակների քննարկմանը: Օրինագծերի և քաղաքականությունների վերանայված տարբերակները պետք է անմիջապես հրապարակվեն:

Պետական մարմինները չպետք է օրենսդրության, որոշումների կամ այլ իրավական ակտերի ընդունման անհետաձգելի կամ արագացված ընթացակարգերը կիրառեն հանրային քննարկման պահանջը շրջանցելու նպատակով: Այս ընթացակարգերի կիրառումը պետք է հազվադեպ լինի: Յուրաքանչյուր այդպիսի դեպքում այդ ընթացակարգերի կիրառման անհրաժեշտության և համարժեքության դիտարկման մեխանիզմ պետք է լինի:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրինագծերի տեղադրման և մեկնաբանությունների ներկայացման վերջնաժամկետի միջև ընկած ժամանակահատվածը մեկ շաբաթից պակաս է:
- ՔՀԿ-ներին հանրային քննարկումների վերաբերյալ ծանուցումը վերջին պահին է ուղարկվում, կամ քննարկվող քաղաքականության/օրենքի նախագծերը նախապես չեն տրամադրվում:
- Օրինագծերը և քաղաքականությունները քննարկվում են խորհրդակցության վաղ փուլերում և նշանակալի վերանայումներ են կատարվում, սակայն նախագիծը լրամշակելուց հետո այն չի հրապարակվում և/կամ չի դրվում քննարկման:
- ՔՀԿ-ները հրավիրվում են կարծիք հայտնելու այն ժամանակ, երբ բոլոր առանցքային հարցերն արդեն որոշված են, իսկ վերանայումը դժվար է կամ անհնար:
- Կան բազմաթիվ դեպքեր, երբ իրավական ակտերի նախագծերի ընդունման արագացված ընթացակարգեր են կիրառվում առանց հանրային խորհրդակցության կազմակերպման:

3. **<u>Խորհրդակցական մարմինների առկայությունը չի սահմանափակում մյուս ՔՀԿ-ների տվյալ թեմայով հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորությունը</u>**

Հանրային խորհրդակցությունների կազմակերպիչները հանրային որոշումների կայացման գործընթացում պետք է լինեն անկողմնակալ և բաց բոլոր շահագրգիռ ՔՀԿ-ների, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության փոքր խմբերի և համայնքային խմբերի հանդեպ: Փոքր խմբերը պետք է կարողանան մասնակցել գործընթացին՝ անգամ եթե չեն ներգրավվել կանոնավոր քննարկումներին, կամ ընդգրկվել հանրային մասնակցության գերատեսչական մարմիններում, օրինակ, խորհրդակցական մարմիններում (հասարակական խորհուրդներում) կամ կառավարման նշանակված մարմիններում/աշխատանքային խմբերում: Խորհրդակցական մարմիններին

չանդամակցող խմբերը պետք է հնարավորություն ունենան մասնակցելու խորհրդակցական մարմինների հանդիպումներին և արտահայտել իրենց կարծիքը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Որևէ պետական գերատեսչության օրինագծերը և քաղաքականությունները քննարկվում են միայն համապատասխան գերատեսչության խորհրդակցական մարմնի հանդիպումներին:

4. <u>Պետական մարմինները հրապարակում են ՔՀԿ-ների առաջարկները և հետադարձ կապ տրամադրում</u>

Հավաքագրված առաջարկների վերաբերյալ հետադարձ կապի ապահովումը վստահության բարելավման և համագործակցության ամրապնդման կարևորագույն տարր է: Քաղաքացիական հասարակության ներկայացրած բոլոր մեկնաբանությունները պետք է հավասարապես դիտարկվեն և հրապարակվեն՝ անկախ նրանից, թե արդյոք դրանք կողմ են, թե դեմ քննարկվող առաջարկներին: Յուրաքանչյուր առաջարկության վերաբերյալ պետք է արձագանք հրապարակի՝ նշելով, թե որ առաջարկներն են ընդգրկվել վերջնական փաստաթղթում և որոնք չեն ընդգրկվել ու ինչու: Հետադարձ կապը կարող է ներկայացվել նաև ամփոփաթերթի տեսքով, որտեղ կներառվեն բոլոր արձագանքները և ձեռնարկված գործողությունները:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Ստացված մեկնաբանությունների ամփոփագիրը տրամադրվում է առանց դրանց ներառման կամ մերժման մասին տեղեկությունների կամ առանց մերժման պատճառների որևէ բացատրության:

Չափորոշիչ 3՝ ՔՀԿ-ներին հասանելի է արդյունավետ մասնակցության համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

Որոշումների կայացման գործընթացում արդյունավետ մասնակցությունը հնարավոր է միայն այն դեպքում, եթե ՔՀԿ-ներին հասանելի է ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը: Օրենքը պետք է սահմանի որոշումների կայացման գործընթացներում անհրաժեշտ բոլոր տեղեկությունների հրապարակման պայմանները և ժամկետները: Պետական մարմինները պետք է պարզ և հստակ ընթացակարգերի միջոցով ապահովեն տեղեկատվության հասանելիությունը: Պետությունները պետք է օրենսդրական կարգավորումներ ընդունեն, որտեղ պահանջ կսահմանվի պետական գերատեսչությունների օրենսդրական օրակարգը ժամանակին հրապարակելու վերաբերյալ:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Օրենսդրությունը ներառում է պետական մարմինների կողմից որոշումների ընդունման գործընթացին վերաբերող ողջ տեղեկատվության հրապարակման եղանակներն ու ժամկետները: 2. Օրենքը սահմանում է տեղեկատվության մատչելիության պարզ և հստակ ընթացակարգ:

1. <u>Օրենսդրությունը ներառում է պետական մարմինների կողմից որոշումների ընդունման գործընթացին վերաբերող ողջ տեղեկատվության հրապարակման եղանակներն ու ժամկետները</u>

Որոշումների կայացման գործընթացին մասնակցելու իրավունքը սերտորեն կապված է թափանցիկության և համապատասխան տեղեկատվության լիարժեք հասանելիության հետ:

Այսպիսով, որոշումներին առնչվող տեղեկատվությունը պետք է լինի մատչելի, բացառությամբ հստակ սահմանված դեպքերի, որոնք ամրագրված են օրենքով: Ավելին, նման սահմանափակումները պետք է համապատասխանեն Եվրոպայի խորհրդի կոնվենցիաներին և այլ միջազգային պարտավորություններին:

Տեղեկատվությունը պետք է տրամադրվի անվճար կամ ողջամիտ գնով (օրինակ՝ տպագիր նյութերի արժեքով) և օրենքով հստակ սահմանված ժամկետներում, առցանց կամ տպագիր ԶԼՄ-ների միջոցով: Տեղեկատվությունը պետք է տրամադրվի հստակ և հասկանալի ձևով, համապատասխանի ներկայացված հարցումների էությանը, և հասանելի լինի պահանջող կողմին: Բացի այդ, ստացողը պետք է հնարավորություն ունենա այդ տեղեկատվությունն օգտագործել իր հայեցողությամբ, օրինակ՝ տպել այն կամ զետեղել իր կայքում:

Տեղեկատվության մատչելիությունը հեշտացնելու նպատակով օրենսդրությունը պետք է պարտավորեցնի պետական մարմիններին՝ հրապարակել իրենց օրենսդրական օրակարգը, ներառյալ բոլոր այն օրենքները և քաղաքականությունները, որոնք նախատեսվում է ընդունել կամ փոփոխել, քանի որ ՔՀԿ-ներն իրենց առաջարկները և/կամ մեկնաբանություններ մշակելու համար պետք է ծանոթ լինեն օրենքների կամ քաղաքականության հետ:

Պետական մարմինները պետք է տրամադրեն թարմ և ամբողջական տեղեկատվություն որոշումների կայացման գործընթացի և մասնակցության ընթացակարգերի վերաբերյալ: Օրինակ, ըստ Ուկրաինայի «Հանրային տեղեկատվության մասին» օրենքի, տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է առանց հապաղելու հրապարակել որոշումների քննարկվելիք նախագծերը, ինչպես նաև իրենց բաց նիստերի օրակարգը՝ ոչ ուշ, քան փաստաթղթի հնարավոր հաստատման ամսաթվից հինգ աշխատանքային օր առաջ: Տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ ակտերի և որոշումների նախագծերը պետք է հրապարակվեն դրանց ընդունման նպատակով տեղի ունենալիք քննարկման օրվանից ոչ պակաս, քան 20 աշխատանքային օր առաջ:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Կառավարության որոշումների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման իրավական պահանջ չկա:
- Օրենքում չկա որոշումների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման ժամկետը սահմանող դրույթ:
- Օրենքով չի նախատեսված կառավարության օրենսդրական օրակարգի հրապարակում:

2. <u>Օրենքը սահմանում է տեղեկատվության մատչելիության պարզ և հստակ ընթացակարգ</u>

Հանրային տեղեկատվության մատչելիությունը պետք է կարգավորվի օրենսդրական մակարդակով: Այս օրենսդրությունը պետք է սահմանի, թե ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ տեղեկատվության հարցում ներկայացնելու համար, տեղեկատվություն տրամադրման ժամկետները, մերժման ողջամիտ պատճառները, որոնք պետք է լինեն պարզ, հասկանալի և պարունակեն մերժման հիմքերի սպառիչ ցանկ: ՔՀԿ-ները պարտավոր չեն նշել հանրային տեղեկատվություն պահանջելու պատճառը: Հարցման հետ կապված փաստաթղթային վարչարարությունը չպետք է ավելին լինի, քան անհրաժեշտ է դրան ընթացք տալու համար:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Տեղեկատվության մատչելիությունը չի կարգավորվում օրենքով:
- Տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ է բազմաթիվ փաստաթղթեր տրամադրել:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Օրինագծերը և քաղաքականության նախագծերը հրապարակվում են և հասանելի են, իսկ ՔՀԿ-ները պատշաճ կերպով տեղեկացվում են նախագծերի վերաբերյալ հանրային լսումների ու քննարկումների մասին: 2. Պետական մարմինները տեղեկատվության հարցումների պատասխանները տրամադրում են ժամանակին և անվճար հիմքերով:

1. **<u>Օրինագծերը և քաղաքականության նախագծերը հրապարակվում են և հասանելի են, իսկ ՔՀԿ-ները պատշաճ կերպով տեղեկացվում են նախագծերի վերաբերյալ հանրային լսումների ու քննարկումների մասին</u>**

Պետական մարմինները պետք է սահմանված ընթացակարգերի համաձայն օրենքների նախագծերը և քաղաքականությունները մատչելի դարձնեն հանրային քննարկման համար: Փաստաթղթերի հասանելիությունը պետք է ապահովվի ժամանակին՝ առանց ավելորդ վարչական խոչընդոտների, բաց տվյալների սկզբունքներին համահունչ եղանակով և անվճար: Տեղեկատվության մատչելիությունը նշանակում է նաև, որ ՔՀԿ-ները պետք է կարողանան օրինագծերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալ առանց լրացուցիչ հաստատումների՝ լինի դա առցանց կամ անցանց: Ժամանակին հրապարակելը նշանակում է, որ ՔՀԿ-ները պետք է բավարար ժամանակ ունենան հանրային լսումներին կամ քննարկումներին պատրաստվելու. այսինքն՝ նախագծերին ծանոթանալու և իրենց առաջարկները ձևակերպելու համար: Փաստաթղթերը կարող են տրամադրվել առցանց կամ այլ եղանակներով:

Եթե օրենսդրական ակտերի նախագծերի հասանելիությունը սահմանափակվում է, ապա դա պետք է արվի իրավական պահանջներին համապատասխան ձևով: Ավելին, նման դեպքերը կարող են տեղի ունենալ միայն խիստ սահմանափակ նպատակներով, մասնավորապես՝ ազգային անվտանգության, միջազգային հարաբերությունների պաշտպանության, հասարակական անվտանգության, ինչպես նաև քրեական հանցանքների կանխարգելման, հետաքննության կամ հետապնդման նպատակներով:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Դեպքեր կան, երբ օրենքի նախագիծը կամ քաղաքականությունը չի ներկայացվել հանրային քննարկման:
- Հանրային քննարկմանը ներկայացված օրենքի կամ քաղաքականության նախագիծը ուշացումով է հրապարակվել:
- Պետական մարմինները հանրային լսումների կամ քննարկումների մասին հայտարարություն չեն անում:
- Պետությունը մերժում է օրենսդրական նախագծի վերաբերյալ տեղեկության տրամադրման ՔՀԿ-ի պահանջը՝ առանց նշելու մերժման պատճառները:
- Պետական մարմինները հայտարարում են հանրային լսումներ կամ քննարկում կազմակերպելու մասին՝ առանց բավարար ժամանակ տալու դրանց նախապատրաստվելու համար:

2. **<u>Պետական մարմինները տեղեկատվության հարցումների պատասխանները տրամադրում են ժամանակին և անվճար հիմքերով</u>**

Պետական մարմինները պետք է հստակ ժամկետներում արձագանքեն հանրային տեղեկատվության տրամադրման պատշաճ ներկայացված հարցումներին: Ավելին, պետական կառույցները պետք է իրենց պատասխանը տրամադրեն անվճար՝ բացառությամբ նյութերի

տպագրության և/կամ պատճենահանման հետ կապված նախապես սահմանված և ողջամիտ ծախսերի: Դիմողից պետք է նվազագույն տեղեկություններ պահանջվեն, որն անհրաժեշտ է պետությանը՝ դիմողին նույնականացնելու և հարցմանը արձագանքելու նպատակով:

Պետական մարմինները պետք է ապահովեն հարցումների ժամանակին և լիարժեք պատասխանը, և տեղեկատվության տրամադրման ցանկացած մերժում պետք է հստակ հիմնավորված լինի համապատասխան իրավական հիմքերով, ինչպիսիք են գաղտնիության, ազգային անվտանգության և այլ նկատառումները: Տեղեկատվությունը չտրամադրելու դեպքում պետք է հստակ ներկայացվեն համապատասխան օրենքների հղումները:

Ընդ որում, ՔՀԿ-ները պետք է կարողանան բողոք ներկայացնել տեղեկատվության մատչելիության սահմանափակման կամ ծանրաբեռնող բնույթի վերաբերյալ, իսկ պետությունը պետք է արձագանքի նման բողոքներին և շտկիչ գործողություններ ձեռնարկի:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Պետական մարմինները չեն պատասխանում հարցմանը:
- Պետական մարմինները խախտում են հարցմանն արձագանքելու ժամկետը:
- Պետական մարմիններն արձագանում են հարցմանը՝ առանց պատասխանելու բարձրացված հարցին:

Չափորոշիչ 4՝ Մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին տարբերվում է քաղաքական և լոբիստական գործունեությունից:

Վերջին տարիներին քաղաքական գործունեության և լոբբինգի հետ կապված թափանցիկության պահանջների խստացման ձգտումն ազդեցություն է ունեցել հանրային բանավեճերում ՔՀԿ-ների ներգրավման և որոշումների կայացման գործընթացում մասնակցության հնարավորության վրա: ՔՀԿ-ների գործունեությունն ավելի հաճախ է բնութագրվում որպես քաղաքական գործունեություն, ինչը մի շարք կազմակերպությունների համար ավելորդ վարչարարական բեռ է ստեղծում և տեղիք է տալիս հետապնդումների: Ինչպես միավորումների ազատության, արտահայտման և մասնակցության իրավունքների ցանկացած այլ սահմանափակման դեպքում, այս դեպքում ևս սահմանափակումները պետք է հիմնված լինեն իրավաչափ նպատակների և համաչափության սկզբունքի վրա: Հետևաբար, քաղաքական գործունեությունը պետք է հստակ և նեղ շրջանակներով սահմանվի, որպեզի չսահմանափակվի ՔՀԿ-ների մասնակցությունը հանրային և շահերի պաշտպանության գործունեությանը: Նմանապես, լոբբինգին առնչվող կարգավորումները չպետք է սահմանափակեն ՔՀԿ-ների կողմից իրականացվող շահերի պաշտպանության գործունեությունը:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Քաղաքական գործունեությանը ՔՀԿ-ների մասնակցության վերաբերյալ սահմանափակումները հստակ են ու նեղ շրջանակներով սահմանափակված և չեն խոչընդոտում պետական քաղաքականության գործընթացում ՔՀԿ-ների մասնակցությանը: 2. Լոբբիստական գործունեության կանոնակարգումը չի սահմանափակում ՔՀԿ-ների՝ պետական քաղաքականության գործընթացներում մասնակցության և շահերի պաշտպանության գործունեությունը:

1. **Քաղաքական գործունեությանը ՔՀԿ-ների մասնակցության վերաբերյալ սահմանափակումները հստակ են ու նեղ շրջանակներով սահմանափակված և չեն**

խոչընդոտում պետական քաղաքականության գործընթացում ՔՀԿ-ների մասնակցությանը

Անհատների և խմբերի մասնակցությունը հանրային կյանքում և քաղաքականության մշակման գործընթացներում ժողովրդավարության կարևոր տարր է:

ՔՀԿ-ների դերը շատ կարևոր է քաղաքականության մշակման գործընթացում, քանի որ նրանք հանդիսանում են իրենց անդամների և այլ շահագրգիռ կողմերի տեսակետների հավաքագրման և ուղղորդման միջոց: Նրանց մասնակցությունը լրացուցիչ արժեք է ստեղծում քաղաքական որոշումների կայացման գործընթացում և մեծ ներուժ ունի ընդունվող քաղաքականության որակի և համապատասխանության բարելավման տեսանկյունից:

Լայն իմաստով՝ քաղաքական գործունեությունը կարող է ընդգրկել ոչ միայն որոշակի պետական պաշտոնի համար առաջադրված թեկնածուների աջակցությունը կամ քաղաքական կուսակցությունների համար դրամահավաքը, այլ նաև մի շարք ՔՀԿ-ների գործունեությունը, օրինակ՝ որևէ օրենքին կողմ կամ դեմ քարոզչությունը, մասնակցությունը հանրային շահերի պաշտպանության գործում, հանրային հետաքրքրություն ներկայացնող դատավարության պահանջը կամ մասնակցությունը քաղաքականության վերաբերյալ բանավեճերին: ՔՀԿ-ների նման օրինական գործունեության սահմանափակումները կանխելու համար պետությունները պետք է իրենց համապատասխան օրենսդրության մեջ հստակ սահմանեն, թե ինչն է համարվում «մասնակցություն քաղաքական գործունեությանը»: Կարևոր է, որ քաղաքական գործունեության կանոնակարգումները չխախտեն ՔՀԿ-ների՝ մասնակցելու և իրենց կազմակերպության կամ շահագրգիռ կողմերի տեսակետները ներկայացնելու իրավունքը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Քաղաքական գործունեության սահմանումը չափազանց լայն է, իսկ քաղաքական գործունեությանը մասնակցելու ՔՀԿ-ների հնարավորությունը սահմանափակվում է:
- Արտերկրից ֆինանսավորում ստացող ՔՀԿ-ներին արգելվում է մասնակցել հանրային քաղաքականության հետ կապված գործունեությանը:
- Քաղաքական գործունեության կանոնակարգերը բավականին բարդ կամ սահմանափակող են, որի արդյունքում ՔՀԿ-ները նախընտրում են ինքնապարտադրված լռությունը:

2. Լոբբիստական գործունեության կանոնակարգումը չի սահմանափակում ՔՀԿ-ների՝ պետական քաղաքականության գործընթացներում մասնակցության և շահերի պաշտպանության գործունեությունը

Լոբբինգը օրենսդրության, քաղաքականության կամ վարչական որոշումների վրա ազդելու նպատակով բանավոր և գրավոր հաղորդակցությունն է պետական պաշտոնյաների հետ: Լոբբինգը շահերի պաշտպանությունից (որը սկզբունքորեն շահույթ չհետապնդող գործունեություն է) հստակ տարբերակելու նպատակով ազգային օրենսդրությամբ, ինչպես օրինակ Մակեդոնիայի 2008թ. լոբբինգի մասին օրենքով է, լոբբինգը կարող է սահմանվել է որպես գործունեություն, որը դրամական փոխհատուցման դիմաց իրականացվում է գրանցված լոբբիստների կամ նրանց աշխատակիցների կողմից, որոնք ստորագրել են լոբբիստական պայմանագիր (հոդված 2):

Կարևոր է, որ «լոբբինգի» սահմանումը և դրա հետ կապված այլ իրավական ակտերը չսահմանափակեն ՔՀԿ-ների իրավունքներն ու գործունեությունը, մասնավորապես շահերի պաշտպանության հետ կապված այնպիսի գործունեությունը, ինչպիսիք են հրապարակային ելույթները, հարցումների կամ հետազոտությունների վերլուծությունը և հրապարակումը, որոշում կայացնողների հետ տեղեկատվության փոխանակումը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Լոբբիստական գործունեության սահմանումը սահմանափակում է ՔՀԿ-ների՝ շահերի պաշտպանությամբ զբաղվելու հնարավորությունը:
- Հանրային քաղաքականության հետ կապված գործունեություն իրականացնելիս ՔՀԿ-ները պետք է գրանցվեն որպես լոբբիստներ:
- ՔՀԿ-ների չեն կարող մուտք գործել պետական մարմինների շենք, եթե գրանցված չեն որպես լոբբիստ:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. ՔՀԿ-ները հետապնդումների կամ ճնշումների չեն ենթարկվում քաղաքական կուսակցությունների շահերն արտահայտող կամ դրանց հակադրվող տեսակետների համար: 2. ՔՀԿ-ներն ազատ են զբաղվելու շահերի պաշտպանության գործունեությամբ, որի համար որպես լոբբիստ կամ պրոֆեսիոնալ փաստաբան գրանցվելու պահանջ կամ լրացուցիչ վարչական կամ ֆինանսական բեռ չի սահմանված:

1. **<u>ՔՀԿ-ները հետապնդումների կամ ճնշումների չեն ենթարկվում քաղաքական կուսակցությունների շահերն արտահայտող կամ դրանց հակադրվող տեսակետների համար</u>**

Մասնակցության իրավունքը չի կարող իրացվել, եթե ՔՀԿ-ներին լռեցնում կամ ահաբեկում են իրենց գործունեությունը դադարեցնելու նպատակով: Ահաբեկումը կարող է տարբեր ձևեր ընդունել՝ աշխատակիցներին ուղղված՝ ֆիզիկական հաշվեհարդարի սպառնալիքներ, ՔՀԿ-ների նկատմամբ ֆինանսական պատժամիջոցներ, ազատ խոսքի և շահերի պաշտպանության իրականացման խոչընդոտներ, հաղորդակցության և համագործակցության խոչընդոտներ և այլն: ՔՀԿ-ները պետք է զերծ լինեն նման սպառնալիքներից, և կարողանան ազատորեն մասնակցել որոշումների կայացման գործընթացներին, ինչպես նաև ջատագովել որևէ որոշում ի նպաստ իրենց շահառուների: Որևէ ՔՀԿ-ի իրավունքները չեն կարող սահմանափակվել որոշումների կայացման գործընթացներում իրենց մասնակցության հետևանքով:

Քաղաքական կուսակցությունները, հատկապես՝ իշխանությունում գտնվողները, պարտավոր են հարգել իրենց տեսակետը և համոզմունքն ազատորեն արտահայտելու ՔՀԿ-ների իրավունքը՝ անկախ իշխող կուսակցության տեսակետերից: Քաղաքական կուսակցությունները, քաղաքացիական ծառայողները և այլ անձինք չպետք է ճնշում գործադրեն ՔՀԿ-ների վրա՝ նրանց դրդելով սատարել կառավարության ընդհանուր քաղաքական գիծը: Այդպիսի ճնշումը կարող է ունենալ տարբեր դրսևորումներ, օրինակ՝ ՔՀԿ-ների ներքին կառավարման գործընթացներին միջամտությունը կամ պետական ֆինանսավորման հնարավորությունների պայմանավորումը ՔՀԿ-ների կողմից իշխող քաղաքական կուսակցությանը սատարելու հանգամանքով:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ները զրկվում են շահույթ չհետապնդող կազմակերպության կարգավիճակից՝ կառավարության քաղաքականության վերաբերյալ իրենց քննադատական գնահատականի պատճառով:
- ՔՀԿ աշխատակիցները ենթարկվում են հետապնդումների/մարմնական վնասվածքներ են ստանում կոնկրետ նախագծի վերաբերյալ իրենց կարծիքի պատճառով:

- ՔՀԿ աշխատակիցները ստանում են սպառնալից հեռախոսազանգեր, որոնք նպատակ ունեն դրդել նրանց աջակցելու իշխող քաղաքական կուսակցության շահերին:

2. **<u>ՔՀԿ-ներն ազատ են զբաղվելու շահերի պաշտպանության գործունեությամբ, որի համար որպես լոբբիստ կամ պրոֆեսիոնալ փաստաբան գրանցվելու պահանջ կամ լրացուցիչ վարչական կամ ֆինանսական բեռ չի սահմանված</u>**

Շահերի արդյունավետ պաշտպանությունը հնարավորություն է տալիս ՔՀԿ-ներին հանրային քննարկումներ ձևավորել կարևոր սոցիալական հարցերի շուրջ և նպաստել համայնքների շահերի պաշտպանությանը քաղաքականության այն ոլորտներում, որոնք ազդում են իրենց կյանքի վրա: ՔՀԿ-ները չպետք է պարտադրված լինեն ձեռք բերելու օրենսդրությամբ սահմանված որևէ հատուկ կարգավիճակ, օրինակ՝ լոբբիստի կարգավիճակ, որպեսզի զբաղվեն շահերի պաշտպանության գործունեությամբ, օրինակ՝ մասնակցեն հանրային լսումների և խորհրդակցությունների, քաղաքականության և օրենսդրության վերաբերյալ մեկնաբանություններ ներկայացնեն և այլն: Նմանապես, ՔՀԿ-ները չպետք է ստիպված լինեն հատուկ վճարներ կատարել կամ լրացուցիչ հաշվետվություններ տրամադրել, եթե զբաղվում են քաղաքականության ջատագովությամբ:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Պետական մարմինները տուգանք են կիրառում այն ՔՀԿ-ների նկատմամբ, որոնք զբաղվում են շահերի պաշտպանության գործունեությամբ առանց գրանցվելու որպես լոբբիստ:
- Շահերի պաշտպանության իրականացման ընթացքում ՔՀԿ-ները պետք է տրամադրեն լրացուցիչ տեղեկատվություն իրենց հիմնադիրների և անդամների վերաբերյալ:
- Շահերի պաշտպանության գործունեություն իրականացնող ՔՀԿ-ները ենթարկվում են ավելի հաճախակի ստուգումների, քան նախատեսված է ստուգումների ժամանակացույցով:

Համապատասխան ռեսուրսներ

- ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույց հավաքների ազատության վերաբերյալ, պարբ. 31, 183-195
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին, Միջազգային դաշնագիր, հոդ. 25
- Ընդհանուր մեկնաբանություն թիվ 25, Հանրային կյանքին մասնակցելու իրավունքը, ընտրության իրավունքը և հանրային ծառայություններից օգտվելու հավասար իրավունքը (հոդ. 25) պարբ. 7, 94: CCPR/C/21/Rev.1/Add.7, 12/07/96
- ԵԱՀԿ առաջարկություններ հանրային որոշումների կայացման գործընթացներում միավորումների մասնակցությունը ընդլայնելու վերաբերյալ, Վիեննա (15-16 ապրիլի 2015 թ.), թիվ 3, 6-7, 10-11, 16, 20-21, 25-26, 27
- ԵԱՀԿ, Պետության և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև վստահության ամրապնդման միջազգային փորձը, Գլուխ IV (դեկտեմբեր 2010 թ.)
- ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ, հանրային կյանքին մասնակցելու իրավունքի խթանումը, պաշտպանությունը և իրականացումը մարդու իրավունքների օրենսդրության ներկա համատեքստում. Լավագույն փորձ, փորձառություն, մարտահրավերներ և դրանք հաղթահարելու ուղիները: Միավորված ազգերի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի զեկույց, A/HRC/30/26 (23 հուլիսի 2015 թ.)
- Մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի գերագույն հանձնակատարի գրասենյակ, հանրային կյանքին մասնակցելու իրավունքի արդյունավետ իրականացման ուղեցույց պետությունների համար, նախագիծ, A/HRC/39/28 (սեպտեմբեր 2018 թ.), կետ 19, 21, 56-58, 64-77, 79, 82-94

- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, Խորհրդի Հանձնարարական լոբբիստական գործունեության թափանցիկությունը և ամբողջականության սկզբունքների վերաբերյալ. Հավելված (2018 թ.)
- Եվրոպայի խորհրդի ուղեցույցը քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության վերաբերյալ, CM(2017)83, վերջնական տարբերակ (27 սեպտեմբերի, 2017 թ.), պարբ. 4, 6, 8-12, 20-21, 23, 26-29:
- Եվրոպայի խորհրդի փորձագիտական խորհուրդը ՀԿ օրենսդրության մասին, հասարակակակն կազմակերպությունների ներկայացուցիչների քաղաքական գործունեության կարգավորումներ: OING Conf/Exp (3 դեկտեմբերի 2015 թ.)
- Եվրոպայի խորրդի Հանձնարարական թիվ (2002) 2 պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ (ընդունվել է փետրվարի 21, 2002թ.)
- Եվրոպայի խորհրդի հանձնարարական CM/Rec (2007)2 լոբբիստական գործունեության իրավական կարգավորումը հանրային որոշումների կայացման համատեքստում (22 մարտի 2017թ.)
- Եվրոպայի խորհրդի CM/Rec (2007) 14 հանձնարարական Եվրոպայում ՀԿ-ների իրավական կարգավիճակի վերաբերյալ, հոդ 76-77 (10 հոկտեմբերի 2007 թ.)
- Եվրոպայի խորհրդի Rec (2001) 19 հանձնարարական տեղական հասարակական կյանքում քաղաքացիների մասնակցության վերաբերյալ (6 դեկտեմբերի 2001 թ.)
- Եվրոպայի խորհուրդ, Որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցության վերաբերյալ առաջատար փորձի կանոնագիրք, CONF/PLE (2009), կանոնագիրք 1 (ընդունվել է ՄՀԿ խորհրդաժողովի կողմից 2009 թ. հոկտեմբերի 1-ին), Նախապատմության փաստաթուղթ, գլուխ III.ii և գլուխ IV.iii , 4-5
- Եվրոպայի խորհրդի Կոնվենցիա պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին (CETS թիվ 205)
- Եվրոպայի խորհուրդ և ECNL, Քաղաքացիական հասարակության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում. Ակնարկ Եվրախորհրդի չափորոշիչների և գործելակերպի մասին, գլուխ V, բաժին 1 և 2.2, գլուխ VI, բաժին 3 և երկրի օրինակ թիվ 13; գլուխ VII (մայիս 2016 թ.)
- Քաղաքացիական հասարակության պաշտպանություն, Ոչ առևտրային իրավունքի միջազգային կենտրոն, համաշխարհային շարժում ի աջակցություն ժողովրդավարության (սեպտեմբեր 2012 թ.)

ՈԼՈՐՏ 6՝ Խոսքի ազատություն

Չափորոշիչ 1՝ Յուրաքանչյուր ոք կարծիք արտահայտելու և խոսքի ազատության իրավունք ունի:

Կարծիքի և արտահայտվելու ազատությունը ժողովրդավարական հասարակության անկյունաքարն է, քանի որ ազատ մարդիկ կարողանում են բարձրաձայնել իրենց կարիքներն ու առաջնահերթությունները և պատասխանատվության ենթարկել որոշում կայացնողներին: Արտահայտվելու ազատությունը երաշխավորվում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով: Համոզմունքներ ունենալու և արտահայտվելու ազատությունը երաշխավորվում է ցանկացած անձի, առանց խտրականության: Այն ապահովում է ցանկացած հնարավոր ձևով տեղեկատվություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունք: Պետությունները կարող են սահմանափակել խոսքի ազատությունը, սակայն ցանկացած սահմանափակում պետք է հստակ սահմանված լինի օրենքով և պետք է խիստ անհրաժեշտ լինի օրինական նպատակների իրագործման համար: Ատելության խոսքը, այսինքն՝ ատելության ցանկացած քարոզչություն, որը ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում, պաշտպանված չէ խոսքի ազատությամբ և արգելվում է:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Խոսքի և կարծիքի ազատության իրավունքը երաշխավորվում է ցանկացած անձի համար՝ տեղացի թե օտարերկրացի, ինչպես նաև անձանց խմբերի, այդ թվում՝ՔՀԿ-ների համար, առանց խտրականության: 2. ՔՀԿ-ները և նրանց հետ առնչվող մարդիկ ազատ են փնտրել, ստանալ և փոխանցել ցանկացած տեսակի տեղեկատվություն և գաղափարներ՝ անկախ սահմաններից և միջոցներից: 3. Ատելության ցանկացած քարոզչություն, որը խտրականության, թշնամանքի կամ բռնության դրսևորում է պարունակում, արգելված է:

1. **<u>Խոսքի և կարծիքի ազատության իրավունքը երաշխավորվում է ցանկացած անձի համար՝ տեղացի թե օտարեկրացի, ինչպես նաև անձանց խմբերի, այդ թվում՝ՔՀԿ-ների համար, առանց խտրականության</u>**

Կարծիք ունենալու և արտահայտվելու իրավունքի հանդեպ հարգանքը և դրա պաշտպանությունը պետության պարտականությունն է, որը պետք է իրականացվի ազգային օրենսդրության միջոցով: Երկրի իրավական համակարգը յուրաքանչյուր անձի համար իր կարծիքն ունենալու և արտահայտվելու ազատության արդյունավետ երաշխիքներ պետք է ապահովի պետության ողջ տարածքում, անհատական կամ խմբային մակարդակում, ինչպես նաև ՔՀԿ-ների համար:

Կարծիքի ազատությունը ենթակա չէ որևէ սահմանափակման: Կարծիքի ազատությունը ներառում է նաև բացասական ազատությունը՝ չունենալ որևէ կարծիք և պարտավորված չլինել բացահայտելու սեփական կարծիքը ցանկացած թեմայի շուրջ: Պետք է պաշտպանված լինեն կարծիքի բոլոր ձևերը, այդ թվում՝ սոցիալական, քաղաքական, գիտական, պատմական, բարոյական կամ կրոնական բնույթի կարծիքները: Կարծիք ունենալը չի կարող քրեականացվել: Պետությունները չեն կարող բացառություններ կամ սահմանափակումներ սահմանել կարծիքի ազատության նկատմամբ: Որևէ անձ չի կարող ենթարկվել իր իրավունքների խախտման՝ իր փաստացի, ընկալվող

կամ ենթադրվող կարծիքի հիման վրա: Արգելվում է որևէ մեկին պարտադրել ունենալ կամ չունենալ որևէ կարծիք՝ անկախ այդ պարտադրանքի ձևից:

Խոսքի ազատությունը հատուկ պարտականություններ և պատասխանատվություն է ներառում և, հետևաբար, կարող է ենթակա լինել որոշակի պահանջների, պայմանների, սահմանափակումների կամ պատժամիջոցների: Ցանկացած նման սահմանափակման դեպքում պետք է պահպանվի երեք բաղադրիչի կուտակային քննության սկզբունքը.

1) Սահմանափակումը պետք է «նախատեսված լինի օրենքով», որը հստակ և հասանելի է բոլորի համար (իրավական որոշակիության, կանխատեսելիության և թափանցիկության սկզբունք):
2) Այն պետք է հետապնդի իրավաչափ նպատակ, այսինքն՝ պաշտպանի այլոց իրավունքները կամ համբավը, ազգային անվտանգությունը, հասարակական կարգը կամ հանրային առողջության կամ բարոյականության նորմերը (իրավաչափության սկզբունք): Սա սահմանափակումների սպառիչ ցանկ է և չի կարող ընդլայնվել:
3) Սահմանափակման անհրաժեշտությունը պետք է ապացուցվի և գործադրվեն նվազագույն սահմանափակող միջոցներ, որոնք անհրաժեշտ են սահմանված իրավաչափ նպատակի իրագործման համար (անհրաժեշտության և համաչափության սկզբունք):

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ներին կամ նրանց հետ կապված անձանց արգելվում է կասկածի տակ դնել կամ ժխտել կառավարության կողմից պաշտոնապես ընդունված գիտական կամ պատմական փաստերը:
- Խոսքի ազատության սահմանափակումը հիմնված է ավանդական կանոնների, կրոնի կամ սովորութային իրավունքի, այլ ոչ թե գրավոր նորմերի վրա:
- Խոսքի որոշ դրսևորումները սահմանափակող իրավական նորմը հստակ չի ձևակերպված, այնպես, որ յուրաքանչյուր ոք հնարավորություն ունենա հասկանալ դրա կիրառման դեպքերը և եղանակները:
- Օրենքը չի տրամադրում սահմանափակումների սպառիչ ցանկ՝ սահմանափակումները թողնելով իշխանության հայեցողությանը:

2. ՔՀԿ-ները և նրանց հետ առնչվող մարդիկ ազատ են փնտրել, ստանալ և փոխանցել ցանկացած տեսակի տեղեկատվություն և գաղափարներ՝ անկախ սահմաններից և միջոցներից

Տեղեկատվության համարժեք հասանելիությունը ժողովրդավարական կառավարման համակարգում մասնակցային որոշումների կայացման գործընթացների հիմնարար պայման է: Այն հանգամանքներում, երբ տեղեկատվության մատչելիությունը ՔՀԿ-ների համար տեղեկատվություն ստանալու և տարածելու իրավունքի իրացման կարևորագույն միջոց է, հանրային շահերից բխող տեղեկատվության ՔՀԿ-ների պահանջի մերժումը իշխանությունների կողմից հանդիսանում է իրավունքի խախտում:

Տեղեկատվություն փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքը չի սահմանափակվում երկրի սահմաններով, և օտարերկրյա ՔՀԿ-ներն ունեն տեղեկատվություն փնտրելու և ստանալու նույն իրավունքները, ինչ տեղական ՔՀԿ-ները: Նմանապես, տեղեկություններ փնտրելու և ստանալու իրավունքը պայմանավորված չէ երկրում ՔՀԿ-ների տեղակայման վայրով:

Ցանկացած տեղեկություններ և գաղափարներ կարող են հաղորդվել մյուսներին ցանկացած ձևով և միջոցներով: Խոսքի ազատության իրավունքի պաշտպանությունը տարածվում է նաև այն տեղեկությունների և գաղափարների վրա, որոնք իշխանության կամ բնակչության

մեծամասնության կողմից կարող են համարվել քննադական կամ հակասական, այդ թվում այնպիսի գաղափարների և տեսակետների, որոնք կարող են առաջացնել «ցնցում, տհաճություն կամ անհանգստություն»: Ազատ արտահայտման պաշտպանված ձևերը ներառում են նաև մեկնաբանությունները որևէ մեկի անձնական հարցերի կամ հանրային խնդիրների վերաբերյալ, նախընտրական քարոզչությունը, մարդու իրավունքների քննարկումը, լրագրությունը, գիտական հետազոտությունները, էթնիկ, մշակութային, լեզվական և կրոնական ինքնության արտահայտումները, գեղարվեստական արտահայտչամիջոցները, գովազդը, դասավանդումը, քաղաքական բանավեճը և ընտրական քարոզարշավի գովազդները:

Արտահայտման պաշտպանված ձևերը ներառում են «բանավոր, գրավոր և ժեստերի լեզվի, ինչպես նաև ոչ վերբալ արտահայտչամիջոցները՝ օրինակ պատկերների և արվեստի գործերի միջոցով»: Արտահայտչամիջոցները ներառում են նաև «գրքեր, թերթեր, թռուցիկներ, պաստառներ ու պլակատներ, ինչպես նաև աուդիո-վիզուալ, ոչ առցանց, էլեկտրոնային և համացանցային եղանակներով արտահայտման բոլոր ձևերը»:[5]

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օտարերկրյա ՔՀԿ-ներին արգելվում է իրենց տեսակետները արտահայտել տեղական ԶԼՄ-ներում,
- Իշխանությունները մերժում են ՔՀԿ-ների համար հանրային շահ հանդիսացող տեղեկատվության մատչելիությունը, որը առանցքային կարևորություն ունի ՔՀԿ-ների կողմից տեղեկատվության փնտրելու և քաղաքացիական հասարակության շրջանում այն տարածելու իրավունքի իրացման համար:

3. Ատելության ցանկացած քարոզչություն, որը խտրականության, թշնամանքի կամ բռնության դրսևորում է պարունակում, արգելված է

Խոսքի ազատությունը բացարձակ իրավունք չէ. խոսքի որոշ տեսակներ պաշտպանված չեն: Պետությունները պետք է օրենքով արգելեն «պատերազմի ցանկացած քարոզչություն», ինչպես նաև որևէ «ազգային, ռասայական կամ կրոնական ատելության քարոզչություն, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության սադրանք»:[6] Այս բնութագրերի ամբողջությունը սովորաբար կոչվում է «ատելության խոսք» և պաշտպանված չէ խոսքի ազատության իրավունքով:

Համացանցի տարածմանը զուգընթաց զարգացել է ատելության խոսքի յուրօրինակ ձև, որը կոչվում է «կիբեր-բուլինգ»: Կիբեր բուլինգը կամ ահաբեկումը սովորաբար թիրախավորում է կոնկրետ անհատների (կամ երբեմն կազմակերպության) և պարունակում է թշնամական կամ վիրավորական բովանդակություն, վիրավորանք, մինչև անգամ բռնության սպառնալիքներ: Սա չի ընկնում «ատելության խոսքի» սահմանման տակ, քանի որ հեղինակը չի ձգտում հրահրել մյուսներին քայլեր ձեռնարկել մի խումբ մարդկանց դեմ ելնելով իրենց «ազգային, ռասայական կամ կրոնական» հատկանիշներից: Սակայն այս տիպի արտահայտությունները ևս ենթակա են սահմանափակման՝ երեք բաղադրիչի քննությունն անցնելու պայմանով (այսինքն՝ սահմանափակումները նախատեսված են օրենքով, հետապնդում են իրավաչափ նպատակ և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում), որը պահանջվում է խոսքի ազատության պաշտպանության միջազգային չափորոշիչներով:

---

[5] ԵՄ Մարդու իրավունքների ուղեցույցներ առցանց և անցանց խոսքի ազատության մասին (Եվրոպական միության խորհուրդ), 2014 թ., պարբ. 18

[6] ՔՔԻՄԴ 20-րդ հոդված:

Կարևոր է նշել, որ թեև ըստ միջազգային չափորոշիչների պետությունները պարտավորված են ընդունել հատուկ օրենսդրություն, որն արգելում է «ատելության խոսքը» միայն երեք կոնկրետ թիրախային խմբերի, այն է՝ ազգային, ռասայական կամ կրոնական խմբերի դեմ, սա չի նշանակում, որ «ատելության խոսքը» այլ խմբերի նկատմամբ (օրինակ, սոցիալ-տնտեսական խմբերի, ԼԳԲՏԻՔ խմբերի և այլն) թույլատրելի է: Այլ խմբերի կամ անհատների դեմ «ատելության խոսքի» սահմանափակումներ կարող են կիրառվել, եթե դրանք համապատասխանում են վերը նկարագրված երեք բաղադրիչի քննության սկզբունքին:

«Ատելության քարոզում» եզրույթը ենթադրում է, որ հայտարարության հեղինակը կոնկրետ մտադրություն ունի հրապարակայնորեն ատելություն սերմանել որևէ թիրախային խմբի նկատմամբ (մասնավորապես՝ ազգային, ռասայական կամ կրոնական խմբի): Հետևապես, բավարար չէ, որ հայտարարությունը որպես ատելություն սերմանող ընկալվի թիրախային խմբի կողմից, եթե հեղինակը փորձ չի անում ատելություն սերմանել:

«Հրահրում» եզրույթը նշանակում է բոլոր այն հայտարարությունները ազգային, ռասայական կամ կրոնական խմբերի վերաբերյալ, որոնք «ստեղծում են խտրականության, թշնամանքի կամ բռնության վերահաս վտանգ այն խմբերին պատկանող անձանց նկատմամբ»: ՄԻԵԴ նախադեպային իրավունքը տարբերակում է, մի կողմից, ծայրահեղականության բաց և լուրջ հրահրում, իսկ մյուս կողմից՝ անհատների (այդ թվում `լրագրողների և քաղաքական գործիչների) իրավունքը՝ ազատորեն արտահայտելու իրենց տեսակետները՝ վիրավորելով, ցնցում կամ անհանգստություն առաջացնելով:

Ըստ խոսքի ազատության միջազգային չափանիշների, հայտարարությունը որակվում է որպես «ատելության խոսք», եթե այն համապատասխանում է վեց բաղադրիչ պարունակող շեմային քննությանը (այն դիտարկում է համատեքստը, բանախոսին, մտադրությունը, բովանդակությունը, տարածումը, վնասելու հավանականությունը), որը մանրամասն ներկայացված է սահմանումների բաժնում:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Պետությունը չունի ազգային, ռասայական կամ կրոնական խմբերի դեմ ուղղված ատելության խոսքն արգելող օրենքներ, և, որպես հետևանք, նման խմբերի դեմ խտրականության հրահրումը հանդուրժվում կամ նույնիսկ ակտիվ աջակցություն է ստանում պետական մարմինների կողմից:
- Երրորդ կողմը (օրինակ, լրագրող կամ մարդու իրավունքների ակտիվիստ), որը կրկնում է ուրիշների (օրինակ, մի նեոնացիստական խմբի) կողմից արված ռասիզմ բորբոքող կոչերը՝ հանրային հետաքրքրությունից բխող բանավեճի նպատակներով, կարող է դատապարտվել օրենքով՝ որպես «ատելության խոսքի» տարածմանն աջակցող անձ:
- Օրենքը թույլ է տալիս ժողովրդի որևէ հատվածի դեմ ուղղված՝ կառավարության գործողությունները քննադատող ՔՀԿ-ին պատժել բռնության և սոցիալական հուզումներ հրահրող ազգային ատելության քարոզչության համար:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Մտքերի կամ կարծիքի արտահայտման համար ճնշումներ կամ անհամաչափ պատժամիջոցներ չեն կիրառվում: 2. Պետությունը խոչընդոտների չի ստեղծում պաշտոնական քաղաքականությանը չհամապատասխանող գաղափարների, կարծիքների և մտքերի արտահայտման համար: 3. Ատելության խոսքի համար առկա պատժամիջոցները խիստ հիմնավորված են և համաչափ, օգտագործվում են որպես կանխարգելիչ միջոց, և չէին կարողանա նույն արդյունքի հասնել, եթե փոխարինվեին ավելի մեղմ միջոցներով:

1. Մտքերի կամ կարծիքի արտահայտման համար ճնշումներ կամ անհամաչափ պատժամիջոցներ չեն կիրառվում

Արտահայտվելու ազատությունը ընդգրկում է ոչ միայն մեծամասնության կամ մեծ խմբերի կարծիքները: Այն նաև ներառում է «փոքր խմբերի կամ մեկ անձի տեղեկությունների և կարծիքների պաշտպանությունը, նույնիսկ եթե նման դրսևորումները ցնցող են մեծամասնության համար»[7]: Անհատական տեսակետների նկատմամբ հանդուրժողականությունը ժողովրդավարական քաղաքական համակարգի կարևոր բաղադրիչ է: Ուժեղ կամ չափազանցված բառապաշարով արտահայտված կարծիքները ևս ենթակա են պաշտպանության: Պաշտպանության աստիճանը կախված է քննադատության համատեքստից և նպատակից:

Պետությունը չպետք է որևէ ճնշում թույլ տա մարդկանց կամ ՔՀԿ-ների դեմ՝ իրենց արտահայտած կարծիքների համար: Որևէ անձ չպետք է կալանավորվի զուտ իր մտքերն ու կարծիքը արտահայտելու համար: Քրեական պատասխանատվության կիրառումը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ առկա է ատելության խոսք կամ խտրականության, թշնամանքի կամ բռնության սադրանք խմբերի կամ անհատների դեմ:

Զրպարտությունը պետք է դիտվի ոչ թե որպես հանցագործություն, այլ քաղաքացիական զանցանք: Եթե զրպարտությունը օրենքով դեռևս դիտվում է որպես հանցագործություն, ապա ազգային դատարանները պետք է զերծ մնան քրեական պատժամիջոցների կիրառումից, մասնավորապես՝ ազատազրկումից, քանի որ նման պատժամիջոցները միշտ անհամաչափ են, ինչպես նաև անհրաժեշտ չեն ժողովրդավարական հասարակությունում:

ՔՀԿ-ները չեն հետապնդվում կամ խարազանվում ազգային կամ տեղական պետական հաստատությունների կողմից՝ կառավարության կամ նրա քաղաքականության հանդեպ քննադատություն արտահայտելու համար:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ները կամ նրանց հետ առնչվող անձինք ենթարկվում են պատժամիջոցների՝ երկրի սոցիալական, տնտեսական կամ քաղաքական համատեքստի վերաբերյալ հրապարակային կարծիք արտահայտելու համար:
- ՔՀԿ-ները կամ նրանց հետ առնչվող անձինք պատժամիջոցների են ենթարկվում՝ հասարակական գործիչների, կրոնական կազմակերպությունների կամ քաղաքական ինստիտուտների գործունեության վերաբերյալ հումորային կամ երգիծական մեկնաբանություն կատարելու համար:

[7] Եվրոպայի խորհուրդը, Խոսքի ազատության իրավունքի պաշտպանությունը ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի՝ իրավաբանների Ձեռնարկի, 2017 թ., էջ 75

- ՔՀԿ-ները կամ նրանց հետ առնչվող անձինք կալանավորվում են ուրիշի հեղինակությունը վնասելու մեղադրանքով՝ զուտ իրենց կարծիքը արտահայտելու հետևանքով:
- Ակտիվ արտահայտվող ՔՀԿ-ներին և նրանց հետ առնչվող անձանց անընդհատ հրավիրում են դատարան կամ վարչական վարույթի շրջանակներում պահանջում բացատրել կամ պարզաբանել իրենց արտահայտած կարծիքները:
- Կառավարությանը կամ այլ պետական մարմիններին քննադատող ՔՀԿ-ներին զերծ են պահում հանրային խորհրդակցություններից, հանդիպումներից և ԶԼՄ-ներում բանավեճերից:

2. Պետությունը խոչընդոտներ չի ստեղծում պաշտոնական քաղաքականությանը չհամապատասխանող գաղափարների, կարծիքների և մտքերի արտահայտման համար

Ցանկացած օրենսդրություն, որը սահմանափակում է կարծիք արտահայտելու իրավունքը, պետք է կիրառվի քաղաքական, առևտրային կամ այլ չերաշխավորված ազդեցությունից զերծ անկախ մարմնի կողմից: Օրենքները պետք է կիրառվեն այնպիսի եղանակով, որը չի կրում կամայական կամ խտրական բնույթ, ընդ որում, պետք է առկա լինեն չարաշահման դեմ համապատասխան երաշխիքներ, այդ թվում՝ չարաշահումների բողոքարկման և իրավունքների վերականգնման հնարավորություն:

Գնահատողական դատողությունները պետք է ենթակա լինեն հատուկ պաշտպանության, քանի որ դրանք բազմակարծության արտահայտման եղանակ են, ինչը կարևոր է ժողովրդավարական հասարակությունում: Պետական քաղաքականությունը և օրենսդրական դրույթները, որոնք ազդում են ՔՀԿ-ների վրա, պետք է հավասարապես կիրառվեն այն կազմակերպությունների նկատմամբ, որոնք աջակցում են կառավարությանը, և նրանց նկատմամբ, որոնք հակառակ կարծիք են արտահայտում կամ աշխատում են կառավարության առաջնահերթություններում չներառված բնագավառներում:

ՔՀԿ-ները պետք է ունենան լրատվամիջոցների ազատ հասանելիություն՝ իրենց, այդ թվում պաշտոնական քաղաքականությունը քննադատող տեսակետները և կարծիքները արտահայտելու նպատակով: ԶԼՄ-ների ազատությունը և բազմակարծությունը պետք է պաշտպանված լինեն օրենքով: Հանրային հեռարձակման ծառայությունների խմբագրական անկախությունը պետք է երաշխավորված լինի այնպիսի խորհրդի նշանակման մեխանիզմով, որը չի վերահսկվում կառավարության կամ խորհրդարանական մեծամասնության կողմից: ԶԼՄ-ները և ՔՀԿ-ների համար ինտերնետի և սոցիալական լրատվամիջոցների հասանելիությունը և օգտագործումը չպետք է սահմանափակվեն երրորդ կողմի բովանդակությունը հրապարակելու համար, եթե անկախ դատական մարմնի կողմից չի որոշվել այդ բովանդակությունը հեռացնել:

Առաջատար լրատվամիջոցներում քաղաքական բանավեճի բազմակարծությունը պետք է ենթակա լինի հատուկ պաշտպանության, հատկապես ընտրական քարոզարշավների ընթացքում: Լրատվամիջոցների ֆինանսավորումը թե՛ հանրային, թե՛ մասնավոր ԶԼՄ-ների դեպքում պետք է լինի թափանցիկ և հանրությանը հաշվետու, մասնավորապես պետական գովազդի բաշխման առումով:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ն, որը շարունակաբար կառավարությանը քննադատող կարծիքներ է բարձրաձայնում, ավելի մեծ հաճախականությամբ և ինտենսիվությամբ է ենթարկվում հարկային և այլ պետական վերահսկողության:

- ՔՀԿ-ները և նրանց հետ առնչվող անձինք, որոնք հայտնի են պետական քաղաքականության նկատմամբ իրենց ընդդիմադիր հայացքներով, չեն թույլատրվում/ հրավիրվում պետական սեփականություն հանդիսացող հեռուստաընկերություններում ելույթ ունենալու:
- ՔՀԿ-ների կայքերը կամ էջերը արգելափակվում կամ փակվում են նախարարության կամ այլ վարչական մարմինների պատվերով:
- Գերատեսչությունները զրպարտող քարոզարշավներ են ձեռնարկում ՔՀԿ-ների և նրանց դոնորների դեմ:

3. Ատելության հռետորաբանության համար առկա պատժամիջոցները խիստ հիմնավորված են և համաչափ, օգտագործվում են որպես կանխարգելիչ միջոց, և չէին կարողանա նույն արդյունքի հասնել, եթե փոխարինվեին ավելի մեղմ միջոցներով

Կառավարությունը չպետք է ատելության խոսքը կարգավորող օրենսդրությունը որպես միջոց օգտագործի՝ «քաղաքացիներին հետ պահելու ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ օրինական ժողովրդավարական քննարկումներից»[8]: Կիրառվող պատժամիջոցները պետք է լինեն համաչափ (ոչ այնքան փոքր, որ խրախուսեն ատելության հռետորաբանությունը, և ոչ այնքան մեծ, որ սառեցնող ազդեցություն ունենան խոսքի ազատության վրա):

Պատժամիջոցները պետք է համապատասխանեն երեք բաղադրիչի քննության սկզբունքին, այսինքն՝ հստակ սահմանված լինեն օրենքով, իրավաչափ նպատակ ունենան և խիստ անհրաժեշտ լինեն այդ նպատակին հասնելու համար:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Դատարանները չեն կիրառում վեց բաղադրիչի շեմային քննությունը (տե՛ս սահմանումների բաժինը)՝ գնահատելու համար, թե արդյոք որևէ հակասական հայտարարություն կարելի է որակել որպես «ատելության խոսք», թե այն պետք է դիտարկվի այլ դրույթի ներքո (օրինակ, զրպարտության):
- Երբ դատարանները պատժամիջոցներ են կիրառում ատելության խոսքի դեպքերը պատժելու համար, նրանք մանրակրկիտ ուշադրությամբ չեն գնահատում և հիմնավորում պատժամիջոցի համաչափությունը յուրաքանչյուր կոնկրետ խախտման համար և հակված են կիրառել տույժեր, որոնք շատ մեղմ կամ չափազանց խիստ են:

Չափորոշիչ 2՝ Պետությունն աջակցում է խոսքի և կարծիքի արտահայտման ազատությանը և պաշտպանում այն:

Պետությունն ունի խոսքի և կարծիքի ազատ արտահայտմանը աջակցելու և այն պաշտպանելու դրական պարտավորություն: Իրավական դաշտը պետք է ապահովի այնպիսի միջավայր, որտեղ տեղեկատվական հոսքերն ազատ են, իսկ բովանդակության բազմազան տեսականին՝ պաշտպանված: Որևէ սահմանափակում չպետք է դրվի հաղորդակցման գործիքների, այդ թվում համացանցի ազատ օգտագործման նկատմամբ: Չպետք է գրաքննություն լինի, իսկ ՁԼՄ-ների միջոցով զրպարտության դեպքերը պետք է արագ և համաչափ արձագանք ստանան: Լրագրողների

[8] ԵՄ Մարդու իրավունքների ուղեցույցներ առցանց և անցանց խոսքի ազատության մասին (Եվրոպական միության խորհուրդ), 2014թ., պ. 18

գործունեությունը պետք է պաշտպանված լինի, և պետք է հարգվի տեղեկությունների աղբյուրները գաղտնի պահելու նրանց իրավունքը:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Կարծիք արտահայտելու համար ինտերնետի կամ հաղորդակցության այլ միջոցների ազատ օգտագործման հետ կապված որևէ սահմանափակում չկա: 2. Գրաքննության դեմ հստակ կարգավորումներ և երաշխիքներ կան: 3. Օրենքը պաշտպանում է ազդարարներին և լրագրողների տեղեկատվության աղբյուրների գաղտնիությունը: 4. Վիրավորանքի և զրպարտության համար հստակ և համաչափ պատժամիջոցներ կան, որոնք քրեականացված չեն:

1. Կարծիք արտահայտելու համար ինտերնետի կամ հաղորդակցության այլ միջոցների ազատ օգտագործման հետ կապված որևէ սահմանափակում չկա

Խոսքի ազատության միջազգային չափորոշիչներով նախատեսվում է, որ մարդկանց համար բնականոն կյանքում նախատեսված իրավունքները պետք է գործեն նաև առցանց տիրույթում: Սակայն համացանցը բնութագրվում է մի շարք առանձնահատկություններով, օրինակ, այն ապահովում է անսահմանափակ թվով կետերում մուտքի հնարավորություն անսահմանափակ թվով օգտագործողների համար, ի տարբերություն հեռարձակվող ԶԼՄ-ների, որը բնութագրվում է սահմանափակ թողունակությամբ և, հետևաբար, օպերատորներին հատկացվում են սահմանափակ չափով հաճախականություններ:

Ելնելով համացանցի և հեռարձակվող ԶԼՄ-ների միջև տարբերություններից, խոսքի ազատության պաշտպանության միջազգային չափորոշիչները ընդունում են, որ.

- Համացանցը չպետք է ենթակա լինի լիցենզավորման և գրանցման նույն կանոններին, ինչ հեռարձակվող ԶԼՄ-ները (այսինքն, ռադիո և հեռուստատեսային միջոցները), որոնց համար այդպիսի կանոնները անհրաժեշտ են, որպեսզի պետությունները կարողանան սահմանափակ հաճախականությունները արդարացի կերպով բաշխել:
- «Համացանցի կամ դրա որոշ մասերի հասանելիության արգելափակումը բնակչության կամ հասարակության որոշակի հատվածների համար (համացանցի անջատում) երբեք չի կարող արդարացվել, այդ թվում՝ հասարակական կարգի կամ ազգային անվտանգության նկատառումներից ելնելով: Նույնը վերաբերում է համացանցի կամ դրա որոշ մասերի դանդաղեցմանը»,[9]
- Կայքերի, բլոգների կամ համացանցային այլ ռեսուրսների աշխատանքի, այդ թվում՝ այդ հաղորդակցությանը նպաստող համակարգերի (ինչպես, օրինակ, ինտերնետ ծառայություն մատուցողների կամ որոնողական համակարգերի) արգելափակումների սահմանումը չի համապատասխանում վերը նշված երեք բաղադրիչի քննությանը: Սահմանափակումները պետք է վերաբերեն միայն կոնկրետ բովանդակությանը և հստակ սահմանված լինեն

[9]Արտահայտվելու ազատության և համացանցի վերաբերյալ համատեղ հայտարարություն ԱԱ չորս հատուկ մանդատների վերաբերյալ (ՄԱԿ-ի համոզմունքների և արտահայտվելու ազատության հարցերով հատուկ զեկուցող, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն («ԵԱՀԿ»), ԶԼՄ-ների ազատության ներկայացուցիչ, ամերիկյան պետությունների կազմակերպության(«ԱՊԿ») արտահայտման ազատության հարցերով հատուկ զեկուցող և Մարդկային և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիայի («ՄԺԻԱԽ») հատուկ զեկուցող արտահայտվելու ազատության և տեղեկատվության մատչելիության հարցերով), 2011թ. պարբ. 6 բ

օրենքով՝ իրավաչափ նպատակների պաշտպանության համար: Ազգային օրենսդրությունը պետք է ապահովի, որ «բովանդակությունը, ծրագրերը կամ ծառայությունները երբեք չպետք է կասեցվեն, դանդաղեցվեն, վատթարացվեն կամ ենթարկվեն խտրականության, բացառությամբ շատ սահմանափակ հանգամանքների (օրինակ դատական վճռի կամ օրենսդրական դրույթի իրականացման համար, ինչպիսին է երեխաների հանդեպ բռնության կամ մանկական պոռնոգրաֆիայի վերաբերյալ օրենսդրական դրույթների կիրառումը, ցանցային անվտանգության լուրջ խնդիրները, չարտոնված հաղորդակցության կանխումը, բացառիկ գերբեռնվածության նվազեցումը)»:[10]

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Ինտերնետային ընկերությունները պարտավոր են գրանցվել և լիցենզիա ստանալ՝ տվյալ երկրի լսարանի հետ հաղորդակցվելու համար:
- Օրական ավելի քան 1000 այցելու ունեցող բլոգերներն ունեն նույն պարտավորությունները, ինչ ԶԼՄ-ները:

2. Գրաքննության դեմ կան հստակ կարգավորումներ և երաշխիքներ

Ազգային օրենսդրությունը պետք է հստակ պաշտպանություն ապահովի այնպիսի օրենքների կամ պրակտիկայի դեմ, որոնք առաջ են բերում «գրաքննություն, խրախուսում են ինքնագրաքննությունը կամ սահմանում են իրավական պատիժներ, այդ թվում քրեական, ֆինանսական և վարչական պատժամիջոցներ՝ կարծիքի և խոսքի ազատության իրավունքի իրացման համար՝ խախտելով մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավունքը»:[11]

Մինչև հրապարակումը ձեռնարկվող այնպիսի միջոցառումները, ինչպիսիք են լրագրողների լիցենզավորումը, որևէ պարբերականի գրանցման մերժումը, պաշտոնատար անձի կողմից հոդվածի ուսումնասիրությունը՝ նախքան դրա հրապարակումը, կամ հրապարակման արգելքը նույնպես համարվում են գրաքննության դրսևորումներ: Այդ սահմանափակումները կարող է նվազեցնել տարածվող տեղեկությունների արժեքը, նույնիսկ եթե դրանք ժամանակավոր են:

«Ավանդական լրատվամիջոցների» համար անընդունելի համարվող գրաքննության որևէ միջոց չպետք է օգտագործվի նաև առցանց ԶԼՄ-ների նկատմամբ: Չպետք է մշակվեն գրաքննության նոր ձևեր, ինչպես, օրինակ, բովանդակության ֆիլտրերը կամ որոշակի էջերը այցելությունների քանակի սահմանափակումը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Գրաքննության դեմ իրավական պաշտպանության միջոցներ չկան:
- Հանրային հեռուստաընկերության նորությունների ծառայությունից պահանջվում է ներկայացնել նորությունների թեմաները՝ նախնական թույլտվություն ստանալու համար:
- ՔՀԿ-ների հրապարակումները և կայքի բովանդակությունը պետք է ուսումնասիրվեն պետական մարմինների կողմից նախքան հրապարակումը:

3. Օրենքը պաշտպանում է ազդարարներին և լրագրողների տեղեկատվության աղբյուրների գաղտնիությունը

[10] ԵՄ Մարդու իրավունքների ուղեցույցներ առցանց և անցանց խոսքի ազատության մասին (Եվրոպական միության խորհուրդ), 2014թ., պ. 20

[11] ԵՄ Մարդու իրավունքների ուղեցույցներ առցանց և անցանց խոսքի ազատության մասին (Եվրոպական միության խորհուրդ), 2014թ., պ. 17

Պետական օրենսդրությունը պետք է պաշտպանի ՔՀԿ-ներին և նրանց հետ առնչվող անձանց, եթե նրանք բացահայտում են մի տեղեկություն, որն ըստ իրենց ողջամիտ ենթադրության ճշմարիտ է և վերաբերում է որոշակի հանրային շահի համար հնարավոր վտանգի կամ վնասի, օրինակ՝ ազգային կամ միջազգային իրավունքի խախտման, պաշտոնեական լիազորությունների չարաշահման, վատնման, խարդախության, շրջակա միջավայրին, հանրային առողջությանը կամ հասարակական անվտանգությանը հասցվելիք վնասի վերաբերյալ: Պաշտպանությունը պետք է գործի նաև այն լրագրողների նկատմամբ, որոնք ստանում են այդ տեղեկությունները, որպեսզի նրանք պարտավորված չլինեն բացահայտել իրենց աղբյուրները:

Ազդարարի պաշտպանությունը շատ կարևոր է ոչ պատշաճ վարքագծի, խարդախության և կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ տեղեկությունների բացահայտումը խրախուսելու տեսանկյունից: Պետությունները պետք է «ձևավորեն այնպիսի միջավայր, որը խրախուսում է բաց եղանակով հաղորդումը կամ բացահայտումը, և որտեղ անհատները իրենց ապահով են զգում՝ ազատորեն բարձրաձայնելու հանրային շահին առնչվող մտահոգությունները»:[12] Խորհուրդ է տրվում նաև «հստակ հաղորդակցության ուղիներ սահմանել հանրային շահին առնչվող հաղորդումների և բացահայտումների համար, և համապատասխան միջոցառումներով օժանդակել դրանց օգտագործումը»:[13]

ՄԻԵԴ իրավագիտությունը մշակել է վեց մասից բաղկացած քննություն՝ որոշելու, թե արդյոք ազդարարը ենթակա է պաշտպանության: Քննությունն ուսումնասիրում է հետևյալ գործոնները.

1) Արդյո՞ք ազդարարը դիտարկել է իր տիրապետման տակ գտնվող ներքին հաղորդակցման միջոցներով գաղտնի տեղեկության տարածման հնարավորությունը, սակայն գտել է, որ նման հաղորդումը «հստակ անիրագործելի է»:
2) Արդյո՞ք տվյալ տեղեկատվության հանրային կարևորությունն «այնքան մեծ է, որ կարիք կա անտեսելու նույնիսկ օրենսդրորեն սահմանված գաղտնիության նորմերը»:
3) Արդյո՞ք տվյալ տեղեկության բացահայտման հետևանքով պետական մարմնին հասցվելիք հնարավոր վնասը արդարացված է տեղեկության բացահայտման հանրային շահով:
4) Արդյո՞ք բացահայտվող տեղեկությունը ճշգրիտ և հուսալի է «այնքանով, որքանով դա թույլատրելի է տվյալ հանգամանքներում»:
5) Արդյո՞ք ազդարարը գործում է բարեխղճորեն, թե՞ առաջնորդվում է «անհատական դժգոհությամբ կամ անձնական թշնամանքով կամ անձնական օգուտի, այդ թվում՝ նյութական շահի ակնկալիքով», որի դեպքում չէր արդարացվի «առանձնապես ուժեղ մակարդակի պաշտպանությունը»:
6) Արդյո՞ք ազդարարի նկատմամբ կիրառված տույժը համաչափ էր «իրավաչափ հետապնդվող նպատակի համեմատ»:

Ըստ խոսքի ազատության միջազգային չափանիշների, լրագրողները նույնպես պետք է բացահայտ և հստակ իրավական պաշտպանություն ստանան՝ տեղեկությունը բացահայտելիս դրա աղբյուրը չնշելու իրավունքի առումով: Նրանք, ովքեր լրագրողների հետ իրենց մասնագիտական հարաբերությունների բերումով տեղեկությունների հավաքագրման, խմբագրական մշակման կամ տարածման ընթացքում իմացել են տեղեկությունների աղբյուրի մասին, հավասարապես պետք է պաշտպանված լինեն:

---

[12] Եվրոպայի խորհուրդ, CM/Rec հանձնարարական (2014) 7 ազդարարների պաշտպանության վերաբերյալ, և բացատրական հուշագիր, սկզբունք 12
[13] Նույնը, սկզբունք 13

Պետությունները պետք է թույլ տան լրագրողներին աշխատել ազատ և նպաստավոր միջավայրում, անվտանգության և ապահովության պայմաններում՝ առանց գրաքննության կամ սահմանափակումների վախի:

Ըստ մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային չափանիշների՝ խուզարկման և լրագրողական նյութի առգրավման գործողությունները չեն կարող համարվել ժողովրդավարական հասարակությունում «անհրաժեշտ» միջոց:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Ազդարարները հետապնդվում են գաղտնիության համաձայնագիրը կամ առևտրային գաղտնիքը կարգավորող օրենսդրությունը խախտելու համար, նույնիսկ եթե տեղեկատվության բացահայտումը բխում է հանրային շահից:
- Լրագրողների գրասենյակները խուզարկվում են և նյութերը առգրավվում են՝ հետևելով լրագրողների աղբյուրները բացահայտելու նպատակով խուզարկության թույլտվությանը:
- Լրագրողներին հետապնդում և մեղադրանք են առաջադրում իրենց տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու համար:

4. Վիրավորանքի և զրպարտության համար հստակ և համաչափ պատժամիջոցներ կան, որոնք քրեականացված չեն

Զրպարտության վերաբերյալ օրենքները նպատակ ունեն մարդկանց պաշտպանել փաստական բնույթ ունեցող կեղծ հայտարարություններից, որոնք վնաս են հասցնում իրենց պատվին և բարի համբավին: Խոսքի ազատության պաշտպանությունը կարող է սահմանափակվել՝ այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու նպատակով, սակայն ցանկացած սահմանափակում պետք է երեք բաղադրիչի քննություն անցնի, այսինքն, այն պետք է հստակորեն սահմանված լինի օրենքով, ուղղված լինի պետության օրինական նպատակի իրագործմանը և խիստ անհրաժեշտ («համաչափ») լինի այդ նպատակին հասնելու համար: Սա նշանակում է, որ նույն արդյունքը չէր կարող ձեռք բերվել ավելի մեղմ միջոցառումների արդյունքում:

Զրպարտությունը պետք է դիտարկվի քաղաքացիական և վարչական իրավախախտումների շարքում և չպետք է քրեական պատժամիջոցների ենթարկվի: «Զրպարտության քրեականացումը խոսքի ազատության իրավունքի արդարացված սահմանափակում չէ, զրպարտության քրեականացմանն առնչվող բոլոր օրենքները պետք է վերացվեն և ըստ անհրաժեշտության փոխարինվեն զրպարտության վերաբերյալ համապատասխան և համաչափ քաղաքացիական օրենքներով»[14]: Պետությունները պետք է ձգտեն զրպարտության և վիրավորանքի ապաքրեականացմանը, իսկ քրեական պատժի կիրառումը պետք է տեղի ունենա միայն առավել լուրջ դեպքերում: Ազատազրկումը երբեք չի կարող համարվել համաչափ պատժամիջոց:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Զրպարտության բոլոր դեպքերում կիրառվում է նույն պատժամիջոցը՝ առանց տարբեր հանգամանքներում պատժամիջոցի անհրաժեշտության և համաչափության չափանիշների ուսումնասիրման:
- Զրպարտությունը քրեորեն պատժելի արարք է:

[14] Կարծիքի և խոսքի ազատության ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի, ԶԼՄ-ների ազատության ԵԱՀԿ ներկայացուցչի և խոսքի ազատության հարցերով ԱՊԿ հատուկ զեկուցողի համատեղ հայտարարությունը, խոսքի ազատության խթանման միջազգային մեխանիզմներ, 2002 թ.

- Զրպարտությունը քաղաքացիական զանցանք է, սակայն օրենքով նախատեսված քաղաքացիական պատժամիջոցները անհամաչափ են և ոչ անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Եթե ավանդական կամ առցանց լրատվամիջոցների արգելափակման դեպքեր են լինում, ապա դրանք միշտ բխում են հստակ իրավական հիմքերից և համաչափ են օրինական նպատակներին հասնելու համար: 2. Ինտերնետում հրապարակումների համար որևէ հատուկ թույլտվություն ստանալու կամ ավանդական լրատվամիջոցների համար կիրառվող որոշակի վարչական կանոնակարգերի պահանջներին համապատասխանելու կարիք չկա: 3. Լրագրողների դատապարտման կամ տեղեկատվության աղբյուրները բացահայտելու նպատակով ոստիկանության կողմից լրատվամիջոցների հետախուզման դեպքերը չկան:

1. **Եթե ավանդական կամ առցանց լրատվամիջոցների արգելափակման դեպքեր են լինում, ապա դրանք միշտ բխում են հստակ իրավական հիմքերից և համաչափ են օրինական նպատակներին հասնելու համար**

Առկա չեն «հաղորդակցության ցանցերի արգելափակման, ճնշման, զտման, գրաքննության կամ փակման փորձեր կամ որևէ տեսակի այլ միջամտություններ, որոնք խախտում են միջազգային իրավունքի նորմերը»:[15]

Ավանդական կամ առցանց լրատվամիջոցների արգելափակման որևէ դեպք (անկախ այն ժամանակահատվածից, որով այն արգելափակվում է) պետք է համապատասխանի երեք բաղադրիչի քննության սկզբունքին, այսինքն՝ պետք է հստակորեն սահմանված լինի օրենքով՝ համապատասխան նպատակով, և պետք է լինի խիստ անհրաժեշտ («համաչափ»)՝ այդ իրավաչափ նպատակին հասնելու համար: Սա նշանակում է, որ նույն արդյունքը չէր կարող ձեռք բերվել ավելի մեղմ միջոցառումների արդյունքում:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Կայքը արգելափակված է, դանդաղեցված է կամ փակված է այն հիմքով, որ այն ունի կառավարությանը քննադատող կամ կառավարության կողմից որդեգրած քաղաքական համակարգը քննադատող դիրքորոշում:
- Ազգային օպերատորը արգելափակում է հեռուստաընկերության հեռարձակումը ընդդիմության առաջնորդների մասնակցությամբ հաղորդումների ժամանակ:
- Մասնավոր հեռուստաընկերությանը մերժում են լիցենզիայի տրամադրումը, կամ այն կասեցվում կամ դադարեցվում է առանց նախազգուշացման և պատշաճ հիմնավորման ու օրենքով սահմանված իրավաչափ նպատակի:

2. **Ինտերնետում հրապարակումների համար որևէ հատուկ թույլտվություն ստանալու կամ ավանդական լրավամիջոցների համար կիրառվող որոշակի վարչական կանոնակարգերի պահանջներին համապատասխանելու կարիք չկա**

[15] ԵՄ մարդու իրավունքների ուղեցույցներ առցանց և անցանց խոսքի ազատության մասին (Եվրոպական միության խորհուրդ), 2014 թ., պարբ. 33դ

Անհատները և ՔՀԿ-ները չպետք է դիտարկվեն որպես լրատվամիջոցներ, որոնք հանդիսանում են պարբերական բնույթի տեղեկատվության տարածման համար հաղորդակցության միջոց, ինչպիսիք են թերթերը, հեռարձակումները կամ հեռուստատեսությունը:

Անհատներից և ՔՀԿ-ներից չպետք է պահանջվի թույլտվություն ստանալ համացանցում որևէ ձևով բովանդակության հրապարակման համար, եթե դա նախատեսված չէ այլոց օրինական իրավունքների (օրինակ, հեղինակային իրավունքի) պաշտպանության համար:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Բլոգերների գործունեությունը համարվում է լրատվական գործունեություն և նրանք պետք է համապատասխանեն լրատվամիջոցների նկատմամբ կիրառվող պահանջներին, օրինակ՝ գրանցման, լիցենզավորման և այլ իրավական ընթացակարգերին:

3. Լրագրողների դատապարտման կամ տեղեկատվության աղբյուրները բացահայտելու նպատակով ոստիկանության կողմից լրատվամիջոցների հետախուզման դեպքեր չկան

Ոստիկանության կողմից թերթերի կամ հեռարձակվող լրատվամիջոցների տարածք ներխուժելու կամ խուզարկությունների դեպքերը մամուլի ազատության միջամտության տեսակ են: Անկախ դատական թույլտվության առկայությունից՝ այդ խուզարկությունները վտանգում են լրագրողական աղբյուրների և գործառույթների գաղտնիությունը և հանդիսանում են երկրի բոլոր լրագրողների գրաքննության ձև:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Լրատվամիջոցները հետախուզվում են ոստիկանության կողմից, առգրավվում են նրանց սարքավորումները՝ գաղտնի աղբյուրների հիման վրա կատարված հետաքննության արդյունքում:
- Լրագրողները դատապարտվում են ազատազրկման, եթե նրանք դատարանում հրաժարվում են բացահայտել իրենց տեղեկատվության աղբյուրները:

Համապատասխան ռեսուրսներ

- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդ. 5,19,20
- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, հոդ. 10
- Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիա, հոդ. 11
- ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, հոդ. 33
- ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 34՝ ՔՔԻՄԴ հոդված 19-ի վերաբերյալ (2011 թ.)
- Եվրոպական միության Խորհուրդ, ԵՄ Մարդու իրավունքների ուղեցույցներ առցանց և անցանց արտահայտման ազատության վերաբերյալ (2014 թ.)
- ԵՄ-ն շրջանակային որոշումը ռասիզմի և այլատյացության դեմ պայքարի որոշ ձևերի և արտահայտչաձևերի վերաբերյալ (2014 թ.)
- ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, *Ռոսն ընդդեմ Կանադայի* (2000 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Ջերսիլնդ ընդդեմ Դանիայի* (1994թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Գյունդուզը ընդդեմ Թուրքիայի* (2003 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության* (1976 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Շեները ընդդեմ Թուրքիայի* (2000 թ.)

- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Լինգենսն ընդդեմ Ավստրիայի* (1985 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Էոնն ընդդեմ Ֆրանսիայի* (2003 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Կոջոկարուն ընդդեմ Ռումինիայի* (2015 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. Մեծ պալատ, *Մագյար Հելսինկի Բիզոտսագն ընդդեմ Հունգարիայի* (2016 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Մանոլեն և այլոք ընդդեմ Մոլդովայի* (2009 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Ռոմենս Շմիտն ընդդեմ Լյուքսեմբուրգի* (2003 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Գոյան ընդդեմ Մոլդովայի* (2008 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Տեսություն և պրակտիկա , 4-րդ հրատարակություն (2006 թ.)
- ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի բանաձև համացանցում մարդու իրավունքների խթանման, պաշտպանության և իրագործման վերաբերյալ, A/HRC/RES/38/7 (17 հուլիսի 2018 թ.)
- ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի բանաձև համացանցում մարդու իրավունքների խթանման, պաշտպանության և իրագործման վերաբերյալ, A/HRC/RES/20/8 (29 հուլիսի 2018 թ.)
- ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ, Միավորված ազգերի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի զեկույցը ազգային, ռասայական կամ կրոնական ատելության հրահրումն արգելելու վերաբերյալ փորձագիտական սեմինարներին, Հավելված. խտրականության, թշնամանքի կամ բռնության սադրանք պարունակող ազգային, ռասայական կամ կրոնական ատելության քարոզչության արգելքի վերաբերյալ Ռաբաթի գործողությունների ծրագիր, A/HRC/22/17/Add.4 (11 հունվարի 2013 թ.)
- Խոսքի ազատության և համացանցի վերաբերյալ համատեղ հայտարարություն ՄԱԿ-ի կարծիքի և խոսքի ազատության հարցերով հատուկ զեկուցողի, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ) ԶԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցչի, Ամերիկյան պետությունների կազմակերպության (ԱՊԿ) խոսքի ազատության հարցերով հատուկ զեկուցողի և Մարդկանց և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիայի (ՄԺԻԱԽ) խոսքի ազատության և տեղեկատվության մատչելիության հարցերով հատուկ զեկուցողի կողմից (1 հունիսի 2011 թ.):
- Խոսքի ազատությունը խթանող միջազգային մեխանիզմների վերաբերյալ համատեղ հայտարարություն՝ Կարծիքի և խոսքի ազատության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի, ԶԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի և Խոսքի ազատության հարցերով ԱՊԿ հատուկ զեկուցողի կողմից (10 դեկտեմբերի 2002 թ.)
- Եվրոպայի խորհուրդ, Խոսքի ազատություն՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի իրականացման ուղեցույց, Մարդու իրավունքների ձեռնարկ թիվ 2, 2-րդ հրատարակություն (2004 թ.)
- Եվրոպայի խորհուրդ, խոսքի ազատության իրավունքի պաշտպանությունը ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, Իրավաբանների ձեռնարկ (2017 թ.)
- Եվրոպայի խորհուրդ, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի առաջարկություններ և հայտարարություններ ԶԼՄ-ների և տեղեկատվական հասարակության վերաբերյալ (2016 թ.)
- Եվրոպայի խորհրդի ԵԽԽՎ թիվ 1577 հանձնարարական (2007 թ.) զրպարտության ապաքրեականացման վերաբերյալ, 1814 համապատասխան հանձնարարականով (ընդունվել է 4 հոկտեմբերի 2007 թ.)
- Եվրախորհրդի հանձնարարական 2007 (2) լրատվամիջոցներում բազմակարծության և մեդիա բովանդակության բազմազանության վերաբերյալ (ընդունվել 31 հունվարի 2007 թ.)
- Եվրոպայի խորհուրդ, CM/Rec հանձնարարական (2014) 7 ազդարարների պաշտպանության վերաբերյալ, և բացատրական հուշագիր (ընդունվել 30 ապրիլի 2014 թ.)

- Եվրոպայի խորհուրդ, անդամ պետությունների նախարարների կոմիտեի հանձնարարական թիվ R(2000)7 լրագրողների կողմից իրենց տեղեկատվական աղբյուրները չբացահայտելու իրավունքի վերաբերյալ (ընդունվել է 8 մարտի 2000 թ.)
- Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների նախարարների կոմիտեի CM/Rec (2018)1 հանձնարարական՝ ԶԼՄ-ների բազմակարծության և լրատվամիջոցների սեփականության թափանցիկության վերաբերյալ (ընդունվել է 7 մարտի 2018 թ.)
- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, անդրադարձ ազդարարի պաշտպանության հարցերին ՏՀԶԿ երկրներում: Պարտավորություններից դեպի արդյունավետ պաշտպանության (2014 թ.)
- ՀՈԴՎԱԾ 19, զրպարտության սահմանումը: Խոսքի ազատության և հեղինակության պաշտպանության սկզբունքները (2017 թ.)

ՈԼՈՐՏ 7՝ Մասնավոր կյանքի իրավունք

Չափորոշիչ 1՝ Յուրաքանչյուր ոք ունի մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանության իրավունք:

Մասնավոր կյանքի իրավունքը մարդու անձնական և ընտանեկան կյանքի, բնակավայրի և նամակագրության նկատմամբ հարգանքն է: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով այս իրավունքը երաշխավորվում է բոլորի համար: Մասնավոր կյանքի իրավունքը և անհատական տվյալների պաշտպանությունը վերաբերում է նաև ՔՀԿ-ներին, և պետք է հավասարակշռված լինի տեղեկատվության մատչելիության իրավունքով: Ցանկացած միջամտություն պետք է հիմնված լինի հստակ ձևակերպված օրենքի վրա և խիստ անհրաժեշտ լինի օրինական նպատակներին հասնելու համար: Ավելին, մասնավոր կյանքի իրավունքի միջամտությունը կամ խախտումը պետք է հետաքննվի և ենթարկվի պատասխանատվության:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Մասնավոր կյանքի իրավունք ունեն բոլորը՝ առանց խտրականության: 2. Մասնավոր կյանքի միջամտությունից կամ հարձակումներից պաշտպանությունը երաշխավորված է օրենքով՝ անկախ այն բանից, թե արդյոք դա պետական մարմինների, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից է իրականացվում, առցանց թե ոչ առցանց եղանակով: 3. Օրենքը սահմանում է պետական մարմինների կողմից մասնավոր անձանց անձնական տվյալների հավաքագրման, մշակման և պահպանման կարգը:

1. **<u>Մասնավոր կյանքի իրավունք ունեն բոլորը՝ առանց խտրականության</u>**

Ըստ մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային չափորոշիչների՝ բոլոր մարդիկ ունեն մասնավոր կյանքի գաղտնիության իրավունք, և այդ իրավունքի կամայական կամ անօրինական միջամտություն չի կարող լինել: Մասնավոր կյանքի իրավունքը որոշ հանգամանքներում կարող է ծառայել որպես ազատ խոսքի և տեղեկատվության մատչելիության սահման, երբ որոշակի տեղեկությունների գաղտնիության ապահովման հանրային շահը ավելի գերակա է, քան դրանց բացահայտման հանրային շահը:

«Մասնավոր կյանք» հասկացությունը կարող է կիրառվել մասնագիտական և ձեռնարկատիրական գործունեության և մարդու ֆիզիկական և սոցիալական ինքնության ասպեկտների, այդ թվում՝ անձնական ինքնավարության իրավունքի, անձնական զարգացման և այլ մարդկանց հետ հարաբերությունների հաստատման նկատմամբ: Այսպիսով, հարգանքը «մասնավոր կյանքի» նկատմամբ ներառում է «մասնավոր սոցիալական կյանքով» ապրելու իրավունքը, որը նշանակում է անհատի կողմից իր անհատականության սոցիալական ասպեկտի զարգացման հնարավորությունը՝ առանց չհիմնավորված միջամտության: «Մասնավոր կյանքի պաշտպանությունը» ներառում է տան, հեղինակության, հաղորդակցության և անձնական տվյալների պաշտպանությունը: «Մասնավոր» հասկացությունը տարածվում է նաև անձի բնակության վայրի և նամակագրության նկատմամբ, որը ՔՀԿ-ների դեպքում ներառում է նաև աշխատանքային գրասենյակը և հարակից գույքը:

Ըստ մարդու իրավունքների միջազգային դաշնագրերի՝ մասնավոր կյանքի իրավունքը կիրառվում է նաև միավորումների և նրանց անդամների նկատմամբ: Հետևաբար, տեղեկատվության բացահայտման առումով ՔՀԿ-ներին ներկայացվող ցանկացած իրավական պահանջ, որը

սովորաբար կարգավորվում է տվյալների պաշտպանության կանոններով, պետք է համապատասխանի երեք բաղադրիչի քննության սկզբունքին: Այս սկզբունքը նախատեսում է, որ ցանկացած սահմանափակում պետք է՝

1) ունենա հստակ իրավական հիմք,
2) հետամուտ լինի իրավաչափ նպատակի (պետական կամ հասարակական անվտանգության պաշտպանություն, պետության դրամական շահերի պաշտպանություն, քրեական հանցանքի կանխում կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանություն),
3) խիստ անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում՝ այդ նպատակին հասնելու համար:

Եթե այդ չափանիշներից որևէ մեկը պահպանված չէ, ապա մասնավոր կյանքի իրավունքի միջամտությունն արդարացված չէ:

Մասնավոր կյանքի իրավունքը պետք է օրենքով երաշխավորվի ՔՀԿ-ների և նրանց հիմնադիրների, անդամների, շահառուների, դոնորների և այլ առնչվող անձանց համար՝ առանց խտրականության: ՔՀԿ-ները «չպետք է համընդհանուր պարտավորություն ունենան բացահայտելու իրենց անդամների անունները և հասցեները, քանի որ դա կարող է անհամատեղելի լինել իրենց միավորման ազատության և մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի հետ»:[16] Բացի այդ, ՔՀԿ-ների ստուգումները և վերահսկողությունը չպետք է ավելի խիստ լինեն, քան մասնավոր տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվող ստուգումները և վերահսկողությունը:

ՔՀԿ-ների համար սահմանված հաշվապահական հաշվառման և հաշվետվողականության կանոնները պետք է համահունչ լինեն օրենսդրությամբ նախատեսված մասնավոր կյանքի պահանջներին (օրինակ, աշխատողների առողջական վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը չպետք է հրապարակվի, քանի որ այն պարունակում է անձնական բնույթի տվյալներ):

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Տվյալների բացահայտման պահանջները ՔՀԿ-ների դեպքում ավելի ծավալուն կամ միջամտող բնույթ ունեն, քան մասնավոր տնտեսվարող սուբյեկտների դեպքում:
- ՔՀԿ-ների մասնավոր կյանքի իրավունքը սահմանող դրույթները նույնն են բոլոր ՔՀԿ-ների նկատմամբ՝ անկախ չափի, կառուցվածքի և գործունեության տարբերություններից:
- ՔՀԿ-ների անձնական տվյալների և գաղտնի տեղեկատվության բացահայտման պահանջներն անհամաչափ են և արդարացված չեն օրինական շահով:

2. <u>Մասնավոր կյանքի միջամտությունից կամ հարձակումներից պաշտպանությունը երաշխավորված է օրենքով՝ անկախ այն բանից, թե արդյոք դա պետական մարմինների, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից է իրականացվում, առցանց թե ոչ առցանց եղանակով</u>

Միջազգային և տարածաշրջանային չափորոշիչները արգելում են պետության կողմից մասնավոր կյանքի իրավունքի անօրինական և կամայական միջամտության որևէ ձև: Ըստ այդ չափորոշիչների, պետությունը նաև դրական պարտավորություն ունի՝ պաշտպանելու անհատներին և կազմակերպություններին երրորդ անձանց միջամտությունից: Հետևաբար, օրենսդրությունը պետք է պատասխանատվություն սահմանի ՔՀԿ-ների և նրանց հիմնադիրների, անդամների, շահառուների, խորհրդի անդամների, դոնորների և առնչվող այլ անձանց մասնավոր կյանքին միջամտելու համար՝ թե՛ պետության, թե՛ երրորդ անձանց կողմից միջամտելու դեպքում:

[16] ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույց հավաքների ազատության վերաբերյալ, 2015թ. պարբ. 167

Օրենսդրությունը պետք է երաշխավորի նաև մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը ինչպես առցանց, այնպես էլ անցանց տարածքում: Պետությունը չպետք է կարողանա ինտերնետ ծառայության մատակարարներին պարտադրել բացահայտել առցանց (կամ այլ էլեկտրոնային տեխնոլոգիաների միջոցով) փոխանակված տեղեկությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է օբյեկտիվ հիմքերով վավեր դատարական վճիռ: Սա վերաբերում է թե՛ միավորման հետ կապված անձանց և թե՛ հենց միավորումների միջև փոխանակված տեղեկատվությանը:

Պետությունը չպետք է խախտի ՔՀԿ-ների, նրանց հիմնադիրների, շահառուների, դոնորների և առնչվող այլ անձանց մասնավոր կյանքի իրավունքը: Մասնավոր կյանքի իրավունքի ցանկացած միջամտություն պետք է քննվի դատական ատյաններում՝ անկախ դատական մարմնի կողմից:

Օրենսդիրները պետք է ՔՀԿ-ների հսկողությանն առնչվող դրույթների խիստ նեղ շրջանակ սահմանեն և ապահովեն, որ նման միջոցառումները տեղի ունենան միայն դատարանի որոշմամբ, որը կայացվում է անկախ դատական մարմնի կողմից:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Առկա չեն պետական մարմինների կամ այլ կողմերի պատասխանատվությունը հստակ կարգավորող դրույթներ՝ այն դեպքերի համար, երբ նրանք միջամտում են ՔՀԿ-ների և նրանց անդամների մասնավոր կյանքի իրավունքին կամ օգտագործում են նրանց տվյալները, օրինակ՝ գաղտնալսման կամ որևէ այլ եղանակով ՔՀԿ-ների անդամների և գործունեությանն առնչվող հաղորդակցությունը ստանալով:
- Օրենքով իշխանություններից անկախ դատարանի թույլտվություն չի պահանջվում՝ ՔՀԿ-ներից տեղեկատվություն պահանջելու համար:

3. <u>Օրենքը սահմանում է պետական մարմինների կողմից մասնավոր անձանց անձնական տվյալների հավաքագրման, մշակման և պահպանման կարգը</u>

Անհատական տվյալները կարող են հրապարակվել, հասանելի դառնալ կամ այլ կերպ օգտագործվել բացառապես պետական անվտանգության, հասարակական կարգի կամ առողջության ու բարոյականության պաշտպանության, այլ քաղաքացիների իրավունքներն և ազատությունները ապահովելու նպատակով: Անհատական տվյալները կարող են հրապարակվել այն դեպքում, երբ կազմակերպությունները կամ անձինք տալիս են իրենց համաձայնությունը դրանց օգտագործման համար: Սա ամրագրված է ԵՄ տվյալների պաշտպանության գլխավոր կանոնակարգով, որը վերաբերում է ոչ միայն ԵՄ տարածքում հիմնված կազմակերպություններին, այլև ԵՄ-ից դուրս գտնվող այն կազմակերպություններին, որոնք հաղորդակցվում ԵՄ քաղաքացիների հետ (օրինակ, դրամահավաքի նպատակով) կամ զբաղվում են ԵՄ քաղաքացիների տվյալների հավաքմամբ, մշակմամբ և պահպանմամբ:

Մասնավոր կյանքի իրավունքի խախտման դեպքում պետությունը պետք է համապատասխան պատժամիջոցներ և պաշտպանության այլ միջոցներ կիրառի: Պետությունը պետք է նաև ոչ խտրական վերաբերմունք ապահովի տվյալները կրողների նկատմամբ: Ֆիզիկական անձանց նկատմամբ առկա անվտանգության երաշխիքները պետք է կիրառվեն նաև միավորումների նկատմամբ՝ անկախ նրանից, թե արդյոք նրանք գրանցված են որպես իրավաբանական անձ, թե ոչ:

Պետք է բովանդակային և ընթացակարգային երաշխիքներ լինեն, որ պետական մարմինների համար տվյալների հասանելիությունը (կամ օգտագործելու հնարավորությունը) հնարավոր կլինի միայն անհրաժեշտության դեպքում (օրինակ, քրեական հետախուզության շրջանակներում):

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենքը թույլ է տալիս անձական տվյալների բացահայտումը ոչ իրավաչափ նպատակներով՝ առանց այդ անձի համաձայնության:
- Անհատական տվյալների հավաքագրման, պահպանման և օգտագործման կանոնները չեն սահմանված օրենսդրական ակտերում, կամ սահմանված են անորոշ, ոչ հստակ ու ՔՀԿ-ների համար անհասկանալի՝ տեղիք տալով լայն մեկնաբանման:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Պետական մարմինների կողմից մասնավոր կյանքի իրավունքի խախտումները ուսումնասիրվում են և համապատասխան գործ է հարուցվում: 2. ՔՀԿ-ները և նրանց հետ առնչվող անձինք պաշտպանված են պետական մարմինների կողմից առցանց և ոչ առցանց եղանակով անհատական տեղեկատվության անօրինական կամ անհամաչափ հավաքագրման, մշակման և պահպանման փորձերից:

1. **<u>Պետական մարմինների կողմից մասնավոր կյանքի իրավունքի խախտումները ուսումնասիրվում են և ստանում համապատասխան իրավական արձագանք</u>**

Մասնավոր կյանքի իրավունքի խախտումները պետք է անհապաղ և արդարացի հետաքննության ենթարկվեն, իսկ մեղավոր կողմերի նկատմամբ օրենքով նախատեսված համաչափ պատժամիջոցներ կիրառվեն: ՔՀԿ-ները, նրանց հիմնադիրները, անդամները և այլ առնչվող անձինք պետք է իրավունք ունենան փոխհատուցում պահանջել պետության կողմից հսկողության հետևանքով իրենց մասնավոր կյանքի անձեռնմխելիության և այլ հարակից իրավունքների որևէ անօրինական միջամտության համար, եթե այդ միջամտությունը անհամաչափ է և անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում՝ նույնիսկ այն դեպքում, երբ այդ հսկողությունն իրականացվում է օրենքի հիման վրա և նպատակ ունի պաշտպանել ազգային անվտանգությունը կամ պայքարել հանցագործության դեմ: Մասնավոր կյանքի պաշտպանությունը պետք է ապահովված լինի դատական կարգով:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ները, նրանց հիմնադիրները, անդամները կամ այլ առնչվող անձինք հսկողության կամ գաղտնալսման են ենթարկվում առանց օրենքով սահմանված բավարար իրավական հիմքերի, ինչպիսիք են դատական վճիռը և իրավաչափ նպատակները (օրինակ, ազգային անվտանգությունը):
- ՔՀԿ-ների, նրանց հիմնադիրների, անդամների և այլ առնչվող անձանց նկատմամբ հսկողության կամ գաղտնալսման հիմնավոր կասկածները չեն հետաքննվում և/կամ պատժվում:

2. **<u>ՔՀԿ-ները և նրանց հետ առնչվող անձինք պաշտպանված են պետական մարմինների կողմից առցանց և ոչ առցանց եղանակով անհատական տեղեկատվության անօրինական կամ անհամաչափ հավաքագրման, մշակման և պահպանման փորձերից</u>**

Անհատական տեղեկատվության հավաքագրման, մշակման և պահպանման գործընթացը պետք է հիմնված լինի օրենքի վրա: ՔՀԿ-ները չպետք է պարտավորված լինեն հրապարակել իրենց անդամների և նրանց հետ առնչվող այլ ֆիզիկական անձանց անունները, հասցեները և այլ անձնական տվյալներ, քանի որ դա խախտում է ոչ միայն իրենց մասնավոր կյանքի իրավունքը, այլ նաև միավորումների ազատությունը:

Սակայն ՔՀԿ-ների անդամներից և այլ առնչվող անձանցից որոշակի հանգամանքներում կարող է օրինական հիմքով պահանջվել բացահայտել որոշ անձնական տեղեկություններ, օրինակ, երբ նրանք մասնակցում են հանրային նվիրատվությունների հավաքագրմանը կամ զգալի աջակցություն են ստանում պետության կամ հասարակության կողմից: Կարող է նաև ներկայացվել ողջամիտ պահանջ՝ ներկայացնել քաղաքական կուսակցությունների անդամների ցուցակը, եթե նրանք դիմել են նվազագույն թվով անդամներ ունեցող կուսակցությունների համար նախատեսված պետական ֆինանսավորման համար: Անհատներից կարող է պահանջվել հաղորդել որևէ ՔՀԿ-ին իրենց անդամակցության վերաբերյալ, եթե այդ անդամակցությունը կարող է խախտել իրենց պարտավորությունները որպես պետական աշխատող կամ պաշտոնատար անձ: Հատուկ մասնագիտական միավորումներից կարող է պահանջվել տրամադրել անդամների ցուցակը, եթե այդ միավորումներն իրականացնում են որոշակի կարգավորիչ գործառույթներ: Այնուամենայնիվ, ցանկացած այդպիսի տեղեկությունների բացահայտումը պետք է հիմնված լինի համաչափության սկզբունքի վրա և ապահովի տվյալների պաշտպանությունը, իսկ տվյալներին հասանելիություն ունեցող անձանց թիվը պետք է սահմանափակ լինի:

ՔՀԿ-ների, նրանց հիմնադիրների, անդամների, շահառուների և այլ առնչվող անձանց անձնական տվյալների հավաքումը, օգտագործումը և վերահսկումը կարող է իրականացվել միայն հստակ և թափանցիկ կանոնների հիման վրա: Պետության կողմից իրականացվող վերահսկողությունը և ստուգումները պետք է ունենան հստակ օրենսդրական հիմքեր և համաչափ լինեն օրինական նպատակներին, որոնց այն ձգտում է հասնել: Անհատական տվյալները չեն կարող օգտագործվել առանց անձի համաձայնության:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ներում ստուգումներ իրականացնելիս պետական մարմինները, առանց օրենքով հստակ սահմանված օրինական հիմքերի, պահանջում են, որ ՔՀԿ-ները տրամադրեն անձնական տեղեկություններ, օրինակ՝ իրենց անդամների ցուցակը:
- ՔՀԿ-ների, նրանց անդամների և հիմնադիրների անձնական տվյալներն ուղարկվում են անորոշ թվով պետական մարմինների՝ լրացուցիչ հաստատման համար:
- Անհատական տվյալների հավաքագրման, պահպանման և օգտագործման կանոնները չեն սահմանված օրենսդրական ակտերում, կամ սահմանված են անորոշ, ոչ հստակ ու ՔՀԿ-ների համար անհասկանալի՝ տեղիք տալով լայն մեկնաբանման:

Չափորոշիչ 2՝ Պետությունը պաշտպանում է ՔՀԿ-ների և առնչվող անձանց մասնավոր կյանքի իրավունքը:

ՔՀԿ-ների և նրանց հետ կապված բոլոր անհատների մասնավոր կյանքի իրավունքը պետք է պաշտպանված լինի պետության կողմից: ՔՀԿ-ների հաշվետվողականությանը վերաբերող օրենսդրությունը պետք է պաշտպանի ՔՀԿ-ների հետ կապված բոլոր անհատների, մասնավորապես դոնորների, անդամների, կամավորների և այլ անձանց մասնավոր կյանքի իրավունքը: ՔՀԿ գրասենյակների և փաստաթղթերի հասանելիությունը պետք է հնարավոր լինի միայն այն դեպքում, եթե կան այդպիսի հասանելիության օբյեկտիվ հիմքեր: ՔՀԿ-ների գործունեության ցանկացած հսկողություն կամ միջամտություն պետք է լինի համաչափ, իրավաչափ և տեղի ունենա անկախ դատական մարմնի նախնական թույլտվության հիման վրա:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. ՔՀԿ-ների հաշվետվողականությանը վերաբերող պահանջները պահպանում են անդամների, դոնորների, խորհրդի անդամների և աշխատողների մասնավոր կյանքի գաղտնիության

սկզբունքը և անձնական իրերի գաղտնիությունը:
2. ՔՀԿ գրասենյակի խուզարկումը հնարավոր է միայն օբյեկտիվ հիմքերի և համապատասխան դատական թույլտվության հիման վրա:
3. ՔՀԿ-ներին կամ նրանց հետ առնչվող անձանց հետևելը համաչափ է, օրենքով հիմնավորված և պահանջում է անկախ դատական մարմնի կողմից տրված նախնական թույլտվություն:

1. **<u>ՔՀԿ-ների հաշվետվողականությանը վերաբերող պահանջները պահպանում են անդամների, դոնորների, խորհրդի անդամների և աշխատողների մասնավոր կյանքի գաղտնիության սկզբունքը և անձնական իրերի գաղտնիությունը</u>**

«ՔՀԿ-ների վերահսկողության բոլոր կանոնակարգերը և գործելակարգերը պետք է որպես ելակետ ընդունեն կազմակերպության գործողություններին պետության նվազագույն միջամտության սկզբունքը»:[17] Մասնավոր կյանքի իրավունքը պահանջում է, որ բոլոր անձինք զերծ լինեն «իրենց մասնավոր կյանքի գաղտնիության, բնակության վայրի, նամակագրության և ընտանիքի հարցերում կամայական կամ անօրինական միջամտությունից» և իրենց հեղինակության հանդեպ ոտնձգություններից:[18] Որպես այդպիսին, մասնավոր կյանքի իրավունքով պաշտպանվում է նամակագրության, հեռախոսազանգերի, էլեկտրոնային հաղորդագրությունների, տեքստային հաղորդագրությունների և համացանցային որոնումների գաղտնիությունը և անձի հսկողությունը իր սեփական անձնական տվյալների նկատմամբ:

Հետևաբար, թեև հաշվետվողականության պահանջը ինքնին չի սահմանափակում ՔՀԿ-ների գործունեությունը, այնուամենայնիվ, անհրաժեշտ են ՔՀԿ անդամների, դոնորների, խորհրդի անդամների, աշխատակիցների և կամավորների մասնավոր կյանքի պաշտպանության բավարար երաշխիքներ: ՔՀԿ-ների հետ առնչվող անհատները կարող է ենթակա լինել հաշվետվողականության պահանջների միայն այն դեպքում, երբ նրանք անձնական գործարքներ են ունեցել ՔՀԿ-ի հետ, կամ պետական մարմիններն ունեն լուրջ և հիմնավորված մտահոգություններ հնարավոր խարդախության, յուրացում կատարելու կամ այլ հանցավոր գործունեության վերաբերյալ: Ըստ էության, տարբեր երկրներում կիրառվող գործելակարգերը և կանոնակարգերը որպես ՔՀԿ-ների մասնավոր բնույթի տվյալների բացահայտման պարտադրանքի օրինական հիմնավորում սովորաբար վկայակոչում են խարդախություն, հափշտակության, փողերի լվացման և այլ հանցագործությունների դեմ պայքարը՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական անվտանգության կամ հասարակական կարգի: Սակայն, ըստ Միավորումների ազատության իրավունքի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի պարզաբանման, չնայած նման արդարացումները կարող են իրավաչափ լինել, «պարզապես իրավաչափ շահի հետապնդումը բավարար չէ » և բոլոր սահմանափակումները պետք է լինեն «նվազագույն չափով միջամտող միջոցներ՝ ցանկալի նպատակին հասնելու համար»: Նման երաշխիքները նույնպես պետք է հստակ ամրագրված լինեն օրենքով և հասանելի լինեն հանրությանը:

Տեղեկությունների բացահայտման հանրային շահը պետք է հավասարակշռված լինի տեղեկությունների գաղտնիության պահպանման հանրային շահի հետ: Այս՝ «հանրային շահի» թեստը պարբերաբար կիրառվում է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի («ՄԻԵԴ») կողմից մասնավոր կյանքի պաշտպանության գործեր քննելիս, որտեղ հաշվի է առնվում նաև տեղեկատվության մատչելիության իրավունքը:

[17] ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույց հավաքների ազատության վերաբերյալ, 2015թ. պարբ. 228
[18] ՔՔԻՄԴ, հոդված 17, պարբ. 2

Ինչպես նշվեց վերևում, մասնավոր կյանքի իրավունքը ներառում է նաև անհատական տվյալների պաշտպանության իրավունքը: Այս պաշտպանությունը կարող է խնդրահարույց լինել, երբ խոսքը առցանց ռեսուրսների մասին է, որոնք պահանջում են հատուկ տեխնիկական գիտելիքներ: Նույնիսկ եթե անձնական տվյալների օգտագործման համաձայնությունը տրվել է կամավոր, համաձայնություն տվող անձն իրավունք ունի ցանկացած պահի չեղարկելու իր համաձայնությունը: Լռությունը, նախապես նշագրված վանդակները կամ գործողություն չձեռնարկելը չպետք է համարել ենթադրյալ համաձայնություն, ինչպես սահմանված է ԵՄ տվյալների պաշտպանության գլխավոր կանոնակարգով (սա վերաբերում է նաև ԵՄ-ից դուրս գործող կազմակերպություններին, որոնք առնչվում կամ մշակում են ԵՄ քաղաքացիներին վերաբերող տվյալներ):

ՔՀԿ-ները նույնպես պաշտպանված են անհատական տվյալների ավտոմատ մշակման գործընթացում: Ռասայական ծագումը, քաղաքական դիրքորոշումը կամ կրոնական կամ այլ համոզմունքները բացահայտող տվյալները, ինչպես նաև առողջությանը կամ սեռական կյանքին վերաբերող անձնական տվյալները չեն կարող ավտոմատ կերպով մշակվել, եթե տեղական օրենսդրությունը չի ապահովում միջազգային իրավունքի նորմերով սահմանված համապատասխան երաշխիքներ: Նույնը վերաբերում է նաև քրեական դատապարտվածությանն առնչվող անձնական տվյալներին:

Բոլոր դեպքերում, վերահսկողությունը պետք է միշտ առաջնորդվի այն կանխավարկածով, որ ՔՀԿ-ն և նրա գործունեությունը օրինական են: Ավելին, նման վերահսկողությունը չպետք է միջամտի ՔՀԿ-ների ներքին կառավարմանը և ՔՀԿ-ից չպետք է պահանջի իր նպատակները և գործունեությունը համապատասխանեցնել կառավարության քաղաքականությանը և վարչարարությանը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ների անդամների, դոնորների, խորհրդի անդամների, աշխատակիցների և կամավորների անձնական տվյալների վերաբերյալ հաշվետվողականության պահանջները նույնն են բոլոր ՔՀԿ-ների համար՝ անկախ չափից, կառուցվածքից և գործունեության շրջանակից:
- ՔՀԿ-ների անդամների, դոնորների և աշխատակիցների անձնական տվյալների վերաբերյալ հաշվետվողականության պահանջները անհամաչափ են, անհրաժեշտ չեն օրինական նպատակների պաշտպանության տեսանկյունից և չեն բխում հանրային շահերից:
- Հաշվետվողականության պարտավորությունները ՔՀԿ-ներին պարտադրում են տեղեկություններ հայտնել ՄԻԱՎ դրական ցուցիչ ունեցող անդամների վերաբերյալ:

2. <u>ՔՀԿ գրասենյակի խուզարկումը հնարավոր է միայն օբյեկտիվ հիմքերի և համապատասխան դատական թույլտվության հիման վրա</u>

ՔՀԿ գրասենյակներում իրականացվող ցանկացած խուզարկություն կամ փաստաթղթերի կամ այլ գույքի (նոթբուքերի և այլն) առգրավում պետք է համապատասխանի միջազգային չափանիշներով սահմանված մասնավոր կյանքի իրավունքի պաշտպանության երեք բաղադրիչի քննության սկզբունքին (այսինքն՝ սահմանված լինի օրենքով, լինի խիստ անհրաժեշտ և հետամուտ լինի իրավաչափ նպատակի): Այն պետք է նաև հիմնված լինի անկախ դատական մարմնի թույլտվության վրա և անցկացվի ՔՀԿ ներկայացուցչի ներկայությամբ: Ցանկացած նման թույլտվություն պետք է ենթակա լինի դատական կարգով բողոքարկման:

Օրենսդրությունը պետք է հստակ սահմանի այն մարմինների ցանկը, որոնք իրավասու են խուզարկություն իրականացնել ՔՀԿ գրասենյակներում: Այդ մարմինները պետք ունենան ներքին կանոնակարգ ունենան, որտեղ նկարագրված են ՔՀԿ-ների ստուգման հիմքերը, ստուգումների տևողությունը և ստուգման ընթացքում կամ դրանից հետո ներկայացման ենթակա փաստաթղթերի

շրջանակը: Կանոնակարգը պետք է ներառի ստուգողների իրավասությունների հստակ նկարագիրը և ապահովի ՔՀԿ-ների անդամների և հիմնադիրների մասնավոր կյանքի իրավունքի պաշտպանությունը:

ՔՀԿ-ները պետք է ողջամիտ ժամկետում տեղեկացված լինեն խուզարկության կամ ստուգման, ինչպես նաև ստուգման տևողության մասին: Բացառությունները պետք է խիստ սահմանափակ լինեն, ներառեն նեղ շրջանակներ, հիմնված լինեն օրենքի վրա և մանրամասն հիմնավորվեն խուզարկման դատական թույլտվության միջոցով: Օրենքը պետք է նաև սահմանի, որ հնարավորության դեպքում ՔՀԿ-ները ստուգման կամ խուզարկման ընթացքում պետք է հնարավորություն ունենան օգտվել փաստաբանի ծառայություններից:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Ըստ օրենքի, ՔՀԿ-ները պարտավոր են ապահովել իրենց գրասենյակների մուտքը՝ ոստիկանության հրամանի հիման վրա, առանց անկախ մարմնի թույլտվության:
- ՔՀԿ-ների գրասենյակների խուզարկությունների իրականացման կանոնները և խուզարկություն իրականացնող անձանց շրջանակը հստակ սահմանված չեն:
- Խուզարկությունների և ստուգումների հնարավոր տևողության սահմանված ժամանակացույց չկա:

3. **<u>ՔՀԿ-ներին կամ նրանց հետ առնչվող անձանց հետևելը համաչափ է, օրենքով հիմնավորված և պահանջում է անկախ դատական մարմնի կողմից տրված նախնական թույլտվություն</u>**

Պետության կողմից իրականացվող հսկողությունը պետք է առաջին հերթին նպատակ ունենա պայքարել հանցավորության դեմ և պաշտպանել ազգային անվտանգությունը: Նույնիսկ եթե հսկողության միջոցառումներն իրականացվում են այդ օրինական պետական նպատակների իրագործման համար, դրանք կարող են, այնուամենայնիվ, հանգեցնել միավորումների և նրանց անդամների մասնավոր կյանքի իրավունքի անհարկի, ավելորդ և անհամաչափ սահմանափակումների:

Ինչպես ընդգծել է Ահաբեկչության դեմ պայքարի ընթացքում մարդու իրավունքների պաշտպանության և հիմնարար ազատությունների խթանման հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը, առանց համապատասխան իրավական երաշխիքների հսկողության իրավասությունների և նոր տեխնոլոգիաների օգտագործումը կարող է բացասական ազդեցություն ունենալ խոսքի ազատության և միավորումների ազատության իրավունքի վրա, քանի որ «այս ազատությունների համար հաճախ անհրաժեշտ են մասնավոր հանդիպումներ և հաղորդակցություն, որպեսզի մարդիկ հնարավորություն ունենան կազմակերպվել կառավարության կամ այլ հզոր դերակատարների մոտ հանդես գալու համար»:

Հսկողության միջոցները պետք է համապատասխանեն նվազագույն պահանջներին և երաշխիքներին, որոնք նախատեսված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով:

Այն պայմանները և հանգամանքները, որոնց դեպքում իշխանությունները կարող են գաղտնի հսկողություն և տվյալների հավաքագրում իրականացնել, պետք է հստակ սահմանված լինեն օրենքով և միշտ ենթակա լինեն անկախ և անկողմնակալ դատական մարմնի վերահսկմանը:

Օբյեկտիվ ապացույցների վրա հիմնված դատական որոշման բացակայության դեպքում ոչ իրավաչափ է համարվում ստիպել ինտերնետ ծառայությունների մատակարարներին պետական

մարմիններին որևէ տեղեկատվություն ներկայացնել առցանց կամ այլ էլեկտրոնային տեխնոլոգիաների միջոցով փոխանակված տեղեկությունների վերաբերյալ:

ՔՀԿ կայքերի, տեղեկատվության որոշակի աղբյուրների կամ հաղորդակցման գործիքների արգելափակումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ այդ կազմակերպությունների վրա: Անվտանգության միջոցառումները պետք է ժամանակավոր բնույթ ունենան, հստակ սահմանված լինեն կոնկրետ իրավաչափ նպատակի հասնելու համար և նախատեսված լինեն օրենքով: Այդ միջոցները չպետք է օգտագործվեն այլախոհությունը և քննադատական ելույթները թիրախավորելու համար:

Օրենսդիրները ՔՀԿ-ների հսկողության հնարավորություն ընձեռող ցանկացած դրույթ պետք է բավականաչափ հստակ սահմանեն՝ միևնույն ժամանակ նախատեսելով դատական որոշման պարտադիր առկայությունը: «Ցանկացած դրույթ, որը պարունակում է ինտերնետի և այլ հաղորդակցության գործիքների, այդ թվում՝ սոցիալական լրատվամիջոցների օգտագործման միջամտություն, պետք է լինի համաչափ և առկա բոլոր տարբերակներից ամենանվազ միջամտող: Հսկողության ցանկացած միջոց պետք է միշտ հնարավոր լինի քննել դատական կարգով»:[19]

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Կազմակերպությունների համատարած հսկողության գործադրումը բացառիկ հանգամանքներով սահմանափակելու կամ վերահսկողության համարժեք մեխանիզմներ ապահովելու վերաբերյալ իրավական դրույթներ չկան:
- Հսկողության թույլտվություն տվող պատասխանատու մարմիններն անկախ չեն կառավարությունից:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. ՔՀԿ-ների կամ նրանց հետ առնչվող անձանց մասնավոր կյանքի կամ հաղորդակցության չարտոնված միջամտության պրակտիկա չկա: 2. Առանց համապատասխան իրավասության ՔՀԿ-ների գրասենյակ ներխուժելու կամ ՔՀԿ-ների փաստաթղթերը զննելու դեպքեր չկան:

1. **<u>ՔՀԿ-ների կամ նրանց հետ առնչվող անձանց մասնավոր կյանքի կամ հաղորդակցության չարտոնված միջամտության գործելակարգ չկա</u>**

Հաղորդակցության միջամտությունը (այդ թվում, լայնածավալ վերահսկողությունը, գաղտնալսումները, նամակների, հեռախոսազանգերի, հաղորդագրությունների որսումը, և այլն) երբևիցե չպետք է կիրառվի առանց դատարանի կողմից պատշաճ թույլտվության: Նման միջամտությունը արտոնող դատական որոշումը պետք է ներառի որոշման իրավական հիմքի հստակ բացատրություն, նկարագրի հետապնդվող իրավաչափ շահը (այն է՝ պետական անվտանգության, հասարակական անվտանգության, պետության դրամական շահի պաշտպանություն, քրեական հանցագործությունների կանխում կամ այլոց իրավունքներ և ազատություններ) և հիմնավորի նման միջամտության համաչափությունը և խիստ անհրաժեշտությունը նշված նպատակի համար: Այն անձը կամ կազմակերպությունը, որին վերաբերում է տվյալ որոշումը, պետք է հնարավորություն ունենա այն բողոքարկել անկախ դատական մարմնում: Ցանկացած դեպքում կառավարությունը չպետք է իր վերահսկողական

[19] ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույց հավաքների ազատության վերաբերյալ, 2015թ. պարբ. 271

լիազորություններն օգտագործի կազմակերպությունների գործունեությանը խոչընդոտելու նպատակով:

ՔՀԿ-ների խորհրդի անդամների, աշխատակիցների կամ դոնորների մասնավոր գույքը և եկամուտները պաշտպանված են օրենքով. պետական հաստատությունները չպետք է այդ ակտիվների մասին տեղեկատվություն պահանջեն կամ հավաքագրեն՝ առանց պատշաճ թույլտվության:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Կառավարությունները կամ այլ պետական մարմինները առանց դատարանի որոշման հսկողություն են իրականացնում ՔՀԿ-ների նկատմամբ:
- Միջամտության վերաբերյալ դատական որոշումը պատշաճ հիմնավորված չէ (օրինակ, բացակայում է համապատասխան իրավական հիմքը, իրավաչափ նպատակի նկարագիրը կամ միջամտության անհրաժեշտության և համաչափության հիմնավորումը):
- Ազդակիր կազմակերպությունը կամ անհատները չեն կարող բողոքարկել միջամտությունը լիազորող դատական որոշումը՝ դրա օրինականությունը քննելու համար:

2. **<u>Առանց համապատասխան իրավասության ՔՀԿ-ների գրասենյակ ներխուժելու կամ ՔՀԿ-ների փաստաթղթերը զննելու դեպքեր չկան</u>**

ՔՀԿ գրասենյակներում իրականացվող ցանկացած խուզարկություն կամ փաստաթղթերի կամ այլ գույքի (նոթբուքեր և այլն) առգրավում պետք է ուղեկցվի անկախ դատական մարմնի կողմից տրված որոշմամբ և անցկացվի ՔՀԿ-ն ներկայացուցչի ներկայությամբ: Այս որոշումը պետք է ներառի որոշման իրավական հիմքի հստակ մատնանշում, նկարագրի կոնկրետ օրինական նպատակը (այն է՝ պետական անվտանգության, հասարակական անվտանգության, պետության դրամական շահի պաշտպանություն, քրեական հանցագործությունների կանխում կամ այլոց իրավունքներ և ազատություններ) և հիմնավորի նման միջոցառման համաչափությունը և խիստ անհրաժեշտությունը՝ տվյալ նպատակին հասնելու համար: ՔՀԿ-ին պետք է թույլ տրվի որոշման օրինականությունը բողոքարկել մեկ այլ անկախ դատական մարմնում:

ՔՀԿ-ներին պետք է հասանելի լինեն այն կանոնները, որոնցով սահմանվում միավորումների ստուգումների հիմքերը, տևողությունը, այն փաստաթղթերը, որոնք պետք է ներկայացվեն ստուգման ընթացքում կամ դրանից հետո, և այլ ընթացակարգային մանրամասները: Հնարավորության դեպքում նախքան խուզարկությունը սկսելը ՔՀԿ-ներին պետք է թույլ տրվի հրավիրել փաստաբանի: Խուզարկությունը չպետք է սկսվի մինչև փաստաբանի ժամանումը, և վերջինիս պետք է թույլատրվի ներկա գտնվել խուզարկության ընթացքին:

ՔՀԿ-ների այն փաստաթղթերը, որոնք առգրավվում են ստուգող մարմնի կողմից հետագա քննության համար, պետք է նույն վիճակում հետ վերադարձվեն: Պետական մարմինները պետք է ստուգման նպատակով առգրավված միավորների նկարագրության և քանակության փաստաթղթավորման գործելակարգ կիրառեն: Ստուգող մարմինը պետք է պատասխանատվություն կրի այդ փաստաթղթերին հասցված ցանկացած վնասի համար:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Տեղի են ունենում ներխուժումներ ՔՀԿ-ի գրասենյակներ, և փաստաթղթեր են առգրավվում առանց խուզարկության կամ ստուգման վերաբերյալ նախնական դատական որոշման:
- Խուզարկությունները կամ ստուգումները նախաձեռնվում են՝ ՔՀԿ-ներին հնարավորություն չտալով հրավիրել իրենց փաստաբաններին:

- Առգրավված փաստաթղթերը և նյութերը, որոնք որպես վկայություն չեն օգտագործվում, պատշաճ կերպով չեն վերադարձվում ՔՀԿ-ներին:

Համապատասխան ռեսուրսներ

- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին, Միջազգային դաշնագիր, հոդ. 17, 19, 22
- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, հոդ. 8
- Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիա, հոդ. 11
- ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույց միավորումների ազատության մասին, պարբ. 167, 211, 228-29, 231, 265, 267, 271
- ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ Կարծիք կիբեռհանցագործությունների դեմ պայքարի Ուկրաինայի օրենքի նախագծի վերաբերյալ, պարբ. 44-47 (22 օգոստոսի 2014 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի ուղեցույց. Մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը (2018 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Վան Ոսեմն ընդդեմ Բելգիայի* (2005 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Վարգան ընդդեմ Ռումինիայի* (2011 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Յ. ընդդեմ Թուրքիայի* (2015 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Բագիևան ընդդեմ Ուկրաինայի* (2016 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Շիմովոլոսը ընդդեմ Ռուսաստանի* (2011 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Պյեչովիցը ընդդեմ Լեհաստանի* (2012 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Ռոման Զախարովն ընդդեմ Ռուսաստանի* (2015 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Big Brother Watch և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության*, պարբ. 303-387 (2018 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողով, *լրացուցիչ և բարձրագույն կրթության հարցերով ուսուցիչների ազգային ասոցիացիան ընդդեմ Միացյալ Թագավորության* (16 ապրիլի 1998 թ.)
- Եվրոպայի խորհրդի CM/Rec(2007)14 հանձնարարականը Եվրոպայում ՀԿ-ների իրավական կարգավիճակի վերաբերյալ (10 հոկտեմբերի 2007 թ.)
- Եվրոպայի խորհրդի թիվ R(91)10 հանձնարարական հանրային մարմինների կողմից երրորդ անձանց հետ անհատական տվյալների հաղորդակցության վերաբերյալ (ընդունման ամսաթիվ՝ 9 սեպտեմբերի 1991 թ.)
- Եվրոպայի խորհրդի կոնվենցիա 108 Անհատական տվյալների ավտոմատ մշակումից անհատների պաշտպանության վերաբերյալ
- Եվրոպայի խորհրդի կոնվենցիա 108, հոդ. 2-3, 6, 9
- Հատուկ զեկուցողի Թեմատիկ զեկույց ահաբեկչության դեմ պայքարի ընթացքում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խթանման և պաշտպանության հարցերով, A/HRC/13/37 (28 դեկտեմբերի 2009 թ.)
- ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի Թեմատիկ զեկույց խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների վերաբերյալ, A/HRC/23/39 (24 ապրիլի 2013 թ.)
- ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ուղենիշներ համակարգչային անձնական տվյալների ֆայլերի կանոնակարգման վերաբերյալ, A/45/95 (14 դեկտեմբերի 1990 թ.)
- Մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի գերագույն հանձնակատարի գրասենյակ, զեկույց թվային դարաշրջանում մասնավոր կյանքի իրավունքի վերաբերյալ, A/HRC/27/37 (30 հունիսի 2014 թ.)
- Տվյալների պաշտպանության չափորոշիչներ ՔՀԿ-երի համար, ECNL, 2018 թ.
- Տվյալների պաշտպանության ԵՄ գլխավոր կանոնակարգ 2016/679, հոդ. 9

- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, Հանձնարարական մասնավոր կյանքի գաղտնիության և անհատական տվյալների անդրսահմանային հոսքերի պաշտպանության ուղեցույցի վերաբերյալ (2013 թ.)

ՈԼՈՐՏ 8՝ Պետության կողմից պաշտպանության պարտականություն

ՔՀԿ-ների պաշտպանությունը անհարկի միջամտությունից և չհիմնավորված հարձակումներից հանդիսանում է միավորումների ազատության պաշտպանության անքակտելի բաղադրիչ: ՔՀԿ-ները պետք է կարողանան վայելել քաղաքացիների վստահությունը և ներկայացնել նրանց կարիքները: Պետությունն այդ առումով պարտավորություն ունի ընդունելու օրենսդրություն, որը պաշտպանում է ՔՀԿ-ներին միջամտությունից, և ապահովել պաշտպանության միջոցների գործնական իրականացումը: Պաշտպանության պարտականությունը, մասնավորապես, նշանակում է՝ երաշխիքներ ապահովել պետության միջամտությունից ՔՀԿ-ներին զերծ պահելու համար և թույլ չտալ երրորդ անձանց խախտել ՔՀԿ-ների իրավունքները կամ խոչընդոտել ՔՀԿ-ների գործունեության իրականացմանը:

Չափորոշիչ 1՝ Պետությունը պաշտպանում է ՔՀԿ-ներին և նրանց հետ կապված մարդկանց միջամտությունից և հարձակումներից:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Պետությունն ըստ օրենքի պարտավոր է պաշտպանել ՔՀԿ-ների և նրանց հետ առնչվող անձանց իրավունքները: 2. ՔՀԿ-ները և նրանց հետ առնչվող անձինք կարող են օգտվել բողոքարկման արդյունավետ մեխանիզմից, որպեսզի կարողանան վիճարկել իրենց իրավունքների իրացման վրա ազդող որոշումները ուսումնասիրվեն անկախ և անկողմնակալ մարմնի կողմից: 3. Օրենքը երաշխավորում է ՔՀԿ-ների արդյունավետ իրավական պաշտպանության ապահովումը ողջամիտ ժամկետում:

1. **<u>Պետությունն ըստ օրենքի պարտավոր է պաշտպանել ՔՀԿ-ների և նրանց հետ առնչվող անձանց իրավունքները</u>**

Ըստ միջազգային իրավունքի, միավորումների ազատության իրավունքը ապահովելու համար պետությունն ունի ինչպես պասիվ, այնպես էլ ակտիվ պարտավորություններ, այն է՝ իր իսկ կողմից չմիջամտելու պարտականություն և ՔՀԿ-ներին երրորդ անձանց միջամտությունից պաշտպանելու պարտականութուն: Օրենքը չպետք է պարունակի այնպիսի դրույթներ, ըստ որոնց ՔՀԿ-ների հետ կապված լինելու պատճառով անհատների իրավունքները տուժում կամ սահմանափակվում են: Փոխարենը՝ օրենքը պետք է ՔՀԿ-ների համար երաշխավորի որոշակի իրավունքներ և սահմանի խթաններ, որոնք կօժանդակեն նրանց գործունեությանը ընտրված բնագավառներում. օրինակ, հարկային արտոնություններ կամ ազատում տուրքերից և վճարներից, դատարանում ներկայացված լինելու իրավունք, հանրային մասնակցության մեխանիզմներ և այլն:

Իր պասիվ պարտականությունների շրջանակում պետությունը պետք է ընդունի օրենքներ, որոնք արգելում են չարտոնված պետական միջամտությունը: Այն պետք է նաև արգելի խտրականությունը ՔՀԿ-ի հետ կապված լինելու հիմքով: Պետությունը պետք է ապահովի, որ պետական ֆինանսավորում ստացող ՔՀԿ-ները զերծ մնան պետության կամ այլ մարմինների միջամտությունից: Կառավարության կողմից ՔՀԿ-ների աջակցության դեպքում պետք է գործեն կայուն երաշխիքներ առ այն, որ պետությունը չի ստանձնի ՔՀԿ-ի կառավարումը և կերաշխավորի կազմակերպությունների անկախությունը:

Որպես ակտիվ պարտականություն՝ պետությունը պետք է ապահովի, որ ՔՀԿ-ն և նրա հետ առնչվող անձինք պաշտպանված լինեն միջամտությունից կամ երրորդ անձանց այլ բացասական ազդեցությունից (այդ թվում՝ նման միջամտության դեպքում կիրառելով առկա իրավական պատժամիջոցները): ՔՀԿ-ների որոշակի խմբեր (օրինակ ԼԳԲՏԻՔ, փոքրամասնությունները և իրավապաշտպանները) կարող են հատուկ պաշտպանության կարիք ունենալ երրորդ անձանց հարձակումներից, միջամտությունից կամ զրպարտությունից: Այդպիսի պաշտպանությունը կարող է ամրագրվել քրեական իրավունքով, որտեղ կսահմանվեն նմանատիպ իրավախախտումները և ատելության հանցանքները: ՔՀԿ-ները պետք է նաև հնարավորություն ունենան իրենց հեղինակությունը պաշտպանել իրավական միջոցներով՝ նույն կերպ, ինչ այլ կազմակերպությունները:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենքը կառավարությանը թույլ է տալիս անտեսել կամ փոփոխել ՔՀԿ-ների ներքին կառավարմանը վերաբերող որոշակի որոշումներ (օրինակ, չճանաչելով բարձրագույն գործադիր մարմնի կամ խորհրդի լիազորությունները կամ անվավեր ճանաչելով ներքին ընտրությունների արդյունքները):
- Պետությունը չի դատապարտում և գործուն քայլեր չի ձեռնարկում առանձին ՔՀԿ-ների ահաբեկման կամ հասարակական խարազանման գործողությունների դեմ:

2. <u>ՔՀԿ-ները և նրանց հետ առնչվող անձինք կարող են օգտվել բողոքարկման արդյունավետ մեխանիզմից, որպեսզի կարողանան վիճարկել իրենց իրավունքների իրացման վրա ազդող որոշումները ուսումնասիրվեն անկախ և անկողմնակալ մարմնի կողմից</u>

ՔՀԿ-ները, նրանց հիմնադիրները և անդամները պետք է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ ունենան իրենց հիմնարար իրավունքների (մասնավորապես, միավորումների ազատության, արտահայտվելու ազատության և հավաքների ազատության) վրա ազդող կամ իրենց գործունեությունը սահմանափակող բոլոր որոշումների առնչությամբ: Սա նշանակում է, որ ՔՀԿ-ներին պետք է իրավունք տալ անկախ և անկողմնակալ դատարանի քննություն պահանջել պետական մարմինների որոշումների կամ անգործության առնչությամբ: Սա նշանակում է նաև, որ անհրաժեշտ է ապահովել գրանցման, գործունեության, արգելման, դադարեցման կամ պատժամիջոցների կիրառման վերաբերյալ իրավական պահանջների վերանայման իրավունք: Այս իրավունքը պետք է ներառի ներկայացված բողոքի կամ բողոքարկման ինչպես հետընթաց (երբ ՔՀԿ-ն գտնում է, որ իր իրավունքը խախտվել է), այնպես էլ կանխարգելիչ պաշտպանության հնարավորություն (երբ ՔՀԿ-ն գտնում է, որ որոշակի դրույթ կամ իրավակիրառական պրակտիկա կարող է ապագայում խոչընդոտել իր գործունեությանը): Բողոքի ներկայացման իրավունքը պետք է ներառի առաջին և ավելի բարձր ատյանների դատարաններում ցանկացած որոշում բողոքարկելու հնարավորություն: Պետք է լինի նաև արտադատական մարմիններում կայացրած որոշումների բողոքարկման մեխանիզմ, իսկ արտադատական մարմնում բողոքարկման փաստը չպետք է ՔՀԿ-ներին զրկի այդ հարցը հետագայում դատական ատյաններում բարձրացնելու իրավունքից: Դա չպետք է առաջացնի նաև դատականում բողոքարկման կանոնադրական ժամկետի կրճատում:

ՔՀԿ-ների հիմնադիրները, անդամները և ներկայացուցիչները իրենց կողմից կամ իրենց դեմ հարուցված հայցերի դեպքում պետք է կարողանան օգտվել արդար դատավարության իրավունքից: ՔՀԿ-ները պետք է իրավունք ունենան դատարանում պաշտպանելու իրենց սեփական շահերը (հանդես գալ սեփական անունից), ինչպես նաև իրենց անդամների շահերը (հանդես գալ վերջիններիս անունից)՝ ինչպես անմիջականորեն, այնպես էլ փաստաբանների միջոցով: ՔՀԿ-ներին պետք է հնարավորություն տրվի ներկայացնել խմբային հայցեր և դատական կարգով հետամուտ

լինել հանրային շահերի վերականգնմանը: Իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող միավորումը պետք է իրավունք ունենա դատարանում ներկայացված լինել ՔՀԿ-ների հայեցողությամբ ընտրված իրավասու անձանց կողմից:

ՔՀԿ-ի արգելման, լուծարման կամ կասեցման մասին որոշման վերաբերյալ բողոքը կամ վիճարկումը պետք է, որպես կանոն, արգելափակի այդ որոշման իրականացումը: Որոշումը չպետք է ուժի մեջ մտնի մինչև դիմումի կամ վիճարկման վերաբերյալ դատարանի կողմից որոշման կայացումը: Այս կանոնը կանխում է իրավիճակները, երբ ՔՀԿ-ները ի վերջո «մաշեցվում են»՝ բողոքի դիտարկումից շատ ավելի վաղ, օրինակ՝ բանկային հաշիվները սառեցնելու կամ գործունեությունը կասեցնելու արդյունքում: Այս սկզբունքը կիրառելի չէ այն դեպքերում, երբ առկա է բացառիկ հիմնավոր վկայություն ծանր հանցագործություն կատարելու վերաբերյալ:

ՔՀԿ-ների կողմից կատարված՝ պատժամիջոցների հանգեցնող խախտումների ապացուցման բեռը միշտ պետք է կրի պետությունը: Այն ընթացակարգերը, որոնք կարող են հանգեցնել պատժամիջոցների կիրառմանը, պետք է լինեն պարզ և թափանցիկ, սակայն պարտադիր չէ, որ ուղեկցվեն մեծ հրապարակայնությամբ: Հրապարակայնությունը պետք է բխի հանրության համար տեղեկատվության մատչելիության և ՔՀԿ-ի հեղինակության հնարավոր վնասի միջև պատշաճ հավասարակշռություն ապահովելու ձգտումից, քանի որ հեղինակության անցանկալի վնաս կարող է հասցվել նախքան մեղադրվողի պատասխանատվության պատշաճ կերպով հաստատվելը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենքը ՔՀԿ-ներին թույլ չի տալիս երրորդ կողմերի շահերը պաշտպանել դատարանում, հայց ներկայացնել նրանց անունից կամ դատարանում հանդես գալ նրանց անունից:
- ՔՀԿ-ների գրանցման մերժումը չի կարող բողոքարկվել դատական կարգով:
- ՔՀԿ-ի կասեցման կամ լուծարման մասին որոշումը կարող է կայացվել արտադատական կարգով և չի կարող բողոքարկվել դատական կարգով:
- Առաջին ատյանի դատարանի կողմից ընդունված որոշումները վիճարկելու ուղի չկա:
- Անմեղության կանխավարկածի սկզբունքը չի գործում, երբ ՔՀԿ-ների դեմ պատժամիջոցներ են գործադրվում:

3. <u>Օրենքը երաշխավորում է ՔՀԿ-ների արդյունավետ իրավական պաշտպանության ապահովումը ողջամիտ ժամկետում</u>

ՔՀԿ-ները պետք է կարողանան ողջամիտ ժամկետում բողոքարկել գրանցման մերժումը կամ իրենց դիմումը չդիտարկելու փաստը և հնարավորություն ունենան իրենց բողոքը ներկայացնել անկախ և անկողմնակալ դատարանի քննությանը: Դատարան բողոք ներկայացնելու ժամկետը չպետք է շատ կարճ լինի և պետք է հաշվարկվի այն օրվանից, երբ ՔՀԿ-ն ստացել է որոշման մասին պաշտոնական ծանուցումը:

Բողոքարկման և վերանայման կարգը պետք է լինի հստակ և չծանրաբեռնող, իսկ հատուցման միջոցները պետք է ներառեն բարոյական և գույքային վնասի փոխհատուցում: Դատական ծախսերը պետք է ողջամիտ լինեն և չպետք է այնքան ծանրաբեռնող լինեն, որ ՔՀԿ-ների համար գրեթե անհնարին լինի դատական կարգով խնդրի լուծման իրավունքի իրացումը:

Միավորումների ազատության իրավունքի միջազգային իրավական պաշտպանության մեխանիզմները հասանելի են ՔՀԿ-ների անդամներին և հիմնադիրներին ՄԱԿ-ի մարմինների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի միջոցով: Այդ մարմինների կողմից կայացված որոշումների իրականացման մեխանիզմները պետք է առկա լինեն ազգային մակարդակով՝ հատուկ հաստատության կամ ներքին դատավճիռների կիրարկման սովորական միջոցներով:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Պետական մարմինների որոշումների՝ դատարանում բողոքարկելու ժամկետները չափազանց կարճ են:
- Պետական մարմինների որոշումների՝ դատարանում բողոքարկելու ժամանակահատվածը հաշվարկվում է որոշման ստորագրման պահից (այլ ոչ թե հրապարակման կամ շահագրգիռ կողմերին այլ եղանակով պատշաճ ծանուցման պահից):
- Կառավարությունը չունի այնպիսի գերատեսչություններ, որոնք ըստ էության կարող են բացահայտել և հաղորդել համապատասխան խախտման մասին, կամ այդ մարմինները չեն կարող շտկել խախտումը կամ տուժող կողմին տրամադրել քննության կամ փոխհատուցման միջոցներ:
- Պետությունը մեխանիզմներ չունի (կամ դրանք թերի են) մարդու իրավունքների միջազգային արտադատական մարմինների որոշումների կատարման համար (մասնավորապես, ֆինանսական փոխհատուցման վերաբերյալ):

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Պետությունը արդյունավետ կերպով պաշտպանում է ՔՀԿ-ներին, երբ նրանք հարձակման են ենթարկվում երրորդ անձանց կողմից: 2. Թերի պաշտպանության վերաբերյալ բողոքները անաչառ կերպով և ողջամիտ ժամկետներում քննվում են իրավասու մարմինների և դատարանների կողմից: 3. Պետական պաշտոնյաները ատելության խոսք չեն օգտագործում և չեն խարանում ՔՀԿ-ներին, և պետական լրատվամիջոցներում ՔՀԿ-ների կամ նրանց հետ առնչվող մարդկանց «սևացնող» քարոզարշավներ չկան:

1. **<u>Պետությունը արդյունավետ կերպով պաշտպանում է ՔՀԿ-ներին, երբ նրանք հարձակման են ենթարկվում երրորդ անձանց կողմից</u>**

Միավորումների ազատության իրավունքի իրացումը ապահովելու նպատակով պետությունները պետք է ՔՀԿ-ների համար անվտանգ և աջակցող միջավայր ստեղծեն: Պետությունը չպետք է ձեռնարկի միջոցներ, որոնք սահմանափակում են ՔՀԿ-ների կամ նրանց հետ կապված անձանց իրավունքները, օրինակ՝ ՔՀԿ անդամների համար սահմանելով տեղաշարժման արգելքներ կամ այլ սահմանափակումներ:

Պետությունը պետք է պաշտպանի ՔՀԿ-ների իրավունքները և օրինական շահերը օրենքով սահմանված կարգով և ապահովի դատական հատուցման և զրպարտությունից պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ: Պետությունը պետք է պաշտպանի ՔՀԿ-ներին՝ իրենց գրասենյակների վրա հարձակումներից, և քննության առնի ՔՀԿ-ների անդամների կամ աշխատակիցների վրա քրեական բնույթի հարձակումները: Այն պետք է հետաքննի նաև ՔՀԿ առաջնորդների, ակտիվիստների և իրավապաշտպանների անօրինական կալանքների, խոշտանգումների և անհետացումների դեպքերը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Պետությունը գործողություններ չի ձեռնարկում այն դեպքերում, երբ մարդիկ աշխատանքից ազատվում են ՔՀԿ-ին անդամակցելու համար:
- Պետությունը հետաքննություն չի նախաձեռնում ՔՀԿ-ների ղեկավարների կամ անդամների վրա ֆիզիկական հարձակումների կամ ՔՀԿ-ի գրասենյակի վրա հարձակումների վերաբերյալ. նման դեպքերում մեղավորները միշտ կամ գրեթե միշտ խուսափում են կալանքից և պատժից:

2. **<u>Թերի պաշտպանության վերաբերյալ բողոքները անաչառ կերպով և ողջամիտ ժամկետներում քննվում են իրավասու մարմինների և դատարանների կողմից</u>**

Պետական մարմինները, այդ թվում՝ դատարանները, չպետք է խտրականություն կամ կողմնակալություն դրսևորեն իրավական պաշտպանությունից զրկված լինելու վերաբերյալ ՔՀԿ-ների բողոքների քննության ընթացքում: Այս դեպքերին պետք անհապաղ անդրադարձ կատարվի՝ օրենքով սահմանված ժամկետներում:

ՔՀԿ-ները և նրանց հետ կապված մարդիկ կարող են բողոքարկել գրանցումը մերժելու, գործունեությունը դադարեցնելու կամ իրենց գործունեության հետ կապված որևէ այլ որոշման դեմ՝ ինչպես ներքին, այնպես էլ միջազգային ատյաններում, իսկ ՔՀԿ-ների և նրանց գործունեության վերաբերյալ միջազգային դատարանների և մարմինների որոշումները համապատասխան կերպով կիրառվում են:

Անհրաժեշտ է միջազգային իրավական պաշտպանության հասանելիություն ապահովել միավորումների ազատության իրավունքի իրացման համար: Պետությունը պետք է ճանաչի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների իրավասությունը: Այդ մարմինների՝ միավորումների ազատության խախտումների վերաբերյալ կայացրած վճիռները պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետում և տրվի պատշաճ փոխհատուցում:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ների կողմից ներկայացված բողոքների վերաբերյալ գործերը տարիներով ձգձգվում են:
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կամ ՄԱԿ-ի մարմինների որոշումները չեն իրականացվում:
- Կառավարությունը խոչընդոտում է ՔՀԿ-ների և մարդու իրավունքների միջազգային մարմինների շփումը (միջազգային ատյաններին կատարված հարցումների պատասխանը և պատասխան տրամադրելու մերժումները ձգձգվում են, նամակագրությունը առգրավվում է, ՔՀԿ անդամներին արգելվում է ճամփորդել արտասահման, միջազգային մարմինների և ՔՀԿ-ների հետ համագործակցող անհատները ենթարկվում են խարանման):
- Գործնականում դատարանները, ներքին գործերի նախարարությունը, արդարադատության մարմինները և այլ իրավապահ մարմինները չեն դիտարկում ՔՀԿ-ների դեմ երրորդ անձանց կողմից կատարված ապօրինի գործողությունների վերաբերյալ բողոքները:
- ՔՀԿ-ների որոշ խմբեր (ԼԳԲՏԻՔ, փոքրամասնություններ, իրավապաշտպաններ, ընդդիմադիրներ) միշտ պարտվում են պետական մարմինների կամ գերիշխող քաղաքական խմբերի դեմ դատական վեճերում:

3. **<u>Պետական պաշտոնյաները ատելության խոսք չեն օգտագործում և չեն խարանում ՔՀԿ-ներին, և պետական լրատվամիջոցներում ՔՀԿ-ների կամ նրանց հետ առնչվող մարդկանց «սևացնող» քարոզարշավներ չկան</u>**

Պետությունները պետք է ձեռնպահ մնան ՔՀԿ-ների դեմ ցանկացած տեսակի ոտնձգություններից, այդ թվում՝ դատական, վարչական կամ հարկային միջոցառումներից. բացասական հանրային քննարկումներից, սևացնող քարոզարշավներից և ահաբեկումից: Պետական պաշտոնյաները չպետք է վիրավորական արտահայտություններ թույլ տան, որոնք արատավորում են ՔՀԿ անդամների և նրանց հետ առնչվող այլ անձանց պատիվն ու արժանապատվությունը, կամ վնասում են ՔՀԿ-ների և ընդհանուր առմամբ քաղաքացիական հասարակության հեղինակությանը:

Պետական պաշտոնյաները չպետք է ապակողմնորոշիչ հայտարարություններ ներկայացնեն ՔՀԿ-ների վերաբերյալ կամ իրենց խոսքում հարձակվեն այն կազմակերպությունների վրա, որոնք քննադատական դիրքորոշում ունեն կառավարության հանդեպ: ՔՀԿ-ների կողմից օտարերկրյա ֆինանսավորում ստանալու փաստը չպետք է հիմք հանդիսանա նրանց խարանման համար: ՔՀԿ-ներին որպես օտարերկրյա գործակալներ կամ «ավանդական արժեքների սպառնալիք» պիտակավորելը ևս խարանի մի ձև է:

ՁԼՄ-ները, հատկապես պետական լրատվամիջոցները, չպետք է հակա-ՔՀԿ-ական հռետորաբանության գործիք հանդիսանան, իսկ հարձակման թիրախում հայտնված ՔՀԿ-ներին պետք է հերքման հնարավորություն տրվի:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Քաղաքական գործիչներն ու պետական պաշտոնյաները ատելության խոսք են տարածում իրավապաշտպան ՔՀԿ-ների, այս կամ այն փոքրամասնությանը ներկայացնող ՔՀԿ-ների, ԼԳԲՏԻՔ խմբերի և օտարերկրյա ֆինանսավորում ստացող ՔՀԿ-ների մասին:
- ՔՀԿ-ների դեմ հակաքարոզչությունը ֆինանսավորվում է ազգային կամ քաղաքային բյուջեից (տպագիր նյութերի, հանրային հեռարձակման և այլ միջոցներով):

Չափորոշիչ 2՝ Ծայրահեղականության, ահաբեկչության, փողերի լվացման և կոռուպցիայի դեմ պայքարի միջոցները նպատակաուղղված են, համաչափ, ռիսկի վրա հիմնված մոտեցմանը համապատասխան, և հարգում են միավորումների, հավաքների ու արտահայտման վերաբերյալ մարդու իրավունքների ստանդարտները:

Վերջին շրջանում արմատականացման, ծայրահեղականության և ահաբեկչության աճը բերել է նման երևույթների հիմնարար պատճառների դեմ պայքարող համաշխարհային մի շարք նախաձեռնությունների ձևավորմանը: Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և կոռուպցիայի դեմ պայքարի միջոցները չպետք է ծառայեն քաղաքացիական հասարակությունը ճնշելու նպատակին: Համապատասխան պետական հաստատությունները պետք է մանրամասն քննեն պոտենցիալ ռիսկեր պարունակող բնագավառները և խուսափեն այնպիսի միջոցներից, որոնք թիրախավորում են ՔՀԿ ողջ հատվածը: ՔՀԿ-ների նկատմամբ հակակոռուպցիոն օրենքների գործադրումը կարող է սահմանափակել կամ խախտել նրանց, ինչպես նաև նրանց աշխատողների և դոնորների իրավունքները:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Ծայրահեղականության, ահաբեկչության, փողերի լվացման և կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ օրենսդրությունը չի պարունակում այնպիսի դրույթներ, որոնք կարող են սահմանափակել կամ անհնարին դարձնել ՔՀԿ-ի օրինական գործունեությունը կամ հիմնարար ազատությունների իրացումը: 2. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հիմնավորմամբ իրավական միջոցառումները կիրառվում են միայն առանձին ՔՀԿ-ների հանդեպ, որոնք ռիսկային են գնահատվել; 3. Կոռուպցիայի դեմ պայքարի օրենքները, միջոցառումներն ու ռազմավարությունները չեն սահմանափակում կամ խախտում ՔՀԿ-ների, նրանց աշխատակիցների և դոնորների իրավունքները:

1. **<u>Ծայրահեղականության, ահաբեկչության, փողերի լվացման և կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ օրենսդրությունը չի պարունակում այնպիսի դրույթներ, որոնք կարող են սահմանափակել կամ անհնարին դարձնել ՔՀԿ-ի օրինական գործունեությունը կամ հիմնարար ազատությունների իրացումը</u>**

Կոռուպցիայի, ահաբեկչության ֆինանսավորման, փողերի լվացման կամ ապօրինի թրաֆիքինգի այլ ձևերի դեմ պայքարը սովորաբար դիտվում է որպես օրինական նպատակ և կարող է որակվել որպես պետական և հասարակական անվտանգության ապահովմանը ծառայող բավարար հիմք: Այնուամենայնիվ, ՔՀԿ-ների համար միջոցների մատչելիության ցանկացած սահմանափակում պետք է խիստ համաչափ լինի հայտնաբերված ռիսկերին և վերոհիշյալ շահերի պաշտպանությանն ուղղված՝ պետության նպատակներին: Բացի այդ, պետք է կիրառվեն հնարավորինս նվազ միջամտության գործիքներ:

Մաքսային ռեժիմների, արժութային գործարքների, փողերի լվացման և ահաբեկչության կանխարգելման վերաբերյալ ազգային օրենսդրությունը պետք է համապատասխանի մարդու իրավունքների միջազգային չափանիշներին և չպետք է բացասաբար ազդի ՔՀԿ-ների՝ եկամուտ ստանալու, ֆինանսավորում հայթայթելու կամ առանց անհարկի սահմանափակումների գործելու հնարավորության վրա:

Համացանցում ահաբեկչական գործունեության կանխմանն ուղղված ջանքերը (ինչպես, օրինակ, առցանց բովանդակության կարգավորման, զտման կամ արգելափակման միջոցառումները, որոնք ըստ միջազգային իրավունքի համարվում են անօրինական) պետք է համապատասխանեն մարդու իրավունքների միջազգային չափանիշներին և իրականացվեն օրենքի գերակայության սկզբունքի համաձայն, որպեսզի ապօրինաբար չազդեն խոսքի ազատության և տեղեկատվության ազատ հոսքի վրա:

Պարզապես տեսակետ ունենալը, խաղաղ եղանակով արմատական կամ ծայրահեղ համարվող տեսակետի կամ համոզմունքի արտահայտումը չպետք է հանցանք համարվի: Պետությունը չպետք է սահմանափակի քաղաքացիական հասարակությանը «ծայրահեղականության դեմ պայքարի» կամ «արմատականության կրճատման անհրաժեշտության» պատրվակով, քանի որ այս նպատակները իրավաչափ են միայն այն դեպքում, երբ թիրախավորում են այդ երևույթների *բռնի* դրսևորումները (օրինակ, «բռնի ծայրահեղականությունը»):

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Ահաբեկչության, ծայրահեղականության, փողերի լվացման կամ կոռուպցիայի դեմ պայքարի օրենքում ՔՀԿ-ները ներառված են որպես հատուկ կանոնակարգման ենթակա սուբյեկտներ:
- ՔՀԿ-ին ահաբեկչական կամ ծայրահեղական կազմակերպություն հայտարարելու համար օրենքով արտադատական ընթացակարգ է նախատեսված:
- Օրենքով նախատեսված է ՔՀԿ-ների և/կամ նրանց գործունեության կասեցում ահաբեկչական կամ ծայրահեղական գործունեության կասկածանքի հիման վրա՝ առանց դատական քննության և պաշտպանության հնարավորության:

2. **Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հիմնավորմամբ իրավական միջոցառումները կիրառվում են միայն առանձին ՔՀԿ-ների հանդեպ, որոնք ռիսկային են գնահատվել**

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼԱՖ) դեմ պայքարի միջոցները պետք է կենտրոնանան բացառապես կոնկրետ կազմակերպությունների կամ ենթախմբերի վրա, որոնք

գնահատվել են որպես ռիսկային, այլ ոչ թե թիրախավորեն ողջ ՔՀԿ հատվածը: Այդ միջոցները չպետք է հատուկ կանոնակարգում նախատեսեն բոլոր ՔՀԿ-ների համար:

Օրենքը չպետք է ՔՀԿ-ներից կամ նրանց առանձին տեսակներից պահանջի զեկույցներ ներկայացնել ՓԼԱՖ համապատասխանության վերաբերյալ, կամ այս ոլորտում այլ դրական պարտավորություններ նախատեսի նրանց համար՝ որպես «միշտ պարտական» կազմակերպություններ: Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելումը չի նախատեսում և չի արդարացնում ՔՀԿ-ների արտաքին ֆինանսավորման արգելումը կամ սահմանափակումը պետության կողմից:

Եթե, այնուամենայնիվ, անհրաժեշտ է որոշակի սահմանափակումներ, օրինակ՝ հսկողության, վերահսկողության, հաշվետվողականության և կառավարման լրացուցիչ պահանջներ կիրառել, ապա դրանք պետք է վերաբերեն միայն որպես ռիսկային գնահատված ՔՀԿ խմբերին՝ ռիսկերի գնահատման պաշտոնական գործընթացի արդյունքների հիման վրա: Այդ սահմանափակումները պետք է համաչափ լինեն բացահայտված ռիսկին:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Ըստ օրենքի, բանկերը պարտավոր են գնահատել, թե արդյոք բոլոր ՔՀԿ-ների ֆինանսական գործարքները համապատասխանում են ՔՀԿ կանոնադրությանը և նպատակներին:
- ՓԼԱՖ գծով իրավական միջոցները կիրառվում են բոլոր ՔՀԿ-ների նկատմամբ՝ անկախ ռիսկայնության մակարդակից, և համահունչ չեն ռիսկերի վրա հիմնված մոտեցմանը կամ ռիսկերի պաշտոնական գնահատմանը:
- ՔՀԿ-ները պետք է հատուկ հաշվետվություններ ներկայացնեն ՓԼԱՖ վերաբերյալ, կամ կատարեն այլ գործողություններ՝ ապացուցելու ՓԼԱՖ կանոնակարգերի հետ համապատասխանությունը («մեղավորության կանխավարկած»):
- ՔՀԿ-ների կողմից ստացվող նվիրատվությունների կամ ֆինանսական գործարքների քանակի սահմանաչափերը խոչընդոտում են իրենց տնտեսական գործունեությանը և ֆոնդահայթայթմանը:
- ՔՀԿ-ները պետք է փողերի լվացման դեմ հատուկ քաղաքականություն ունենան և/կամ աշխատանքի ընդունեն փողերի լվացման դեմ քաղաքականության համապատասխանության ստուգման հատուկ մասնագետի և/կամ աշխատակիցների համար վերապատրաստում կազմակերպեն փողերի լվացման դեմ միջոցառումների վերաբերյալ:

3. <u>Կոռուպցիայի դեմ պայքարի օրենքները, միջոցառումներն ու ռազմավարությունները չեն սահմանափակում կամ խախտում ՔՀԿ-ների, նրանց աշխատակիցների և դոնորների իրավունքները</u>

Օրենքը չպետք է ծանրաբեռնի ՔՀԿ-ներին ոչ համաչափ հակակոռուպցիոն պարտականություններով, ինչպես օրինակ՝ պահանջելով ներկայացնել հաշվետվություններ, որոնք նախատեսված չեն ՔՀԿ-ներին վերաբերող այլ օրենսդրական ակտերով: Կառավարության հակակոռուպցիոն միջոցառումները չպետք է խոչընդոտեն ՔՀԿ-ների օրինական գործունեությանը կամ կազմակերպություններին հետ պահեն իրենց օրինական նպատակների իրագործումից: Այս սկզբունքը վերաբերում է ինչպես ՔՀԿ-ներին, այնպես էլ նրանց անդամներին, դոնորներին և աշխատակիցներին՝ որևէ մեկը չպետք է ենթարկվի պետական վերահսկողության կամ հակակոռուպցիոն հատուկ կանոնակարգերի:

ՔՀԿ-ները և հատկապես մոնիտորինգային ՔՀԿ-ները հաճախ հակակոռուպցիոն միջոցառումների շարժիչ ուժն են: Կառավարությունները չպետք է լրացուցիչ սահմանափակումներ սահմանեն ՔՀԿ-ների և նրանց հետ առնչվող անձանց հանդեպ՝ կոռուպցիայի դեմ պայքարի պատրվակով:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ների աշխատակիցները կամ ղեկավարները պետք է հրապարակեն իրենց հարկային վճարները, թեև նրանք չեն հանդիսանում պետական պաշտոնյաներ:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Ծայրահեղականության, ահաբեկչության, փողերի լվացման և կոռուպցիայի հետ կապերի վերաբերյալ չհիմնավորված մեղադրանքների հիման վրա ՔՀԿ-ների գործունեության սահմանափակումներ չկան: 2. Պետական մարմինների և բանկերի գործելակերպը չի խանգարում կամ խոչընդոտում ՔՀԿ-ների՝ գումար փոխանցելու կամ ստանալու հնարավորությանը: 3. Հակակոռուպցիոն կանոնակարգերի իրագործումը զգալի անդրադարձ չի ունենում ՔՀԿ-ների, աշխատակիցների և դոնորների իրավունքների և գործողությունների վրա:

1. **<u>Ծայրահեղականության, ահաբեկչության, փողերի լվացման և կոռուպցիայի հետ կապերի վերաբերյալ չհիմնավորված մեղադրանքների հիման վրա ՔՀԿ-ների գործունեության սահմանափակումներ չկան</u>**

Երկրի ազգային շահը՝ կոռուպցիայի, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից, չի կարող ՔՀԿ-ների համար հաշվետվողականության նորանոր պահանջների հիմնավորում լինել, եթե չկա հանրությանը և/կամ սահմանադրական կարգին սպառնացող կոնկրետ վտանգ կամ որևէ ապօրինի գործունեության կոնկրետ վկայություն: Ծայրահեղականության կամ ահաբեկչության դեմ պայքարի համար նախատեսված միջոցառումները պետք է ելնեն ՔՀԿ անդամների և ղեկավարների ապօրինի գործունեությունից, այլ ոչ թե նրանց անհատական համոզմունքներից, հայացքներից կամ միջազգային կապերից: Որևէ ՔՀԿ-ին ծայրահեղական կամ ահաբեկչական կազմակերպություն հայտարարելու մասին որոշումը կամ այդ մեղադրանքների հիման վրա գործունեության կասեցումը մեկ իրավասու համակարգում չպետք է ինքնաբերաբար տարածվի նաև մյուս համակարգերի վրա: Նման որոշումները պետք է կայացվեն միայն դատարանի կողմից և ենթակա լինեն բողոքարկման:

Կոռուպցիան կանխելու և արդյունավետ կերպով արմատախիլ անելու համար պետությունները պարտավոր են նաև համագործակցել ՔՀԿ-ների հետ: Հակակոռուպցիոն ջանքերը պետք է համահունչ լինեն մարդու իրավունքների չափանիշներին, հակառակ դեպքում դրանք դառնում են պակաս արդյունավետ կամ կորցնում են իրավաչափությունը:

ՔՀԿ-ների մեծ մասը փոքր կամ զրո ռիսկ են ներկայացնում ահաբեկչության ֆինանսավորման և փողերի լվացման տեսանկյունից: Հետևաբար, պետությունները պետք է նպատակային և համաչափ միջոցներ կիրառեն՝ օգտագործելով ռիսկերի վրա հիմնված մոտեցումը: Ահաբեկչական կամ ծայրահեղական կազմակերպությունների նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու որոշումը պետք է կայացվի անկախ դատական մարմնի կողմից՝ ծանրակշիռ ապացույցների հիման վրա, բաց և մրցակցային դատավարության գործընթացում, որտեղ կազմակերպությունը օգտվում է պաշտպանության երաշխավորված իրավունքից:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Իշխանությունները հայտարարում են ՔՀԿ-ին ծայրահեղական կամ ահաբեկչական կազմակերպություն կամ կասեցնում են նրա գործունեությունը՝ ելնելով բացառապես նրա հիմնադիրների, դոնորների կամ ղեկավարների համոզմունքներից և հայացքներից:
- Իշխանությունների կողմից կազմակերպությունը ծայրահեղական է ճանաչվում հեռակա դատական կարգով կամ առանց դատական որոշման:

2. <u>Պետական մարմինների և բանկերի գործելակերպը չի խանգարում կամ խոչընդոտում ՔՀԿ-ների՝ գումար փոխանցելու կամ ստանալու հնարավորությանը</u>

Բանկերը կամ պետական կարգավորող մարմինները չպետք է խոչընդոտեն կամ խանգարեն ՔՀԿ-ների օրինական ֆինանսական գործունեությանը, օրինակ՝ բանկային հաշիվների միջոցով գումարի ստացումը, ֆինանսական միջոցների կուտակումը (ներառյալ՝ դրամագլուխների տեսքով) և արտերկիր դրամական միջոցների փոխանցումը:

Խափանման այնպիսի միջոցները, ինչպիսիք են բանկային հաշիվների սառեցումը կամ ֆինանսական փոխանցման սահմանափակումները, պետք է դիտարկել որպես ՔՀԿ գործունեության սահմանափակում: Այդ սահմանափակումները պետք է հիմնված լինեն ազգային անվտանգության կամ հասարակական կարգի սպառնալիքի մասին վկայող ապացույցների վրա: Դրանք նաև պետք է բխեն օրենքից և համաչափ լինեն (այսինքն՝ տվյալ նպատակին հասնելու համար ավելի մեղմ միջոցներ չկան՝):

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ները դժվարությունների են հանդիպում բանկային հաշիվ բացելիս, բանկային հաշիվների միջոցով դրամական միջոցներ ստանալիս և արտերկիր ուղարկելիս (կամ այդ գործողությունների համար պահանջվում է կառավարության նախնական հաստատումը):
- Բանկերը, իրենց սեփական նախաձեռնությամբ կամ ի կատարումն կարգավորող մարմնի հանձնարարականի, մերժում կամ հետաձգում են ՔՀԿ-ների սպասարկումը՝ նրանց որակելով որպես «կասկածելի»:

3. <u>Հակակոռուպցիոն կանոնակարգերի իրագործումը զգալի անդրադարձ չի ունենում ՔՀԿ-ների, աշխատակիցների և դոնորների իրավունքների և գործողությունների վրա</u>

ՔՀԿ-ների վրա ազդող հակակոռուպցիոն միջոցառումները և թափանցիկության պահանջները չպետք է անհարկի ծանրաբեռնող լինեն: Դրանք պետք է համապատասխան լինեն կազմակերպության չափին և գործունեության ծավալին՝ հաշվի առնելով ՔՀԿ-ի գույքն ու եկամուտները:

Թեև թափանցիկությունն ու կոռուպցիայի դեմ պայքարը կարող են երբեմն իրավաչափ միջոց լինել ազգային անվտանգությունը կամ հասարակական կարգը պաշտպանելու, անկարգությունները և հանցագործությունները կանխելու համար, մարդու իրավունքների համապատասխան միջազգային գործիքներում դրանք չեն նշվում որպես իրավաչափ նպատակ: Ավելին, թափանցիկությունը որպես այդպիսին անորոշ ու ընդհանուր հասկացություն է, որն այնքան կոնկրետ չէ, որքան առկա իրավաչափ նպատակները, օրինակ՝ ազգային անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը: Հետևաբար, պետությունները պետք է ոչ թե պահանջեն, այլ խրախուսեն և աջակցեն ՔՀԿ-ների հաշվետվողականությանն ու թափանցիկությանը՝ զերծ մնալով ՔՀԿ-ների իրավաչափ գործունեությունը սահմանափակելու նպատակով թափանցիկության միջոցներ կիրառելուց: Եթե

այդ միջոցները կիրառվում են ՔՀԿ անդամների, գործընկերների կամ աշխատակիցների հանդեպ, ապա դրանք պետք է լինեն համաչափ և հաշվի առնեն մասնավոր կյանքի իրավունքը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Հակակոռուպցիոն ոլորտում գործող ՔՀԿ-ների աշխատակիցները պարտավոր են հրապարակել իրենց հարկային հայտարարագրերը կամ ենթարկվում են անհամաչափ ֆինանսական և քրեական պատժամիջոցների՝ ընդհուպ մինչև գործունեության դադարեցում:

Համապատասխան ռեսուրսներ

- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, հոդ. 6, 13, 14
- Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, նախաբան և հոդ. 26 . 4
- Ֆինանսական գործողությունների հանձնախմբի առաջարկություններ, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային ստանդարտներ, Հանձնարարական 8 և Հանձնարարական 8-ի մեկնաբանություն
- ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույց միավորումների ազատության մասին, պարբ. 25, 33, 41, 74, 104, 121, 192, 215, 220, 224, 241, 256
- ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ահաբեկչության կանխարգելման և դեպի ահաբեկչություն տանող բռնի ծայրահեղականությանը և արմատականացմանը հակազդեցության ուղեցույց (2014 թ.)
- Մարդու իրավունքների խորհրդի բանաձև մարդու իրավունքների վրա կոռուպցիայի բացասական ազդեցության վերաբերյալ, A/HRC/RES/35/25, հոդ. 5 (23 հունիս 2017 թ.)
- ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի Թեմատիկ զեկույց խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների վերաբերյալ, A/HRC/23/39 (24 ապրիլի 2013 թ.), պարբ. 20, 27, 29, 34 և 35
- Հատուկ զեկուցողի Թեմատիկ զեկույց ահաբեկչության դեմ պայքարի ընթացքում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խթանման և պաշտպանության հարցերով, A/HRC/13/37 (28 դեկտեմբերի 2009 թ.) պարբ. 36
- ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ահաբեկչության կանխարգելման և դեպի ահաբեկչություն տանող բռնի ծայրահեղականությանը և արմատականացմանը հակազդեցության ուղեցույց (Վարշավա, ԺՀՄԻԳ, 2014 թ.), էջ 42
- Վենետիկի հանձնաժողովի միջանկյալ կարծիք քաղաքացիական աշխատանքային կազմակերպությունների մասին Եգիպտոսի օրենքի նախագծի վերաբերյալ, CDL (2013) 023 (16 հոկտեմբերի 2013 թ.) պարբ. 35
- Եվրոպայի խորհրդի ԵԽԽՎ բանաձև 2226 Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում ՀԿ-ների գործունեության նոր սահմանափակումների վերաբերյալ (ընդունվել է 27 հունիսի 2018 թ.), պարբ. 10.6
- Եվրոպայի խորհրդի CM/Rec(2007)14 հանձնարարականը Եվրոպայում ՀԿ-ների իրավական կարգավիճակի վերաբերյալ, հոդ. 76-77 (10 հոկտեմբերի 2007 թ.), պարբ. 27, 22, 26, 72, 74 և 75
- Եվրոպայի խորհուրդ, Եվրոպայում հասարակական կազմակերպությունների կարգավիճակի հիմնարար սկզբունքները, սկզբունքներ 24, 70, 71, 72 և 73
- Մարդու իրավունքների կոմիտեի նախադեպային իրավունք *Բորիս Զվոզկովը և այլք ընդդեմ Բելառուսի* (17 հոկտեմբեր 2006թ.), *Մալախովսկին և Պիկուլը ընդդեմ Բելառուսի* (26 հուլիս 2005թ.), *Ալեքսանդր Բելյացկին և այլք ընդդեմ Բելառուսի* (24 հուլիսի 2007 թ.), *Նատալյա Պինչուկը ընդդեմ Բելառուսի* (17 նոյեմբերի 2014 թ.)
- Փարիզյան սկզբունքներ «Լրացուցիչ սկզբունքներ քվազիդատական իրավասությամբ հանձնաժողովների կարգավիճակի վերաբերյալ» և գլխավոր դիտարկում 2.10 (ըստ Միջազգային համակարգող կոմիտեի բյուրոյի առ 6-7 մայիսի, 2013 թ.),

http://nhri.ohchr.org/EN/AboutUs/ICCAccreditation/Documents/Report% 20May%202013-Consolidated-English.pdf

- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Staatkundig Gereformeerde Partij ընդդեմ Նիդեռլանդների* (2012 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Ժողովրդավարական Թագավորության Շարժումն ընդդեմ Բուլղարիայի* (1995 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Օզբեկ և այլոք ընդդեմ Թուրքիայի* (2009 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Իսլամ-Իթթիհադ ասոցիացիան և այլոք ընդդեմ Ադրբեջանի* (2014 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Ռամազանովա և այլոք ընդդեմ Ադրբեջանի* (2007 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Տեբիեթի Մուհաֆիզե Ջեմիյեթի և Իսրաֆիլովն ընդդեմ Ադրբեջանի* (2009 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Կասպարովը և այլոք ընդդեմ Ռուսաստանի* (2013 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Շերդահելին ընդդեմ Հունգարիայի* (2012 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Պատյին ընդդեմ Հունգարիայի* (2012 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Շերդահելին և Պատյին ընդդեմ Հունգարիայի* (2012 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Ուզունն ընդդեմ Գերմանիայի* (2010 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Էմեկ Փարթիսի և Շենոլ ընդդեմ Թուրքիայի* (2005 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Ազատության և ժողովրդավարության կուսակցությունն (ÖZDEP) ընդդեմ Թուրքիայի* (1999 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Հերրի Բատասունան և Բատասունան ընդդեմ Իսպանիայի* (2009 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *IPSD և այլոք ընդդեմ Թուրքիայի* (2005 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Կալիֆատստաատ ընդդեմ Գերմանիայի* (2006 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Օուրիկի Էնոսի Քսանթիս և այլոք ընդդեմ Հունաստանի* (2008 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Ռեֆահ Փարթիսի և այլոք ընդդեմ Թուրքիայի* (2003 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Սիլայն ընդդեմ Թուրքիայի* (2007 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Սիվերի և Չինելի ընդդեմ Իտալիայի* (2008 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Սոցիալիստական կուսակցությունը և այլոք ընդդեմ Թուրքիայի* (1998 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Թուրքիայի Սոցիալիստական կուսակցությունը (STP) ընդդեմ Թուրքիայի* (2003 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Տեբիեթի Մուհաֆիզե Ջեմիյեթի և Իսրաֆիլովն ընդդեմ Ադրբեջանի* (2009 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Թյում Հաբեր Սեն և Չինար ընդդեմ Թուրքիայի* (2006 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Թունջելի Քյուլթյուր վե Դայանիշմա Դերնեյի ընդդեմ Թուրքիայի* (2006 թ.)
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Թուրքիայի Միացյալ կոմունիստական կուսակցությունը և մյուսներն ընդդեմ Թուրքիայի* (1998 թ.)

- Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Յազարը և այլոք ընդդեմ Թուրքիայի* (2002 թ.)

ՈԼՈՐՏ 9՝ Պետական աջակցություն

Չափորոշիչ 1՝ ՔՀԿ-ների ֆինանսական և նյութական պետական աջակցության բազմազան ու արդյունավետ մեխանիզմներ կան:

Պետությունները ՔՀԿ-ներին ֆինանսական և բնաիրային աջակցություն տրամադրելու տարբեր մեխանիզմներ են մշակել՝ վերահաստատելով հասարակական կարիքները հոգալու ՔՀԿ-ների կարևոր դերը: Պետությունն աջակցում է ՔՀԿ-ներին՝ ինստիտուցիոնալ և/կամ ծրագրային ծախսերի ֆինանսավորում տրամադրելով, գնելով ՔՀԿ ծառայությունները, հատկացնելով սուբսիդիաներ կամ բնաիրային աջակցություն: Բոլոր այս մեխանիզմների համար կարևոր է այն սկզբունքը, որ ՔՀԿ-ները պետությունից անկախ են և ինքնավար՝ անկախ պետական աջակցություն ստանալու հանգամանքից:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Օրենքը նախատեսում է ազգային և տեղական մակարդակում պետական տարբեր մարմինների կողմից ֆինանսավորման զանազան մեխանիզմների ստեղծում: 2. Օրենքը հնարավորություն է տալիս պետության կողմից բնաիրային աջակցություն ցուցաբերել ՔՀԿ-ներին:

1. **Օրենքը նախատեսում է ազգային և տեղական մակարդակում պետական տարբեր մարմինների կողմից ֆինանսավորման զանազան մեխանիզմների ստեղծում**

ՔՀԿ-ներին պետության կողմից ֆինանսական աջակցություն կարող է տրամադրվել տարբեր ձևերով՝ դրամաշնորհներ, սուբսիդիաներ, գնումների պայմանագրեր և այլն: Սակայն յուրաքանչյուր ձևի կիրառումը կախված է այն նպատակից և արդյունքից, որի իրագործմանն է այն ուղղված:

Դրամաշնորհները ՔՀԿ-ների ուղղակի ֆինանսական աջակցության առավել տարածված ձևերից են և կարող են հատկացվել պետական կամ տեղական բյուջեից: Պետությունները կարող են դրամաշնորհներ տրամադրել ինստիտուցիոնալ կամ ծրագրային աջակցության նպատակով: Ծրագրային աջակցությունը կարող է տրամադրվել տարբեր ոլորտներում՝ կախված այն նպատակից, որին կառավարությունը ցանկանում է հասնել: Օրինակ, եթե նպատակ կա նպաստավոր միջավայր ստեղծել ՔՀԿ-ների համար, կարող է ծրագրային դրամաշնորհ տրամադրվել ՔՀԿ-ների իրավական դաշտի բարելավման համար: Ինստիտուցիոնալ աջակցության դրամաշնորհները նախատեսված են կազմակերպության գործունեության անհրաժեշտ ծախսերը հոգալու համար և կարող են ներառել ենթակառուցվածքային, կարողությունների զարգացման, աուդիտորական և այլ ծախսերը:

Սուբսիդիաները տրամադրվում են որպես ինստիտուցիոնալ աջակցության միջոց քաղաքացիական հասարակության որոշակի կազմակերպություններին և կապված չեն կոնկրետ ծրագրերի հետ: Սովորաբար սուբսիդիաների համար մրցույթ չի հայտարարվում և սուբսիդիա ստացող ՔՀԿ-ն աջակցություն է ստանում օրենքով սահմանված կարգով: Շատ երկրներում սուբսիդիաները տրվում են տարբեր տեսակի սոցիալական խմբեր ներկայացնող կազմակերպությունների:

Պատվիրակումը պետական իշխանությունների կողմից ՔՀԿ-ների ապրանքների և ծառայությունների գնումն է: Ի տարբերություն դրամաշնորհների, այստեղ նպատակը կոնկրետ ծառայություն ստանալն է: Այս դեպքում կառավարությունը հստակ գիտի, թե ինչ պետք է արվի, և որոնում է այնպիսի կազմակերպություն, որն այդ ծառայությունները կմատուցի առավել բարձր որակով և ցածր գնով:

Օրենքը պետք է ապահովի, որ ՔՀԿ-ները հնարավորություն ունենան հայտ ներկայացնել պետական գնումների պայմանագրերի համար՝ այն բնագավառում, որը համապատասխանում է իրենց գործունեության շրջանակին: Պետությունը չպետք է սահմանի ոչ ողջամիտ պահանջներ, որոնք ծանրաբեռնող են ՔՀԿ-ների մասնակցության տեսանկյունից (օրինակ՝ բանկային երաշխիքի պահանջ կամ դրամային շրջանառության չափազանց բարձր շեմ):

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենքով ՔՀԿ-ների ուղղակի պետական ֆինանսավորման հնարավորություններ չեն սահմանված:
- Քաղաքապետարանները չեն կարողանում դրամաշնորհներ տրամադրել:
- ՔՀԿ-ներին ինստիտուցիոնալ աջակցություն տրամադրելու հնարավորությունը բացակայում է:
- Տարատեսակ ոլորտներում ֆինանսավորում տրամադրելու հնարավորություն չկա:
- Օրենսդրությունը թույլ չի տալիս ՔՀԿ-ներին մասնակցել պետական գնումներին:
- Կան խտրական պահանջներ, որոնք սահմանափակում են ՔՀԿ-ների մասնակցությունը գնումների մրցույթներին:

2. **<u>Օրենքը հնարավորություն է տալիս պետության կողմից բնաիրային աջակցություն ցուցաբերել ՔՀԿ-ներին</u>**

Բնաիրային աջակցությունը պետության կողմից ինստիտուցիոնալ աջակցության տեսակ է, որը կարող է ՔՀԿ-ներին հատկացվել տարբեր ձևերով: Օրինակ, պետությունը կարող է նվիրաբերել ապրանքներ՝ համակարգիչներ, կահույք և այլ տեխնիկական սարքավորումներ, որոնք կօգտագործվեն կազմակերպության կողմից իր առօրյա գործունեության ընթացքում: Բացի այդ, բնաիրային աջակցություն կարող է հատկացվել ծառայությունների տեսքով, օրինակ՝ հանդիպումների և միջոցառումների սենյակ կամ ադմինիստրատիվ աջակցություն տրամադրելով: Բնաիրային աջակցության մեկ այլ տեսակ է իրավական, ֆինանսական կամ ռազմավարական օժանդակության ձևով տրամադրված փորձագիտական աջակցությունը: Շնորհակալագրերը և պարգևները նույնպես կարելի է համարել բնաիրային աջակցության ձև, երբ դրանք տրվում են ՔՀԿ-ներին իրենց ձեռքբերումների համար:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենքը սահմանափակում է ՔՀԿ-ներին բնաիրային աջակցություն տրամադրելու՝ պետական հաստատությունների հնարավորությունները:
- Բնաիրային աջակցության տրամադրման կանոնները հստակ չեն սահմանված:
- Բնաիրային աջակցություն տրվում է միայն այն ՔՀԿ-ներին, որոնք աշխատում են սոցիալական խնդիրների ոլորտում:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Պետությունը կանոնավոր ֆինանսավորում է տրամադրում տարբեր ոլորտներում գործող մեծ թվաքանակով ՔՀԿ-ների: 2. Առկա է ՔՀԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ֆինանսավորում և ծառայությունների մատուցումը ՔՀԿ-ներից գնելու աճող պրակտիկա:

1. **<u>Պետությունը կանոնավոր ֆինանսավորում է տրամադրում տարբեր ոլորտներում գործող մեծ թվաքանակով ՔՀԿ-ների</u>**

Պետությունը պետք է ապահովի ՔՀԿ-ների կանոնավոր ֆինանսավորումը, ինչը նշանակում է, որ ֆինանսավորումը հասանելի է ամեն տարի և մատչելի է տարբեր տեսակի ՔՀԿ-ների համար: ՔՀԿ-ներից շատերը մասնակցում են երկրի ժողովրդավարական զարգացմանը և աշխատում այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը, մարդու իրավունքները, սպորտը, մշակույթը, առողջապահությունը, երիտասարդությունը, տնտեսական զարգացումը և այլն: Կախված իրենց հետաքրքրությունների շրջանակից՝ կազմակերպությունները կարող են հանդես գալ որպես թինկ-թանկեր, մոնիտորինգային (watchdog) ՔՀԿ-ներ կամ ծառայություն մատուցողներ: Պետությունները պետք է հաշվի առնեն այս բազմազանությունը և ֆինանսական աջակցությունը չսահմանափակեն մի քանի կամ առանձին տեսակների կազմակերպությունների շրջանակով: Հակառակը, նրանք ֆինանսավորման հնարավորություններ պետք է ապահովեն բազմաթիվ կազմակերպությունների համար՝ թե՛ մեծ, թե՛ փոքր ըստ բյուջեի և աշխատակիցների քանակի:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Պետական ֆինանսավորումը տրամադրվում է սահմանափակ ոլորտներում և սահմանափակ թվով ՔՀԿ-ների:
- Օրենքը նախատեսում է բնաիրային աջակցության հնարավորություն, սակայն պետությունը չի տրամադրում կամ հազվադեպ է տրամադրում այդպիսի աջակցություն:
- Պետության կողմից ինստիտուցիոնալ աջակցություն չի տրամադրվում:

2. <u>Առկա է ՔՀԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ֆինանսավորում և ծառայությունների մատուցումը ՔՀԿ-ներից գնելու աճող պրակտիկա</u>

Պետությունը ծառայությունների մատուցման պայմանագրեր պետք է կնքի տարբեր ոլորտներում աշխատող ՔՀԿ-ների հետ: ՔՀԿ-ների գործունեության ավանդական ոլորտներում (սոցիալական ծառայություններ, կրթություն, մշակույթ) նման պայմանագրերը պետք է ընդունված գործելակերպ լինեն, իսկ ՔՀԿ-ները պետության կողմից ճանաչվեն որպես կարևոր կապալառուներ: ՔՀԿ-ներին ծառայություններ պատվիրակելու միտումը պետք է աճի, ինչը նշանակում է, որ պայմանագրերի քանակը և ֆինանսավորման գումարը պետք է տարեցտարի ավելանան:

ՔՀԿ-ների հետ ծառայությունների մատուցման պայմանագրեր պետք է կնքվեն տարբեր ոլորտներում՝ ինչպես ազգային, այնպես էլ տեղական մակարդակներում: Չպետք է ակնկալվի, որ ՔՀԿ-ներն անվճար են աշխատելու պետական հաստատություններին ծառայություններ տրամադրելիս:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ները չեն ներգրավվում պետության կողմից ծառայություններ մատուցելու նպատակով:
- ՔՀԿ-ներին հատկացվող բյուջեները նվազում են:

Չափորոշիչ 2՝ ՔՀԿ-ների պետական աջակցությունը կարգավորվում է հստակ և օբյեկտիվ չափանիշներով և հատկացվում է թափանցիկ և մրցակցային ընթացակարգով:

Պետությունը պետք է հանրային միջոցներն օգտագործի արդյունավետ և թափանցիկ եղանակով: Հանրային միջոցների բաշխումը պետք է համապատասխանի հավասար հասանելիության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքներին: Հայտերի ներկայացման հրավերի, ընտրության չափանիշների և արդյունքների մասին տեղեկությունները պետք է ժամանակին հրապարակվեն: ՔՀԿ-ները պետք է ակտիվորեն մասնակցեն պետական ֆինանսավորման տրամադրման ցիկլի բոլոր փուլերում, հատկապես ֆինանսավորման առաջնահերթությունների

որոշման և ծրագրերի ընտրության ընթացքում: Բացի այդ, անհրաժեշտ է միջոցների բաշխման և ծախսման մոնիտորինգի ու գնահատման հստակ և համապատասխան մեխանիզմներ ունենալ:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Պետական ֆինանսական և նյութական աջակցությունը տրամադրվում է թափանցիկության, հաշվետվողականության և ռեսուրսների հավասար հասանելիության հստակ ձևակերպված սկզբունքների հիման վրա: 2. Ֆինանսավորման առաջնահերթությունների սահմանման և դրամաշնորհ ստացողների ընտրության գործընթացում օրենքով պահանջվում է ապահովել ՔՀԿ ներկայացուցիչների մասնակցությունը: 3. ՔՀԿ-ներին տրամադրվող պետական ֆինանսավորման հստակ և անաչառ մոնիտորինգի և գնահատման մեխանիզմ կա:

1. **<u>Պետական ֆինանսական և նյութական աջակցությունը տրամադրվում է թափանցիկության, հաշվետվողականության և ռեսուրսների հավասար հասանելիության հստակ ձևակերպված սկզբունքների հիման վրա</u>**

Ֆինանսավորում հատկացնող բոլոր պետական մարմինների համար գործուն ընթացակարգերի և սկզբունքների ապահովման նպատակով կառավարությունը պետք է ընդունի կանոնակարգեր, որոնք սահմանում են պետական ֆինանսավորման ընթացակարգերի շրջանակը: Այս կանոնակարգերում պետք է սահմանվեն ֆինանսավորման սկզբունքները և նկարագրվեն կոնկրետ ընթացակարգային պահանջները: Կանոնակարգերի նպատակն է՝ ապահովել, որ հիմնական պահանջները կիրառվում են ֆինանսական միջոցներ հատկացնող բոլոր պետական մարմինների և գերատեսչությունների կողմից:

ՔՀԿ-ներին հատկացվող պետական ֆինանսավորումը պետք է բաշխվի հստակ և թափանցիկ ընթացակարգի միջոցով: Ընթացակարգում պետք է մասնավորապես պահանջներ նախատեսվեն պաշտոնական և տեղական ԶԼՄ-ներում ֆինանսավորման վերաբերյալ հայտարարությունների հրապարակման, ընտրության հստակ և օբյեկտիվ չափանիշների, առաջարկների ներկայացման ողջամիտ ժամկետի, ընտրության չափանիշների և ընտրված հայտատուների անունների հրապարակման, հայտարարությունը պոտենցիալ հայտատուներին ուղարկելու, ինչպես նաև ֆինանսավորող մարմնի կողմից պոտենցիալ հայտատուների հարցումներին պատասխանելու վերաբերյալ: Բացի այդ, ինչպես ՔՀԿ-ները, այնպես էլ պետական մարմինները պետք է հաշվետու լինեն տրված կամ ստացված դրամական միջոցների համար, իսկ ֆինանսավորման որոշումների վերաբերյալ տեղեկությունները պետք է հրապարակված լինեն:

Հավասարության սկզբունքը նշանակում է, որ բոլոր ՔՀԿ-ները պետք է հնարավորություն ունենան ֆինանսավորում ստանալ: Միևնույն ժամանակ, կարող է հատուկ պատճառ լինել որոշակի ՔՀԿ-ների աջակցելու համար, օրինակ այնպիսի կազմակերպությունների դեպքում, որոնք հոգում են որոշակի սոցիալական կարիքների մասին, օրինակ՝ նպաստում են գենդերային հավասարության և խտրականության բացառման սկզբունքների ներդրմանը կամ իրավապաշտպան կազմակերպություններ են: Սակայն նման արտոնյալ աջակցության տրամադրումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ այդ գործընթացներն առաջնորդվում են հստակ, պարզ և օբյեկտիվ չափանիշներով և ընթացակարգերով: Այդ չափանիշները պետք է հասանելի լինեն հանրությանը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Պետական ֆինանսական և բնաիրային աջակցության թափանցիկության և օբյեկտիվության իրավական չափորոշիչներ չկան, հետևաբար այդ միջոցները հավասարապես հասանելի չեն բոլոր ՔՀԿ-ների համար:
- Օրենքով սահմանված պետական ֆինանսական աջակցության տրամադրման մանրամասն կարգ չկա:
- Պետական ֆինանսավորման առկա կանոնակարգերը թափանցիկ և օբյեկտիվ չեն:
- Բողոքարկման արդյունավետ իրավական միջոցներ չկան:
- Օրենսդրությունը սահմանում է պետական աջակցություն և արտոնություն ստացող ՔՀԿ-ների սպառիչ ցանկ:
- Օրենսդրությունը սահմանում է պետական շնորհներից օգտվելու իրավասություն ունեցող ՔՀԿ-ների գործունեության սահմանափակ ոլորտների ցանկ:

2. **<u>Ֆինանսավորման առաջնահերթությունների սահմանման և դրամաշնորհ ստացողների ընտրության գործընթացում օրենքով պահանջվում է ապահովել ՔՀԿ ներկայացուցիչների մասնակցությունը</u>**

Պետական ֆինանսավորումը պետք է տրամադրվի արդար և թափանցիկ մրցութային գործընթացի արդյունքում, իսկ կոնկրետ նախաձեռնությունների ֆինանսական աջակցության մասին որոշումը պետք է կայացվի կոլեգիալ մարմնի կողմից: Այս կոլեգիալ մարմնում պետք է ընդգրկվեն քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և միջազգային կազմակերպություններ, ինչպես նաև համապատասխան ոլորտների մասնագետներ: Լավագույն սցենարի դեպքում պետական և ոչ պետական կազմակերպությունները պետք է առնվազն հավասար ներկայացուցչություն ունենան կոլեգիալ մարմնում, և բոլոր որոշումները կայացվեն ձայների մեծամասնությամբ:

Անկողմնակալ որոշումների ապահովման նպատակով կարևոր է շահերի բախման վերաբերյալ հատուկ դրույթ սահմանել: Պետական դրամաշնորհներ տրամադրող կառույցները, այդ թվում՝ նախարարությունները, տեղական ինքնակառավարման մարմինները և պետական կազմակերպությունները, շահերի պոտենցիալ բախումը կանոնակարգելու և դրանից խուսափելու համար պետք է պարտադիր իրավական կանոնակարգեր ունենան: Այդ կանոններով պետք է արգելվի ուղղակի կամ անուղղակի շահեր ունեցող անձանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին: Այս իրավական պահանջը պետք է հավասարապես գործի թե՛ պետական և թե՛ ոչ պետական դերակատարների համար:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցությունը ֆինանսավորման թեմատիկ ոլորտների ընտրության գործում թափանցիկ և հաշվետու պետական դրամաշնորհային համակարգի կարևորագույն ասպեկտներից է: Իրավական կանոնակարգերը պետք է սահմանեն, որ բյուջեի պլանավորման և վերը նշված ոլորտների ընտրության գործընթացում պետությունը խորհրդակցում է ՔՀԿ-ների հետ: Դա կարելի է իրականացնել պաշտոնական խորհրդակցությունների և/կամ իրենց կարիքների և կարծիքների վերաբերյալ ՔՀԿ-ների հարցման միջոցով:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենքը թույլ չի տալիս ՔՀԿ-ներին և այլ կարևոր շահառուներին մասնակցել ֆինանսավորման թեմատիկ ոլորտների սահմանմանը կամ դրամաշնորհառուների ընտրությանը:
- ՔՀԿ-ներին և այլ կարևոր շահագրգիռ կողմերին որպես ընտրական հանձնաժողովի անդամ ընտրելու օբյեկտիվ չափանիշներ չկան:

3. **<u>ՔՀԿ-ներին տրամադրվող պետական ֆինանսավորման մոնիտորինգի և գնահատման հստակ և անկողմնակալ մեխանիզմ կա</u>**

Մոնիտորինգի և գնահատման մեխանիզմի սահմանումը ՔՀԿ-ների պետական ֆինանսավորման արդյունավետությունը չափելու եղանակներից մեկն է: Օրենքը պետք է հստակ սահմանի, թե ինչպես են գնահատվելու պետական ֆինանսավորումից օգտվող ծրագրերը: Պետական ֆինանսավորում ստացող բոլոր շահառուներից պետք է պահանջվի ներկայացնել հաշվետվություններ, որտեղ հստակ կերևա, թե ինչպես են ծախսվել միջոցները: Կարևոր է նաև, որ այդ մեխանիզմը անդրադառնա ոչ միայն կոնկրետ նախագծերին, այլև ընդհանուր ծրագրին: Կարող են դեպքեր լինել, երբ ֆինանսավորված նախագծերը հաջողությամբ իրականացվել են, սակայն ծրագիրը չի հասնում իր նպատակին:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենքը նորմեր և չափորոշիչներ չի նախատեսում արդյունավետ մոնիտորինգի և գնահատման համար:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Պետական ֆինանսավորման համար դիմելու ընթացակարգը պարզ և թափանցիկ է, համապատասխան տեղեկատվությունը լայնորեն տարածվում է, իսկ ընտրության չափանիշները նախապես հրապարակվում են: 2. Պետական աջակցության տրամադրումը չի օգտագործվում ՔՀԿ-ների անկախությունը խաթարելու կամ նրանց գործունեությանը միջամտելու միջոց: 3. Ընտրության արդյունքների և ծրագրերի արդյունքների մասին տեղեկատվությունը ժամանակին հրապարակվում է:

1. **<u>Պետական ֆինանսավորման համար դիմելու ընթացակարգը պարզ և թափանցիկ է, համապատասխան տեղեկատվությունը լայնորեն տարածվում է, իսկ ընտրության չափանիշները նախապես հրապարակվում են</u>**

Պետական ֆինանսավորման ընթացակարգերը պետք է հիմնված լինեն հայտերի ներկայացման և գնահատման հստակ գործընթացի վրա: Սա նշանակում է, որ այն պետական մարմինները, որոնք ներգրավված են ՔՀԿ-ների ֆինանսավորման գործում, պետք է առցանց հրապարակեն համապատասխան բոլոր տեղեկությունները (ընտրության չափանիշները, ֆինանսավորման չափը, կոնտակտային տվյալները, և այլն): Այդ տեղեկությունների լայնածավալ հրապարակումը ապահովելու նպատակով պետությունը կարող է օգտագործել տարբեր լրատվական աղբյուրներ, այդ թվում ՔՀԿ-ների լրատվամիջոցները և ՔՀԿ-ների էլեկտրոնային հասցեների ցուցակները: Հայտի համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերումը պետք է լինի ոչ ծախսատար և հեշտ: Հայտերի ձևերը պետք է պարզ լինեն, իսկ հայտի փաթեթը հեշտ լինի պատրաստել: Կարևոր է նաև, որ բավարար ժամանակ հատկացվի առաջարկների ներկայացման համար և հայտատուները հնարավորություն ունենան ուղղել աննշան թերությունները:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Հայտերի ներկայացման հրավերը ժամանակին չի հրապարակվել:
- Տեղեկատվությունը չի տարածվել այլընտրանքային միջոցներով (մամուլ, ինտերնետ և այլն):
- Խորհրդատվական հանդիպումները հասանելի կամ մատչելի չեն:
- Գնահատման չափանիշները նախապես չեն հրապարակվել:
- Դիմումի ներկայացման կարգը պարզ չէ և տարատեսակ մեկնաբանության հնարավորություն է տալիս:

2. **<u>Պետական աջակցության տրամադրումը չի օգտագործվում ՔՀԿ-ների անկախությունը խաթարելու կամ նրանց գործունեությանը միջամտելու միջոց</u>**

ՔՀԿ-ների կողմից պետական աջակցություն ստանալու հետևանքով ՔՀԿ-ների անկախությունը չպետք է խաթարվի: ՔՀԿ-ների անկախության սպառնալիք կարող է լինել այն դեպքում, երբ պետական մարմինը փորձում է միջամտել ՔՀԿ-ի ծրագրին կամ այլ գործունեությանը: Պատշաճ չէ նաև ֆինանսավորումը պայմանավորել տվյալ կազմակերպության կողմից պետական քաղաքականության վերաբերյալ դրական կամ աջակցող հայտարարություններով:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Պետական ֆինանսավորում ստացողներին «խնդրվում է» նախարարին աջակցող հայտարարություններով հանդես գալ:
- Պետության կողմից ֆինանսավորում ստացող ՔՀԿ-ները ներգրավվում են ընտրություններում որպես իշխող կուսակցության կամ թեկնածուի աջակիցներ:

3. **<u>Ընտրության արդյունքների և ծրագրերի արդյունքների մասին տեղեկատվությունը ժամանակին հրապարակվում է</u>**

Կարևոր է, որ հայտի և ընտրության ընթացակարգի վերաբերյալ տեղեկությունները պարզ և բոլորի համար մատչելի լինեն: Բացի այդ, պետք է վերջնական արդյունքների մասին ժամանակին հայտարարման և կայացված որոշումները բողոքարկելու մեխանիզմ լինի: Առաջատար գործելակերպի դեպքում ընտրության և արդյունքների հրապարակման գործընթացը չպետք է 30 օրից ավել տևի: Բողոքարկման ընթացակարգերը պետք է ներառեն կանոնավոր, արդյունավետ և ինստիտուցիոնալ եղանակներ, որոնց միջոցով դրամաշնորհային հայտ ներկայացրած ՔՀԿ-ները պետք է կարողանան վիճարկել կայացված որոշումները: Հայտ ներկայացրած ցանկացած կազմակերպություն պետք է բողոքարկման իրավունք ունենա՝ արդյունքների մասին տեղեկացվելուց հետո ողջամիտ ժամկետում, եթե, օրինակ, նկատել է հայտի գնահատման առնչությամբ անգործություն կամ ընթացակարգային թերություն:

Կարևոր է, որ ծրագրերի արդյունքների մասին տեղեկատվությունը հրապարակվի: Պետությունները պետք է ապահովեն, որ ՔՀԿ-ների կողմից ներկայացված հաշվետվությունները հրապարակվեն և հասանելի լինեն բոլորին, հատկապես մյուս ՔՀԿ-ներին, որոնք ցանկանում են տեղեկանալ, թե ինչպես են ծախսվել միջոցները:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Հայտերի ներկայացման, նախագծերի ընտրության և արդյունքների հրապարակման ժամանակացույցը չի հրապարակվել:
- Ընտրության արդյունքները ժամանակին չեն հրապարակվում:
- Ծրագրերի արդյունքների մասին տեղեկությունները չեն հրապարակվում:

<u>Չափորոշիչ 3՝ ՔՀԿ-ներն օգտվում են բարենպաստ հարկային միջավայրից:</u>

Անուղղակի պետական աջակցությունը կարևոր է քաղաքացիական հասարակության ֆինանսական կայունության և հետագա զարգացման համար: ՔՀԿ-ները և դոնորները պետք է օգտվեն բարենպաստ հարկային կարգավորումներից: Հարկային արտոնությունները պետք է հասանելի լինեն ՔՀԿ-ների եկամտի տարբեր աղբյուրների դեպքում: Պետությունը կարող է սահմանել այնպիսի

դրույթներ, որոնք ՔՀԿ-ներին թույլ կտան ձեռք բերել հանրօգուտ կարգավիճակ: Հնարավորության դեպքում այդ կարգավիճակը պետք է հասանելի լինի ցանկացած կազմակերպության՝ հստակ և ոչ ծախսատար ընթացակարգի միջոցով: Այն կազմակերպությունները, որոնք ձեռք են բերել այդ կարգավիճակը, կարող օգտվել լրացուցիչ արտոնություններից, ասկայն չպետք է ենթարկվեն մշտադիտարկման և գնահատման ծանրաբեռնող ընթացակարգերի:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Օրենքը նպաստավոր հարկային արտոնություններ է սահմանում դրամաշնորհների, նվիրատվությունների, տնտեսական գործունեության, դրամագլուխների և անդամավճարների համար այն դեպքերում, երբ այդ միջոցները նպաստում են շահույթ չհետապնդող գործունեությանը: 2. ՔՀԿ-ները կարող են բարեգործական/ հանրօգուտ կարգավիճակ ստանալ հստակ, պարզ և ոչ թանկ ընթացակարգով: 3. Այդ կարգավիճակը տրամադրվում է անորոշ կամ բավականաչափ երկարատև ժամկետով, և կարող է հեշտությամբ թարմացվել:

1. **<u>Օրենքը նպաստավոր հարկային արտոնություններ է սահմանում դրամաշնորհների, նվիրատվությունների, տնտեսական գործունեության, դրամագլուխների և անդամավճարների համար այն դեպքերում, երբ այդ միջոցները նպաստում են շահույթ չհետապնդող գործունեությանը</u>**

Օրենքը պետք է հստակ կանոններ ապահովի ՔՀԿ-ների բոլոր տեսակի եկամուտների հարկման վերաբերյալ, ինչպիսիք են դրամաշնորհները, նվիրատվությունները տեղացի և օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանցից, անդամավճարները, տնտեսական գործունեությունից ստացված եկամուտները, ժառանգությունները, և այլն: ՔՀԿ-ների ավանդական, ոչ առևտրային աղբյուրներից եկամուտները՝ անհատների կամ ընկերությունների նվիրատվությունները, դրամաշնորհները և անդամավճարները, չպետք է ենթակա լինեն եկամտահարկի կամ շահութահարկի: Հարկային օրենքները պետք է հստակ սահմանեն այդ աղբյուրներից ստացվող եկամտի՝ հարկերից ազատման դրույթներ:

Առաջատար գործելակերպի համաձայն, ՔՀԿ-ների տնտեսական գործունեությունից ստացվող եկամուտները ևս ազատվում են հարկերից, եթե այդ եկամուտներն ուղղվում են ՔՀԿ-ների առաքելության իրականացմանը: Եթե հարկերից լիովին ազատելու վերաբերյալ դրույթ չկա, ապա օրենքը պետք է տնտեսական գործունեության համար հարկման ավելի ցածր տոկոսադրույք կամ եկամտի՝ որոշակի շեմից ցածր լինելու դեպքում հարկերից ազատման հնարավորություն սահմանի:

ՔՀԿ-ներին տրամադրվող հարկային արտոնությունները պետք է լինեն պարզ և հստակ: Եթե այդ արտոնություններից օգտվելու համար չափից շատ պայմաններ են սահմանված, դա կարող է դժվարություններ ստեղծել ՔՀԿ-ների, հատկապես փոքր կազմակերպությունների համար:

Օրենքը պետք է թույլ տա ՔՀԿ-ներին ներդնել իրենց միջոցները և օգտագործել տնտեսական գործունեությունից ստացված եկամուտը իրենց շահույթ չհետապնդող առաքելության ուղղությամբ:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Հարկային խիստ կարգավորումները խոչընդոտում են ՔՀԿ-ների կողմից դրամաշնորհների, նվիրատվությունների, տնտեսական գործունեության, հատկացումների կամ անդամավճարների միջոցով եկամտի ստացումը:

- Տնտեսական գործունեությունից ստացված եկամուտը լիովին հարկվում է, նույնիսկ եթե այն օգտագործվում է ՔՀԿ-ի շահույթ չհետապնդող առաքելության ուղղությամբ:

2. **<u>ՔՀԿ-ները կարող են բարեգործական/ հանրօգուտ կարգավիճակ ստանալ հստակ, պարզ և ոչ թանկ ընթացակարգով</u>**

Բարեգործական, հանրային շահի կամ հանրօգուտ կարգավիճակ ստանալու (այսուհետ բոլորը միասին՝ «հանրօգուտ կարգավիճակ») վերաբերյալ կանոնակարգումները կարող են տարբերվել երկրից երկիր: Հանրօգուտ կարգավիճակի սահմանման միջոցով կառավարությունները նպատակ ունեն խթանելու համընդհանուր շահին ուղղված գործունեությունը: Հատուկ կարգավիճակ ունեցող կազմակերպությունները սովորաբար ավելի բարենպաստ հարկային միջավայրում են աշխատում կամ այլ արտոնություններ են ստանում, քանի որ իրենց աշխատանքը ծառայում է հասարակության, համայնքի և/կամ կարիքավորների շահերին:

Նման կարգավիճակ ձեռք բերելու կլանոնակարգը պետք է պարզ, արագ և ոչ ծախսատար գրանցման գործընթաց ապահովի: Ի լրումն, պետք է սահմանվեն այդ կարգավիճակը և հայտերի մերժումը կանոնակարգող նորմեր: ՔՀԿ-ներից կարող է պահանջվել ներկայացնել համապատասխան փաստաթղթեր՝ հանրօգուտ կարգավիճակ ստանալու համար: Այս ընթացակարգերը և պահանջները կարող են տարբեր լինել՝ կախված տվյալ երկրի իրավական համակարգից: Առաջատար գործելակերպի համաձայն՝ պետք է պահանջվեն այնպիսի փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս համապատասխանությունը գործունեության պահանջներին, գործունեությունը որպես հանրօգուտ որակավորող տեղեկատվություն են պարունակում և ներկայացնում են գործունեության սահմանափակումները: Օրենքով պետք է գրանցման որոշման համար առավելագույն ժամկետ սահմանվի և ներկայացվի այն պատճառների ցանկը, որոնց հիման վրա գրանցումը կարող է մերժվել: ՔՀԿ-ները միշտ պետք է բողոքարկելու իրավունք ունենան: Որպես առաջատար գործելակերպի օրինակ կարելի է դիտարկել Վրաստանը, որտեղ նման կարգավիճակը ավտոմատ կերպով համարվում է տրված, եթե մեկ ամսվա ընթացքում լիազոր գերատեսչությունը որոշում չի ներկայացնում:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենքը հնարավորություն չի տալիս ձեռք բերել բարեգործական, հանրային շահի, կամ հանրօգուտ կարգավիճակ:
- Օրենքը չի հստակեցնում այդ կարգավիճակը ձեռք բերելու կանոնները կամ ընթացակարգերը և չի սահմանում այն մերժելու նորմերը:
- Կարգավիճակի դադարեցման հստակ և օբյեկտիվ կանոններ չկան:
- Առկա չէ իրավական պաշտպանության արդյունավետ մեխանիզմ:

3. **<u>Հանրօգուտ կարգավիճակը տրամադրվում է անորոշ կամ բավականաչափ երկարատև ժամկետով և կարող է հեշտությամբ թարմացվել</u>**

Կան տարբեր մոտեցումներ առ այն, թե ո՞ր մարմինը պետք է վերահսկի հանրային օգուտի կարգավիճակի տրամադրումը: Պատասխանատու մարմին կարող է լինել հարկային մարմինը, որևէ անկախ հանձնաժողով կամ այլ պետական կազմակերպություն:

Միևնույն ժամանակ, կարևոր է, որ այդ կարգավիճակը տրվի ողջամիտ ժամանակահատվածի համար: Օրինակ, Գերմանիայում այդ կարգավիճակը շնորհում են տեղական հարկային մարմինները, որոնք երեք տարին մեկ պետք է ստուգեն անհրաժեշտ պահանջներին

համապատասխանության պահպանումը:[20] Վրաստանում այդ կարգավիճակը շնորհվում է անորոշ ժամկետով, սակայն բարեգործական կարգավիճակ ունեցող կազմակերպությունները, ըստ հարկային օրենսգրքի, պետք է տարեկան հաշվետվություն տրամադրեն համապատասխան հարկային մարմնին:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Կարգավիճակը ողջամիտ ժամկետով չի տրամադրվում:
- Կարգավիճակը չի կարող երկարաձգվել:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. ՔՀԿ-ների հարկային արտոնությունները գործնականում կիրառելի են: 2. Բարեգործական/ հանրօգուտ կարգավիճակի պահանջների համապատասխանության վերահսկումը չի խոչընդոտում ՔՀԿ գործունեությանը: 3. ՔՀԿ-ները չեն ենթարկվում անհիմն հարկային տույժերի կամ պետական մարմինների կողմից բարեգործական/ հանրօգուտ կարգավիճակի դադարեցման:

1. <u>ՔՀԿ-ների հարկային արտոնությունները գործնականում կիրառելի են</u>

ՔՀԿ-ներին տրամադրվող հարկային արտոնությունները պետք է լինեն պարզ և հեշտ կիրառելի: Ծանրաբեռնող պահանջները կարող են ապամոտիվացնել ՔՀԿ-ներին, և արդյունքում նման արտոնություններից օգտվող կազմակերպությունների թիվը փոքր կլինի: Օրինակ, բազմաքանակ փաստաթղթերի ներկայացման պահանջը բարդ վարչարարական ընթացակարգ է համարվում:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Հարկային արտոնություններ ստանալու ընթացակարգը ժամանակատար է:

2. <u>Բարեգործական/ հանրօգուտ կարգավիճակի պահանջների համապատասխանության վերահսկումը չի խոչընդոտում ՔՀԿ գործունեությանը</u>

Հատուկ հանրօգուտ կարգավիճակ սահմանելու և արտոնություններ տրամադրելու դիմաց պետությունները կարող են այդ արտոնություններից օգտվող կազմակերպությունների համար ղեկավարման և հաշվետվողականության ավելի խիստ պահանջներ սահմանել: Սակայն դա չի նշանակում, որ մշտադիտարկումը և գնահատումը կարող են օգտագործվել ՔՀԿ-ների գործունեությանը միջամտելու համար: Միջամտության բացասական օրինակներից են հաշվետվողականության ծանրաբեռնող պահանջները կամ աշխատակիցների աշխատավարձերի մասին տեղեկատվություն տրամադրելու պահանջը:

Հանրօգուտ կազմակերպությունները պետական կազմակերպություններ չեն, թեև աշխատում են ի շահ հանրության: Նրանց աշխատակիցները կամ խորհրդի անդամները պետական պաշտոնյաներ չեն: Հետևաբար, ՔՀԿ-ների և նրանց ղեկավար անձանց նկատմամբ չպետք է պարտավորված լինեն համապատասխանել պետական կազմակերպություններին կամ պետական պաշտոնյաներին ներկայացվող պահանջներին:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

[20] Գերմանիայի ֆինանսական օրենսգիրք, https://www.gesetze-im-internet.de/englisch_ao/englisch_ao.html

- Հանրօգուտ կարգավիճակ ունեցող ՔՀԿ-ներից պահանջվում է տրամադրել ավելի շատ տեղեկություններ, քան սահմանված է օրենքով:

3. **<u>ՔՀԿ-ները չեն ենթարկվում անհիմն հարկային տույժերի կամ պետական մարմինների կողմից բարեգործական/ հանրօգուտ կարգավիճակի դադարեցման</u>**

Հանրօգուտ կարգավիճակ ունեցող ՔՀԿ-ների նկատմամբ պետությունը կարող է պատժամիջոցներ կիրառել՝ հաշվետվություններ չներկայացնելու կամ որոշակի իրավական պահանջները խախտելու համար: Պետական պատժամիջոցները սովորաբար ներառում են զրկումը հարկային արտոնություններից, կարգավիճակի կասեցում, իսկ վատագույն դեպքում՝ կարգավիճակի դադարեցում: Կազմակերպությունները պետք է ծանուցվեն նախքան կարգավիճակի դադարեցումը, որպեսզի հնարավորություն ունենան շտկելու առկա թերությունները: Կարգավիճակի դադարեցումը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ ավելի մեղմ, նվազ միջամտող միջոցները սպառված են և իրավիճակը շտկելու այլ ճանապարհ չկա: ՔՀԿ-ները պետք է հնարավորություն ունենան բողոքարկում ներկայացնել:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Կան չհիմնավորված պատժամիջոցների կիրառման դեպքեր:
- Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցները հասանելի չեն:
- Մշտադիտարկումը կրում է հաճախակի բնույթ՝ առանց համապատասխան հիմնավորման:

Չափորոշիչ 4՝ ՔՀԿ-ներին նվիրատվությունների հատկացման դեպքում ընկերությունները և անհատները օգտվում են հարկային արտոնություններից:

Պետությունը պետք է խթանի կազմակերպությունների և անհատների նվիրատվությունները՝ իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող ՔՀԿ դոնորներին հարկային արտոնություններ տրամադրելու միջոցով: Ընդ որում, նվիրատվություն կատարելիս առևտրային ընկերությունները և անհատները պետք է կարողանան հեշտությամբ օգտվել հարկային նվազեցումներից կամ արտոնություններից: Հարկային նվազեցումը պետք է կիրառելի լինի թե՛ դրամային և թե՛ բնաիրային նվիրատվությունների դեպքում:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. ՔՀԿ-ներին դրամական միջոցներ, ապրանքներ և ծառայություններ նվիրաբերելու համար խթաններ են սահմանված, որոնք ձեռք են բերվում հեշտ և հստակ ընթացակարգերով: 2. Նվիրատվությունների համար հարկվող եկամտի նվազեցման շեմը խթանում է կանոնավոր և խոշոր նվիրատվությունները, ներառյալ դրամագլուխների նվիրաբերումը:

1. **<u>ՔՀԿ-ներին դրամական միջոցներ, ապրանքներ և ծառայություններ նվիրաբերելու համար խթաններ են սահմանված, որոնք ձեռք են բերվում հեշտ և հստակ ընթացակարգերով</u>**

ՔՀԿ-ների՝ իրենց գործունեության համար նվիրատվություններ ստանալու իրավունքը անբաժան է դոնորների իրավունքից՝ ինքնուրույն որոշելու, թե որ ՔՀԿ-ին և ինչ չափով աջակցել: Պետությունները պետք է խրախուսեն ՔՀԿ-ներին նվիրատվությունների հատկացումը՝ ստեղծելով մեխանիզմներ, որոնք խթանում են տնտեսվարողների և անհատների կողմից նվիրատվությունների կատարումը: Այս խթանները կարող են լինել նվազեցումների տեսքով, մասնավորապես՝ շահութահարկի կամ եկամտահարկի հարկման բազայի նվազեցումներ: Հարկային

արտոնությունների մեկ այլ ձև են հարկային զեղչերը: Հարկային զեղչերը թույլ են տալիս նվիրատուին նվազեցնել նվիրաբերված գումարի մի մասը իր վճարման ենթակա հարկից՝ այդպիսով նվազեցնելով հարկային պարտավորության չափը:

Անհատների և ընկերությունների նվիրատվությունները պետք է լինեն կամավոր: Նվիրատուները պետք է հնարավորություն ունենան մնալ անանուն, իսկ նվիրատվության համար չպետք է պահանջվի գրավոր պայմանագիր ստորագրել: Նվիրատվությունների համար չպետք է պահանջվի պետական կամ այլ հաստատությունների նախնական համաձայնությունը. բավարար է միայն նվիրատվություն իրականացնող կողմի համաձայնությունը: Ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, այդ թվում օտարերկրյա, պետք է հնարավորություն ունենա նվիրաբերություն կատարել հօգուտ ՔՀԿ-ների: Պետք է գործի այնպիսի իրավական մեխանիզմ, ըստ որի անհատները կարող են ժառանգություն թողնել ՔՀԿ-ներին կամ հիմնադրամներ ստեղծել իրենց կտակի միջոցով:

Էլեկտրոնային հաղորդակցության զարգացման հետ զուգընթաց, աճել է նաև դրամահավաքի էլեկտրոնային ձևերի կարևորությունը՝ վարկային քարտերի, SMS հաղորդագրությունների, և այլ եղանակներով: Նվիրատուները պետք է հնարավորություն ունենան ընտրելու նվիրատվությունների կատարման ավանդական կամ նոր ձևեր՝ կանխիկով, վարկային քարտերի, բանկային փոխանցումների, կամ բնաիրային եղանակներով: Այնպիսի բազմազան մեխանիզմների օգտագործման հնարավորությունը, ինչպիսիք են անձեռնմխելի կապիտալը (դրամագլուխ) կամ քրաուդֆանդինգի հարթակները, կարող են լրացուցիչ հնարավորություններ ստեղծել, և պետք է թույլատրված լինեն օրենքով:

Ինչպես հիմնարկների աշխատակիցները, այնպես էլ ինքնազբաղված անձինք, որոնք եկամուտ են վաստակում են իրենց անկախ գործունեությամբ, պետք է իրավունք ունենան հարկային արտոնություն ստանալ իրենց նվիրատվությունների դիմաց:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Կորպորատիվ և անհատ բարերարների համար հարկային նվազեցումներ/հարկային զեղչեր չեն գործում:
- Անանուն նվիրատվություններն արգելված են կամ խիստ սահմանափակված:
- Հնարավոր նվիրատվությունները որոշվում են անհատների անդամակցությամբ՝ անհատներին թույլատրվում է գումար կամ գույք նվիրաբերել միայն այն կազմակերպություններին, որոնց իրենք անդամակցում են:
- ՔՀԿ-ներին կտակի տեսքով նվիրատվությունները արգելվում են:
- Հարկային նվազեցման մեխանիզմը բարդ է, հետևաբար տնտեսվարող սուբյեկտները խուսափում են դրա օգտագործումից:

2. <u>Նվիրատվությունների համար հարկվող եկամտի նվազեցման շեմը խթանում է կանոնավոր և խոշոր նվիրատվությունները, ներառյալ դրամագլուխների նվիրաբերումը</u>

Բիզնեսի կամ անհատ բարերարների կողմից ՔՀԿ-ներին նվիրատվություն հատկացնելու դեպքում հարկային նվազեցման վերաբերյալ դույթները պետք է համապարփակ լինեն: ՔՀԿ-ները պետք է ազատ լինեն հարկային նվազեցման ենթակա նվիրատվություններն ընդունել առանց լրացուցիչ բեռի, իսկ այդ նվիրատվությունները կատարող ընկերությունները պետք է նվազեցում պահանջելու իրավունք ունենան: Պետության կողմից սահմանված՝ հարկվող եկամտի նվազեցումների կամ նվիրատվությունների գումարի շեմերը պետք է լինեն ողջամիտ և արդար՝ կանոնավոր նվիրատվություններ խթանելու նպատակով: Բարենպաստ միջոցառում կարող է համարվել խոշոր

նվիրատվությունների դեպքում մի քանի հարկային տարվա ընթացքում նվազեցումից օգտվելու հնարավորությունը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Նվիրատվությունների դեպքում հարկային նվազեցման շեմը ցածր է:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Անհատները կարող են օգտագործել առկա հարկային արտոնությունները առանց ավելորդ վարչական բեռի: 2. Բիզնես ընկերությունները կարող են օգտագործել առկա հարկային արտոնությունները առանց ավելորդ վարչական բեռի:

1. **<u>Անհատները կարող են օգտագործել առկա հարկային արտոնությունները առանց ավելորդ վարչական բեռի</u>**

Անհատների կողմից հարկային արտոնությունների օգտագործման մեխանիզմը պետք է լինի պարզ, հետևողական և պահանջի նվազագույն ժամանակ և միջոցներ: Պահանջվող փաստաթղթերի հավաքագրումը չպետք է ծանրաբեռնող լինի:

Մեխանիզմը պետք է լինի նաև հեշտ կիրառելի՝ անկախ նրանից, թե արդյոք անհատները նվիրաբերում են գումար, ապրանք թե ծառայություն: Վարչարարական ընթացակարգերը չպետք է նախատեսեն մի քանի պետական մարմինների հաստատում, իսկ դոնորներից չպետք է պահանջվի խիստ ծանրաբեռնող ընթացակարգերով անցնել: Հարկային նվազեցումների կամ զեղչերի համար դիմող հարկատուների փոքր թիվը կարող է ցուցանիշ լինել առ այն, որ վարչական գործընթացը չափազանց բարդ է:

Ամենամյա հարկային հայտարարագրեր չներկայացնող անձանց համար պետք է հնարավորություն լինի արտոնություններից օգտվելու իրենց գործատուի միջոցով կամ այլ եղանակներով: Խոշոր նվիրատվությունները պետք է նվազեցման ենթակա լինեն մի քանի տարիների ընթացքում:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Վարչական մարմինները լայն հայեցողություն են դրսևորում և չհիմնավորված որոշումներ կայացնում:
- Հարկային նվազեցման մեխանիզմը բարդ է և գործնականում հազվադեպ է կիրառվում:

2. **<u>Տնտեսվարող սուբյեկտները կարող են օգտագործել առկա հարկային արտոնությունները առանց ավելորդ վարչական բեռի</u>**

Տնտեսվարող սուբյեկտների կողմից հարկային արտոնությունների օգտագործման մեխանիզմը պետք է լինի պարզ, հետևողական և պահանջի ողջամիտ ժամանակ և միջոցներ: Պահանջվող փաստաթղթերի հավաքագրումը չպետք է ծանրաբեռնող լինի:

Մեխանիզմը պետք է լինի նաև հեշտ կիրառելի՝ անկախ նրանից, թե արդյոք ընկերությունը նվիրաբերում է գումար, ապրանքներ թե ծառայություններ: Վարչարարական ընթացակարգերը չպետք է նախատեսեն մի քանի պետական մարմինների հաստատում, իսկ դոնորներից չպետք է պահանջվի խիստ ծանրաբեռնող ընթացակարգերով անցնել: Հարկային նվազեցումների համար դիմող հարկատուների փոքր թիվը կամ նվիրատվությունների նվազող թիվը կարող է ցուցանիշ լինել առ այն, որ վարչական գործընթացը չափազանց բարդ է:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Վարչական մարմինները լայն հայեցողություն են դրսևորում և չհիմնավորված որոշումներ կայացնում:
- Հարկային նվազեցման մեխանիզմը բարդ է և գործնականում հազվադեպ է կիրառվում:

Չափորոշիչ 5՝ Օրենսդրությունն ու քաղաքականությունը խթանում են կամավորությունը և խթաններ տրամադրում դրա զարգացման համար:

Կամավորակությունը մարդկանց հնարավորություն է տալիս նպաստել իրենց համայնքների սոցիալական, մշակութային և տնտեսական զարգացմանը: Պետությունը պետք է աջակցի կամավորությանը և խթանի այն, այդ թվում՝ հստակ սահմանելով կամավորական աշխատանքի շրջանակը: Օրենքը պետք է կարգավորի կամավորների և կամավորական աշխատանքի կազմակերպիչների իրավունքներն ու պարտականությունները: Պետությունը պետք է խթաններ ապահովի կամավորության համար, իսկ կամավորների ներգրավման համար գործնական խոչընդոտներ չպետք է լինեն:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Առկա է կամավորության/ կամավորական աշխատանքի և ընդունող կազմակերպությունների հստակ սահմանում, և կամավորները չեն կարող դիտարկվել որպես անօրինական աշխատուժ: 2. Կամավորներ ներգրավելու համար լրացուցիչ պարտավորություններ և սահմանափակումներ օրենսդրությամբ չեն սահմանվում: 3. Պետությունը խթանում է կամավորության զարգացումը համապատասխան քաղաքականությունների, ծրագրերի և ֆինանսական աջակցության միջոցով:

1. Առկա է կամավորության/ կամավորական աշխատանքի և ընդունող կազմակերպությունների հստակ սահմանում, և կամավորները չեն կարող դիտարկվել որպես անօրինական աշխատուժ

Կամավորությունը կարող է ունենալ մի շարք դրսևորումներ՝ ինքնաբուխ, տվյալ իրավիճակից բխող կամավորական աշխատանքից մինչև կազմակերպված, ֆորմալ, պայմանագրային հիմունքներով կամավորական գործունեություն: Ելնելով դրա բնույթից՝ իրատեսական չէ կանոնակարգել կամավորության բոլոր ձևերը: Հետևաբար, օրենքը պետք է հաշվի առնի այս բազմազանությունը և ապահովի, որ առկա կանոնակարգերը չսահմանափակեն կամավորական միջավայրի զարգացման հնարավորությունները: Չափազանց խիստ կանոնակարգերը կարող են հանգեցնել կամավորների, հատկապես՝ տվյալ իրավիճակում կամավորների ներգրավման հնարավորությունների սահմանափակմանը: Օրինակ, երբ մի խումբ մարդիկ որոշում են հոգ տանել աղտոտված պուրակի մասին, օրենքը չպետք է խոչընդոտներ սահմանի, օրինակ՝ կամավորների հետ պայմանագրեր կնքելու պահանջ:

Ազգային օրենսդրությունը պետք է սահմանի կամավորությունը միջազգային չափանիշներին համահունչ և կարգավորի այն՝ կամավորության ճանաչման նպատակով: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է օրենսդրական և հարկային կանոնակարգեր ապահովել՝ կամավորական գործունեությունը խթանելու, և որն ամենակարևորն է՝ աշխատակիցների և կամավորների միջև հստակ տարբերակում սահմանելու համար: Իրավական սահմանումների բացակայությունը կարող է հանգեցնել կամավորների և վճարովի աշխատակիցների նկատմամբ միևնույն մոտեցումների

կիրառմանը: Օրենքը պետք է պարունակի դրույթներ, որոնք անհրաժեշտ են կամավորներին և նրանց հյուրընկալող կազմակերպություններին պաշտպանելու համար: Այս կանոնակարգերը պետք է անդրադառնան սահմանումներին, իրավունքներին և պարտականություններին, հարկային խնդիրներին և այլ արտոնություններին, պատասխանատվության կանոններին և այլն:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Կամավորները չեն տարբերակվում աշխատակիցներից:
- Օրենքը սահմանափակում է ոչ ֆորմալ կամ իրավիճակային կամավորության հնարավորությունը:

2. Կամավորներ ներգրավելու համար լրացուցիչ պարտավորություններ և սահմանափակումներ օրենսդրությամբ չեն սահմանվում

Իրավական կարգավորումները չեն համապատասխանում միջազգային չափանիշներին, եթե դրանք սահմանափակումներ են ստեղծում և խոչընդոտում կամավորությանը: Պատշաճ իրավական դաշտի առկայությունը հատկապես կարևոր է այն կամավորական նախաձեռնությունների համար, որոնք ամենօրյա ներգրավվածություն են պահանջում համեմատաբար երկար ժամանակի ընթացքում: Երկարաժամկետ հիմունքով ներգրավված կամավորների վրա ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում են մի շարք օրենքներ, այդ թվում՝ աշխատանքային օրենքները, հարկային օրենքները, պատասխանատվության օրենքները և այլն: Պոտենցիալ խնդիրները կարող են ներառել աշխատանքային օրենքների սխալ կիրառումը, կամավորների ժամանակի հարկումը, գործազրկության նպաստի կորուստը, պատասխանատվության առաջացումը, ինչպես նաև վտանգավոր պայմաններում աշխատող կամավորների անտեղյակությունը իրենց իրավունքների և պարտականությունների մասին: Ազգային իրավական համակարգերը պետք է նաև նպատակ ունենան խթանել իրենց քաղաքացիների կամավորական գործունեությունը արտերկրում և ապահովեն իրենց երկրում օտարերկրյա կամավորների իրավական պաշտպանությունը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Գրավոր պայմանագիրը պարտադիր է որևէ կամավորի ներգրավման համար:
- Կամավորների փոխհատուցումները ենթակա են եկամտահարկի:
- Օրենսդրությունը նպաստավոր չէ օտարերկրյա կամավորներ ներգրավելու համար:

3. Պետությունը խթանում է կամավորության զարգացումը համապատասխան քաղաքականությունների, ծրագրերի և ֆինանսական աջակցության միջոցով

Պետական քաղաքականությունը և ծրագրերը պետք է ապահովեն կամավորության պաշտպանությունը և նպաստավոր պայմաններ ստեղծեն դրա համար: Կամավորության խթանման և աջակցության պետական քաղաքականության սահմանումն արդյունավետ գործիք է այս ոլորտում պետական մոտեցման և միջոցառումների հետևողականությունը ապահովելու առումով: Քաղաքականությանը հղում կատարելու հնարավորությունը կարող է օգնել խուսափել կամայական որոշումներ կայացնելուց: Համապարփակ քաղաքականությունը նաև նշանակում է, որ պետությունը հանձնառություն է ստանձնել կամավորության վերաբերյալ և ընդգծում է հասարակության մեջ դրա կարևորությունը:

Պետությունը (իր քաղաքականության կամ օրենսդրության միջոցով) կարող է խթաններ ստեղծել կամավորների համար: Սա կարող է ներառել առողջապահական ապահովագրություն կամ սոցիալական ապահովություն ստանալու հնարավորություն, կամավորության հետ կապված ծախսերի (ճանապարհորդություն, կեցության ծախսեր, օրապահիկ և այլն) փոխհատուցման դեպքում եկամտահարկից ազատում և այլն:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Պետությունը կամավորության զարգացման քաղաքականություն և/կամ ծրագրեր չունի:
- Օրենքը կամավորների համար տարբեր տեսակի խթաններ չի ապահովում:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. ՔՀԿ-ները խոչընդոտների չեն հանդիպում կամավորներ ներգրավելիս, և առանց սահմանափակումների կարող են կամավորներ ներգրավել արտերկրից և ուղարկել արտասահման: 2. Կամավորության ընթացքում ձեռք բերված փորձը ճանաչվում է տարբեր հաստատությունների կողմից՝ գործատուների, համալսարանների և այլն:

1. **<u>ՔՀԿ-ները խոչընդոտների չեն հանդիպում կամավորներ ներգրավելիս, և առանց սահմանափակումների կարող են կամավորներ ներգրավել արտերկրից և ուղարկել արտասահման</u>**

Կամավորները կարող են դրական փոփոխություններ բերել հասարակությունում՝ ինչպես իրենց հայրենի երկրում, այնպես էլ արտասահմանում: ՔՀԿ-ները պետք է կարողանան կամավորներ ներգրավել առանց պետությունից նախնական հաստատում ստանալու անհրաժեշտության: Պարտադիր ֆինանսական վճարներ, ինչպիսիք են ապահովագրությունը, սոցիալական ապահովության վճարները և այլն, չպետք է սահմանվեն, եթե դա համաձայնեցված չէ ՔՀԿ-ների և կամավորների միջև:

Կամավորական աշխատանքի հնարավորությունները չեն կարող սահմանափակվել ազգային մակարդակով: ՔՀԿ-ները չպետք է գործնական խոչընդոտների հանդիպեն արտասահմանյան կազմակերպությունների հետ կամավորների փոխանակման վերաբերյալ համագործակցություն հաստատելիս: Միջպետական մակարդակով կամավորության խթանման կարևորագույն ասպեկտներից մեկը բարենպաստ հարկային միջավայրի ստեղծումն է: Այնպիսի ծախսերի փոխհատուցումները, ինչպիսիք են ճանապարհորդության, կեցության և այլ հարակից ծախսերը, չպետք է հարկվեն կամավորին ուղարկող կամ ընդունող երկրում: Ավելին, փաստաթղթավորման պահանջները չպետք է չափազանց ծանրաբեռնող լինեն կամավորներին ընդունող կազմակերպությունների համար կամ կառավարության կողմից լրացուցիչ ստուգումների առիթ դառնան:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Մարդու իրավունքների ոլորտում աշխատող ՔՀԿ-ները չեն կարող կամավորներ ներգրավել:
- Հնարավոր չէ փոխհատուցել կամավորների կատարած ծախսերը:
- ՔՀԿ-ները չեն կարողանում ներգրավել օտարերկրյա կամավորների:
- Օտարերկրյա կամավորների ներգրավման հետ կապված փաստաթղթային պահանջները չափազանց բարդ են:
- Գրեթե ոչ մի ՔՀԿ չի ներգրավում օտարերկրյա կամավորների:

2. **<u>Կամավորության ընթացքում ձեռք բերված փորձը ճանաչվում է տարբեր հաստատությունների կողմից՝ գործատուների, համալսարանների և այլն</u>**

Կամավորական աշխատանքը բազմաթիվ օգուտներ է տալիս համայնքներին և ընդհանուր առմամբ հասարակությանը: Հետևաբար, կամավորական աշխատանքը պետք է գնահատվի և խթանվի տարբեր հաստատությունների, այդ թվում՝ պետության կողմից: Կամավորների աշխատանքի

գնահատումը և ճանաչումը կարևոր է տարբեր մակարդակներում: Կամավորներն իրենք պետք է զգան իրենց ջանքերի գնահատված լինելը և, միևնույն ժամանակ, ՔՀԿ-ների լավագույն շահերից է բխում, որ կամավորներն օգտակար ու բավականություն պարգևող փորձ ձեռք բերեն: Կամավորությունը պաշտոնապես ճանաչելու և խթանելու քայլերը կարող են հանգեցնել կամավորների թվի աճին, օրինակ, եթե կամավորներին հնարավորություն տրվի իրենց փորձի դիմաց համալսարանական կրթության միավորներ (credit) վաստակել:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Կամավորականությունը տարածված և/կամ ճանաչված չէ:
- Կամավորական փորձի հիման վրա հնարավոր չէ համալսարանական կրթության միավորներ վաստակել:

Համապատասխան ռեսուրսներ

- ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույց հավաքների ազատության վերաբերյալ, պարբ. 190, 218
- Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների նախարարների կոմիտեի հանձնարարական կամավորական ծառայության խթանման վերաբերյալ (1994 թ.)
- ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձև կամավորության վերաբերյալ, A/RES/56/38 (10 հունվարի 2002 թ.)
- Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների նախարարների կոմիտեի հանձնարարական թիվ R(94) կամավորական ծառայության խթանման վերաբերյալ (1994 թ.)
- Եվրոպայի խորհուրդ, կամավորականների կարգավիճակի և դերի բարելավումը որպես խորհրդարանական վեհաժողովի ներդրում 2001 թ. կամավորականների միջազգային տարի հռչակելու առթիվ (նախագիծ), Doc: 8917, 22 դեկտեմբերի 2000 թ., http://www.seeyn.org/files/4/6_Voluntarism_and_public_institutions.pdf, 203-205
- ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի Թեմատիկ զեկույց խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների վերաբերյալ, A/HRC/23/39 (24 ապրիլի 2013 թ.)
- Եվրոպայի խորհրդի CM/Rec(2007)14 հանձնարարականը Եվրոպայում ՀԿ-ների իրավական կարգավիճակի վերաբերյալ (10 հոկտեմբերի 2007 թ.), պարբ. 6, 8, 14, 50, 57, 58, 59, 60, 61

ՈԼՈՐՏ 10՝ Պետություն-ՔՀԿ համագործակցություն

Չափորոշիչ 1՝ Պետական քաղաքականությունը նպաստում է ՔՀԿ-ների զարգացմանը և նրանց հետ համագործակցությանը:

ՔՀԿ-ները պետությունների զարգացման կարևոր գործընկերներ են: Հետևապես, պետությունը պետք է օժանդակի ՔՀԿ-ներին և խթանի նրանց գործունեությունը հասարակական տարբեր ոլորտներում, իսկ ՔՀԿ-ներին վերաբերող կարգավորումները առավել բարենպաստ ձևով սահմանի: Բացի այդ, ՔՀԿ-ները պետք է բավարար հնարավորություններ ունենան մասնակցելու թե՛ քաղաքականության մշակման, թե՛ իրականացման գործընթացներին: Պետությունը պետք է ռազմավարական մոտեցում ցուցաբերի ՔՀԿ-ների հետ համագործակցությանը և նպաստի ՔՀԿ հատվածի զարգացմանը: Սա նշանակում է ՔՀԿ-ների հետ համագործակցության և նրանց մասնակցություն վերաբերյալ քաղաքականության փաստաթղթերի ընդունում, որոնք գործողությունների կոնկրետ ծրագրեր կներառեն և մշակված կլինեն ՔՀԿ-ների հետ համատեղ: Այդ փաստաթղթերը պետք է արդյունավետորեն կիրառվեն և կանոնավոր հիմքով մշտադիտարկվեն և գնահատվեն:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Պետության և ՔՀԿ-ների համագործակցության վերաբերյալ քաղաքականություններ են ընդունվում և ներառվում օրենսդրության մեջ: 2. Քաղաքականությունների փաստաթղթերը ներառում են գործողությունների պլաններ և ծրագրեր, որտեղ հստակ նկարագրված են նպատակները, գործողությունները, պատասխանատու պետական մարմինները, իրականացման ժամկետները, գնահատման ընթացակարգերը և ֆինանսավորման աղբյուրները:

1. **<u>Պետության և ՔՀԿ-ների համագործակցության վերաբերյալ քաղաքականություններ են ընդունվում և ներառվում օրենսդրության մեջ</u>**

Պետությունները պետք է մշակեն քաղաքականության փաստաթղթեր, որոնք համագործակցության հստակ հիմքեր կնախատեսեն և կդյուրացնեն ՔՀԿ-ների և պետական իշխանությունների միջև շարունակական երկխոսությունը և փոխըմբռնումը: Այդ փաստաթղթերը պետք է սահմանեն համագործակցությանն ու ՔՀԿ-ների զարգացմանն ուղղված պարտավորությունները, դերերը, պարտականությունները և ընթացակարգերը: Դրանք կարող են լինել խորհրդարանի կամ կառավարության հետ երկկողմ համաձայնագրեր, համագործակցության ռազմավարություններ և պաշտոնական ծրագրեր կամ ռազմավարության միակողմանի փաստաթղթեր, որտեղ սահմանված են պետական մարմինների կողմից ստանձված կոնկրետ պարտավորություններ ՔՀԿ-ների զարգացմանն աջակցելու ուղղությամբ:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Պետություն-ՔՀԿ համագործակցության կամ ՔՀԿ-ների զարգացման աջակցության վերաբերյալ իրավական ակտեր կամ քաղաքականություններ չկան:

2. **<u>Քաղաքականությունների փաստաթղթերը ներառում են գործողությունների պլաններ և ծրագրեր, որտեղ հստակ նկարագրված են նպատակները, գործողությունները, պատասխանատու պետական մարմինները, իրականացման ժամկետները, գնահատման ընթացակարգերը և ֆինանսավորման աղբյուրները</u>**

Պետություն-ՔՀԿ համագործակցությունը և/կամ ՔՀԿ-ների զարգացումը խթանող քաղաքականության փաստաթղթերը չպետք է սահմանափակվեն սկզբունքների վերաբերյալ

ընդհանուր հայտարարություններով, այլ նաև ներառեն կոնկրետ ծրագրեր և սահմանեն համապատասխան ժամկետները, նպատակները, գործողությունները, պատասխանատու մարմիններին և իրականացման համար անհրաժեշտ միջոցների աղբյուրները: Սա օգնում է ապահովել կոնկրետ, իրագործելի և չափելի նպատակների սահմանումը կոնկրետ քաղաքականության շրջանակում և հիմք է տալիս իրականացման ընթացքը գնահատելու համար: Օրինակ՝ Մոլդովայի 2018-2020թթ. Քաղաքացիական հասարակության զարգացման ռազմավարությունը և կից գործողությունների ծրագիրը ներառում են կոնկրետ ժամկետներ և գործողություններ, որոնք ուղղված են ՔՀԿ-ների համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Պետություն-ՔՀԿ համագործակցության քաղաքականության փաստաթուղթը ունի դեկլարատիվ բնույթ, և չի պարունակում որևէ կոնկրետ չափելի գործողություն:
- Քաղաքականության փաստաթղթում սահմանված են մի շարք միջոցառումներ՝ պետություն-ՔՀԿ համագործակցությանը նպաստելու համար, սակայն ժամկետներ կամ իրականացման համար պատասխանատու մարմիններ չեն նշված:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Պետությունը համագործակցության քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերը մշակում է ՔՀԿ-ների ակտիվ մասնակցությամբ: 2. Քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերը գործնականում իրականացվում են և ազդեցություն ունեն պետական քաղաքականության վրա: 3. Պետությունը բավարար միջոցներ է հատկացնում քաղաքականության փաստաթղթերի իրականացման համար: 4. Քաղաքականության փաստաթղթերի իրականացման ընթացքում կանոնավոր մոնիտորինգ և գնահատում է իրականացվում, և այդ գնահատումների արդյունքները հաշվի են առնվում վերանայման գործընթացում:

1. **<u>Պետությունը համագործակցության քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերը մշակում է ՔՀԿ-ների ակտիվ մասնակցությամբ</u>**

ՔՀԿ-ների հետ համագործակցության վերաբերյալ քաղաքականության փաստաթղթեր մշակելիս պետական մարմինները պետք է ներգրավեն ՔՀԿ-ների լայն շրջանակ՝ մեծ և փոքր, ազգային և տեղական ՔՀԿ-ներ: Բացի այդ, այս գործընթացում ՔՀԿ-ներին ներգրավելու համար նրանք պետք է տարատեսակ մեխանիզմներ նախատեսեն: Հարկավոր է ներգրավել տարբեր տեսակետներ ներկայացնող, այդ թվում՝ կառավարությանը քննադատող ՔՀԿ-ների: ՔՀԿ-ների ակտիվ մասնակցության առավել ընդգրկուն մեխանիզմներից է համատեղ մշակումը: Առցանց խորհրդատվությունն ինքնին բավարար չէ իմաստալից մասնակցություն ապահովելու համար. անհրաժեշտ է կազմակերպել նաև դեմառդեմ հանդիպումներ, հանրային քննարկումներ, սեմինարներ: ՔՀԿ-ները պետք է կարողանան անձամբ ներկայացնել և պաշտպանել իրենց կարծիքները: Անհրաժեշտ է խորհրդակցություններ կազմակերպել նաև նախագծերի հետագա վերանայված տարբերակների շուրջ՝ նախքան վերջնական տեքստի ընդունումը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ների զարգացման կամ պետություն-ՔՀԿ համագործակցության քաղաքականության փաստաթուղթը մշակվել է միակողմանի կարգով պետության ներկայացուցիչների կողմից:
- Քաղաքականության փաստաթղթերի մշակման գործում մասնակցությունը սահմանափակվում է մի քանի ՔՀԿ-ներով, որոնք կա՛մ արդեն իսկ համագործակցում են տվյալ պետական մարմնի հետ կա՛մ փոխկապակցված են պետական պաշտոնյաների հետ:

2. **<u>Քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերը գործնականում իրականացվում են և ազդեցություն ունեն պետական քաղաքականության վրա</u>**

ՔՀԿ-ների զարգացման և ՔՀԿ-պետություն համագործակցության քաղաքականությունները, ռազմավարությունները և այլ իրավական ակտերը պետք է արդյունավետորեն ներդրվեն գործնականում և իրական ազդեցություն ունենան ՔՀԿ-ների մասնակցության և զարգացման վրա: Այդ քաղաքականությունների իրականացումը ինքնանպատակ չէ, այլ միջոց, որը ՔՀԿ-ներին հնարավորություն է տալիս ներկայացնել իրենց շահառուների շահերը և ազդեցություն ունենալ պետական քաղաքականության վրա: Արդյունավետ իրականացումը նշանակում է նաև, որ քաղաքականության այդ փաստաթղթերը օգտագործվում են զգալի թվով ՔՀԿ-ների կողմից և ուղղորդում համագործակցության նրանց նախաձեռնությունները: Կառավարությունը պետք է միջոցներ ձեռնարկի՝ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության միջև փոխադարձ հարգանք, փոխըմբռնում և վստահություն ձևավորելու համար: Բացի այդ, կառավարությունը պետք է ապահովի ՔՀԿ-ների մասնակցությունը քաղաքականության փաստաթղթի իրականացման գործում:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Պետություն-ՔՀԿ համագործակցության վերաբերյալ քաղաքականության փաստաթուղթը չի կիրառվում քաղաքականության մշակման գործընթացներում:
- Չնայած համագործակցության վերաբերյալ քաղաքականությունների և ռազմավարությունների առկայությանը, կառավարությունը չի ցանկանում համագործակցել ՔՀԿ-ների հետ և/կամ բացասական վերաբերմունք է դրսևորում ՔՀԿ հատվածի նկատմամբ:
- Կառավարությունը գործողություն(ներ) չի ձեռնարկում քաղաքականության փաստաթղթերը սահմանված ժամկետներում իրականացնելու ուղղությամբ:

3. **<u>Պետությունը բավարար միջոցներ է հատկացնում քաղաքականության փաստաթղթերի իրականացման համար</u>**

Պետությունը պետք է մի շարք միջոցառումներ նախատեսի՝ համագործակցության քաղաքականության իրականացումն ապահովելու նպատակով: Օրինակ, կարևոր է, որ պետությունը քաղաքականության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ մարդկային և ֆինանսական միջոցներ հատկացնի: Սա նշանակում է, որ տարբեր հաստատություններում հատուկ անձինք պետք է նշանակվեն պետություն-ՔՀԿ համագործակցության գործընթացը համակարգելու համար: Այդ պաշտոնյաների կարողությունների զարգացումը և վերապատրաստումը պետք է պատշաճ ֆինանսավորվի: Ավելին, բավարար ֆինանսավորում պետք է հատկացվի շահագրգիռ ՔՀԿ-ների լայն շրջանակի և հանրության հետ հաղորդակցության ապահովման համար (այդ թվում՝ առցանց հաղորդակցության և դեմառդեմ հանդիպումների միջոցով):

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Համագործակցության վերաբերյալ քաղաքականության փաստաթղթերը պետական բյուջեից չեն ֆինանսավորվում:
- Այն պաշտոնյաները, որոնց հանձնարարվել է համակարգել քաղաքականության փաստաթղթի իրականացումը, չունեն անհրաժեշտ կարողություններ:

4. **<u>Քաղաքականության փաստաթղթերի իրականացման ընթացքում կանոնավոր մոնիտորինգ և գնահատում է իրականացվում, և այդ գնահատումների արդյունքները հաշվի են առնվում վերանայման գործընթացում</u>**

Պետությունը պետք է մշտադիտարկի համագործակցության և ՔՀԿ-ների զարգացման քաղաքականությունների իրականացումը՝ դրանց օգտակարությունը և արդյունավետությունը գնահատելու և ստացած արդյունքների հիման վրա քաղաքականության բովանդակությունը և իրականացման ընթացքը բարելավելու համար: Մոնիտորինգի մեխանիզմները կարող են ներառել քաղաքականության իրականացման տարեկան հաշվետվությունները, հանրային լսումների կազմակերպումը, մոնիտորինգի հատուկ հանձնաժողովի ստեղծումը և այլն: Այս գործիքներն օգնում են նաև բարելավել պետական պաշտոնյաների իրազեկվածությունը համագործակցությանն ուղղված միջոցառումների իրականացման կարևորության և էության վերաբերյալ: Մոնիտորինգը և գնահատումը պետք է իրականացվի անկախ փորձագետների կամ մարմինների ներգրավմամբ և ՔՀԿ-ների մասնակցությամբ: Մոնիտորինգի ընթացքում անհրաժեշտ է հավաքագրել ՔՀԿ-ների զարգացման միտումների վերաբերյալ համապատասխան վիճակագրական տվյալները:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Պետության կողմից պետություն-ՔՀԿ համագործակցության քաղաքականության մոնիտորինգի միջոցառումներ չեն ձեռնարկվում կամ մոնիտորինգը կանոնավոր չէ:
- Պետություն-ՔՀԿ համագործակցության քաղաքականության մոնիտորինգը ձևական բնույթ ունի և իրականացվում է առանց ՔՀԿ-ների մասնակցության:

Չափորոշիչ 2՝ Պետությունը ՔՀԿ-ների հետ համագործակցությանն աջակցող հատուկ մեխանիզմներ ունի:

Պետական մարմինների և ՔՀԿ-ների միջև հարաբերությունները դյուրացնելու նպատակով մի շարք երկրներ մշակել են համագործակցության տարբեր մեխանիզմներ: Այս մեխանիզմները նպաստում են երկխոսությանը և խթանում են սեփականության զգացումը և քաղաքացիական հասարակության հատվածի զարգացման պատրաստակամությունը: Հնարավոր մեխանիզմները ներառում են՝ յուրաքանչյուր նախարարությունում կամ կենտրոնական համակարգման մարմնում ՔՀԿ-ների մասով պատասխանատու կոնտակտային անձի նշանակում, ՔՀԿ-ների և պետական մարմինների համատեղ մասնակցությամբ կառույցների ստեղծում բազմաշահագրգիռ խորհուրդների կամ հանձնաժողովների տեսքով, ինչպես նաև փորձագետների աշխատանքային խմբերի և այլ խորհրդատվական մարմինների կազմավորում տարբեր մակարդակներում: ՔՀԿ-ները պետք է հնարավորություն ունենան մասնակցելու երկխոսության և խորհրդակցությունների այդ պետական և քվազի-պետական մարմիններին: Խորհրդակցական մարմիններում անդամների թափանցիկ ընտրությունը պետք է հիմնված լինի հստակ և օբյեկտիվ չափանիշների վրա: Այդ մարմինների առաջարկությունները պետք է հաշվի առնվեն որոշումների կայացման գործընթացներում:

Իրավական դաշտում

Իրավական դաշտի ցուցանիշներ
1. Հանրային խորհուրդների և երկխոսության ու համագործակցության նպատակով ստեղծված այլ խորհրդակցական մարմինների գործունեության և թափանցիկության առանցքային սկզբունքները կարգավորվում են օրենքով: 2. Խորհրդակցական մարմիններում ՔՀԿ-ների մասնակցության և ընտրության սկզբունքները հստակ են և օբյեկտիվ, իսկ ընտրության ընթացակարգը՝ թափանցիկ:

1. **Հանրային խորհուրդների և երկխոսության ու համագործակցության նպատակով ստեղծված այլ խորհրդակցական մարմինների գործունեության և թափանցիկության առանցքային սկզբունքները կարգավորվում են օրենքով**

Խորհրդակցական մարմինները պետք է ստեղծվեն օրենքների կամ կանոնակարգերի հիման վրա, որտեղ կնկարագրվեն համապատասխան դերերը, իրավունքները, պարտականությունները և համագործակցության ընթացակարգերը: Այդ մարմինների դերը չպետք է զուտ դեկլարատիվ լինի: Ընդ որում, ցանկացած պետական մարմնի պետք է հնարավորություն տրվի և խրախուսվի հանրային խորհուրդներ և այլ խորհրդակցական մարմիններ ստեղծել:

Հասարակական խորհուրդների և խորհրդակցական մարմինների նկատմամբ պետք է պահանջ սահմանվի, որ նրանք թափանցիկ աշխատեն և ապահովեն, որ իրենց գործունեությանն առնչվող բոլոր տեղեկությունները լայնորեն և հեշտությամբ հասանելի լինեն ինչպես առցանց (օրինակ, պետական մարմնի կայքում հրապարակվեն խորհրդակցական մարմնի բոլոր որոշումները), այնպես էլ ոչ առցանց միջոցներով:

Խորհրդակցական մարմին հիմնելու դեպքում համապատասխան պետական մարմինը պետք է ապահովի դրա գործունեությունը, մասնավորապես տրամադրելով անհրաժեշտ տարածք և տեխնիկական սարքավորումներ:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Պետական մարմինները չեն կարողանում հանրային խորհուրդներ և/կամ այլ խորհրդակցական մարմիններ հիմնել ՝ իրավակարգավորման բացակայության պատճառով:
- Միայն որոշ պետական մարմինների է թույլ տրվում մշտական խորհրդակցական մարմիններ հիմնել :
- Խորհրդակցական մարմինների գործունեությունը կարգավորող նորմեր չկան:
- Օրենքը հստակորեն չի սահմանում խորհրդակցական մարմինների իրավասությունները:
- Որևէ կարգավորումով չի սահմանված խորհրդակցական մարմնի որոշումների կամ աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման կամ առցանց հրապարակման պահանջ:
- Օրենքը չի նախատեսում, որ խորհրդակցական մարմինների հանդիպումները պետք է անցկացվեն հանրության մասնակցությամբ և/կամ նման հանդիպումներ անցկացնելը բարդ է:

2. **<u>Խորհրդակցական մարմիններում ՔՀԿ-ների մասնակցության և ընտրության սկզբունքները հստակ են և օբյեկտիվ, իսկ ընտրության ընթացակարգը՝ թափանցիկ</u>**

ՔՀԿ-ների ընտրության կարգը պետք է լինի պարզ, նախատեսի անդամների ընտրության կոնկրետ չափանիշներ և փուլեր: Այն պետք է թվարկի թեկնածուի մերժման հիմնավոր պատճառները, շահերի բախման իրավիճակներում անհրաժեշտ միջոցառումները և մարգինալ խմբերի մասնակցությունն ապահովող դրույթներ: Ընտրության գործընթացի յուրաքանչյուր փուլի վերաբերյալ տեղեկությունը պետք է հասանելի լինի լայն հանրությանը, այդ թվում՝ ինտերնետի միջոցով: Ավելին, հասարակությունը պետք է կարողանա դիտարկել խորհրդակցական մարմնի անդամների ընտրությունը: Ընտրության կարգը պետք է սահմանվի նորմատիվ ակտի՝ օրենքի կամ այլ իրավական ակտի միջոցով: Կարևոր է, որ ՔՀԿ-ներն իրենք մասնակցեն այդ կարգի մշակմանը:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Օրենսդրությունը նախատեսում է ոչ սպառիչ կամ ոչ պատշաճ փաստաթղթերի ցանկ, որոնք պետք է ներկայացվեն հասարակական խորհուրդներին կամ այլ խորհրդակցական մարմիններին մասնակցելու համար:
- Օրենսդրությունը նախատեսում է ընտրության ոչ հստակ և անհասկանալի չափանիշներ:
- Օրենսդրությունը պարունակում է թեկնածուի մերժման հիմքերի ոչ սպառիչ ցանկ:

Գործնականում

Գործնական ցուցանիշներ
1. Խորհրդակցական մարմինների ստեղծման գործընթացը թափանցիկ է և տեղի է ունենում ինչպես պետական մարմինների, այնպես էլ ՔՀԿ-ների նախաձեռնությամբ: 2. Տարբեր խորհրդակցական մարմինների որոշումները հաշվի են առնվում պետական քաղաքականության մշակման ընթացքում: 3. Բոլոր առնչվող ՔՀԿ-ները հնարավորություն ունեն մասնակցելու խորհրդակցական մարմինների աշխատանքին:

1. **<u>Խորհրդակցական մարմինների ստեղծման գործընթացը թափանցիկ է և տեղի է ունենում ինչպես պետական մարմինների, այնպես էլ ՔՀԿ-ների նախաձեռնությամբ</u>**

Խորհրդակցական մարմինների առկայության դեպքում պետական մարմինները պետք է ներդնեն ՔՀԿ-ների ընտրության թափանցիկ չափորոշիչներ և գործընթացներ: Անհրաժեշտ է, որ ընտրության մեխանիզմը կիրառվի այնպես, որ այն հստակ լինի հանրության համար: Պետությունը պետք է խստորեն պահպանի ընթացակարգային քայլերի սահմանված հաջորդականությունը և առանձին ՔՀԿ-ների նկատմամբ արտոնյալ մոտեցում չկիրառի: Բացի այդ, օրենքը պետք է թույլ տա խորհրդակցական մարմիններ հիմնել ինչպես պետության, այնպես էլ ՔՀԿ-ների նախաձեռնությամբ: Խորհրդակցական մարմնում ՔՀԿ անդամների ընտրությունն ու նշանակումը պետք է հիմնված լինի հստակ չափանիշների վրա:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Խորհրդակցական մարմինների ընտրության կարգը չի հրապարակվում հանրային հարթակներում:
- Խորհրդակցական մարմինների անդամները գիտելիքներ չունեն պահանջվող ոլորտում:
- Ընտրության կարգը և/կամ ընտրության արդյունքները գաղտնի են պահվում հանրությունից:

2. **<u>Տարբեր խորհրդակցական մարմինների որոշումները հաշվի են առնվում պետական քաղաքականության մշակման ընթացքում</u>**

Օրենսդրական փոփոխություններ մշակելիս պետական մարմինները պետք է հաշվի առնեն խորհրդակցական մարմինների որոշումները, այդ թվում՝ դրանց քննադատական բնույթի դեպքում: Խորհրդակցական մարմինների որոշումները պետք է օրինական ճանաչվեն: Եթե պետական մարմինները հաշվի չեն առնում խորհրդակցական մարմինների որոշումները, նրանք պետք է հիմնավոր բացատրություն ներկայացնեն:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- ՔՀԿ-ների իրավունքներին կամ պարտականություններին վերաբերող օրենքն ընդունվում է առանց հասարակական խորհրդի մասնակցության:
- Խորհրդակցական մարմնի որոշումն անտեսվում է համապատասխան պետական մարմնի կողմից՝ առանց որևէ հստակ հիմնավորման:

3. **<u>Բոլոր առնչվող ՔՀԿ-ները հնարավորություն ունեն մասնակցելու խորհրդակցական մարմինների աշխատանքին</u>**

Պետություններ պետք է ապահովեն հանրային խորհուրդներում բոլոր շահագրգիռ ՔՀԿ-ների հավասար մասնակցությունը՝ հիմնվելով հստակ և իրավական ուժ ունեցող նորմերի վրա:

Անհրաժեշտ է ապահովել մարգինալ և խտրականության ենթարկվող անհատների և խմբերի, օրինակ՝ կանանց և աղջիկների, բնիկների, փոքրամասնությունների և հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը: Խորհրդակցական մարմիններում վերոնշյալ խմբերի մասնակցությունն ապահովելու համար մշտական մեխանիզմներ պետք է ստեղծվեն, այդ թվում՝ ապահովելով հանդիպումների անցկացման վայրերի ֆիզիկական մատչելիությունը:

Անհրաժեշտ է, որ տարբեր կազմակերպություններ հնարավորություն ունենան խորհրդակցական մարմիններում մասնակցել հավասար հիմունքներով և ունենան հասանելիության հավասար իրավունքներ: Քննարկման ենթակա թեմաների քանակը սահմանափակող ընթացակարգերը պետք է կիրառվեն միայն բացառիկ պայմաններում և իրավաչափ նպատակներով:

Այս ցուցանիշի խախտումները կարող են ներառել հետևյալը՝

- Որևէ ոլորտում (օրինակ՝ հաշմանդամության հարցեր) աշխատող ՔՀԿ-ները չեն կարող մասնակցել ՔՀԿ-ների զարգացման խորհրդի աշխատանքներին:
- Այն ՔՀԿ-ները, որոնք չեն ընտրվել որպես խորհրդակցական մարմնի անդամ, չեն տեղեկացվում այդ մարմնի որոշումների մասին կամ ամբողջովին դուրս են մնացել դրա աշխատանքներից:

Համապատասխան ռեսուրսներ

- ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույց հավաքների ազատության վերաբերյալ, 2015 թ., պարբ. 31, 183-86, 189
- Եվրոպայի խորհուրդ և ECNL, Քաղաքացիական հասարակության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում. Ակնարկ Եվրախորհրդի չափորոշիչների և գործելակերպի մասին, գլուխ V, գլուխ VI, բաժիններ 1, 2.2 (մայիս 2016 թ.)
- Եվրոպայի խորհրդի ուղեցույցը քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության վերաբերյալ, CM (2017) 83 (ընդունվել է 27 սեպտեմբեր 2017 թ.) պարբ. 15
- Եվրոպայի խորհրդի CM/Rec(2007)14 հանձնարարականը Եվրոպայում ՀԿ-ների իրավական կարգավիճակի վերաբերյալ (10 հոկտեմբերի 2007 թ.)
- Եվրոպայի խորհուրդ, Եվրոպայում հասարակական կազմակերպությունների կարգավիճակի հիմնարար սկզբունքները, պարբ. 74-78
- Եվրոպայի խորհուրդ, Որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցության վերաբերյալ առաջատար փորձի կանոնագիրք, CONF/PLE (2009), կանոնագիրք 1 (ընդունվել է ՄՀԿ խորհրդաժողովի կողմից 2009 թ. հոկտեմբերի 1-ին), գլուխ IV.iii, հոդ. 4-5
- ԵԱՀԿ առաջարկություններ հանրային որոշումների կայացման գործընթացներում միավորումների մասնակցությունը ընդլայնելու վերաբերյալ, Վիեննա (15-16 ապրիլի 2015 թ.), թիվ 3-11, 27
- Մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի գերագույն հանձնակատարի գրասենյակ, հանրային կյանքին մասնակցելու իրավունքի արդյունավետ իրականացման ուղեցույց պետությունների համար, նախագիծ, A/HRC/39/28 (սեպտեմբեր 2018 թ.), կետ 19(h), 56, 58
- ԵԱՀԿ Ստամբուլի 1999թ. պարտավորություն, հոդ. 27
- ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ, հանրային կյանքին մասնակցելու իրավունքի խթանումը, պաշտպանությունը և իրականացումը մարդու իրավունքների օրենսդրության ներկա համատեքստում. Լավագույն փորձ, փորձառություն, մարտահրավերներ և դրանք հաղթահարելու ուղիները: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի զեկույց, A/HRC/30/26 (23 հուլիսի 2015 թ.)

- Եվրոպական հանձնաժողով, Զարգացման երկխոսությունների և խորհրդակցությունների գործընթացներում ոչ-պետական կողմերի մասնակցության սկզբունքների և առաջատար գործելակերպի ուղեցույց, DG Development (նոյեմբեր 2004 թ.), գլուխ III, բաժին 3.1.2.

ՀԱՎԵԼՎԱԾ

Հասկացությունների բառարան

Սահմանումների այս հավաքածուի մեջ ընդգրկվել են այն հիմնական հասկացությունները, որոնք օգտագործվել են ՔՀԿ չափիչում և բացատրագրում:

Փողերի լվացման կանխարգելում
Փողերի լվացման կանխարգելումը այնպիսի ընթացակարգերի, օրենքների և կանոնակարգերի ամբողջություն է, որոնք նախատեսված են կանխելու, խանգարելու և դադարեցնելու ապօրինի գործողությունների և/կամ քրեական հանցանքների միջոցով անհատի կամ խմբի կողմից եկամուտ ստանալու պրակտիկան:

Թույլտվություն և ծանուցում
Թույլտվությունը իշխանությունների կողմից կազմակերպիչներին խաղաղ հավաքներ անցկացնելու հնարավորության տրամադրման գործողությունն է (գրավոր եղանակով հստակ նշելու միջոցով): Ծանուցումը իշխանություններին առաջիկա հավաքի վերաբերյալ իրազեկման գործընթացն է, որը թույլտվություն ստանալու խնդրանք չի հանդիսանում *(ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույց խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ, Հավելված C)*:

Գրաքննություն
Խոսքի, հանրային հաղորդակցության կամ այլ տեղեկությունների հանդեպ ճնշումների գործադրում կամ որևէ այլ գործողություն, որն ընդհատում է տեղեկատվության և գաղափարների հոսքը դրանց ստացմամբ հետաքրքրված անձանց ուղղությամբ՝ ելնելով այն հիմքից, որ տվյալ նյութը պետական կամ մասնավոր հիմնարկի կողմից համարվել է դատապարտելի, վնասակար, զգայուն կամ անհարմար:

Քաղաքացիական հասարակություն
Անհատների կոլեկտիվներ, կազմակերպություններ ու ոչ ֆորմալ խմբեր, որոնց միջոցով մարդիկ մասնակցում են հասարակական կյանքին, արտահայտում են իրենց տեսակետները և կարծիքները, ներառյալ՝ մարդու իրավունքների խախտումների, կոռուպցիոն դրսևորումների և այլ թերությունների վերաբերյալ հարցեր բարձրաձայնելու կամ քննադատական մեկնաբանությունների միջոցով: Այդ կազմակերպված կամ մասամբ կազմակերպված խմբերը կարող են ներառել մասնագիտական և համայնքային կազմակերպություններ, համալսարաններ և հետազոտական կենտրոններ, կրոնական և ոչ ավանդական դավանանքի կազմակերպություններ և մարդու իրավունքների պաշտպաններ *(Եվ ուղեցույցը քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության վերաբերյալ, CM(2017)83, վերջնական տարբերակ (27 սեպտեմբերի 2017թ.), հոդ. 2)*:

Քաղաքացիական հասարակության կազմակերպություն (ՔՀԿ)
ՔՀԿ-ները կամավոր հիմունքներով ձևավորված ինքնավար մարմիններ և կազմակերպություններ են, որոնք ստեղծվում են իրենց հիմնադիրների և անդամների՝ իրենց էությամբ շահույթ չհետապնդող նպատակների իրագործման համար: ՔՀԿ-ները կարող են ներկայացնել ինչպես ֆիզիկական կամ իրավաբանական առանձին անձանց, այնպես էլ այդ անձանց խմբերի կողմից ձևավորված մարմիններ կամ կազմակերպություններ: Դրանք կարող են ձևավորվել անդամակցության հիմունքով կամ առանց անդամակցության: ՔՀԿ-ները կարող են գրանցված լինել

որպես իրավաբանական անձ կամ չգրանցվել և ունենալ ոչ ֆորմալ բնույթ: Որպես ՔՀԿ կարող են հանդես գալ, մասնավորապես, հասարակական միավորումները, հիմնադրամները, շահույթ չհետապնդող ընկերությունները կամ վերը նշված չափանիշներին համապատասխանող կազմակերպաիրավական այլ տեսակները: «ՔՀԿ չափիչը» չի դիտարկում քաղաքական կուսակցությունների, կրոնական կազմակերպությունների և արհմիությունների գործունեության միջավայրը *(Եվրոպայի խորհրդի հանձնարարական CM/Rec(2007)14 Եվրոպայում հասարակական կազմակերպությունների իրավական կարգավիճակի վերաբերյալ, հոդ. 76-77 (10 հոկտեմբերի 2007 թ.), հոդ. 1-3):*

ՔՀԿ-ները և նրանց հետ առնչվող անձինք

Անձանց տարբեր խմբեր, որոնք սերտորեն աշխատում են ՔՀԿ-ների հետ և որոնց վրա կարող են անդրադառնալ ՔՀԿ-ներին առնչվող օրենքները և առկա գործելակերպը: Առնչվող անձինք կարող են ներառել աշխատակիցներին, անդամներին, խորհրդի անդամներին, կամավորներին, դոնորներին, աջակիցներին և բոլոր նրանց, ովքեր կապ ունեն տվյալ ՔՀԿ-ի հետ:

Քաղաքացիական մասնակցություն

Անհատների, ՔՀԿ-ների և լայն քաղաքացիական հասարակության մասնակցությունը պետական մարմինների որոշումների ընդունման գործընթացներում: Քաղաքացիական մասնակցությունը քաղաքական որոշումների ընդունման գործընթացին տարբերվում է քաղաքական գործունեությունից՝ քաղաքական կուսակցությունների հետ ուղղակի առնչության իմաստով, ինչպես նաև բիզնես շահերի լոբբիստական գործունեությունից: Քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին կարող է իրականացվել տարբեր եղանակներով, այդ թվում՝ տեղեկատվության տրամադրման, խորհրդակցության, երկխոսության և ակտիվ ներգրավման միջոցով *(ԵԽ ուղեցույցը քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության վերաբերյալ CM(2017)83, վերջնական տարբերակ (27 սեպտեմբերի 2017), հոդ. 2 և հոդ.19)*:

Խորհրդակցություն

Պետական մարմինների կողմից նախաձեռնված մի գործընթաց, որի միջոցով նրանք փորձում են ստանալ ՔՀԿ-ների կարծիքը քաղաքականության որևէ թեմայի կամ զարգացման հարցերի վերաբերյալ: Խորհրդակցությունը սովորաբար ներառում է իշխանությունների կողմից ՔՀԿ-ների տեղեկացումը քաղաքականության ընթացիկ զարգացումների վերաբերյալ՝ նրանցից մեկնաբանություններ, տեսակետներ և հետադարձ կապ ստանալու ակնկալիքով *(Եվրոպայի խորհուրդ, Որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցության վերաբերյալ առաջատար փորձի կանոնագիրք, Conf/PLE(2009), կանոնագիրք 1 (ընդունվել է ՄՀԿ խորհրդաժողովի կողմից 2009թ. հոկտեմբերի 1-ին), պարբ. IV.i.2)*:

Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար

Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը մի շարք ընթացակարգերի, օրենքների և կանոնակարգերի ամբողջություն է, որոնք կոչված են կանխելու, խանգարելու կամ դադարեցնելու ահաբեկչական գործողությունների, դրանցում ներգրավված անհատների և կազմակերպությունների ֆինանսավորման պրակտիկան *(FATF հանձնարարականներ՝ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման միջազգային չափորոշիչներ (2012))*:

Քրաուդֆանդինգ

Քրաուդֆանդինգը առցանց հարթակներում մարդկանց մեծաթիվ խմբից ֆինանսական միջոցներ հայցելու եղանակ է: Այն կարող է օգտագործվել նախագծերի, ՔՀԿ-ների և բիզնեսի ֆինանսավորման համար: Ֆինանսավորողները և նախագծի հեղինակները միմյանց գտնում են էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի միջոցով *(Առաջարկ Եվրոպական պառլամենտի և*

Եվրոպական քրաուդֆանդինգ ծառայություններ մատուցողների կանոնակարգի (ECSP) համար, COM (2018) 113 վերջնական, հոդված 3):

Տվյալների պաշտպանություն
Տվյալների պաշտպանությունը վերաբերում է անհատի, անձանց խմբի կամ կազմակերպության մասնավոր տվյալների պաշտպանությանը: Տվյալների պաշտպանության իրավունքը բխում է մասնավոր կյանքի ավելի ընդգրկուն իրավունքից: Մարդու իրավունքների մի շարք համաձայնագրերով սահմանվում են տվյալների որոշակի կատեգորիաների պաշտպանության իրավունքները և այդ տվյալների մշակման եղանակները (օրինակ, Եվրոպայի խորհրդի թիվ 108 կոնվենցիա անհատական տվյալների ավտոմատ մշակման մասով անհատների իրավունքների պաշտպանության վերաբերյալ և ԵԱՀԿ ուղեցույցը մասնավոր կյանքի պաշտպանության և անհատական տվյալների անդրսահմանային հոսքերի վերաբերյալ):

Որոշումների կայացման գործընթաց
Ազգային, տարածաշրջանային կամ տեղական մակարդակով քաղաքականության փաստաթղթի, ռազմավարության, օրենքի կամ կարգի մշակումը, ընդունումը, իրականացումը, գնահատումը և վերանձևակերպումը, ինչպես նաև հանրության կամ դրա որևէ հատվածի վրա ազդեցություն ունեցող որոշումների ընդունման որևէ այլ գործընթաց, որն իրականացվում է նման լիազորություն ունեցող պետական մարմնի կողմից *(ԵԽ ուղեցույցը քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության վերաբերյալ, CM(2017)83, վերջնական տարբերակ (ընդունվել 27 սեպտեմբերի 2017 թ., հոդ. 2)*:

Զրպարտություն
Զրպարտությունը քաղաքացիական զանցանք է (կանխամտածված կամ ոչ կանխամտածված), որը կատարվում է մի անձի կողմից մյուսի, այդ թվում՝ իրավաբանական անձի նկատմամբ: Զանցանքի բնույթը կայանում է տվյալ անձի հեղինակության կամ բարի համբավին հասցված վնասի կամ բացասական ազդեցության մեջ: Հեղինակությունը վերաբերում է ոչ թե ինքնագնահատականին, այլ տվյալ անձի՝ հասարակությունում առկա գնահատականին: Այսպիսով, զրպարտության գործողությունը հանդիսանում է անձի մասին կեղծ կամ աղավաղված հայտարարություն, որը նպատակ ունի վնաս հասցնել նրա հեղինակությանը հասարակության զգալի թվով անդամների աչքերում: Այդ հայտարարությունը կարող է պարունակել մեղադրանք, պնդում, բանավոր ագրեսիա կամ այլ ձևակերպումներ ու գործողություններ: Այդ հայտարարությունը կարող է լինել բանավոր կամ գրավոր, ունենալ տվյալ իմաստն արտահայտող տեսողական պատկերների, ձայների, ժեստերի և ցանկացած այլ արտահայտչամիջոցի ձև, լինել ռադիոյով կամ հեռուստատեսությամբ հեռարձակվող հայտարարություն, հրապարակում ինտերնետում կամ էլեկտրոնային հաղորդակցություն *(Tarlach McGonagle (2016 թ.), Արտահայտվելու ազատությունը և զրպարտությունը: Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրություն, էջ 14)*:

Ցույց
Ցույցն իրենից ներկայացնում է հավաք կամ երթ, որը նպատակ ունի արտահայտել դրա մասնակիցների տեսակետը (*ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ-ի ուղեցույց խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ, Հավելված C)*: Հակացույցերը, որոնք կոչվում են նաև հակընդդեմ հավաքներ, միաժամանակյա հավաքի յուրահատուկ ձև են, որի ընթացքում մասնակիցները ցանկանում են արտահայտել իրենց անհամաձայնությունը մեկ այլ հավաքի ընթացքում բարձրաձայնվող տեսակետների հետ: Հակացույցի իրավունքը չի ենթադրում մյուսների ցույցի իրավունքի խոչընդոտում *(ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույց խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ, պարբ. 4.4)*

Խտրականություն
Ըստ Եվրոպական կոնվենցիայի, դրանում ամրագրված իրավունքներից և ազատություններից օգտվելը պետք է երաշխավորվի առանց որևէ խտրականության՝ օրինակ սեռի, ռասայի, մաշկի գույնի, լեզվի, դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնությանը պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի կամ այլ դրության հիմքի վրա *(Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդված)*: Խտրականության բացառման սկզբունքը արգելում է խտրականության ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դրսևորումները: Ուղղակի խտրականությունն այն է, երբ որոշակի գործողություն կամ կարգավորում առաջացնում է սոցիալական անհավասարություն, իսկ անուղղակի խտրականությունն այն է, երբ գործողությունը կամ կարգավորումը, առերևույթ խտրական չլինելով, այնուամենայնիվ գործնականում հանգեցնում է անհավասար վերաբերմունքի *(ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույցները միավորումների ազատության մասին, պարբ. 123)*:

Անաչառություն
Բիզնեսի և քաղաքացիական հասարակության հատվածների նկատմամբ համահավասար վերաբերմունքը ենթադրում է արդար, թափանցիկ և անկողմնակալ վերաբերմունք, որի դեպքում այս հատվածներից յուրաքանչյուրի կարգավորումը հիմնվում է ներքին և միջազգային իրավունքի, չափորոշիչների և նորմերի վրա (*ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի Թեմատիկ զեկույց խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների վերաբերյալ, A/70/266 (4 օգոստոսի 2015 թ.), պարբ. 17*): Համահավասար վերաբերմունքը ենթադրում է համամասնական մոտեցում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր ոլորտի առանձնահատկությունները:

Ատելության խոսք
Արտահայտման բոլոր այն ձևերը, որոնք տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում են ռասայական ատելությունը, այլատյացությունը, հակասեմիտիզմը կամ ատելության այլ ձևերը՝ ելնելով անհանդուրժողականության, այդ թվում՝ ագրեսիվ ազգայնականության և էթնոցենտրիզմի, փոքրամասնությունների նկատմամբ խտրականության ու ատելության, միգրանտների և այլազգի ծագում ունեցող մարդկանց դեմ թշնամանքի դրսևորումներից *(Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների նախարարների կոմիտեի թիվ R(97)20 հանձնարարական «ատելության խոսքի» հարցերով, ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից 1997թ. հոկտեմբերի 30-ին, Հանձնարարականի հավելված թիվ R(97)20՝ ընդգրկումը)*:

Ատելության խոսք (վեց բաղադրիչի քննություն)
Ըստ խոսքի ազատության միջազգային չափանիշների, հայտարարությունը որակվում է որպես «ատելության խոսք», եթե այն համապատասխանում է վեց բաղադրիչ ունեցող շեմային քննությանը, որը ներառում է՝

1. Խոսքի համատեքստը՝ արդյո՞ք հայտարարությունն արվել է մասնավոր, թե՞ հանրային հանդիպման ընթացքում: Ինչպիսի՞ն էր սոցիալական և քաղաքական իրավիճակը տվյալ խոսքի արտահայտման և տարածման պահին:
2. Բանախոսը՝ ինչպիսի՞ն է նրա կարգավիճակը, պաշտոնը, դիրքը հասարակության մեջ: Արդյո՞ք բանախոսը ներկայացնում է որևէ կազմակերպության:
3. Մտադրությունը՝ բանախոսի անփութությունն ու անուշադրությունը հիմք չեն, որ ապացուցվի նրա խոսքի «քարոզող» կամ «հրահրող» էությունը և արդյունքում այն որակավորվի որպես «ատելության խոսք»:
4. Բովանդակությունը և ձևը՝ որքանո՞վ էր ելույթը սադրիչ և ուղիղ: Ի՞նչ փաստարկներ են օգտագործվել դրա հիմնավորման համար:
5. Հանրայնացումը՝ խոսքը կրում էր հանրային, թե՞ մասնավոր բնույթ: Արդյո՞ք այն շրջանառվել է նեղ միջավայրում, թե՞ հասանելի էր հանրությանը: Տեղեկության տարածման

ի՞նչ եղանակներ են օգտագործվել (անհատական թերթիկներ, լայն շրջանառվող ԶԼՄ-ներ, ինտերնետ և այլն): Որքա՞ն մեծ էր լսարանը:

6. Վնասի հավանականությունը և սպառնալիքը՝ օրինակ, կա՞ր արդյոք ողջամիտ հավանականություն, որ այդ խոսքի միջոցով կհաջողվի փաստացի գործողություններ հրահրել թիրախային խմբի դեմ: Այս չափանիշը կիրառելի է համարվում, ու թեև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավագիտությամբ սահմանվում է, որ պարտադիր չէ, որ հրահրող խոսքի արդյունքում ատելությունը կամ բռնությունը փաստացի տեղի ունենա. բավարար է վերոնշյալին հասնելու հստակ և աներկբա մտադրությունը (*Մարդու իրավունքների հարցերով Միավորված ազգերի գերագույն հանձնակատարի Տարեկան զեկույց, A/HRC/22/17/հավ. 4)*:

Հավաքների ոստիկանական հսկողության՝ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցում

Ոստիկանության ներկայությունը հավաքներին նպաստում է մարդու իրավունքների իրացմանը, ինչպես սահմանված է մարդու իրավունքների միջազգային գործիքներում: Այն առաջնորդվում է օրինականության, անհրաժեշտության, համաչափության և խտրականության բացառման սկզբունքով և հետևում է մարդու իրավունքների կիրառելի չափանիշներին: Մարդու իրավունքների համարժեք իրացման համար պետությունը պարտավոր է ողջամիտ և համապատասխան միջոցներ ձեռնարկել, որպեսզի հնարավոր դարձնի այնպիսի խաղաղ հավաքների անցկացումը, որտեղ մասնակիցները չեն վախենում ֆիզիկական բռնությունից կամ այլ սահմանափակումներից *(ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույց խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ, պարբ. 5.3)*:

Լոբբինգ

Լոբբինգը պաշտոնյայի հետ հաղորդակցության միջոցով որոշակի շահերի խթանումն է, որը հանրային որոշումների կայացման վրա ազդելու նպատակով կազմակերպված և համակարգված գործունեության մաս է հանդիսանում *(Եվրոպայի խորհրդի հանձնարարական CM/Rec(2007)2 լոբբիստական գործունեության իրավական կարգավորումը հանրային որոշումների կայացման համատեքստում, ընդունվել է 22 մարտի 2017 թ. նախարարների տեղակալների1282-րդ նիստին, սահմանումների բաժին):* Քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության Եվրոպայի խորհրդի ուղեցույցի համաձայն, լոբբինգը տարբերվում է քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցությունից, քանի որ այն կապված է բիզնես շահերի հետ:

Անհրաժեշտություն և համաչափության

Թեև որոշ հանգամանքներում պետությունը կարող է սահմանափակել մարդու իրավունքները, դա կարող է արվել միայն համապատասխան հիմնավորմամբ: Միջամտության հիմնավորվածությունը որոշելու համար Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիտարկում է երեք առանցքային հարց: Սա ներառում է հաստատում առ այն, որ (1) տվյալ միջոցը ձեռնարկվել է ըստ օրենքի, (2) այն փաստացիորեն նպատակ է ունեցել պաշտպանել որոշակի պետական շահ և (3) անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում: Անհրաժեշտության վերաբերյալ որոշում կայացնելիս դիտարկվում են տվյալ գործի հետ կապված կոնկրետ փաստերը և այն հանգամանքները, որոնք առկա են տվյալ երկրում տվյալ պահին: Պետության գործողությունները պետք է հիմնված լինեն նաև համապատասխան փաստերի ընդունելի գնահատականների վրա: Համաչափության պահանջը կամ դրույթը նշանակում է, որ պահպանվում է համայնքի շահերի և անհատի ու ՔՀԿ-ի իրավունքների հավասարակշռությունը: Ըստ այդմ, պետք է կիրառել նվազագույն միջամտությունը, որն անհրաժեշտ է իրավաչափ նպատակին հասնելու համար *(Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության, վճիռ առ 7 դեկտեմբեր 1976 թ., A 24)*: Համաչափության սկզբունքը պահանջում է, որ իշխանությունները սահմանափակումները կանոնավոր կերպով չկիրառեն: Այսինքն, համատարած սահմանափակումները չափից դուրս կլինեն և չեն կարող ապահովել

համաչափության սկզբունքը, քանի որ այդ դեպքում գործի հանգամանքները առհասարակ հաշվի չեն առնվում *(ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույց խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ, պարբ. 2.4)*:

Խաղաղ հավաք

Հավաքը մի խումբ անհատների կանխամտածված և ժամանակավոր ներկայությունն է որևէ հանրային վայրում՝ որոշակի ձևակերպված ընդհանուր նպատակի համար: Թեև հավաքների որոշակի ձևեր կարող են կարգավորման խնդիրներ առաջացնել, բոլոր խաղաղ հավաքները՝ անշարժ թե շարժական, հանրային թե մասնավոր սեփականություն հանդիսացող տարածքում կամ կից կառույցներում, պաշտպանության կարիք ունեն: Սակայն միայն խաղաղ հավաքներն են ենթակա պաշտպանության: Հավաքը պետք է համարվի խաղաղ, եթե դրա կազմակերպիչները խաղաղ մտադրություններ ունեն, իսկ հավաքի ընթացքը կրում է ոչ բռնի բնույթ: «Խաղաղ» եզրույթը պետք է ներառի նաև այնպիսի վարքագիծը, որը կարող է գրգռել կամ վիրավորել, և անգամ այն վարքագիծը, որը ժամանակավորապես խոչընդոտում, խանգարում կամ ընդհատում է երրորդ անձանց գործունեությունը *(ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույց խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ, պարբ. 1.2-1.3)*:

Քաղաքական գործունեություն

ՔՀԿ-ների մասնակցության համատեքստում քաղաքական գործունեության համընդհանուր սահմանում չկա: Օրենքում և գործնականում կարող են տարբերակվել քաղաքական գործունեությունը և գործունեության այլ տեսակները, որոնք ամփոփ կարելի է անվանել հանրային քաղաքականության գործունեություն: Քաղաքական գործունեությանը կարելի է նեղ սահմանում տալ, օրինակ՝ թեկնածուի գրանցումը ընտրություններում, որևէ քաղաքական կուսակցության կամ ընտրությունների ուղղակի կամ անուղղակի ֆինանսավորումը, մասնակցությունը նախընտրական քարոզչությանը, թեկնածուներին կամ որոշակի քաղաքական կուսակցություններին պետական պաշտոն զբաղեցնելու գործում աջակցելը: Ինչ վերաբերում է հանրային քաղաքականության գործունեությանը, այն կարող է ներառել օրենսդրության վրա ազդելու փորձերը, մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին, լոբբիստական գործունեությունը, առանցքային հարցերի շուրջ քարոզարշավները, առկա մտահոգությունների վերաբերյալ իրազեկումը, ընտրությունների մոնիտորինգը, հանրային մասնակցությունը և պետական մարմինների գործողությունների քննադատությունը *(Եվրոպայի խորհրդի ՄՀԿ համաժողով, փորձագետների խորհուրդ հասարակական կազմակերպությունների քաղաքական գործունեությունը կարգավորող օրենսդրության հարցերով INGO Conf/Exp(2014)2, պարբ. 32 և 34)*:

Պետական մարմին

Ազգային, տարածաշրջանային կամ տեղական մակարդակում գործող գործադիր, օրենսդիր կամ վարչական մարմին, ներառյալ այն անձինք, որոնք իրականացնում են գործադիր իշխանության կամ վարչական գործառույթները *(ԵԽ ուղեցույցը քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության վերաբերյալ, CM(2017)83, վերջնական տարբերակ (ընդունվել 27 սեպտեմբերի 2017), հոդ. 2)*:

Մասնավոր կյանք

Մասնավոր կյանքը յուրաքանչյուրի հիմնարար իրավունքն է, ըստ որի ոչ ոք չի կարող ենթարկվել իր կյանքի անձնական ասպեկտների, ընտանիքի, բնակավայրի կամ նամակագրության կամայական միջամտության, ոչ էլ իր պատվի ու հեղինակության նկատմամբ ոտնձգության: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի օրենքով պաշտպանված լինել նման միջամտություններից կամ ոտնձգությունից: Մասնավոր կյանքի իրավունքը առանցքային է նաև յուրաքանչյուր անձի՝ ազատ կարծիք ձևավորելու և առանց դատապարտվելու վախի ու խտրականության այն արտահայտելու իրավունքի պաշտպանության առումով: Անհատների և կազմակերպությունների մասնավոր կյանքի

իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է լինի օրինական, իրավաչափ և համաչափ՝ հավասարակշռություն պահպանելով այլ հիմնարար իրավունքների պաշտպանության չափանիշների հետ *(Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր, հոդ. 17)*:

Բողոքարկման և հատուցման մեխանիզմ

Բողոքարկման և հատուցման մեխանիզմները այն վարչական և դատական վարույթներն են, որոնք սահմանում են անձանց իրավունքների վրա ազդեցություն ունեցող՝ իշխանությունների որևէ գործողության կամ անգործության դեմ հայց հարուցելու, բողոքարկելու և վերանայում պահանջելու իրավունքները, այդ թվում միավորումների ստեղծման, կանոնադրության և այլ իրավական պահանջների հետ համապատասխանության հետ կապված գործողությունների մասով *(ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույցը միավորման ազատության վերաբերյալ, պարբ. 36):*

Ռեսուրսներ

Իրենց նպատակներն իրագործելու համար ՔՀԿ-ներին անհրաժեշտ են ռեսուրսներ, այսինքն՝ ֆինանսավորում կամ պետական ու մասնավոր օժանդակության այլ ձևեր: «Ռեսուրսներ» եզրույթը լայն հասկացություն է, որը ներառում է դրամական փոխանցումները (նվիրատվությունների, դրամաշնորհների, պայմանագրերի, հովանավորչության և սոցիալական ներդրումների տեսքով), վարկային երաշխիքներն ու ֆիզիկական և իրավաբանական անձանց ֆինանսական օգնության այլ ձևերը, բնաիրային նվիրատվությունները (ապրանքների, ծառայությունների, ծրագրային փաթեթների, մտավոր և գույքային այլ սեփականության տեսքով), նյութական ռեսուրսները (օրինակ, գրասենյակային պարագաներ և տեխնոլոգիական սարքավորումներ), մարդկային ռեսուրսները (օրինակ, վարձու աշխատակիցներ և կամավորներ), միջազգային օժանդակության և համագործակցության հասանելիությունը, առանց անհարկի միջամտության ճանապարհորդելու և հաղորդակցվելու հնարավորությունը, ինչպես նաև պետության պաշտպանությունից օգտվելու իրավունքը: Ռեսուրսները ներառում են թե՛ պետական և թե՛ մասնավոր ֆինանսավորումը, հարկային արտոնությունները (օրինակ, նվիրատվությունների խթանումը շահութահարկի նվազեցման կամ հարկային զեղչերի միջոցով), բնաիրային արտոնությունները և միավորմանը պատկանող ապրանքների վաճառքից ստացված միջոցները, ինչպես նաև միավորումների համար սահմանվող այլ հնարավորություններ (օրինակ, եկամուտ ներդրումներից, վարձակալությունից, հեղինակային իրավունքից, տնտեսական գործունեությունից և գույքային գործարքներից) *(ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույցը միավորման ազատության վերաբերյալ, պարբ. 201):*

Ինքնաբուխ հավաք

Ինքնաբուխ են համարվում հիմնականում այն հավաքները, որոնք կազմակերպվել են ի պատասխան որոշակի իրադարձության, միջադեպի, այլ հավաքի կամ ելույթի, ընդ որում կազմակերպիչը (եթե առկա է) ի վիճակի չի եղել նախնական ծանուցումն ապահովել սահմանված ժամկետում, կամ կազմակերպիչ առհասարակ չկա: Նման հավաքները հաճախ են տեղի ունենում որևէ հրահրող դեպքի արդյունքում և կարևոր է, որ հնարավոր լինի դրանք իրականացնել, քանի որ հապաղումը կարող է նվազեցնել հավաքի միջոցով տեղ հասցվելիք խոսքի ազդեցությունը: Եթե միայնակ ցուցարարին միացել են այլ անձինք, այդ միջոցառումը ևս պետք է դիտարկվի որպես ինքնաբուխ հավաք: «Ինքնաբուխ» եզրույթը չի բացառում կազմակերպիչի առկայությունը, թեև ինքնաբուխ հավաքները կարող են տեղի ունենալ նաև առանց հստակ կազմակերպչի: Նման հանրահավաքները կրում են պատահական բնույթ և տեղի են ունենում, երբ մի խումբ անձինք հավաքվում են որոշակի վայրում առանց նախնական հայտարարության կամ հրավերի: *(ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույց Խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ , պարբ. 115 և 126-127)*

Պետական ֆինանսավորում
Պետական ֆինանսավորումը ՔՀԿ-ների ֆինանսավորման ձև է, որն իրականացվում է պետական և/կամ տեղական ինքնակառավարման բյուջեի միջոցների հաշվին: Ուղղակի պետական ֆինանսավորումը տեղի է ունենում անմիջական բյուջետային աջակցության տեսքով, օրինակ՝ դրամաշնորհներ, սուբսիդիաներ, ծառայությունների գնում կամ երրորդ կողմի վճարների տրամադրում (վաուչերային մեխանիզմ): Անուղղակի ֆինանսական աջակցությունը պետության կողմից որոշ հարկային արտոնությունների տրամադրումն է: Այն կարող է լինել նաև «տոկոսային մեխանիզմի» տարբերակով, երբ ցանկացած հարկատու կարող է որոշել իր եկամտահարկի որոշակի տոկոսը հատկացնել նախապես հաստատված ցանկի որևէ շահառուի՝ ըստ իր նախընտրության:

Խարանում (ստիգմավորում)
Որևէ երևույթի կամ անձի նկատմամբ անարդարացի վերաբերմունք՝ հանրային դատապարտման միջոցով *(Քեմբրիջի խորացված բառարան և եզրույթների հավաքածու):* Խարանումը կարող է ներառել նաև վատաբանող հռետորաբանություն, ըստ որի ՔՀԿ-ները օտարերկրյա ֆինանսավորում ստանալու արդյունքում որակվում են որպես օտարերկրյա ազդեցության տարածման գործիքներ, և հայտարարվում է, որ նրանք նպատակ ունեն սասանել պետականության հիմքերը: Խարանումը կարող է հանգեցնել խտրականության բազմակի և ծանր ձևերի, ինչպես նաև բռնության տեսանելի և անտեսանելի ձևերի, որոնք թույլ չեն տալիս ՔՀԿ-ներին իրականացնել իրենց աշխատանքը անվտանգ և նպաստավոր միջավայրում (*Խաղաղ հավաքների և միավորումների իրավունքների ազատության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույցներ A/HRC/38/34 (13 հունիսի 2018 թ.) և A/HRC/34/52/հավ. 3)*:

Թափանցիկություն
Քաղաքացիական հասարակության համատեքստում թափանցիկությունը նշանակում է ՔՀԿ-ի արժեքների, գործընթացների և ընթացակարգերի վերաբերյալ բաց տեղեկատվության հասանելիություն, հրապարակում և տարածում *(CIVICUS (2014) Քաղաքացիական հասարակության հաշվետվողականությունը քաղաքացիական հասարակությունում: Ինքնակարգավորման նախաձեռնությունների ուղեցույց, էջ 8):* Հրապարակայնությունը և թափանցիկությունը վճռորոշ են հաշվետվողականության և հանրային վստահության ապահովման համար: Պետությունը չի կարող միավորումներից պահանջել հաշվետու և թափանցիկ լինել, սակայն պետք է խրախուսի և նպաստի դրան *(ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույցներ միավորումների ազատության մասին, պարբ. 224)*:

Կամավորություն
Կամավորությունը չվճարվող, ոչ պարտադիր աշխատանք է, երբ անհատները աշխատում են կազմակերպությունում առանց փոխհատուցման: Կամավորները կարող են կամավորության հետ կապված ծախսերի հատուցում ստանալ (պարենային նպաստ, տրանսպորտային փոխադրում դեպի կամավորության վայր և հակառակը, կեցության և վերապատրաստման ծախսեր և այլն), ինչպես նաև պարգևներ, հոնորարներ կամ համանման վճարումներ կամավոր ծառայությունների դիմաց: Ելնելով այդ վճարումների բնույթից և ստացողի հանգամանքներից, այս տեսակի վճարման ստացումը չպետք է ենթադրի, որ անձը հանդես չի գալիս որպես կամավոր (*Աշխատանքի միջազգային կազմակերպության կամավորական աշխատանքի չափման ձեռնարկ 2011 թ., պարբ. 3.5)*:

Ազդարար
Ցանկացած անձ, որը տեղեկատվություն է հաղորդում կամ հրապարակում հանրային շահի սպառնալիքի կամ վնասի վերաբերյալ՝ ելնելով պետական կամ մասնավոր հատվածում իր

աշխատանքային հարաբերություններից (*Եվրոպայի խորհրդի հանձնարարական CM/Rec(2014)7 և բացատրական հուշագիր ազդարարների պաշտպանության մասին, սահմանումների բաժին*):